Էջմիածին

Ա

2002

ԱՄ 196



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Հոնվար
2002



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնին 3
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ամանորի խոսքը 7
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը 9
ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՄԵՂՅԱՆ - Սուրբ Ծննդյան տոնակատարությունները Մայր Աթոռում 13

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման տասնամյակի առթիվ 15
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը գեներալ Գեորգեն Դալիբալթայանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին 17
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին 19
Հայրապետական գնահատություն 21
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը մեծահռչակ կինոբեմադրիչ Անրի Վեռնոյի (Աշոտ Մալաքյան) մահվան առիթով 22
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը ազգային բարերար Սուրեն Ֆեսճյանի մահվան առիթով 23
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր խորհրդի ընդլայնված նիստը 24
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զեկույցը Գերագույն Հոգևոր խորհրդի նիստում 26

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշվեց
ՀՀ զինված ուժերի ստեղծման 10-ամյակը 66
Վեհափառ Հայրապետն օրհնեց
ՀՀ զինված ուժերի մարտական դրոշը 67
Վեհափառ Հայրապետը հանդիպեց ԱԺ նախագահ
Արմեն Խաչատրյանի հետ 68

ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. Արշակ վրդ. Խաչատրյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Ծննդյան Ճրագալույցին 69

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԷՄԵԱՆ - «Նոր Կտակարան
Յիսուսի Քրիստոսի» աշխարհաբար թարգմանութիւն 72

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՏՈԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ - Ազաթանգեղոսի
հեղինակային պատկանելության և ժամանակի հարցի շուրջ 77
ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ - Թուրքմեն Լմիրների
դամբարանը Արգավանդ գյուղում 85

Հայագիտություններ Եվրոպայում

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ - Սրբերի մասունքների եւ սրբազան
առարկաների պաշտամունքի, նրանց
վերաբերող վաւերագրերի ուսումնասիրման կարեւորութիւնը 89
ԻՋԱԲԵԼ ՕԺԷ - Սուրբ Պետրոսի մատի փոխադրումը
Հռոմից Հայաստան 92

Նվիրվում է Նիկողայոս Սարաֆյանի ծննդյան 100-ամյակին

ԱՐԹՈՒՐ ՄՆԴՐԱՆԻԿՅԱՆ - Մտածումներ Նիկողայոս Սարաֆյանի «Տեղափոխութիւն եւ մակընթացութիւն» գրքի մասին. 105

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԱԳ ՆԵՐՍԻՍՅԱՆ - Հայ հին բանաստեղծության բարձրարակ ընտրանի 118

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Ամանորը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 125
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ «Ազգապատում» գրքի շնորհանդեսը 137

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետն ընդունեց Եվրոհամայնքի Եպիսկոպոսաց խորհրդի պատվիրակությանը 138
Վեհափառ Հայրապետն ընդունեց ԱՄՆ Միջազգային գարգացման ծրագրի ներկայացուցչին 139
Վեհափառ Հայրապետն ընդունեց Ֆրանսիայի նորանշանակ դեսպանին 139

Եկեղեցական բեմ. լուրեր 141
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . 143
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin 146
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine 149

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ

(Սուրբ Էջմիածին, 2002 թ. հունվարի 6)

«Դիր զիս իբրեւ կնիք ի սրտի քում,
եւ իբրեւ մատանի ի վերայ բազկի քո,
զի բռնեն է քան զմահ սէր»:
(Երգ Երգոց Ը 6)

Միրելի բարեպաշտ հավատացյալներ.

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին այսօր իր սուրբ խորհուրդներից ավետում է մեզ Սուրբ Ծնունդը Քրիստոսի, արծաթաձայն զանգերի խնդագին ղողանջով հնչեցնում մեծ Ավետիսը մարդկության փրկության շնորհի:

Մարդկությունը 2000 տարի շարունակ զարմացել ու հիացել է Փրկչի Ծնունդով: Մտքին անհասանելի և միայն հավատով տեսանելի Սուրբ Ծննդյան խորհրդի աշխարհակեցույց ճշմարտությունը շատերը թերահավատորեն մերժել են, շատերը հավատքով ընդունել և վկայել իրենց կյանքով:

Հավատի աչքերով այսօր տեսնում ենք Բեթղեհեմի այրի մեջ խանձարուրով փաթաթված Մանուկ Հիսուսին, Ով ասպվածաբար սուրբ ու մանկաբար մաքուր իր հայացքն է հառել աշխարհին և «Եկայք առ իս» հրավերն է կարդում մարդկությանը: Տեսնում ենք Ասպվածային Փառքը Նորածին Մանկան, երկնքից իջնող հրեշտակների օրհնաբանող զորքերը և մոգերի ու հովիվների հետ խոնարհյալ փառաբանում ենք՝ «Մեզ եւ ձեզ մեծ աւետիս Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Մսուրի խոնարհ հարկի տակ Ասպված մարդացավ՝ ծնվեց Անբավելին երկնի և երկրի: Շարականագիրը «մեծ ու սքանչելի» է կոչում այս խորհուրդը, որի բովանդակությունը Ասպծո Մարդասիրությունն է, Ասպծո՝ առ իր արարածը ունեցած Սիրո Հայտնությունը: «Քանզի, - ինչպես առաքյալն է ասում, - ո՞վ կարող է պահել մեզ անարատ ու անբիծ և կանգնեցնել իր փառքի առաջ անխարան ցնծությամբ» (Հուդա Ա 24): Ո՞վ կարող է մեղքի մահացու ուսպայնից ազա-

ոնչ մարդուն. նորոգել մեղավոր ու վիրավոր հոգին և բարձրացնել դեպի իր նախասկզբն կատարելությունը. եթե ոչ Նա. Ով արարեց մեզ Իր պատկերով ու նմանությամբ:

Եկավ Աստվածորդին. քայլեց մարդկանց մեջ. ուսուցանեց. որդեգրեց Կանայի հարսանիքում. արտասվեց Ղազարոսին սգացողների հետ. բժշկեց. միխթարեց ու հարություն պարգևեց: Աստվածային զորությամբ ու մարդկային կատարելությամբ եկավ. հոժարությամբ ընդունեց մարդկային մեղքի դատելության բաժակը. հանձն առավ խաչելությունը. ու մեզ «սերը նրանով ճանաչեցինք»:

Մեր. որ մշտապես հույս է պաշտում ու հավատում. որ երկյուղ չունի. քանզի չար բան չի խորհում. անիրավության վրա չի ուրախանում: Մեր. որ վերափոխել ու վերափոխում է մարդկային հոգիները ու ժամանակների ընթացքը և հնչում իրեն հորդոր հավերժական. «Դիր զիս իբրև կնիք ի սրտի քում. և իբրև մատանի ի վերայ բազկի քո. զի բուռն է քան զմահ սէր» (Երգ Երգոց Ը 6):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Սուրբ Ծննդյան խորհրդավոր այս պահին գոհաբանության մեր աղոթքը մատուցենք Աշխարհի Փրկչին. Ով Աստվածային Սիրո շնորհները առատորեն պարգևել է նաև մեր ժողովրդին՝ իր սուրբ առաքյալների քարոզությամբ հաստատելով Հայոց Եկեղեցին: Աստվածային ամենառատ Սիրո շնորհ է Մայր Աթոռը հայոց՝ այս Սուրբ Տաճարը իր առաքելությամբ. որ հառնել է մեր Հայրենիքի սրտում. որտեղից այսօր Սուրբ Ծննդյան Ավետիսն ենք հղում մեր սիրելի ժողովրդին ի Հայաստան. Արցախ և ի Սփյուռս:

Այսրեղ՝ Արարատի դիմաց. ի տես Սուրբ Գրիգոր Լուսավորչի իջած Աստվածորդին և հաստատեց Հայոց Բեթղեհեմը. որպեսզի Իմաստ Սուրբ Սեղանից հանուր հայ կյանքի վրա ափովեն Բեթղեհեմյան Լույսի սիրո շողերը: Իջավ՝ ոսկե մուրճի կնիքով դրվագելով համազգային մեր դարձի խորհուրդը. որպեսզի Սուրբ Էջմիածնով հարատևի ժողովուրդը մեր ու միավորյալ մնա՝ թևկոց մասնատված ու աշխարհասփյուռ: Իջավ՝ «Դիր ինձ իբրև կնիք քո սրտի վրա և իբրև մատանի՝ քո ձեռքին. քանզի զորեղ է սերը մահվանից» պատգամով: Եվ դրեցինք սիրո կնիքը մեր սրտերին ու կապեցինք որպես բազպան մեր աջին: Սա Քրիստոս սերը 301 թվականին ընդդիմյալ դարձրեց ազգիս հայոց. հավատով ու հույսով լցրեց հայ կյանքը. նույնացավ հայ ինքնության հետ. դարձավ ազգը միավորող Եկեղեցու. ազգը պահող Հայրենիքի սեր. անձնազոհ ավիրումի ու հավատարմության՝ ընդանիքի սեր: Զորացրեց մեր հոգում արդարի. ճշմարիտի ու կյանքի սերը՝ չարը մերժելու. մահեր հաղթելու:

Երկունքով լցրեց հայ հոգու անդաստանները, որ առատորեն պտղաբերեցին՝ միշտ հաղորդ քաղաքակրթության առաջընթացին:

Սիրելիներ.

Աստծո Սերը միշտ մեզ հետ է և Սուրբ Ծննդյան խորհրդով կրկին ու կրկին հայտնվում է մեզ: Եվ եթե այսօր մեր Հայրենիքում, ազգային մեր կյանքում ամեն ինչ չէ, որ հարթ է, ամեն ինչ չէ, որ բարվոք է, ուրեմն մեր սերն է պակասել առ Տերը, առ Եկեղեցին ու Հայրենիքը, ուրեմն մենք ենք թերանում, մենք ենք ուշանում մեկս մյուսի հանդեպ սիրո մեջ: Սիրո պակասից են ծնունդ առնում անվստահությունն ու անհանդուրժողականությունը, հակառակությունն ու թշնամանքը, աղքատությունը, օտարացումը միմյանցից, փախուստը Հայրենիքից: Սիրո պակասն այսօր վտանգում ու սասանում է մեր միաբանությունը, որ հույս է, հավատ և հաղթանակ, լավատեսություն ու վստահություն և ճանապարհ դեպի ապագա: Միաբանությամբ ազատագրեցինք Արցախը, վերահաստատեցինք Հայաստանի անկախությունը, դիմացանք թանկ կորուստների ցավին, հանձնառու եղանք բազում զոհողությունների ու դժվարությունների: Արդարև, ճշմարիտ է ասված, վկա մեր պատմությունը. «անմիաբանությամբ մեծերը փոքրանում են, միաբանությամբ՝ փոքրերը մեծանում»:

Այսօր հայոց եկեղեցիները Սուրբ Ծննդյան Ավետիսով մեր զավակներին ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռս վերստին հրավիրում են Մսուրը Բեթղեհեմի, կոչում Աստվածսիրության, պահանջում եղբայրսիրություն, քանզի առ Աստված և միմյանց նկատմամբ սիրով ենք զորեղ իբրև անհատներ, իբրև ազգ, պետություն ու Սուրբ Եկեղեցի: Չլինի, որ լսենք ու անտարբեր անցնենք, չլինի, որ թերահավատ գտնվենք, չլինի, որ իշխանասիրությունը, շահը, հոգսերը կամ ունայն, անցողիկ պատրանքներն ու մոլորությունները խեղդեն մեր հավատը: Չլինի, որ սերը տկարություն նկատենք և խավարը ավելի սիրենք, քան լույսը:

Արդ, կատարյալ հավատով նայենք դեպի վեր, գտնենք քարայրը բեթղեհեմյան, ճանաչենք խանձարուրում խայտացող Մանկանը, Ով գալիս է բնակվելու մեր մեջ, ազատելու մեզ մեղքից, առաքինությամբ շնորհազարդելու, աներկյուղ ու անդավաճան դարձնելու, Ով գալիս է զորացնելու մարդասիրություն, օրինահարգություն, հայրենասիրություն, ստեղծագործ ջիղ ու արարում, որպեսզի Սուրբ Ծննդյան օրհներգը՝ «եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», մշտապես հնչի աշխարհում համայն ու բազմապատկվի մարդկային հոգիներում:

Աստվածային Սիրո հայտնության, Սիրո հաղթության երգը մեր շուրթին՝ Ամենայն Հայոց Միածնաէջ Մայր Աթոռից եղբայրական

սիրո Մեր ողջույնն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետության Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կ. Պոլսո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին:

Բարձրյալի օրհնության և զորակցության հայցով Մեր ողջույնն ենք հղում Հայաստանի Հանրապետության Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարյանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Տիար Արկադի Ղուկասյանին, ողջունում ենք Հայաստանի և Արցախի ողջ պետական ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Տիրոջ Սուրբ Ծննդյան բարի Ավետիսով Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու թեմական առաջնորդներին, ուխտապահ հոգևոր ողջ դասին, թեմական և համայնքային վարչական մարմինների պատվարժան անդամներին և համայն մեր հավատացյալ ի սիրուս աշխարհի:

Հայցենք միասնաբար, սիրելիներ, փրկարար Կամքն ու Շնորհը Բարձրյալի: Ուր Կամքն Աստծո, այնտեղ՝ խորհուրդ մեծ ու սքանչելի և գործ հրաշալի, ուր Շնորհն Աստծո, այնտեղ՝ օրհնություն:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ. մեզ, մեզ մեծ սուրբիս»:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԱՆՈՐԻ ԽՈՍՔԸ

(31 դեկտեմբերի 2001 թ.)

Սիրելի ժողովուրդ հայոց.

Նոր Տարի է սեմին: Թերթում ենք պատմության ևս մեկ էջ, նոր հազարամյակի առաջին՝ 2001 թվականի էջը, որը ոսկեգիր է ու ոսկեկնիք Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի և Հայաստանի ու Արցախի անկախության տասնամյակի մեծասքանչ խորհուրդներով:

Բարձրյալի օրհնյալ Կամքի հայցումով բարի տարի ապրեցինք: Առավել ազոթք բարձրացավ երկինք հայ հոգիներից: Աստծո խոսքը առավել ու առավել լսելի եղավ մեր ժողովրդին, և օրհնվեց ազգս հայոց: Խաղաղության օրհնություն իջավ Հայաստան և Արցախ հայրենի մեր երկրին: Արդարության շնորհ իջավ հայոց կյանքին: Ֆրանսիան օրենքի ուժով դատապարտեց Հայոց ցեղասպանությունը:

«Փառք Քեզ, Աստուած, յաղագս ամենայնի Փառք Քեզ»:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու հայոց մեծ տարեդարձը նշանավորվեց իբրև համաքրիստոնեական իրադարձություն: Հայաստան այցելեցին և մեր ժողովրդին իրենց հայրական սրտի ամենաբարի մաղթանքներն ընծայեցին Ռուս Ուղղափառ Եկեղեցու և Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքները, Հռոմի Սրբազան Քահանայապետը, քույր Եկեղեցիների հոգևոր պետեր ու բարձրաստիճան ներկայացուցիչներ, բարեկամ պետությունների պատվարժան պատվիրակներ:

Հավատավոր հայ հոգու նոր վկայություններ եղան նորոգված ու նորակառույց սրբատեղիները՝ տարբեր երկրներում, բայց մանավանդ՝ հայրենի հողի վրա: Հայոց Մեծ Դարձի լույսով հազարավոր հայ մանուկներ ու մեծեր ստացան մեր Սուրբ Եկեղեցու մկրտության դրոշմը և այսօր նոր տարին դիմավորում են իբրև հայ քրիստոնյաներ: Տասնյակ ձեռնադրյալ հոգևորականներ հովվության իրենց գավազանն առան՝ 301 թվականի խորհրդով սկսելով իրենց սպասավորությունը: Ապրեցինք Հայրենիք-Սփյուռք միասնականությամբ, միմյանցով ուժեղ լինելու վստահությամբ, որի քարեղեն մարմնացումը 1700-ամյակի Հաղթականաբար՝ քաղաքամայր Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին է, որի լուսեղեն խորհուրդը՝ 1700-ամյակի նորօրհնյալ Սրբալույս Մյուռոնը:

«Փառք Քեզ, Աստուած, յաղագս ամենայնի Փառք Քեզ»:

Գոհունակության այս զգացումով ենք հրաժեշտ տալիս 2001 թվականին: Հավատում ենք, որ պարգևած ուրախությամբ ու լավատեսությամբ, հոգևոր լիցքով անցնող տարին դառնալու է մեր կյանքի բարեշրջությունների ելակետ, խրախույս ու ներուժ:

Սիրելի ժողովուրդ հայոց ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռս.

Ամանորի խորախորհուրդ այս գիշեր ամեն հայի առջև վերստին ադոքք է՝ շաղախված անցնող տարվա հուշերի, բայց առավել ևս՝ նոր տարվա հույսի հետ:

Սիրելիներ, մենք խաչելությամբ չէ, որ խաչակից ենք Քրիստոսին, այլ՝ Հարությամբ: Հայրենական կյանքի դժվարությունները, տնական հոգսերից մեր սրտերում ծանրացած վրդովմունքը, օտարության մեջ իրենց բարությունը փնտրող հարազատների կարոտը մեր հոգիներում, այլև անվստահությունն ու անհանդուրժողությունը և այլ ինչ գործ չար, չեն կարող խամրեցնել կյանքի մեր լավատեսությունը, սասանել՝ հայրենակերտումի մեր կամքը, չեն կարող ազգային խղճի իրագործման նվիրական ճանապարհին նահանջի շեփոր հնչեցնել: Քաջերի հետնորդները քաջերն են: Արիությանը վատություն չխառնենք: Այս է պատգամը մեր հայրերի: Չերկնչենք և չտկարանանք: Հավատարիմ լինենք ինքներս մեզ: Պահենք մեր ընթացքը հավատարիմ Աստվածասեր մեր հայրերին, հավատարիմ՝ քրիստոնեական մեր արժեքներին ու հայրենյաց սրբություններին: Պահենք 88-յան ազատատենչ, միաբան, արի ոգին, 2001 թվականի աղոթախոս հոգին, հույսով, հավատով, սիրով զորացյալ՝ արարող ու աշխատասեր հոգին: Սա է հայոց նկարագիրը:

Այսօր հիշենք առավել, որ ուխտավորի ճանապարհ ենք անցնում: Ուխտավորի ճանապարհը զորացնում է անկիսատ ու աննահանջ առաջ ընթանալու, անհնարինին հավատալու, անհնարինը հրաշագործելու: Ուխտավորի վստահությամբ քայլենք նոր տարում: Ուխտավորի ճանապարհը Տիրոջով է հաջողյալ: Հավատանք, 2002 թվականը դառնալու է ձեռքբերումների ու հաղթանակների տարի:

Շնորհավոր Ամանոր: Բարի երթ Տիրոջով: Խաղաղությամբ և ժողովուրդների բարեկամությամբ օրհնյալ 2002 նոր տարի:

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱԳՐԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ (Հռոմ)

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք,
Նորին Ամենասրբություն
ԲԱՐԴՈՒԼԻՄԵՈՍ Ա (Ստամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻ Բ (Մոսկվա)

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ (Կահիրե)

Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԱՔԱ Ա ԻՎԱՍ (Դամասկոս)

Եթովպիայի Պատրիարք. Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՊԱՈՒԼՈՍ (Ադիս Աբեբա)

Հնդկաստանի Ասորի Մալարար Ուղղափառ Եկեղեցու պետ. Նորին Սրբություն
ՄԱՏԹԵՈՍ Բ (Դելի)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք.
Նորին Գերաշնորհություն
ՊԵՏՐՈՍ Է (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք.
Նորին Գերաշնորհություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱՋԻՄ Դ (Դամասկոս)

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք. Նորին Գերաշնորհություն
ԻՐԵՆԻՈՍ (Երուսաղեմ)

Ասորական Արևելյան Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարք. Նորին Սրբություն
ԽԱՆԱՆԻԱ ՄԱՐԴԻՆԿԱ Դ (Իլինոյս)

Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք. Նորին Սրբություն
ՊԱՎԼԵ (Բելգրադ)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք. Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏ (Բուխարեստ)

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք. Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄ (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս. Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ (Կիպրոս)

Աթենքի և Համայն Հունաց Արքեպիսկոպոս. Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՏՈԴՈՒԼՈՍ (Աթենք)

Վարշավայի և Համայն Լեհաստանի Միտրոպոլիտ. Նորին Սրբություն
ՄԱՎՎԱ (Վարշավա)

Մինսկի և Սլուցկի Միտրոպոլիտ. Համայն Բելառուսի Պատրիարք.
Նորին Սրբություն
ՖԻԼԱՐԵՏ (Մինսկ)

Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների խորհուրդների
Միության Նախագահ. Պրահայի Արքեպիսկոպոս
ԿԱՐԴԻՆԱԼ ՄԻԼՈՍԼԱՎ ՎԼԿ (Պրահա)

Տանն Կիլիկիո Հռաթոլիկե Հայոց Կաթուղիկոս-Պատրիարք
ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

*
* *

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻՑ

Մնծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս. Նորին Սուրբ Օծություն
ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Երուսաղեմի Հայոց Պատրիարք. Նորին Ամենապատվություն
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք. Նորին Ամենապատվություն
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Ստամբուլ)

Հայոց Եկեղեցու Թեմական առաջնորդներից և Թեմական Խորհուրդներից ու համայնքներից:

Եկեղեցական պետերից բացի, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել նաև բուլր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կարդինալներից, միտրոպոլիտներից և մյուս առաջնորդներից ու հոգևոր սպասավորներից, էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահ վսեմաշուք
ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ մեծահարգ
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ մեծահարգ
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սահմանադրական Դատարանի նախագահ մեծահարգ
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ վսեմաշուք
ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ մեծարգո
ԱՆՈՒՇԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետերից, ակադեմիական և համալսարանական հաստատություններից, գիտության, մշակույթի ու փարերր բնագավառների բազմաթիվ գործիչներից և առանձին անհատներից. Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և ստեղծագործական միություններից. Միջազգային Դարմիր Խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային փարրեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուլպենկյան հաստատությունից, Կարագյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Ավստրալիայի Ազգային Եկեղեցիների խորհրդից, Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՀԵՂՄԱՄԲ
ԿԱՏԱՐՈՒՄ Է ՋՐՕՐՀՆՅԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին նշեց Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Հայտնության գոնը:

Հունվարի 5-ին Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Հոգնշնորհ Տ. Արշակ վարդապետ Խուդավերդյանը:

Մինչ Ս. Պատարագի սկիզբը, Ճրագալույցի գիշերային ժամին հոգևորականները զգեստավորված, «Հուրախացիր Արյունի» հոգեթով շարականի հնչյունների ներքո նկան եկեղեցու ավանդ. ապա, խնկարկելով հավատացյալ ժողովրդին, հայտնեցին Ծննդյան ավետիսը: Ընթերցվեցին Քրիստոսի Ծննդյան դրվագները ներկայացնող ավետարանական հատվածները՝ ժողովրդին տալով Տիրոջ Ծննդյան ավետիսը: Ավագ Ս. Սեղանի վարագույրի փակվելուց հետո, պատարագիչ Հայր Սուրբը բարձրացավ Ավագ Խորան՝ զգեստավորվելու: Այդ ընթացքում Քարեշնորհ սարկավագները ընթերցեցին Դանիել մարգարեի թուղթը:

Մայր Աթոռի բազմաբարդ զանգերի զողանջների և հրեշտակային ավետարանի երգեցողության հնչյունների ներքո եկեղեցում հավաքված հավատացյալ բարեպաշտ հայորդիներին և ամբողջ հայությանը տրվեց Կուսածին Աստծո՝ սեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Գալստյան կենարար ավետիսը:

Պատարագից հետո Մայր Տաճարից հոգևորականաց թափորը, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, առաջնորդվեց Վեհարան՝ կատարելու Տնօրենների արարողությունը, որից հետո Վեհափառ Հայրապետին մեկ առ մեկ մոտեցան միաբաններն ու Ճեմարանի սանները, համբուրեցին Նորին Սրբության Օծյալ Աջը: Վեհափառից առնելով Սուրբ Ծննդյան ողջույնը՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ, ձեզ և մեզ մեծ ասնդիս», որին ի պատասխան հնչեց՝ «Օրհնեալ է յայտնութիւն Քրիստոսի»:

Հավատի Ճրագալույցի արարողության, հնավանդ սովորույթի համաձայն, թափորն առաջնորդվեց Մայր Աթոռի սեղանատուն՝ Ճրագալույցի ընթրիքի:

Հաջորդ օրը, Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առթիվ Սուրբ և անմահ Պատարագ մատուցեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը: Պատարագին ներկա էին ՀՀ Նախագահը, ԱԺ-ի խոսնակը, ՀՀ վարչապետը, կառավարության անդամներ և այլ հյուրեր:

Վեհափառ Հայրապետին Պատարագի ընթացքում սպասարկում էին առընթերականեր Գարաշնորհ Տ. Եղնիկ եպս. Պետրոսյանը և Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, ինչպես նաև Հոգնշնորհ Հայր Սուրբերը և Քարեշնորհ սարկավագները:

Հրեթացս Պատարագի Նորին Սրբությունը Ս. Ծննդյան օրհնությունը և հայրապետական իր պատգամը հղեց համայն հայությանը (տե՛ս էջ 3):

Պատարագից անմիջապես հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Աստվածորդու՝ Հիսուս Քրիստոսի մկրտությունը խորհրդանշող Ջրօրհնյաց հանդիսավոր արարողությունը: Հայոց Հայրապետը, հոգևորականաց դասի և հավատավոր ժողովրդի հետ միասին աղոթք բարձրացնելով առ Աստված, առաջեց մարդասեր Տիրոջը, որ Միածնի առատաբուխ շնորհներով այդ ջրին տա հորդանանյան օրհնությունը՝ իջնցնելով Ս. Հոգին ջրի վրա, որպեսզի սրբազան ջրով մկրտվողները լինեն լույսի որդիներ: Այնուհետև Հայոց Հայրապետը խաչն իջնցրեց ջուրը, ապա հանելով՝ ջուրն օրհնեց Ս. Խաչի նշանով, Կենարար Մյուռոնով և Ավետարանով:

Օրհնված ջուրը բաժանվեց հավատավոր հայորդիներին, որոնք այն տարան իրենց տները՝ զանազան հոգևոր և մարմնավոր հիվանդություններ բուժելու:

Արարողությունից հետո Վեհափառ Հայրապետի կողմից տրվեց ճաշկերույթ, որին Մայր Աթոռի հոգևորականաց դասի հետ մասնակցեցին ՀՀ Նախագահը, Վարչապետը, կառավարության անդամներ, Հայաստանում հավատարմագրված դեսպանները, ինչպես նաև օտարերկրյա այլ հրավիրյալներ:

ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՋՄԱՎՈՐՄԱՆ ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԻՆ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Հայոց Ազգային բանակի կազմաւորման տասներորդ փառապանծ տարեդարձի առիթով Միածնաէջ Մայր Աթոռից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքներն ենք բերում սիրեցեալ մեր ժողովրդի աշխարհասփիւռ բոլոր զաւակներին, մեր բանակի քաջարի զօրաւարամանապարներին ու զինուորներին:

Իջման Սուրբ Սեղանի առջեւ գոհաբանական Մեր աղօթքն ենք առ Աստուած բարձրացնում, որ մեր ժողովուրդը Հայաստանի անկախութեան առաջին տարիներին խաղաղ ու պայծառ գալիքի հաւատով, Հայրենիք եւ Մփիւռք միասնական ջանքերով ամուր հիմքերը դրեց Ազգային բանակի:

Արցախի ազատագրութեան ու Հայաստանի սահմանների պաշտպանութեան մարտերում ծնունդ առաւ Հայոց բանակը: Ազատամարտիկների բոցավառ սրտերի վեհ սիրով ու անկուն կամքով օրաւուր զօրացաւ, ուժ առաւ Հայկեան ազատատենչ ոգուց, Վարդանանց հաւատատոր հոգուց, անմահանչ ու յաղթական դարձաւ սրբանուէր կեանքով հայ քաջորդեաց, ովքեր վասն հայրենեաց նոր պատերազմում համալրեցին անմահների զօրագունդը, «Որ հայրենեաց շողայ արեւ..., Որ հայրենեաց վարդեր բացուին...» եւ հաւատով, յոյսով, սիրով միաբան՝ միշտ կեցցէ Մայր Հայաստան:

Արդարեւ, Հայոց Ազգային բանակի զասնամեայ ոդին, յեցուն փառաւոր յաղթանակներով, նոր պանծալի էջեր է յաւելում հերոսական մեր պատմութեանը:

Փառք Տիրոջը, որ Արցախում եւ Հայաստանում հայրենաբնակ մեր ժողովուրդը ազատ եւ խաղաղ երկնքի ներքոյ իր նոր կեանքն է կերտում, որ այսօր առ Աստուած խնկաբոյր աղօթք է բարձրանում Գանձասարի հինաւուրց վանքի եւ Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու նորոգուած խորաններից, Հայոց Արեւելեան բարձրիկ աշխարհի առիւրական սրբավայրերից:

Փառք Տիրոջը, որ հայ զօրաւարամանատարի տրաղանդը, հայ զինուորի քաջութիւնն ու հաւատարմութիւնը այսօր ծաւալում են մեր անկախ Հայրենիքին:

Այս տօնական օրը Մենք աղօթք ենք բարձրացնում բոլոր այն հայորդեաց հոգիների համար, ովքեր իրենց կեանքը զոհաբերեցին յանուն այս խաղաղ առաւօտի՝ դառնալով նոր «զօրականք յաղթողք պսակեալ ի Քրիստոսէ»: Երիցս փառք նրանց անմահ յիշատակին եւ աստուածային օրհնութիւն նրանց լոյս հոգիներին:

Հայրապետական Մեր աղոթքն ու հայցն է, որ Տէրը Իր օրհնութեան մէջ խաղաղ պահի աշխարհը համայն, Ազատն Մասեաց հայեացքի ներքոյ պահպանի Հայոց Աստուածպարգեւ Հայրենիքը եւ միասնական պահի աշխարհասփիւռ մեր ժողովրդին ու հաւատարիմ՝ Աստուածկառոյց Սուրբ Էջմիածնի համազգական Ուխտին:

Թող Բարձրեալի Ամենակարող Աջը այսօր եւ միշտ զօրացնի ու պահպանի հայրենեաց պաշտպան Մեր սիրեցեալ որդիներին՝ զօրաց եւ զօրականաց հայոց:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Յունուարի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 78

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՆԵՐԱԼ ԳՈՒՐԳԵՆ ԴԱԼԻԲԱԼԹԱՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳՈՒՐԳԵՆ ԴԱԼԻԲԱԼԹԱՅԵԱՆ

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն 1700-ամեայ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթութիւնները յղել Ձեզ՝ ծննդեան 75-ամեակի եւ Հայրենի մեր երկրին, հարազատ ժողովրդին ու Մայր Եկեղեցուն մատուցած Ձեր բազմամեայ ծառայութիւնների առիթով:

Մայր Եկեղեցին մշտապէս հպարտ է Հայրենիքի պաշտպան իր հաւատաւոր զաւակներով, որոնց սրտաւոր շարքերում Դուք Ձեր արժանի տեղն ունէք իբրեւ Հայոց բանակի քաջաբեմուտ ու արիասիրտ, հեղինակաւոր ու սիրուած հրամանատար:

Ձեր նուիրումն ու սէրը առ հայրենին լաւագոյնս դրսեւորուեց Արցախեան ազատամարտի օրերին, երբ Դուք Հայաստանի եւ Արցախի համար դժուարին ժամանակներում վերադարձաք Հայրենիք եւ ռազմական Ձեր գիտելիքներն ու կադրային զօրաբրամանատարի բարձր կարողութիւնները ի սպաս դրեցիք ասրբ յիշատակներով հարուստ Հայոց Արեւելեան բարձրիկ աշխարհի ազատագրութեան նուիրական պայքարին, Հայրենիքի սահմանների պաշտպանութեան գործին: Ձեր քաջակորով առաջնորդութեամբ հաղթանակով են պսակուել կարեւոր ու վճռական շատ մարտեր, որոնցից ուզում ենք առանձնացնել հատկապէս Շուշիի հերոսամարտը՝ իբրեւ խորհրդանիշ Արցախի ազատութեան:

Մեծարգոյ պրն Դալիբալթայեան, Ձեր յոբելեանական տարեդարձի առիթով ուրախ ենք անդրադառնալու նաեւ, որ մեծ է Ձեր ներդրումը Հայոց բանակի կազմաւորման նուիրական գործում՝ անցած մարտական ուղու հետ վաստակեալ ճանաչում եւ հեղինակութիւն բերելով Ձեզ:

[illegible]

Ձեր ծառայութեանց ու երախտարժան գործերի բարձր գնահատանքով սիրով ընդառաջում ենք Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Հոգեշնորհ Տ. Արշեն աբեղայ Սանոսեանի ազնիւ խնդրանքին եւ շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Բարձրեալն Աստուած միշտ զօրաւոր պահի հայ ռազմիկի քաջարի բազուկը եւ Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջութիւն, նոր կորով ու եռանդ, հայրենաշէն ծառայութեանց նոր յաջողութիւններ:

Թող Տէրը խաղաղութիւն ու անշրջելի առաջընթաց պարգեւի Հայաստան եւ Արցախ մեր երկրին եւ օրենի ու աջակից լինի հայրենեաց պաշտպան, արի զաւակներին մեր ժողովրդի՝ ամենուր եւ յամենայնի:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 20-ն Յունուարի
Յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 77

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅՏԱՐԵԱՆ, ՈՐ Ի ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆ

Սիրելի Սրբազան.

Յաւարտ Ձեր ծառայութեան՝ իբրեւ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ, համայն մեր ժողովրդի հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ գոհունակ սրտով յայտնում Մեր բարձր գնահատանքը, որ հովուական ու առաջնորդական Ձեր գործունէութիւնը արդիւնաշատ է, եկեղեցաշէն ու ազգօգուտ ձեռքբերումներով:

Սիրելի Սրբազան, շուրջ քառասուն տարիներ, որպէս հոգեւոր սպասաւոր աստուածասէր մեր ժողովրդի, Ձեր կարելին ի սպաս էք դնում հանուն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Աստուածշնորհ առաքելութեան արդիւնաւէտ իրականացման: Այսօր ուրախ ենք արձանագրելու, որ «կենաց խօսքը» քարոզելու առաքելութեանը ծառայել էք հաւատարմօրէն, ամենայն սիրով ու նուիրուածութեամբ: Տարիներ շարունակ բարեջան առաջնորդութեամբ Դուք Վրաստանում բնակեալ մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին զօրացնում էք Աւետարանի լոյսով՝ նրանց հայեացքներն ուղղելով դէպի հայրենի երկիրը մեր եւ Սուրբ Էջմիածինը:

Գնահատելի է, որ քահանայագործութեանը զուգընթաց Դուք զբաղուում էք նաեւ գիտական գործունէութեամբ: Ձեր աշխատութիւնների ու դասագրքերի միջոցով շատերը հաղորդ են դառնում տոմարագիտութեանը, Ձեր ջանքերով արդեն երեսուն տարիներ երապարակուում են Մայր Աթոռի պաշտօնական օրացոյցները, որոնցով առաջնորդուում են մեր Եկեղեցու հոգեւոր դասն ու բարեպաշտ ժողովուրդը:

Սիրելի Սրբազան, Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով, ընդառաջելով Վրաստանի հայոց թեմի Թեմական խորհրդի, ինչպէս նաեւ վիրահայ հասարակա-

կան ու մշակութային կազմակերպութիւնների եւ բարեպաշտ հաւատացեալների խնդրանքներին. Հայրապետական այսու Կոնդակով սիրով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ շքանշանը:

Ի խորոց սրտի մաղթում ենք, որ Ամենակալ Տէրը Իր հանապազ օրհնութեան եւ ողորմութեան ներքոյ քաջառողջ արեւշատութիւն ու բիւր բարիքներ պարգեւի Ձեզ՝ ազնիւ, բարի ու հաւատարիմ Իր ծառային:

Թող Տէրն անսասան պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

«Շնորհք. սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Յունուարի
յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 76

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2002 թվականի հունվար ամսվա ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է.
Այպըրթ Մովսիսյան (ԱՄՆ Արևելյան թեմ)

Օրհնության գիր է տրվել.
ԱՄՆ Արևմտյան թեմի Տիկնանց Միությանը

Ավագության պատվի է արժանացել.
Հակոբ քհն. Երանոսյան (Գեղարքունյաց թեմ)

Ծաղկա Փիլոն կրելու իրավունք է տրվել.
Արսեն քհն. Սիմոնյան (Շիրակի թեմ)

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՄԵԾԱՀՌՉԱԿ ԿԻՆՈԲԵՄԱԴՐԻՉ ԱՆՐԻ ՎԵՌՆՈՅԻ (ԱՇՈՏ ՄԱԼԱՔՅԱՆ) ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ.

ՏԻՍՐ ԱՇՈՏ ՄԱԼԱՔՅԱՆԻ՝ ԱՆՐԻ ՎԵՌՆՈՅԻ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Մեծ ցավով տեղեկացանք մեր ժողովրդի և Առաքելական Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ, մեծահռչակ արվեստագետ, կինոռեժիսոր Աշոտ Մալաքյանի՝ աշխարհահռչակ Անրի Վեռնոյի մահվան մասին:

Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության Մեր խորին ցավակցությունն ենք հղում Ձեզ և հանգուցյալի բոլոր հարազատներին, արվեստագետ գործընկերներին ու մերձավորներին:

Մեր Եկեղեցին, աշխարհասփյուռ հայությունը խոնարհումով է հրաժեշտ տալիս հայազգի տաղանդավոր արվեստագետին, որ ապրեց ու գործեց հոգում միշտ կրելով Հայրենիքի սերը և հարազատ ժողովրդի արժեքները: Ֆրանսիայի հյուրընկալ հարկի ներքո ծաղկեցին ու պտղաբերվեցին Անրի Վեռնոյի հոգու շնորհները՝ բացահայտելով հայ ժողովրդի կենսահաստատ ուժը, բարիով, արդարության ու ճշմարտության հաղթանակի հավատով չարը մերժելու քրիստոսասեր կամքը, որի մեծագույն արտահայտությունն է նրա «Մայրիկ» ֆիլմը՝ իր համամարդկային ենչտղությամբ Հայոց եղեռնի մասին դեռևս չգերազանցված ստեղծագործություն:

Միրով ու հուզումով ենք միշտ հիշելու լուսահոգի Անրի Վեռնոյին, որին իբրև հավատավոր, կենսուրախ ու պայծառ մեծ հայորդու ճանաչեցինք Հովվապետական Մեր այցի ընթացքին Լիոն քաղաքում:

Աղոթում ենք, որ Ողորմածն Աստված Իր երկնային երանավետ բարձունքներում խաղաղության մեջ ընդունի Անրի Վեռնոյի երանյալ հոգին, Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն պարգևի Ձեզ բոլորիդ և օրհնությամբ առաջնորդի Ձեր կյանքի ընթացքը:

Աղոթք, խունկ և օրհնություն Անրի Վեռնոյի անթառամ հիշատակին, հարգանք և խոնարհում նրա պայծառ անվանը:

Վշտակից սիրով և օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
12 հունվարի 2002 թ.

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԲԱՐ ՍՈՒՐԵՆ ՖԵՍՃՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԽԱՉԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Նյու Յորք, ԱՄՆ

Միրելի Սրբազան.

Ցավով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ, ազգային բարեբար տիար Սուրեն Ֆեսճյանի մահվան մասին: Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Գերագույն Հոգևոր Խորհրդի Մեր ցավակցությունն ենք բերում Ձեզ, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի հավատավոր Մեր զավակներին և Մեր մասնավոր վշտակցությունը՝ հանգուցյալի բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Շնորհընկալ ու Աստվածահաճո կյանք ապրեց երջանկահիշատակ Սուրեն Ֆեսճյանը, բարեգործությամբ պսակյալ հավատավոր կյանք՝ լեցուն ամբողջական նվիրումով հանդեպ հարազատ ժողովուրդն ու մեր Սուրբ Եկեղեցին: Տերը օրհնեց նրան երկար կյանքի տարիներով՝ անխոնջ գործունեությամբ ծառայելու Հայ Բարեգործական Ընդհանուր Միությանը, Վարդանանց Ասպետների Եղբայրակցությանը, Թեքեյան Մշակութային Միությանը, բարեգործական ու բարեսիրական ազգային այլ կազմակերպություններին: Հոգելույս Սուրեն Ֆեսճյանը իշխանական նվիրատվություններով մասնակից եղավ ազգօգուտ ու եկեղեցաշեն բազում ձեռնարկների իրականացմանը, որոնք բարի անուն ու համազգային ճանաչում բերեցին երախտարժան բարերար հայորդուն: Հանգուցյալը հպարտությամբ էր կրում երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ձեռքով շնորհված «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը, որ արժանի և բարձր գնահատություն էր իր մեծ եկեղեցասիրության և հայրենանվեր վաստակի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Ողորմածն Աստված՝ հայցելով, որ Տերը արարչական Իր սիրով գթա հավատավոր Իր ծառային, խաղաղության մեջ ընդունի նրա լույս հոգին և Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգևի Ֆեսճյան ընտանիքի սգակիր անդամներին:

Երկնառաք օրհնություն ենք ցանկանում հանգուցյալի խնկելի շիրմին:

Վշտակից սիրով և օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
26 հունվարի 2002 թ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԸ

Հունվարի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ իր աշխատանքն սկսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի այս տարվա անդրանիկ ընդլայնված նիստը: Տերունական աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը ողջունեց, Ամանորյա ու Սուրբ Ծննդյան իր մաղթանքներն ուղղեց ներկաներին:

Նորին Սրբությունը հաջողված նկատեց 2001 հոբելյանական տարում իրականացված ծրագրերը: Ինչպես նշեց Հայոց Հայրապետը, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված հանդիսություններն իրապես ծառայեցին իրենց նպատակին՝ դառնալով պարարտ հող քրիստոնեական ոգու զորացման և տարածման համար:

Տարեսկզբի ընդլայնված այս նիստում նախանշվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաջիկա տարվա գործունեությունը: Նիստերի ընթացքում ԳՀԽ անդամները քննարկեցին Հայ Եկեղեցու կանոնադրությանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Նվիրապետական Աթոռների միջև հարաբերություններին, քրիստոնեական դաստիարակության, հոգևոր-կրթական խնդիրներին առնչվող հարցեր:

Վեհափառ Հայրապետին նախապես տեղեկացրած լինելով, ժողովի աշխատանքներին չեն կարողացել իրենց մասնակցությունը բերել ԳՀԽ-ի գույգ ատենապետերը՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, ուստի նիստերին ատենապետեց ժողովին ներկա ավագագույն անդամ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

Ժողովին չեն կարողացել մասնակցել նաև Եգիպտոսի թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ. արքեպս. Գրիգորյանը, Արգենտինայի թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը, ԳՀԽ աշխարհական անդամներից՝ Էդուարդ Ժաքյանը:

Հունվարի 10-ի նիստում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախորդ ինն ամիսների գործունեության ընդարձակ հաշվետու զեկույցը ներկայացրեց Վեհափառ Հայրապետը (Տե՛ս էջ 26):

Հունվարի 11-ին քննարկվեց մամուլում հրապարակված տեղեկատվությունը՝ Կանադայում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կողմից թեմ հռչակելու մասին: Որոշվեց նամակ հղել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Առաջինին՝ հայտնելով ԳՀԽ-ի մտահոգությունը:

Քննարկվեց նաև առաջիկայում Եպիսկոպոսաց ժողով գումարելու հարցը: ԳՀԽ-ն որոշեց Եպիսկոպոսաց ժողովը գումարել 2002 թ. հոկտեմբերի վերջին: Ժողովի կազմակերպման համար նշանակվեց հանձնախումբ, որը կնախապատրաստի ժողովի հրավիրման աշխատանքները:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Կանոնադրության» հարցը մշտապես Գերագույն Հոգևոր Խորհրդի ուշադրության կենտրոնում է: Այս առնչությամբ որոշվեց գործող հանձնախումբը համալրել նոր անդամներով և ստացված նոր առաջարկներով լրամշակել առկա նախագիծը:

ԳՀԽ-ն Եկեղեցու առաքելության առանցքային ուղղնիշների շարքում առանձնացրեց կրթական, քարոզչական և հրատարակչական գործունեության այն ոլորտներն ու օղակները, որոնց շնորհիվ հնարավոր է արդյունավետ կերպով իրականացնել հայ մարդու քրիստոնեական դաստիարակությունը:

Եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպություն հիմնելու խնդիրը, որ նույնպես ԳՀԽ նիստի օրակարգում էր, ստացավ իր սկզբունքային լուծումը: Որոշվեց այս կառույցը ձևավորել 1700-ամյակի տոնակատարությունների շրջանակներում ստեղծված Երիտասարդական ուխտագնացության գրասենյակի հիմքի վրա:

Քննության առնվեցին նաև Եկեղեցու հոգևոր-կրթական ոլորտին առնչվող օրախնդիր հարցեր, որոնց շարքում՝ քահանայից պատրաստության լսարանի ստեղծման խնդիրը: Վերջինիս առիթով Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանին հանձնարարվեց մինչև փետրվարի 1-ը ԳՀԽ-ին ներկայացնել քահանաների պատրաստման դասընթացների ուսումնական ծրագիր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժողովականներին ներկայացրեց նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 9-ամսյա (ապրիլ-դեկտեմբեր 2001 թ.) գործունեության հաշվետու զեկույցը:

Եկեղեցական կյանքին առնչվող վարչա-կազմակերպական բնույթի հարցերի շարքում էր նաև Վիրահայոց թեմում նոր առաջնորդի նշանակման խնդիրը:

Նույն օրը ԳՀԽ-ն ավարտեց իր եռօրյա աշխատանքը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵԿՈՒՅՑԸ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

(10 հունվարի 2002 թ.)

Միրելի հոգևոր եղբայրներ՝ անդամք Գերագույն Հոգևոր Խորհրդի.

Աստծո ողորմությամբ վերստին ժողովվել ենք՝ միասնաբար քննարկելու մեր Եկեղեցու առջև ծառացած խնդիրները ու դրանց լուծման միջոցները: Դրանից զատ 1700-ամյակի հոբելյանական հանդիսությունների պարգևած ոգևորությամբ ու նորոգ զորությամբ, ծրագրելու մեր հետագա աշխատանքները և հստակեցնելու առաջիկա շրջանում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությունն առավել արդյունավետ դարձնելու հնարավոր միջոցներն ու եղանակները:

Սակայն, ամենից առաջ, պարտ ու պատշաճ է ի մի բերել անցյալ տարվա մարտի 28-30-ը գումարված Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստից հետո ընկած ժամանակահատվածում Մայր Աթոռի գործունեության արդյունքները:

Այս նպատակով ցանկանում ենք ամփոփ գծերով՝ բաժին առ բաժին ձեր ուշադրությանը հանձնել նախորդ զեկույցից հետո անցնող ինն ամիսների գործունեության հաշվետվությունը:

Ա. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նախորդ նիստին հաջորդած անցնող այս ամիսները, պայմանավորված 1700-ամյակի հանդիսություններով և մի շարք այլ հոբելյաններով ու իրադարձություններով, անհամեմատ առավել հագեցած էին Մայր Աթոռում տեղի ունեցած ընդունելություններով և Հայրապետական այցելություններով:

Արդեն ձևավորված ավանդույթով նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել Հայաստան ժամանած գրեթե բոլոր պաշտոնական պատվիրակությունները, ինչպես նաև 1700-ամյակի հանդիսությունների շրջագծում ուխտավորաբար հայրենիք ժամանած տիյուրքահայեր և օտարազգի զբոսաշրջիկներ:

Մայր Աթոռում ընդունել ենք.

1. 2001 թ. ապրիլի 4-ին՝ Ռումինիայի ազգային պաշտպանության նախարար Միրչա Պասկոյի գլխավորած պատվիրակությանը:

2. Էստոնիայի ԱԳ նախարար Թոմաս Հենդրիկ Իլվեսի գլխավորած պատվիրակությանը:

3. 2001 թ. ապրիլի 27-ին՝ հավաքական անվտանգության պայմանագրի անդամ պետությունների Անվտանգության խորհրդի քարտուղարների հանձնաժողովի երևանյան նիստի մասնակիցներին, որոնց թվում՝ Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհրդի քարտուղար Վլադիմիր Ռուշայլոյին:

4. 2001 թ. ապրիլի 28-ին՝ Հայաստանում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Համեդ Հասանին:

5. 2001 թ. մայիսին՝ Լիբանանի Հանրապետության նախագահ Էմիլ Լահուդին՝ տիկնոջ և նախագահին ուղեկցող շքախմբի հետ:

6. 2001 թ. հունիսի 1-6-ը՝ Ծաղկաձորում տեղի ունեցած միջեկեղեցական ժողովի մասնակիցներին: Հյուրերին ընդունել է խաժակ արքեպս. Պարսամյանը:

7. 2001 թ. հունիսի 6-ին՝ Գերմանիայի Դաշնության ԱԳ նախարարությունում մարդու իրավունքների և մարդասիրական օգնության հարցերով դաշնային կառավարության հանձնակատար Գերդ Պոպին:

8. Նույն օրն ընդունել ենք նաև «ԱրմենՏել» հեռահոսային ընկերության նորանշանակ գլխավոր գործադիր տնօրեն Նիկոս Ցորդուլոսին՝ ընկերության մի խումբ պաշտոնյաների հետ: Հանդիպման ընթացքում մեզ հանձնվեց 10 հազար դոլարի չեկ՝ Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարության համար:

9. 2001 թ. հունիսի 8-ին՝ Ռուսաստանի Դաշնության Պետդումայի խոսնակ Գենադի Սելեզնյովին:

10. 2001 թ. հունիսի 15-ին՝ ՌԴ Պետդումայի պատգամավոր, Ապրանքարտադրողների միջազգային միության նախագահ Նիկոլայ Ռիժկովի գլխավորած պատվիրակությանը:

11. 2001 թ. հունիսի 17-ին՝ ԱՄՆ-ի Արևելյան թեմից եկած շուրջ 150 ուխտավորների:

12. 2001 թ. հունիսի 18-ին՝ Հայաստանում Արգենտինայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Խուան Կառլոս Սանչես Առնաուին:

13. 2001 թ. հունիսի 18-ին՝ ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան մասնաճյուղի նորանշանակ ներկայացուցիչ Լլոյդ Դեյքիին:

14. 2001 թ. հունիսի 27-ին՝ ԱՄՆ-ի Արևելյան թեմի ՀՕՖ-ի երիտասարդ մասնագետների խմբին:

15. 2001 թ. հունիսի 27-ին՝ Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի համակարգող, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի ղեկավար-ներկայացուցիչ Կատիցա Չեկալովային:

16. 2001 թ. հունիսի 28-ին՝ ռուս փիզերագնաց, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վալենտին Լեբեդևին:

17. 2001թ. հուլիսի 3-ին՝ Եվրախորհրդի նախարարների խորհրդի վերահսկման «Ագոյի խմբի» դեսպաններին՝ Իտալիայի Հանրապետության դեսպան Պիետրո Ագոյի գլխավորությամբ:

18. 2001 թ. հուլիսի 4-ին՝ Գերմանիայի հասարակական գործիչ և բարերար Գերհարդ Մայերին:

19. 2001 թ. հուլիսի 5-ին՝ Մոնրեալի քաղաքապետ Պիեռ Բուրգին և նրա գլխավորած պատվիրակությանը:

20. 2001 թ. հուլիսի 6-ին՝ Հունաստանի փոխարտգործնախարար Գրիգորիս Նիոտիսին:

21. 2001 թ. հուլիսի 16-ին՝ Իրանի Իսլամական Հանրապետության ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար հոջաթոլլա Հասան Ռոհանու գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ԱԳ փոխնախարար Ռուբեն Շուգարյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

22. 2001 թ. հուլիսի 18-ին՝ Սիրիայի Արաբական Հանրապետության ժողովրդական ժողովի նախագահ Աբդ Ալ-Կադեր Կադդուրային և նրա գլխավորած պատվիրակությանը:

23. 2001 թ. հուլիսի 21-ին՝ ՌԴ փոխվարչապետ Իլյա Կլեբանովին:

24. 2001թ. հուլիսի 22-ին՝ Երիտասարդական համահայկական ուխտագանգության մասնակիցներին:

25. 2001 թ. օգոստոսի 4-ին՝ Ուկրաինայում հավատարմագրված շուրջ 15 դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների և գործարար շրջանակների ներկայացուցիչների:

26. 2001 թ. օգոստոսի 23-ին՝ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, Վրաստանի հայերի միության նախագահի առաջին տեղակալ Վան Բայբուրթյանին և Աջարիայի հայ համայնքի «Վերածնունդ» կազմակերպության նախագահ Արմեն Գևորգյանին:

27. 2001 թ. սեպտեմբերի 11-ին՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ լորդ Ռասել Ջոնսթոնին:

28. 2001 թ. սեպտեմբերի 12-ին՝ ՆԱՏՕ-ի շրջանակում գործող Ատլանտյան դաշնագրի ասոցիացիայի պատվիրակությանը՝ նախագահ Ալան Ուիլյամսի գլխավորությամբ:

29. 2001 թ. սեպտեմբերի 14-ին՝ միջազգային ճանաչում ունեցող կենսաքիմիկոսների պատվիրակությանը՝ ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն Արմեն Գալոյանի ուղեկցությամբ:

30. 2001 թ. սեպտեմբերի 14-ին՝ ԵՀԽ շրջանակներում գործող Եվրոպական տրանսֆեսական համագործակցության խորհրդի և ԵՀԽ Հայաստանյան Կոր Սեղանի տարեկան ժողովների մասնակիցներին:

31. 2001 թ. սեպտեմբերի 15-ին՝ հանդիպում Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ Երևանում վերջինիս իջևանած վայրում:

32. 2001 թ. սեպտեմբերի 20-ին՝ Արգենտինայի փոխարտգործնախարար, պաշտամունքի հարցերի նախարար Նորբերտո Պադիժային:

33. Նույն օրը նաև՝ Կիպրոսի պաշտպանության նախարար Սոկրատես Հասիկոսին:

34. 2001 թ. հոկտեմբերի 4-ին՝ Բունդեսթագի փոխնախագահ Անտյե Ֆոլմերին:

35. 2001 թ. հոկտեմբերի 27-ին՝ ԵՄԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Աղրիան Սներինին:

36. Նույն օրը նաև՝ Մարսելի քաղաքապետ Ժան Կլոդ Գաղենի գլխավորած պատվիրակությանը՝

37. 2001 թ. հոկտեմբերի 31-ին՝ Ֆինլանդիայի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ տիկ. Սիրկա Լիսա Անտիլայի գլխավորած պատվիրակությանը:

38. 2001 թ. հոկտեմբերի 31-ին՝ Նիդերլանդների ֆինանսների նախարար Խեյրիտ Զալմին:

39. 2001 թ. նոյեմբերի 1-ին՝ Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկուին:

40. 2001 թ. նոյեմբերի 6-ին՝ Լատվիայի Հանրապետության արտգործնախարար Ինդուլիս Բերզինշին:

41. 2001 թ. նոյեմբերի 6-ին՝ Ռուսաստանի Դաշնության առաջին փոխարտգործնախարար Վյաչեսլավ Տրուբնիկովին և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Նիկոլայ Գրիբկովին, Ռուդոլֆ Փերինային և Ֆիլիպ դը Սյուրմենին:

42. 2001 թ. նոյեմբերի 8-ին՝ ՀԺԱՄ նորաստեղծ կուսակցության վարչության անդամներին՝ կուսակցության նախագահ Սեյրան Ավագյանի գլխավորությամբ:

43. 2001թ. նոյեմբերի 14-ին՝ «Շողակաթ» հեռուստաընկերության մրցանակակիրներին:

44. 2001 թ. նոյեմբերի 28-ին՝ ՌԴ Լենինգրադի մարզի նահանգապետ Վալերի Սերդյուկովի գլխավորած պատվիրակությանը:

45. 2001 թ. նոյեմբերի 29-ին՝ ՌԱԿ և ՀՌԱԿ ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

46. Նույն օրը նաև՝ ԱՄՆ նորանշանակ դեսպան Ջոն Օրդուեյին:

47. Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրային:

Այս ընթացքում Հայրապետական այցելություններ ենք կատարել ՀՀ պետական և իշխանության տարբեր կառույցների ղեկավարներին, գիտա-մշակութային հաստատություններ և ներքին թեմեր:

Մեր հերթին համայնքային, թեմական և միջեկեղեցական հրավերներով մեկնել ենք.

1. 2001 թ. ապրիլի 21-23-ը՝ Մոսկվա՝ Ռուսիոն Պատրիարք Այեքսի Բ-ի հետ նախագահելով Կրեմլում կազմակերպված հանդիպությանը, որը նվիրված էր Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնին և Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

2. 2001 թ. ապրիլի 23-25-ը՝ Հայրապետական ուխտագնացություն Դեր-Զոր:

3. 2001 թ. մայիսի 5-15-ը՝ հովվապետական այց Ամերիկայի Արևմտյան թեմ:

4. 2001 թ. մայիսի 15-23-ը՝ հովվապետական այցելություն Կանադայի հայոց թեմ:

5. 2001 թ. մայիսի 23-ից հունիսի 2-ը՝ հովվապետական այց Ամերիկայի Արևելյան թեմ, որի ընթացքում հանդիպել ենք ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ:

6. 2001 թ. հունիսի 8-14-ը՝ Հայրապետական այցելություն Անգլիա, որի ընթացքում կատարեցինք օծումը Լոնդոնի Սուրբ Եղիշե եկեղեցու:

7. 2001 թ. նոյեմբերի 15-24-ը՝ հովվապետական այց Ավստրիայի հայոց թեմ: Ավստրիայում հանդիպել ենք նաև երկրի խորհրդարանի նախագահի և վարչապետի հետ:

8. 2001 թ. դեկտեմբերի 6-18-ը՝ հովվապետական այց Ֆրանսիա, որի ընթացքում հանդիպել ենք երկրի նախագահ Ժակ Շիրակին: Նախագահը Մեզ է հանձնել Պատվո Լեգեոնի Ա կարգի շքանշան:

Բ. ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Էջմիածնի միաբանության ողջ ջանքերն անցնող այս ամիսներին, Մայր Աթոռի բուն հոգևոր արարողական կյանքից դուրս, գլխավորաբար նպատակաուղղված են եղել 1700-ամյակի հանդիսությունների պատշաճ կազմակերպմանն ու անցկացմանը:

Մեպտեմբերի 30-ին տեղի ունեցած եպիսկոպոսական ձեռնադրությամբ Հայոց Եկեղեցու եպիսկոպոսաց դասը համալրվեց ևս չորս եպիսկոպոսներով.

Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյան

Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյան

Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյան

Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյան:

Հուլիսին Մայր Աթոռում տեղի ունեցավ վարդապետական թեզի պաշտպանություն և վարդապետական աստիճան շնորհվեց Տ. Անուշավան աբեղ. Ժամկոչյանին:

Ուրախությամբ պետք է արձանագրենք նաև, որ անցնող ամիսներին Մայր Աթոռի հոգևորականաց դասը համալրվել է հինգ կուսակրոն և նույնքան էլ ամուսնացյալ քահանաներով: Տարվա ընթացքում քահանայական ձեռնադրություն են ստացել 25 սարկավագներ:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 32 սաներ, հաջող հանձնելով սարկավագական քննությունները, Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին (դեկտեմբեր 25) Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում ձեռնադրվեցին սարկավագ:

Ցավով պետք է արձանագրենք, որ հակականոնական իր ընթացքի և Հայրապետական իշխանության հանդեպ դրսևորած անհնազանդության համար Հայրապետական մեր վճռով կարգալույծ է արված Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի նախկին առաջնորդ Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը:

Եկեղեցագիտական և աստվածաբանական կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակելու համար Մայրավանքի միաբաններից արտասահման են ուղարկվել.

Տ. Մկրտիչ աբեղա Պողոշյանը (եռամյա դասընթացներ՝ Ռումինիա, ապա՝ Լոնդոն, Մըրֆիլդի համալսարան),

Տ. Դանիել աբեղա Թումանյանը (Լեհաստան),

Տ. Գարեգին աբեղա Հարությունյանը (Գերմանիա),

Տ. Արիստակես աբեղա Այվազյանը (Գերմանիա),

Տ. Ավետիս աբեղա Սահակյանը (Ավստրիա),

Տ. Աբգար աբեղա Հովակիմյանը (Ավստրիա),

Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը (վեցամսյա դասընթացներ՝ Դանիա),

Տ. Հովհաննես աբեղա Մայիլյանը (Հունաստան),

Մուշեղ սարկավագ Հովհաննիսյանը (վեցամսյա դասընթացներ՝ ԱՄՆ),

Արթուր սարկավագ Կարապետյանը (երկամսյա դասընթացներ՝ Չեխիա),

Հրանտ սարկավագ Կոստանյանը, Նելսոն սարկավագ Բաբայանը և Բաբկեն սարկավագ Բոզիկյանը (եռամսյա դասընթացներ՝ Շվեյցարիա):

Արտերկրի թեմական մեր առաջնորդների ցանկություններին ընդառաջելով՝ Մեր տնօրինությամբ տեղի թեմերում հոգևոր ծառայության են կոչվել.

Տ. Մարկոս աբեղա Հովհաննիսյանը, Տ. Սարգիս քհն. Զոփտրյանը և Տ. Մաղաքիա քհն. Օհանյանը (Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմ),

Տ. Բարսեղ աբեղա Փիլավչյանը (Հունգարիա),

Տ. Գալուստ վարդապետ Դարբինյանը (Ռումինիա),

Տ. Տիրայր քահանա Գրլրճյանը (Ֆրանսիա):

Շուտով Եգիպտոս հոգևոր ծառայության ենք ուղարկելու Տ. Աշոտ աբեղա Մնացականյանին, իսկ Ֆրանսիա՝ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանին:

Այժմ Մայր Աթոռում վանաբնակ միաբանների ընդհանուր թիվը 41-ն է, որոնցից 6-ը՝ արքեպիսկոպոս ու եպիսկոպոս, 20-ը՝ վարդապետ և աբեղա, 14 սարկավագ և 1 ուրարակիր: Նաև 24 սարկավագներ, որոնք բնակվում են Մայր Աթոռում՝ Երևյան խցերում, սակայն դեռ չեն պաշտպանել իրենց ավարտաճառերը, դեռևս միաբան չեն համարվում: Ազգային բանակում այժմ ծառայում են ինը միաբաններ՝ մեկ աբեղա և ութ սարկավագ: Արտասահմանում ուսանում են 8 միաբաններ:

Հայրապետական Մեր տնօրինությամբ Մայր Աթոռի միաբաններից Տ. Մատթեոս աբեղա Պողոսյանը նշանակվել է Ս. Հռիփսիմեի վանահայր, Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանը՝ մկրտարանի հոգևոր տեսուչ, իսկ Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը՝ ֆինանսա-տնտեսական հարցերի գծով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օգնական: Տ. Վրթանես վարդապետ Աբրահամյանը և Տ. Մամբրե աբեղա Տաշչյանը ծառայության են կոչվել Գուգարաց թեմում: Այս թեմին իր ծառայությունն է բերելու նաև Տ. Միքայել քահանա Շաղոյանը: 1700-ամյակի գրասենյակի հիմքի վրա ստեղծված ինտերնետային բաժնի պատասխանատու է նշանակվել Արմեն սրկ. Դևեջյանը՝ ԱՄՆ-ի Արևմտյան թեմից: Հայորդյաց տների հոգևոր տեսուչ է նշանակվել Տ. Խաչ քհն. Ղազարյանը: 1700-ամյակի հանդիսություններից առաջ հիմնեցինք նաև Արտաքին հարաբերությունների բաժինը՝ պատասխանատու նշանակելով Արմեն Մելքոնյանին:

Թեմերում թեմական նոր առաջնորդներ են նշանակվել.

Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը - Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ.

Գերաշնորհ Տ. Եղրաս եպիսկոպոս Ներսիսյանը - Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ.

Գերաշնորհ Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանը - Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ.

Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Աղասյանը - Արմավիրի թեմի առաջնորդ.

Հոգեշնորհ Տ. Դերենիկ վարդապետ Դավթյանը - Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ.

Գ. ՀՈԳԵՎՈՐ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Մարտ-սեպտեմբեր ամիսները վստահաբար կարելի է բնորոշել նաև որպես եկեղեցաշինության և եկեղեցակերտման ամիսներ, որոնց բարձրակետը դարձավ Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծումը Մեր ձեռամբ սեպտեմբերի 23-ին, և որին մինչ այդ նախորդել էր Մայր Աթոռի նորակառույց Բաց Խորանի օծումը նույն ամսի 20-ին:

Անցնող ամիսների ընթացքում ուրախությունն ու հոգևոր բերկրանքն ենք ունեցել կատարելու Երևանի Հարավ-արևմտյան թաղամասի Ս. Երրորդություն եկեղեցու հիմնարկեքը (7 հունիսի), Լոնդոնի Ս. Եղիշե եկեղեցու օծումը (10 հունիսի), Աղավնաձորի նորակառույց Ս. Աստվածածին մատուռի օծումը (7 հուլիսի), Չարեցավանի նորակառույց Ս. Փրկիչ եկեղեցու օծումը (21 հուլիսի), Գյումրիի Ս. Հակոբ եկեղեցու խաչերի օծումը (7 նոյեմբերի) և Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց նորակառույց եկեղեցու օծումը (1 դեկտեմբերի): Նաև նախագահել ենք Սաղմոսավանքի վերաօծմանը (5 օգոստոսի) և Ալավերդու Ս. Գրիգոր Նարեկացի նորակառույց եկեղեցու օծման արարողությանը (11 նոյեմբերի):

Արարատյան թեմում, ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, օծվել են Վեդիի նորակառույց Ս. Աստվածածին (12 օգոստոսի) և Արարատի մարզի Վարդաշատ գյուղի վերակառուցված Ս. Աստվածածին (19 օգոստոսի) եկեղեցիները:

Կոտայքի թեմում, ձեռամբ Տ. Առաքել եպս. Քարամյանի, օծվել են Նուռնուսի Ս. Հարություն (15 սեպտեմբերի), Պտղնիի Ս. Խաչ և Արամուսի Ս. Շողակաթ մատուռները (27 հոկտեմբերի): Ջրառատում ավարտվել է Թռիխ Մանուկ եկեղեցու շինարարությունը, բարեկարգվել են Կեչառիսի վանական համալիրը և Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցիները, վերանորոգվել են Աբովյանի Ս. Ստեփաննոս և Առինջի Ս. Հովհաննես եկեղեցիները:

Արագածոտնի թեմում վերանորոգման աշխատանքներ են տարվում Ապարանի Ս. Խաչ եկեղեցում:

Գուգարաց թեմում, ձեռամբ Տ. Մեսրուռ եպս. Չուլջյանի, օծվել են Ղուրսալի գյուղի Ս. Գևորգ (21 հունիսի) և Շենավանի Ս. Ամենափրկիչ (14 հոկտեմբերի) եկեղեցիները: Վերանորոգման աշխատանքներ են տարվում Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցում և Հաղպատի վանքում:

Շիրակի թեմում, ձեռամբ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի, օծվել է Սպանդարյան գյուղի Ս. Ամենափրկիչ եկեղեցին: Տ. Փառեն եպս. Ավետիքյանը և Տ. Միքա-

յել եպս. Աջապահյանը դեկտեմբերի 9-ին կատարել են օծումը Արնշատի Ս. Աստվածածին եկեղեցու: Վերանորոգվել է Մեծ Մանթաշի եկեղեցին: Գյումրիում նորոգվում են Ս. Նշան և Ս. Ամենափրկիչ եկեղեցիները:

Գեղարքունիքում Տ. Նավասարդ եպս. Կճոյանն օծել է Կարմիր գյուղի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին: Սևանում շարունակվում է Վազգենյան Դպրանոցի Ս. Հակոբ եկեղեցու շինարարությունը:

Սյունյաց թեմում նորոգվել են Նորավանքը և Մեղրիի Մեծ Թաղի եկեղեցին:

Արցախում՝ Քաշաթաղի (Լաչին) Աղավնո գյուղում կառուցվում է Սրբոց Նահատակաց, իսկ Ասկերան շրջկենտրոնում՝ Ս. Աստվածածին եկեղեցիները: Մարտունու Նիգ գյուղում վերանորոգվում է Ս. Աստվածածին եկեղեցին, Դաղի վանքում Ս. Նշանը, Մարտունիում Հեր-Հեր գյուղի Ս. Գրիգորիս եկեղեցին: Նույն շրջկենտրոնում կառուցվում է Ս. Ներսես Մեծ եկեղեցին: Գանձասարի վանքին կից կառուցվում է Ճեմարանի, իսկ Ստեփանակերտում՝ թեմի առաջնորդարանի շենքը:

Հոգևոր կյանքի նորոգմանը մեծ լիցք հաղորդեցին 1700-ամյակի առիթով կազմակերպված ուխտագնացությունները, որոնց բարձրակետը դարձան հուլիսյան երիտասարդական ուխտագնացությունները:

Եկեղեցական կյանքում կարևոր իրադարձություններ էին Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի նախագահությամբ հոկտեմբերի 30-31-ը գումարված երիտասարդական միջթեմական ժողովը, ինչպես նաև Եկեղեցիների Եվրոպական խորհրդի «Եկեղեցիները երկխոսության մեջ» և Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի «Հավատք և Կարգ» հանձնախմբերի «Եկեղեցու բնույթը և նպատակը» խորագրով համատեղ կազմակերպված ժողովը, որը տեղի ունեցավ Ծաղկաձորում մայիսի 28 - հունիսի 4-ը:

Վանական կյանքի փորձառությանն էր նվիրված Արևմուտքի ու Արևելքի վանականների «Կորած մարգարիտի որոնումներում» խորագրով հանդիպումը, որը տեղի ունեցավ մայիսի 28 - հունիսի 4-ը Հայ կաթոլիկ քույրերի Ծաղկաձորի ամառանոցում:

Հոգևոր-եկեղեցական կյանքի արտահայտություն են այս ընթացքում Մեր կողմից տրված 29 Հայրապետական կոնդակները և 94 օրհնության գրերը: Նաև 100-ից ավելի տարբեր խոսքեր ենք ասել ու հղել միջեկեղեցական հանդիպումների, 1700-ամյակի և այլ հանդիսությունների, միջոցառումների ու գիտաժողովների առիթով:

2001 թ. Դիվանատուն մուտքագրվել են 3500 հայերեն ու օտար լեզուներով տարաբնույթ փաստաթղթեր ու գրություններ, որոնք 2250 նամակներով պատասխանվել ենք ըստ պատշաճի:

Մայր Աթոռի տարբեր բաժիններում և ծառայություններում աշխատում են 650 աշխարհականներ, որոնց հետ եթե հաշվենք և Հայոց դպրաց տների շուրջ 270 աշխատողներին, ապա կարող ենք ասել, որ շնորհիվ Մայրավանքի Հայաստանում այսօր աշխատանքով ապահովված են շուրջ 920 հոգի, և այս թիվն անհամեմատ մեծ կլինի, եթե հաշվենք նաև շինարարական ու գործարքային տարբեր աշխատանքներում ժամանակավորապես աշխատողներին:

Դ. 1700-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայտ-օգոստոս ամիսները եղան հոգևոր և գիտամշակութային միջոցառումներով 1700-ամյակի իմաստավորման ու արժևորման ամիսներ, որոնց սեպտեմբերին հաջորդեցին բուն եկեղեցական արարողություններն ու հանդիսությունները:

Հիշյալ ամիսներին 1700-ամյակի շրջանակում 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Հովնան արքեպս. Տերտերյանի ընդհանուր պատասխանատվության ներքո տեղի ունեցան գիտաժողովներ, բացվեցին ցուցահանդեսներ, կատարվեցին հավաքական մկրտություններ և կազմակերպվեցին ուխտագնացություններ մեր հավատի նվիրական սրբավայրեր ու տպագրվեցին մի շարք գրքեր ու ալբոմներ:

2001թ. ապրիլի 27-28-ին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայում կայացավ Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված «Հայոց սրբերը և սրբավայրերը» թեմայով գիտական նստաշրջան, որը նախաձեռնել էր Ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտը՝ աջակցությամբ «Երկիր և մշակույթ» կազմակերպության և ժնևաբնակ ազգային գործիչ Վահե Գապրաշի: Գիտաժողովի նյութերը տպագրվեցին առանձին գրքով:

Ակադեմիայի ինստիտուտների հետ համատեղ՝ մայիսի 24-26-ը կազմակերպվեց «Ավարայրի հուրհատրդը» գիտաժողովը, իսկ հուլիսի 16-ին Հայաստանի նկարիչների միության ցուցասրահում բացվեց հայ ժամանակակից նկարիչների և քանդակագործների հոգևոր թեմաներով կատարված աշխատանքների ցուցահանդեսը:

Մեծ թվով ընդհանրական մկրտություններ կազմակերպվեցին Հայաստանի տարբեր շրջաններում և նվիրական սրբավայրերում, որոնց գործուն մասնակցություն ունեցավ հատկապես Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը: Մեսրոպ Սրբազանի նախաձեռնությամբ և աջակցությամբ հաշմանդամների «Նոր Սպիտակ» կազմակերպության 10 հաշմանդամ երիտասարդներ մասնակցեցին Վանաձոր-Սպիտակ-Մուղնի-Երևան-Էջմիածին երթուղով ուխտագնացությանը: Այն ավարտվեց Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առջև ուխտի միասնական աղոթքով, որի ժամանակ նրանց փոխանցեցինք Մեր օրհնությունները:

Հունիսի 16-ին, «Ելն ի Վիրապէն» տոնին, Խոր Վիրապում Մեր նախագահությամբ կատարվեց Ուխտի աղոթք: Վանքում մատուցված Պատարագից հետո այնուհետև ողջ օրը շարունակվեցին հոգևոր-գեղարվեստական միջոցառումները, որոնց մասնակցում էին Մփյուռքից ու Հայաստանի տարբեր շրջաններից եկած ուխտավորներ: Նույն օրը Մայր Տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո, մատուցեցինք Ուխտի Սուրբ Պատարագ, և սրբազան այս արարողությունը Մայր Տաճարում Ս. Էջմիածնի տոնին նախորդող շաբաթ օրը կատարելն այսուհետև կդառնա ավանդույթ:

Հաջորդ օրը՝ Ս. Էջմիածնի տոնի ողջ կիրակին, շարունակվեց կազմակերպված տարբեր հանդիսություններով և ընդունելություններով, որոնք երեկոյան ավարտվեցին Երիտասարդական ուխտագնացությունների գրասենյակի կողմից կազմակերպված Խոր Վիրապ - Ս. Էջմիածին ուխտագնացության ուխտավորների Մայր Տաճար

հասնելով: Նախորդ օրը այս ուխտագնացության 200 մասնակիցներ Խոր Վիրապից ճանապարհ էին ընկել դեպ Սուրբ Էջմիածին, և այստեղ նրանցից դեռ մկրտություն չստացած շուրջ 70 երիտասարդներ Սրբալույս Մյուռոնի դրոշմով դարձան Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու անդամներ:

Ուխտագնացությունների բարձրակետը դարձավ հուլիսի 10-22-ը տեղի ունեցած համահայկական երիտասարդական առաջին ուխտագնացությունը Խոր Վիրապ-Ս. Էջմիածին-Սևան-Երևան երթուղով, որին մասնակցեցին 2000 երիտասարդներ Սփյուռքի և Հայաստանի թեմերից: Այս ուխտագնացության շրջանակում հուլիսի 14-ին Երևանում տեղի ունեցավ Համահայկական երիտասարդական առաջին համաժողովը:

Մինչ սեպտեմբերյան հանդիսությունները տպագրվեցին Հայոց Եկեղեցու պատմությանը, ծեսերին և խորհուրդներին նվիրված ուսումնասիրություններ և հանրամատչելի գրքույկներ, այդ թվում և՝ Գերաշնորհ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի «Հայ Եկեղեցու Պատարագամատույցը» (գրաբար-աշխարհաբար) և «Հայ Եկեղեցու դավանանքը և հավատո հանգանակը», Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի» (հայերեն, անգլերեն, ռուսերեն), «Սրբալույս Մյուռոն» (Հ. Քյոսեյան, Վ. Դևրիկյան, Հոգեշնորհ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյան, Ն. Խանջյան) գրքերը: Վերջինիս համառոտ տարբերակը լույս տեսավ նաև ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն: Շքեղ և ճաշակավոր ձևավորմամբ հրատարակվեց 1700-ամյակի հանդիսությունների ժամանակացույցը ներկայացնող գրքույկը (ձևավորող՝ Մ. Մկրտչյան): Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակը Եզնիկ Սրբազանի ղեկավարությամբ հրատարակել է գրքույկ, ուր տեղեկություններ են հաղորդվում 1700-ամյակին մասնակցած քույր Եկեղեցիների մասին:

Անհրաժեշտ է նաև նշել, որ 1700-ամյակի շրջագծում Հայաստանի և Արցախի 40 ծիսերում իրականացվեց կատեխիզմի ծրագիրը, որի երկամյա յուրաքանչյուր դասընթացում ներգրավվեցին 9-16 տարեկան ավելի քան 1000 երեխաներ, իսկ դասընթացների շրջանավարտների ընդհանուր թիվն արդեն անցնում է երեք հազարից:

Սեպտեմբերյան բուն հանդիսությունների նախօրեին, սեպտեմբերի 20-ին, Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտում տեղի ունեցավ «17000 ձայների համերգ» անվանումը կրող միջոցառումը, որին մասնակցեցին և հավաքական երգեցողությամբ հանդես եկան մարզադաշտում հավաքված 17000 երեխաներ և պատանիներ:

Սեպտեմբերի 21-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ 1700-ամյակին և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման տասնամյակին նվիրված հանդիսավոր նիստ: Մինչ այդ, առավոտյան մեր եկեղեցականաց դասի և քույր Եկեղեցիների պետերի ու ներկայացուցիչների մասնակցությամբ եկեղեցական արարողություններ տեղի ունեցան Խոր Վիրապում և Ծիծեռնակաբերդում:

Սեպտեմբերի 22-ի առավոտյան դարձյալ քույր Եկեղեցիների պետերի և ներկայացուցիչների մասնակցությամբ էկումենիկ արարողություն կատարվեց Մայր Տա-

ճարում, երեկոյան Սրբալույս Մյուռոնի օրհնությունը՝ Ս. Տլդակ նորաոծ բաց խորանում:

Սեպտեմբեր 23-ին՝ Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցու օծումը:

Սեպտեմբերի 30-ին՝ եպիսկոպոսական ձեռնադրություն:

1700-ամյակի հանդիսություններին Մայր Աթոռ այցելեցին քույր Եկեղեցիների հետևյալ պետերն ու ներկայացուցիչները.

Սեպտեմբերի 21-23-ը՝

1. Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետ Ն. Ս. Ալեքսի Բ Պատրիարքը.

2. Հնդիկ Մալաբար Եկեղեցու պետ, Արևելքի Կաթողիկոս Ն. Ս. Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա-ն.

3. Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Պատրիարք Ն. Ս. Պետրոս Է-ն.

4. Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պետ Ն. Ս. Թեոկտիստ Պատրիարքը.

5. Պատվիրակություններ Ղպտի, Ասորի, Վրաց, Սերբիայի, Կիպրոսի, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիներից, ներկայացուցիչներ Անգլիկան, ԱՄՆ-ի Եպիսկոպոսական, Դանիայի Լյութերական, Գերմանիայի Ավետարանական Եկեղեցիներից, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերը: Հանդիսություններին մասնակցում էին նաև Հայ Կաթոլիկ և Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչներ և Մխիթարյան միաբանության հայրեր:

Սեպտեմբերի 25-27-ը՝ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պետ Ն. Ս. Հովհաննես-Պողոս Բ Պապը:

Նոյեմբերի 3-5-ը՝ Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ն:

1700-ամյակի հանդիսությունները մեկնաբանելու համար հավատարմագրվել էին 85 լրատվական գործակալություններ ներկայացնող 160 լրագրողներ, որոնց համար ստեղծվել էին աշխատանքային անհրաժեշտ պայմաններ և համապատասխան լեզուներով բաժանվել վերը նշված հրատարակություններից:

Մյուռոնօրհնեքը, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծումն ու Հռոմի Սրբազան Պապի այցելությունը հեռարձակվել են ուղիղ եթեր Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ:

Ե. ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1700-ամյակի հանդիսությունների նախապատրաստական փուլում Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը, Մայր Աթոռի Դիվանապետ քարտուղարության հետ համագործակցությամբ, ապահովել է նամակագրական կապը և ամբողջ տեղեկատվությունը՝ կապված քույր Եկեղեցիների ներկայացուցիչների այցելության, նրանց պատվիրակությունների անդամների ճշտման ու տեղավորման հետ, ինչպես նաև մասնակցել պատվիրակությունների անդամների ընդունման, հյուրընկալման, ապա և ճանապարհման աշխատանքներին:

Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը, գլխավորությամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի, ՀՀ պետական ներկայացուցիչների և Հայաստանում Վատիկանի պապական նվիրակի ու Վատիկանի ներկայացուցչության հետ կազմակերպել է նաև Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի այցելությունը:

Բաժինը Եկեղեցիների Համաշխարհային խորհրդին, միջեկեղեցական կազմակերպություններին ու քույր Եկեղեցիներին նվիրված տեղեկատվական բնույթի 38 թարգմանական գործեր է կատարել, որոնք հարկավոր են թե՛ բաժնի ամենօրյա աշխատանքների և թե՛ Մայր Աթոռի միաբանությանն ու աշխատակիցներին անհրաժեշտ տեղեկությունների ստացման համար:

Իրականացվել է նաև հրատարակությունը հետևյալ չորս գործերի.

ա. «Տեղեկություններ Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյա տոնակատարություններին մասնակցելու համար Հայաստան ժամանած պատվիրակությունների Եկեղեցիների մասին».

բ. The Armenian Apostolic Holy Church, թարգմանությունը՝ Գայանե Ալեքսանյանի.

գ. Կազմվել է «2002 թ. սեղանի օրացույց»՝ եկեղեցական տոների մասին հոդվածներով.

դ. Կազմվել է «Pro Oriente»-ի կողմից կազմակերպված Արևելյան և Հռոմեա-Կաթոլիկ Եկեղեցիների միջև երկխոսությունների ընթացքում Հայ Եկեղեցու ներկայացուցիչների զեկուցումների ժողովածուն (30 զեկուցում, 450 էջ)՝ անգլերեն:

Բաժինը կրթաթոշակ է հայթայթել և անհրաժեշտ փաստաթղթեր պատրաստել արտասահման ուսանելու մեկնող Մայր Աթոռի երիտասարդ վեց միաբանների համար.

ա. Տ. *Դանիել աբեղա Թումանյան*, Լեհաստան, Վարշավա, 2001 թ.

բ. *Վարդգես սարկավագ Մանուկյան* (այժմ Տ. Հովակիմ աբեղա), փետրվարհունիս, 2001 թ., Դանիա, Սարհուս.

գ. *Արթուր սարկավագ Կարապետյան*, օգոստոս-հոկտեմբեր, 2001 թ., Վիլեմով, Չեխիա.

դ. *Բաբկեն սարկավագ Բոզիկյան*, սեպտեմբեր-դեկտեմբեր, 2001 թ., Բոսսե, Շվեյցարիա.

ե. *Հրանտ սարկավագ Կոստանյան*, սեպտեմբեր-դեկտեմբեր, 2001 թ., Բոսսե, Շվեյցարիա.

զ. *Նելսոն սարկավագ Բաբայան*, սեպտեմբեր-դեկտեմբեր, 2001 թ., Բոսսե, Շվեյցարիա:

Բաժինն իր գործուն մասնակցությունն է ունեցել Հայաստանում և արտասահմանում կազմակերպված միջեկեղեցական հետևյալ հավաքներին ու գիտաժողովներին.

Ա. ԺՈՂՈՎՆԵՐ

1. Մայիսի 28 - հունիսի 4-ը Ծաղկաձորում տեղի է ունեցել Եկեղեցիների Եվրոպական Խորհրդի «Եկեղեցիները երկխոսության մեջ» և ԵՀԽ-ի «Հավատք և կարգ» հանձնախմբի «Եկեղեցու բնույթը և նպատակը» խորագրով համատեղ գումարված նիստ, որում երեք զեկուցումներ են կարդացվել՝ նվիրված Հայոց Եկեղեցուն: Բացի Ծաղկաձորում տեղի ունեցած նիստից, նրա մասնակիցները Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մասնակցել են Հոգեգալստյան Սրբազան Պատարագին, այցելել Սևանա, Հաղարծնի և Գեղարդա վանքեր:

2. Հունիսի 1-7-ը Ծաղկաձորի հայ կաթոլիկ քույրերի ամառանոցում, դարձյալ 1700-ամյակի շրջագծում, «Կորած մարգարիտի որոնումներում» խորագրի ներքո տեղի է ունեցել Արևելքի ու Արևմուտքի վանականների հանդիպում, որի նիստերից մեկը վերստին անցկացվել է Գեղարդա վանքում:

3. Հուլիսի 27 - օգոստոսի 1-ը Լոնդոնում «Երկխոսություն Անգլիկան և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև» թեմայով կազմակերպվել է Անգլիկան-Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջազգային հանձնախմբի նախապատրաստական հանդիպումը, որին Հայոց Եկեղեցուց մասնակցել է Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը: Հանդիպման ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել հաստատելու Անգլիկան-Արևելյան Ուղղափառ միջազգային հանձնախումբ, որի առաջին հավաքը մեր երկրներով տեղի կունենա 2002 թ. հունիսի 7-12-ը: Այս հավաքի մասնակիցները նաև իրենց ուրախությունն են հայտնել և շնորհավորել մեր Եկեղեցուն 1700-ամյակի առթիվ:

4. Հոկտեմբերի 1-27-ը Կաթոլիկ Եկեղեցու Հռոմում գումարված եպիսկոպոսական ժողովին Հայոց Եկեղեցուց որպես դիտորդ մասնակցել է Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Վատիկանի Բ ժողովից հետո գումարվող այս ժողովի նիստերին նախագահում է Հռոմի Պապը: Այժմյան՝ 10-րդ հավաքի թեման էր «Եպիսկոպոսը Հիսուս Քրիստոսի Ավետարանի ծառա՝ հանուն աշխարհի հույսի»: Հոկտեմբերի 11-ին այս թեմայի շուրջ զեկուցումներով հանդես են եկել և ներկաների հետ իրենց տեսակետները կիսել քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, այդ թվում և՝ Տ. Միքայել եպս. Աջապահյանը:

Բ. ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ

1. Մարտի 23-25-ը Ֆրիբուրգում (Շվեյցարիա) «Հայ Առաքելական Եկեղեցին էկումենիկ շարժման սրտում» թեմայով կազմակերպված գիտաժողովին Մայր Աթոռի կողմից մասնակցել են Տ. Շահե արքեպս. Աճեմյանը, Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը և Տ. Աբել քահանա Օղլուգյանը:

2. Հունիսի 25 - հուլիսի 1-ը Ժենևում 1700-ամյակի շրջագծում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը կազմակերպել էր «Հայկական ոգեկանություն» խորագրով էկումենիկ դասախոսությունների շարք՝ նվիրված Հայոց Եկեղեցու պատմությանը և

աստվածաբանությանը, որին մասնակցել են ինչպես հայ, այնպես էլ քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ և տարբեր երկրների գիտնականներ: Մայր Աթոռի կողմից զեկուցումներով հանդես են եկել Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը և Տ. Աբել քհն. Օղլուգյանը: Օրհնության իր խոսքն է ասել Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

3. Սեպտեմբերի 4-8-ը Միլանում տեղի է ունեցել 1700-ամյակին նվիրված գիտաժողով, որը կազմակերպվել էր Պողոս Զ Պապի անվան հիմնադրամի կողմից: Գիտաժողովին իրենց մասնակցությունն են բերել և զեկուցումներով հանդես եկել Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը, Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը և Տ. Դանիել աբեղա Ֆինդիկյանը:

Նշենք նաև, որ մայիսի 10-15-ը Ռումինիայում տեղի ունեցած «Էկումենիկ պաշտոնյաների հանդիպում» անվամբ ժողովին մասնակցել է Տ. Ավետիս աբեղա Սահակյանը, իսկ ապրիլի 19-22-ը Ստրասբուրգում Եկեղեցիների Եվրոպական Խորհրդի երիտասարդական էկումենիկ հանդիպմանը՝ Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի աշխատակցուհի Պերճուհի Արմենյանը:

Զ. ՀՈԳԵՎՈՐ - ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գևորգյան Հոգևոր Ճեմարան

Անցնող և սկսվող ուսումնական տարիները Մայր Աթոռի հոգևոր-կրթական հաստատությունների սաների համար, բուն ուսումնական գործընթացից բացի, նշանավորվեցին 1700-ամյակի հանդիսություններին ու եկեղեցական արարողություններին գործուն մասնակցությամբ:

Նախորդ տարվա նման Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությունը (տեսուչ՝ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյան) կազմված է չորս հոգևորականներից և երկու աշխարհականներից: Դասախոսական կազմում ընդգրկված են 42 դասախոս, որոնցից 16-ը հոգևորական են և 26-ը՝ աշխարհական, այդ թվում՝ գիտությունների 6 դոկտոր և 12 թեկնածուներ:

2000-2001 թթ. ուսումնական տարում Ճեմարանն ավարտեցին 26 հոգի, որոնցից 22-ը, հաջող հանձնելով սարկավագական քննությունները, ձեռնադրվեցին սարկավագ:

2001-2002 թթ. ուսումնական տարին Ճեմարանում սկսվեց սեպտեմբերի 1-ին 116 ուսանողներով, որոնցից յոթն ուսանում են նախապատրաստական լսարանում, 25-ը՝ Ա լսարանի երկու դասարաններում, 25-ը՝ Բ լսարանի դարձյալ երկու դասարաններում, 8-ը՝ Գ լսարանում, 14-ը՝ Դ լսարանում, 12-ը՝ Ե լսարանում, 25-ը՝ Զ լսարանում:

Ճեմարանի խնդիրներին և ուսումնական գործընթացին առավել մոտիկից ծանոթանալու համար անձնապես մասնակցել ու նախագահել ենք գումարված մանկավարժական ժողովներին:

2001 թ. հոկտեմբերի 22-ին և նոյեմբերի 6-ին Ճեմարանի հանդիսությունների դահլիճում կազմակերպվեցին ավարտաճառերի երաշխավորակային պաշտպանություններ, որոնց ընթացքում իրենց աշխատանքները պաշտպանեցին 9 սաներ:

Նոյեմբերի 27-ին և դեկտեմբերի 14-ին դարձյալ կազմակերպվեցին սարկավագական քննություններ, որոնք հաջող հանձնած 32 սաները Ս. Ստեփանոս Նախավկայի տոնին (դեկտեմբերի 25) ձեռնադրվեցին սարկավագ:

Ճեմարանական կյանքն անցնող ամիսներին հարուստ էր նաև հոգևոր-մշակութային և գիտակրթական տարբեր միջոցառումներով: Ուխտագնացություններ են կազմակերպվել դեպի Ս. Գեղարդ, Գառնի, Հավուց Թառ, Ս. Ստեփանոս և Կեչառիս վանքերը:

Ճեմարանցիների համար յուրօրինակ հոգևոր-գիտական ուխտագնացություններ են եղել այցելությունները դեպի Երևանի Մատենադարան, որի ձեռագրային ու տպագիր պահոցներից՝ որպես անսպառ մի շտեմարանից, նրանցից շատերն օգտվում են իրենց ավարտաճառերը գրելիս:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Մայր Աթոռի եկեղեցական ներքին կյանքից բացի Ճեմարանի ուսանողները կանոնավոր կերպով մասնակցում են ժամերգություններին և Ս. Պատարագի արարողություններին Ս. Աստվածածին, Ս. Գայանե, Ս. Հռիփսիմե և Ս. Շողակաթ եկեղեցիներում:

Նրանք մասնակցել են նաև Մայր Աթոռում ու Երևանում տեղի ունեցած տարբեր հանդիսությունների, Ճեմարանի հարկի ներքո կազմակերպել եկեղեցական տոներին ու հոբելյաններին նվիրված մի շարք միջոցառումներ, իրենց նպաստը բերել կիրակնօրյա դպրոցների ուսումնական գործընթացին, հոգևոր-եկեղեցական բնույթի նյութերով թղթակցել հայաստանյան պարբերականներին:

2. *Վազգենյան Հոգևոր Դպրանոց*

Մանկի Վազգենյան Դպրանոցը (տեսուչ՝ Տ. Բագրատ աբեղա Գալստանյան) անցած ուսումնական տարին ավարտեց 52 ուսանողներով: 6 լսարանն ավարտած 8 սաներ, ընդունված կարգով, իրենց ուսումնառության վերջին տարին կանցկացնեն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Դպրանոցի ուսուցչական կազմը բաղկացած է 27 դասախոսներից՝ 9 հոգևորական և 18 աշխարհական, ովքեր իրենց դասավանդության օրերին Երևանից և Ս. Էջմիածնից գալիս են Մանկ՝ ապահովելով դասավանդումների կանոնավոր ընթացքը:

Աշխարհական ուսուցիչները, ինչպես Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Երևանի պետական համալսարանի և բարձրագույն ուսումնական մյուս հաստատությունների դասախոսներ և գիտաշխատողներ են:

Ուսումնական այս տարում առաջին լսարան են ընդունվել 15 հոգի, որով սաների այժմյան ընդհանուր թիվը դարձել է 53:

Դպրանոցի սաներից 2 կիսասարկավագ 2001 թ. դեկտեմբերի 25-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ձեռնադրվեցին սարկավագ:

Լույս է տեսել Դպրանոցի «Ս. Առաքելոց» ուսումնական տարեգրքի առաջին հատորը, որը նվիրված է Դպրանոցի 10-ամյակին: Այս տարի լույս կտեսնի տարեգրքի երկրորդ հատորը:

Դպրանոցի սաներն իրենց մասնակցությունն են բերում Մայր Աթոռի Գեղարքունյաց թեմի ու Սևան քաղաքի եկեղեցական, մշակութային կյանքին, թղթակցում եկեղեցական և հանրապետական ու մարզային պարբերականներին:

Մեծի Պահոց շրջանում տեսչության և ուսանողության նախաձեռնությամբ Դրպրեվանքում կազմակերպվել են «Մեծ Պահքը՝ ուղեցույց դեպի Լույս - Հարություն» ընդհանուր խորագրով շաբաթօրյա երեկոյան հավաքույթներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ տվյալ կիրակիի հոգևոր խորհրդից բխող բնաբան առաջնորդողը:

Ուրախությամբ պետք է նշենք, որ ավարտվել են ուսանողական ննջարանային համալիրի կառուցման աշխատանքները և այժմ ընթանում են ներքին հարդարման աշխատանքները: Ննջարանային այս համալիրի առաջիկա շահագործումը մեծապես կնպաստի ուսանողության կենցաղային պայմանների առավել բարելավմանը, որն իր դրական անդրադարձը կունենա նաև կրթության ընդհանուր մակարդակի վրա:

Նույն այս նպատակին է նպատակամիտված և ԵՀԽ Կոր Մեղանի Հայաստանյան գրասենյակի հովանավորությամբ Դպրեվանքին կից հիմնված անասնապահական օժանդակ տնտեսությունը, որը թարմ կաթնամթերք և մսամթերք է մատակարարում ոչ միայն Դպրեվանքին, այլև մասամբ նաև Մայր Աթոռին:

3. Գյումրիի Ընծայարան

Մայր Աթոռի հոգևոր-կրթական հաստատությունների շարքում շարունակում է գործել Շիրակի թեմի՝ 1992 թ. հիմնված Գյումրիի Ընծայարանը, որի տեսուչն է թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Ընծայարանում դասավանդում են տեղի բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսները, ինչպես նաև միջնակարգ դպրոցների ուսուցիչները: Դպրանոցի, ուր կարող են ընդունվել հանրակրթական դպրոցն ավարտած պատանիները, եռամյա դասընթացն ամբողջովին համապատասխանեցված է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի առաջին երեք լսարանների ծրագրին, որով Դպրանոցի տեսչությունն ակնկալում է, որ ապագայում այս հաստատության շրջանավարտները, անցման անհրաժեշտ քննությունները հանձնելուց հետո, կփոխադրվեն Ճեմարանի Դ լսարան:

2000-2001 թթ. ուսումնական տարում Դպրանոցը շրջանավարտներ չի ունեցել երրորդ լսարան չունենալու պատճառով: Դպրանոցն այսօր ունի 22 ուսանող, որից Ա լսարանում՝ 8, Բ լսարանում՝ 10, իսկ Գ լսարանում՝ 4 ուսանող:

4. Կալկաթայի Մարդասիրական Ճեմարան

Ինչպես արդեն տեղյակ եք, 1999 թվականի փետրվարի 15-ին Կալկաթայի Գեղագույն Դպրարանը հօգուտ Մայր Աթոռի վճռեց Ճեմարանի պատկանելության խնդիրը և Ճեմարանը հանձնվեց Ս. Էջմիածնի տնօրինությանը:

Ճեմարանի տեսչի պարտականությունները շարունակում է կատարել Տ. Ղևոնդ աբեղա Ղևոնդյանը, իսկ հոգաբարձուն՝ տիկին Սոնյա Ջոնն է:

Ներկայիս Ճեմարանում ուսանում են 61 երեխաներ, որոնք ծնողազուրկ են կամ էլ կարիքավոր ընտանյաց զավակներ: Ճեմարանում դասավանդությունն իրականացվում է 8 ուսուցիչների կողմից: Ուսումնառությունը Մարդասիրական Ճեմարանում նախատեսված է յոթնամյա շրջանի համար:

5. Հայորդյաց տներ

Մայր Աթոռում ամբողջովին աշխատանքի անցնելով Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը Մեր կողմից 2001թ. հոկտեմբերին ազատվեց Հայորդյաց տների հոգևոր տեսչի պաշտոնից, և այդ պաշտոնում ծառայության կոչվեց Տ. Խաչ քահանա Ղազարյանը:

2000-2001 թթ. ուսումնական տարում Հայորդյաց երեք տներից Արաբկիրինն ունեցել է 697, Նորքինը՝ 877, Մալաթիայինը՝ 596, և Մանրանկարչության կենտրոնը՝ 35 սաներ:

Հայորդյաց տներում աշխատում են 268 հոգի, որոնցից 12-ը՝ ՀՏ կենտրոնական գրասենյակում, 80-ը՝ Արաբկիրում, 96-ը՝ Նորքում, 69-ը՝ Մալաթիայում, և 11-ը՝ Մանրանկարչության արվեստի կենտրոնում:

Հայորդյաց տներում գործում են արվեստի, արհեստագործության, գիտատեխնիկական և տարբեր մարզաձևերի խմբակներ, որոնցից ամեն մեկում երեխաները, մասնագիտական հմտությունից բացի, ստանում են նաև քրիստոնեական դաստիարակություն: Հայորդյաց այս երեք տներից յուրաքանչյուրն ունի Հայ եկեղեցասիրաց երիտասարդաց միություն:

Մարտ-դեկտեմբեր ամիսներին այստեղ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնց մեծ մասը նվիրված է եղել 1700-ամյակին: Հոբելյանական ամենամեծ միջոցառումը Հայորդյաց տների կազմակերպած տոնական համերգն էր, որը տեղի ունեցավ 2001 թ. սեպտեմբերի 24-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում:

Նման երկրորդ մեծ միջոցառումը նոյեմբերի 5-ին կազմակերպված ցուցահանդես-վաճառքն էր, որը նվիրված էր Մեր գահակալության երկրորդ տարեդարձին: Ցուցահանդեսը բացվեց Նկարիչների միությունում, իսկ համերգը տեղի ունեցավ Սպանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում: Երկու միջոցառումներին էլ Մեր ընկերակցությամբ ներկա էր Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքը:

Ծաղկազարդի տոնին՝ ապրիլի 8-ին, Հայորդյաց տների ուժերով և սաների անմիջական մասնակցությամբ Երևանում, Վարդան Մամիկոնյանի արձանի շրջակա հրապարակում, տեղի ունեցավ կավճանկարային մրցույթ, որին մասնակցեցին նաև Երևանի տարբեր դպրոցների աշակերտներ: Մրցույթի հաղթողները ստացան Աստվածաշունչ՝ Մեր ընծայագրով, մանկական գրքեր և գրենական պիտույքներ:

Հուլիս-օգոստոս ամիսներին Մալաթիայի ՀՏ «Տաթև» պարային համույթը համերգային հյուրախաղերով հանդես եկավ Եվրոպայի 13 քաղաքներում:

ՀՏ սաները մասնակցել են նաև ուխտագնացությունների, ամռանը հանգստացել Ծաղկաձորի «Ծաղկահովիտ» ճամբարում:

Հանրապետական և միջազգային մի շարք մրցույթներում ու փառատոներում մեր սաները գրավել են մրցանակային տեղեր՝ մի շարք դեպքերում լավագույնը ճանաչվելով: Այսպես, Լեհաստանում կազմակերպված «Տիեզերական վիարդես» ցուցահանդեսում ՀՏ սաներից յոթն արժանացել են տարբեր մրցանակների, իսկ Մալաթիայի ՀՏ սաե Լիլիթ Արսենյանը՝ մրցույթի գլխավոր մրցանակին՝ «Գրան Պրիին»: Մալաթիայի և Արաբկիրի ՀՏ թատերական խմբակների սաները մասնակցել են «Նոան հատիկ» հանրապետական փառատոնին՝ արժանանալով թատերական գործիչների հատուկ գնահատանքին: Նշանակալից են հաջողությունները նաև սպորտային տարբեր մարզաձևերի հանրապետական առաջնություններում:

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնակատարությունների օրերին Հայորդյաց տների սաները կազմակերպեցին մի շարք միջոցառումներ, որոնց ընթացքում ՀՏ սաներին, ազատամարտիկների երեխաներին և տարբեր դպրոցների աշակերտների բաշխվեցին Մայր Աթոռի կողմից պատրաստված Ամանորյա նվերներ:

Հայորդյաց բոլոր տներում կատարվել են նաև վերանորոգման աշխատանքներ: ՀԲԸՄ ֆինանսավորմամբ ՀՏ կենտրոնական գրասենյակը և Արաբկիրի ու Նորքի ՀՏ-ները կահավորվեցին Իտալիայից բերված կահույքով: Նախատեսված է նման կահույքով կահավորել նաև Մալաթիայի ՀՏ-ն և Մանրանկարչության արվեստի կենտրոնը, որի նորոգված շենքի բացման արարողությունը տեղի ունեցավ հուլիսին, իսկ հոկտեմբերի 3-ին՝ կատարվեց Նորքի ՀՏ վերանորոգված մասնաշենքի բացումը, որին Մեր ներկայությամբ մասնակցեց նաև ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը:

Է. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԵՎ «ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ-ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

2001 թ. Մայր Աթոռի թանգարաններ այցելած հայ և օտարազգի անհատների և խմբերի անդամների թիվն անցել է 3000 հոգուց, որոնց մաս են կազմում և Հայաստան պաշտոնական այցելությունների ժամանակ Մայր Աթոռ եկած պատվիրակությունների մի զգալի մասը: Նրանցից, ըստ ժամանակագրական ընթացքի, կցանկանայինք նշել Լիբանանի, Ղազախստանի, Բելառուսի, Լեհաստանի նախագահների, ինչպես նաև Հավաքական անվտանգության պայմանագրի անդամ պետությունների Անվտանգության խորհրդի քարտուղարների երևանյան նիստի մասնակիցնե-

ղի, Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի խոսնակի, Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր տնօրենի այցելությունները:

Շարունակվում են համալրվել թանգարանային միավորներն ու ձեռագրային ֆոնդը: Տարբեր նվիրատվություններով և գնումներով ստացված այս նոր միավորներից կցանկանայինք հատկապես նշել Շահե արքեպիսկոպոս Սճեմյանի՝ Մեր ծննդյան 50-ամյակի առիթով նվիրաբերած՝ Հեթում թագավորի ԺԳ դարի Ավետարանը, որը հայ ձեռագրային արվեստի և զարդանկարչության լավագույն օրինակներից է:

2000 թ. Մեր կողմից հիմնված և Մեր երջանկահիշատակ նախորդի անվամբ կնքված «Գարեգին Ա Աստվածաբանական-հայագիտական կենտրոն»-ի տեսքեն այս տարի ամռանը նշանակեցինք Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ, պատմական գիտությունների դոկտոր տիար Ազատ Բոզոյանին:

Կենտրոնն առայժմ գտնվում է Գանձասար գրադարանի տարածքում: Այժմ կատարվում է գրադարանի գրքային ֆոնդի վերահաշվառում և վերաքարտավորում:

Գրադարանը պարբերաբար համալրվում է նոր գրականությամբ, որի ստացման երեք գլխավոր աղբյուրներն են Հայրապետական Մեր ուղևորությունների ընթացքում հայկական ու այլ երկրների տարբեր կազմակերպությունների և հաստատությունների Մեզ ընծայած գրքերը, Մայր Աթոռին նվիրված գրականությունը և հրատարակված նոր գրականության պարբերական գնումները «Գարեգին Ա» կենտրոնի տնօրինության կողմից:

Երևանի Մատենադարանի հետ համատեղ գործակցությամբ սկսվել են հնատիպ ու բուժման կարոտ գրքերի ախտահանման և կազմարարական բնույթի աշխատանքները:

Ծրագրվում է գրադարանում ի մի հավաքել Հայոց Եկեղեցուն և հայագիտության տարբեր գիտակարգերին նվիրված գրքերը, հոդվածներն ու անտիպ ուսումնասիրությունները կամ նրանց պատճենված օրինակները, որով «Գարեգին Ա Աստվածաբանական-հայագիտական կենտրոն»-ը կարևոր համակարգող դեր կարող է խաղալ այս բնագավառում:

Ը. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԱՆՔԵՐՆ ՈՒ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Ինչպես գիտեք, Հայաստանում անմիջաբար Մայր Աթոռին են ենթարկվում Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Խոր Վիրապ, Սևանա և Գեղարդա վանքերն ու Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Քանի որ Սևանա վանքում է Վազգենյան Հոգևոր Դպրանոցը, ուստի այն ներկայացվում է Դպրանոցի հետ միասին:

Ս. Հռիփսիմե վանք

Մեր տնօրինությամբ այս տարվա սեպտեմբերի 1-ից Ս. Հռիփսիմեի վանահայր է նշանակվել Տ. Մատթեոս աբեղա Պողոսյաները: Թեև վանքը գտնվում է բարվոք վիճակում, սակայն այստեղ ևս կատարվել են ներքին բարեկարգման ու հորդորության մի շարք աշխատանքներ թե՛ վանքի շրջափակում և թե՛ նրանից դուրս: Վանքի ներսում կատարվել է ծառատունկ և տնկվել են խնձորենու, դեղձենու և լացող ուռենու 200 տնկիներ: Վանքապատկան 4 հեկտար հողամասը մաքրվել է փշերից ու մացառներից, որից հետո վարվել և պատրաստ է գարնանն առվույտի ցանքի կատարման համար: Նման աշխատանքները տնտեսական օգուտից առավել նաև մի անդրադարձ են դեպ անցյալի վանական ավանդները, երբ վանքերի միաբանությունները, իրենց բուն հոգևոր սպասավորությունից բացի, նման աշխատանքով հոգում էին նաև վանքի կարիքները:

Պետք է արձանագրել, որ շնորհիվ հավատացյալների մեծ հոսքի և այստեղ կատարվող պսակադրությունների ու մկրտությունների՝ վանքի տարեկան եկամուտը գերազանցում է նրա ծախսերը:

Ս. Գայանե վանք

Վանքում (վանահայր՝ Տ. Ներսեհ աբեղա Խալաթյան) առավոտյան ժամերգությունը կատարվում է ժամը 7.30-ին, իսկ երեկոյանը՝ 17.00-ին: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Բ, Գ և Դ լսարանների սաները կանոնավոր կերպով մասնակցում են Ս. Գայանե վանքում կատարվող երեկոյան ժամերգություններին:

Ամեն հինգշաբթի, երեկոյան ժամերգությունից հետո, խոսվում է օրվա տոնի խորհուրդը մեկնող, բացատրող քարոզ: Վանքում նաև կրոնական դասընթացներ են կազմակերպվել այստեղ սպասավորող դպիրների համար, ովքեր ցանկանում են ընդունվել Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Անցած տարվա ընթացքում Տ. Շահե արքեպս. Աճեմյանի մասնակցությամբ այստեղ կատարվել են երեք ընդհանրական մկրտություններ, որոնց ընթացքում մկրտվել է շուրջ 700 երեխա:

Ս. Գայանե վանքի շուրջը ձևավորված համայնքի հավատացյալների թիվը հասնում է 3000-ի: Վանքի հավատացյալների հետ Ս. Գայանեի հոգևոր սպասավորները ուխտագնացության են մեկնել Տաթևի, Հաղարծնի, Հաղբատի, Սևանի ու Գանձասարի վանքեր և Գյումրիի Յոթ Վերք եկեղեցի:

Վանահայր Հայր Սուրբից բացի վանքն ունի նաև 3 ծիսակատար քահանա, մեկ սարկավագ, 9 աշխարհական աշխատողներ և 10 հոգևոր կանանց երգչախումբ:

Այստեղ ևս կատարվել են ներքին բարեկարգման մի շարք աշխատանքներ, տեղադրվել ոռոգման նոր խողովակներ և պոմպեր, շնորհիվ որի վանքն այժմ ապահովված է կանոնավոր ջրամատակարարմամբ:

2001 թվականին, 2000 թվականի համեմատ, այստեղ բարելավվել է նաև ֆինանսական վիճակը:

Խոր Վիրապի վանք

Վանքը, բացի վանահայր Տ. Զարեհ վարդապետ Կաբաղյանից, ունի մեկ ծիսակատար քահանա ու դպիր, 5 աշխարհական աշխատողներ: Կազմվել է նաև 9 հոգևոր դպրաց երգեցիկ դաս՝ խորանում երգելու համար, և 34 հոգևոր երգչախումբ:

Առավոտյան ժամերգությունն ամռանն սկսվում է 8.30-ին, երեկոյան՝ 18.00-ին, իսկ ձմռանը՝ համապատասխանաբար՝ 9.30-ին և 16.00-ին: Ամեն կիրակի և համապատասխան տոն օրերին կանոնավորաբար մատուցվում է Ս. Պատարագ, որի ընթացքում պարտադիր քարոզ է խոսվում:

Պահոց օրերին կատարվում են Արևագալի և Հանգստյան ժամերգություններ՝ դարձյալ պարտադիր քարոզախոսությամբ: Վանքում կատարվում են նաև մկրտության և պսակի ծիսակատարություններ, հոգեհանգստյան և ուխտավորներին օրհնելու արարողություններ:

Այստեղ ևս 3 ընդհանրական մկրտություն է կազմակերպել Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Որպես Հայոց Դարձի նվիրական սրբավայր, անցնող ամիսներին գրեթե ամեն օր Խոր Վիրապ են եկել ուխտավորների խմբեր Հայաստանից և Սփյուռքից:

Մեր նախագահությամբ մարտի 31-ին կատարվեց անդաստանի արարողություն, որից հետո Հայրապետական Մեր պատգամը հղեցինք հայ հոգևորականությանն ու ժողովրդին, ապա բոլոր թեմերից այստեղ ներկա գտնված հոգևորականները, Մեր օրհնությունն ստանալով, մեկնեցին Արարատի մարզի բոլոր բնակավայրերը՝ այնտեղ կատարելու մկրտություններ:

Մեպտեմբերյան հանդիսությունների օրերին Մեր ուղեկցությամբ Խոր Վիրապ են եկել և համատեղ էկումենիկ արարողություններ կատարել քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, ապա և Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապը և Կոստանդնուպոլսի Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքը:

Անցնող տարում վանքում կատարվել են մեծ ծավալի շինարարական աշխատանքներ: Մայր Աթոռի տրամադրած միջոցներով հիմնովին վերակառուցվել են մատուռի քարե սալիկավոր հատակը, եկեղեցու մուտքի հատակը և աստիճանները, 2 կացարան, բարելավվել է վանքի և շրջակայքի լուսավորությունը, ասֆալտապատվել է մայրուղուց մինչև վանք բերող ճանապարհահատվածը:

Խոր Վիրապի վանական համալիրին է վերադարձվել շուրջ 3 հեկտար հողատարածք՝ վանքի ներքևի հրապարակն իր շրջակայքով:

Գեղարդա վանք

Գեղարդա վանքում ևս (վանահայր՝ Տ. Ղուկաս աբեղա Զաքարյան) կանոնավոր կերպով կատարվել են եկեղեցական արարողություններ ու ծեսեր: Վերակազմավորվել է երգչախումբը:

Վանքն ընդունել է ուխտավորների խմբերին:

Գեղարդա վանքի վանական տնտեսությանը, համահայկական ծառատունկի ծրագրի շրջանակում, տրամադրվել են խնձորի և տանձի տնկիներ, վանքի փեթակները նվիրատվությամբ՝ 30-ից հասցվել են 100-ի:

Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի

Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, 1700-ամյակի հանդիսությունների շրջագծում, քույր Եկեղեցիների շուրջ 15 հոգևոր պետերի ու ներկայացուցիչների, Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պետական այրերի և ազգային-եկեղեցական բարերարների ներկայությամբ օծեցինք 2001 թ. սեպտեմբերի 23-ին:

Օծումից հետո Մեզ հետ եկեղեցի են եկել և կազմակերպված էկումենիկ արարողություններին մասնակցել Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապը և Կ. Պոլսի Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքը:

Եկեղեցու շուրջն արդեն իսկ ձևավորվել է հավատացյալների 100 հոգանոց փոքրիկ մի համայնք, որի անդամները կանոնավոր կերպով ներկա են լինում առավոտյան ու երեկոյան ժամերգություններին, ինչպես նաև՝ կիրակնօրյա և հատուկ տոներին մատուցվող Պատարագներին: Հընթացս Պատարագի և յուրաքանչյուր հինգշաբթի քարոզ է խոսվում: Մեր տնօրինությամբ եկեղեցու հոգևոր հովիվ է նշանակվել Տ. Սահակ աբեղա Ծաքարյանը: Հայր Սուրբի հետ եկեղեցում սպասավորում են մեկ քահանա և մեկ սարկավագ:

Եկեղեցում դպրաց դաս ունենալու նպատակով մրցութային կարգով դիմումներ են ընդունվել 160 հոգուց, որոնք բոլորն էլ ունեն երաժշտական կրթություն:

Թ. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Հայրենի պետական ավագանու հետ Մեր հարաբերությունները եղել են ջերմ, բնականոն և կրել բարեկամական ու գործնական բնույթ: Պետության հետ պարբերական համագործակցությունը դրսևորվել է մշակույթի, տնտեսական ծրագրերի իրագործման ու սոցիալական օգնության բաշխման բնագավառներում:

Եկեղեցի-պետություն համագործակցության և սերտ շփումների շրջանակներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին են վերադարձվել մի շարք վանքեր, եկեղեցիներ ու վանքապատկան կալվածքներ: Ուրախությամբ պետք է նշենք, որ այս գործընթացը շարունակվում է և առաջիկայում Եկեղեցուն պիտի վերադարձվեն մի քանի տասնյակ սրբավայրեր: Այս ամենի հետ մեկտեղ, կատարվում են նաև եկեղեցապատկան հողատարածությունների չափումներ, որոնք ևս վերահանձնվելու են Մայր Աթոռին:

Եկեղեցի-պետություն հարաբերությունների ու համագործակցության ցայտուն արտահայտություն էին 1700-ամյակին նվիրված համատեղ հանդիսությունները, որոնք կազմակերպվեցին ու իրականացվեցին թե՛ եկեղեցական հանձնաժողովի և թե՛ պետական հանձնախմբի արդյունավետ աշխատանքով:

Մայր Աթոռի և նրա Գահակալի հանդեպ տածած պետության ակնածանքի և որդիական սիրո ու խոնարհության արտահայտությունն էր՝ Մեր ծննդյան 50-ամյակին նվիրված հանդիսությանը ՀՀ վարչապետի, պետական ավագանու այլ ներկայացուցիչների մասնակցությունը: Շնորհավորական իր ուղերձն էր հղել ՀՀ Նախագահը, որը կարդաց Նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշես Թումանյանը:

Սեպտեմբերի 1-3-ը Ստեփանակերտում մասնակցել ենք ԼՂՀ անկախության 10-րդ տարեդարձի հանդիսություններին:

Հոկտեմբերի 3-ին Նորքի Հայորդյաց տան վերանորոգված շենքի բացմանն իր մասնակցությունն էր բերել ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը, իսկ Վեհարանում տեղի ունեցած «Ծողակաթ» հեռուստատուդիայի մրցանակաբաշխությանը ներկա էր ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը:

Մեր օրհնությամբ նոյեմբերի 1-2-ը Մայրավանքում կազմակերպվեց «Եկեղեցի-պետություն» թեմայով երկօրյա գիտաժողով:

Ի վերջո անցնող տարում, ի նշան Մայր Եկեղեցու և հայրենի պետության միասնականության և նրանց առաքելության հաջողության ու զորացման, խորհրդանշական կերպով իրար միախառնվեցին քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակը և Հայաստանի անկախության 10-ամյակը: Եվ Մենք հավատում ենք, որ հոգևոր և ազգային կյանքում այս հոբելյանների միասնությունը՝ մեր ազգային ու եկեղեցական կյանքի վերազարթոնքի անսպառ ակունքն են դառնալու:

Ժ. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՀԵՏ

Մայր Աթոռի հարաբերությունները Նվիրապետական Աթոռների հետ եղել են բնականոն: Պարբերական բազմաբնույթ գրությունների միջոցով մեր Աթոռների հաղորդակցությունը շարունակվել է եղբայրական գործակցության ոգով: Մայր Աթոռը տևապես մասնակից է եղել Նվիրապետական Աթոռների եկեղեցական կյանքին:

Ապրիլի 23-25-ը Մենք, Արամ Ա-ի հետ և ընկերակցությամբ մի շարք եպիսկոպոսների, որպես ուխտավոր ուխտի գնացինք Դեր Զորի Նահատակաց եկեղեցի՝ մեր խոնարհումի և հարգանքի տուրքը մատուցելու Մեծ Եղեռնի զոհերին:

Հայոց Եկեղեցու կյանքը հուզող խնդիրների և 1700-ամյակի կազմակերպման հարցերի շուրջ համատեղ քննարկումներ եղան հուլիսի 27 - օգոստոսի 3-ը Բյուրականում Մեր և Կ. Պոլսի ու Երուսաղեմի Հայոց Պատրիարքների հետ:

Անհրաժեշտ է նշել, որ 1700-ամյակի հանդիսությունները մեծ շուքով ու միջազգային տարողությամբ նշելու գործում առանձնակի ավանդ ունեն և մեր Նվիրապետական Աթոռները:

Հատկանշական է, որ Սրբալույս Մյուռոնի օրհնությունից քառասուն օրեր առաջ Մյուռոնի նյութերի օրհնությունը կատարեցինք մեր Պատրիարք Հայրերի մասնակցությամբ, իսկ Մյուռոնի օրհնության ժամանակ Արամ Ա Կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Մյուռոնը հեղեց օրհնվող նոր Մյուռոնի մեջ:

ԺԱ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոցիալական ոլորտում գործունեությունն իրականացվել է Մայր Աթոռի սոցիալական ծառայության գրասենյակի, Կլոր Մեղանի Հայաստանյան գրասենյակի, ECLOF-ի (ԷԵՎՀՀՄ), բարեգործական ճաշարանների և թեմերի հետ համատեղ տարբեր ծրագրերի միջոցով:

Սոցիալական ծառայության գրասենյակի միջոցով սոցիալապես անապահով խավերին պատկանող ընտանիքներին բաժանվել է հագուստ և սնունդ, իսկ մի շարք մանկապարտեզներում մանկական խաղալիքներ: 5-15 հազարական դրամով 3 միլիոնից ավելի դրամ է բաժանվել սոցիալապես անապահով ընտանիքներին:

Մայր Աթոռի կազմում և միջոցներով գործում են բարեգործական 6 ճաշարաններ Երևանի Մալաթիա ու Արաբկիր համայնքներում, Մսևան, Հրազդան և Էջմիածին քաղաքներում, որոնցից յուրաքանչյուրում օրական սնվում է 200 հոգի: Այս ճաշարանները սերտ համագործակցության մեջ են տեղական իշխանությունների ու մասնավորապես սոցիալական ապահովության բաժինների հետ, և ճաշարաններից օգտվողների ցուցակները կազմվում են նաև նրանց ներկայացրած փվյաներով: Ճաշարաններում կազմակերպվում են նաև տարբեր միջոցառումներ, որոնցից Արաբկիրի Հայորդյաց տանը կից ճաշարանում տեղի ունեցած հանդիսությանը եկել էր Երևանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը: Սոցիալական բնույթի այսպիսի ծրագրերը, որոնք զուգակցվում են կարիքավորների հոգևոր մխիթարությամբ, մեր Եկեղեցու առաքելության բարեսիրական կարևոր ուղղություններից մեկն ենք դիտում:

Սոցիալական բնագավառում իրականացված ծրագրերի մեծ մասը բաժին է ընկնում Կլոր Մեղանին, որը տարբեր թեմերի, ինչպես նաև Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական Եկեղեցիների, «Շեն», «Սյունիք» «Նուարդ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ 2001 թ. ընթացքում իրականացրել է գյուղատնտեսության զարգացմանը նպատակաուղղված 14 և կրթական 23 ծրագրեր (2000 թ. համապատասխանաբար 10 և 18), որոնցից կցանկանայինք հիշատակել հետևյալները. 30 հաշմանդամ և ծնողազուրկ երեխաների ընդգրկող խաղալիքների պատրաստման արտադրամաս Վանաձորում, դարձյալ ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքների 40 երեխաների համար «Նուարդ» տիկնանց միության կողմից կազմակերպված արհեստագործության խմբակը, 14 աշխատատեղով գորգագործության արհեստանոցը Կոտայքի թեմում, Վայոց Ձորում հիդրոէլեկտրակայանի կառուցումը:

Կույրերին հասարակական կյանքում առավել լիարժեքորեն ներառելու համար կարևոր նշանակություն ունի «Արմենբրեյլ» ծրագրով «Բրեյլ» միջազգային կիրառություն ունեցող ստեղնաշարով կույրերին համակարգչային տեխնիկայից օգտվել սովորեցնելը, որի միջոցով նրանք կկարողանան նաև հաղորդակցվել աշխարհի տարբեր վայրերում գտնվող և այս ծրագրից օգտվող կույրերի հետ:

Կրթական բնագավառում իրականացվել է մի շարք դպրոցների համալրում նոր գրականությամբ և համակարգչային դասարանների ստեղծում: Դպրոցներում դա-

սավանդվող հանրակրթական բոլոր առարկաների գծով Եղեգնաձորում կազմակերպվել է տեղի. Միսիանի և Գորիսի 1200 ուսուցիչների վերապատրաստում:

Գյուղատնտեսական բնագավառում Կոր Մեղանի կարևոր ծրագրերից էին գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու նպատակով գյուղական ընտանիքներին միջինից ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրելը. ինչպես նաև Հայաստանի յոթ մարզերում և Արցախում երաշտից տուժած գյուղերի կարիքավոր 8099 ընտանիքների 50-ական կգ ալյուրի բաշխումը:

Գոհունակությամբ պետք է նշենք, որ շնորհիվ այս ծրագրերի ստեղծվել են 120 հիմնական և շուրջ այդքան էլ ժամանակավոր աշխատատեղեր. իսկ հատկացված 587 վարկերը վարկառուներին օգնել են հիմնելու 250 հիմնական և 400 ժամանակավոր աշխատատեղեր:

Ստեղծված բոլոր այս աշխատատեղերն առանձնակիորեն են կարևորվում հատկապես այն պատճառով, որ գլխավորաբար գյուղական բնակավայրերում են հիմնվել և հիմնականում երիտասարդներ են ընդգրկված, ինչը մեծապես պիտի նպաստի հող հայրենիին նրանց կապված մնալուն:

Առողջապահական ոլորտում մեծ կարևորություն կունենա ՀՀ Առողջապահության նախարարության Պրոկտոլոգիայի ինստիտուտի հանձնումը Մայր Աթոռի ենթակայությանը, որը մեկ միլիոն ԱՄՆ դոլարով գնել և անհատույց Մայր Աթոռին է հանձնել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը:

2001 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին Արարատյան Հայրապետական թեմի Բարեգործական գրասենյակի «Ծնողազուրկ երեխաների օգնության հիմնադրամին» Հայոց Եկեղեցու տարբեր թեմերից, մի շարք կազմակերպություններից և անհատ բարերարներից փոխանցվել է 272500 ԱՄՆ դոլար: Նույն ամիսների ընթացքում հիմնադրամի կողմից նպաստների հատկացման ընդհանուր գումարը կազմել է 301876 դոլար, որը բաշխվել է 1598 ընտանիքների պատկանող 2211 որբ երեխաների, այդ թվում 108 երկկողմանի որբ, 547 զոհված ազատամարտիկների և 144 բազմազավակ (ընտանիքում 4 և ավելի երեխաներ) ընտանիքների երեխաների:

ԺԲ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Մեր գործուն մասնակցությունը բերելով Հայաստանի գիտա-մշակութային և հասարակական կյանքին, Մայր Աթոռում ընդունել ենք հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների, ակադեմիական ու բուհական համակարգերի և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, մեր հերթին այցելելով Երևանի ու մարզերի մի շարք գիտա-մշակութային և ուսումնական հաստատություններ. Օրհնության մեր խոսքն ենք հղել 1700-ամյակի շրջագծում Հայոց Եկեղեցուն ու հայ հոգևոր մշակույթին նվիրված մի շարք գիտաժողովներին և ցուցահանդեսներին:

Հայրապետական իշխանության կոչվելուց հետո, շարունակելով Վազգեն Ա Վեհափառի գահակալության շրջանից ձևավորված այն ավանդույթը, որով մեր մտա-

վորականության մասնակցությամբ և նրանց նվիրված տարբեր հանդիսություններ ու մեծարման երեկոներ էին կազմակերպվում, անցնող ամիսներին Վեհարանի հանդիսությունների դահլիճում Մեր նախագահությամբ կազմակերպել ենք հետևյալ միջոցառումները.

1. Մարտի 24-ին՝ հանդիսություն՝ նվիրված Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակին:

2. Ապրիլի 2-ին՝ Պողոս Խաչատրյանի աշխատասիրությամբ հրատարակված «Գանձարան հայ հին բանաստեղծության» գրքի շնորհանդեսը:

3. Օգոստոսի 28-ին՝ Վեհարանում նշվել է նաև Մեր ծննդյան 50-ամյակը, որին, միաբանությունից ու պաշտոնությունից բացի, մասնակցեցին ՀՀ վարչապետն ու պետական մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև մտավորականության և հասարակայնության ներկայացուցիչներ:

4. Նոյեմբերի 9-ին՝ հանդիսություն՝ նվիրված կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի ծննդյան 80-ամյակին, որի ընթացքում մաեստրոյին ենք հանձնել «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան:

5. Դեկտեմբերի 2-ին՝ հանդիպել ենք Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների փոնին արդեն ավանդական դարձող կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների հավաքի մասնակիցների հետ:

Հայ եկեղեցական արվեստի ու հոգևոր մշակույթի հանդեպ աճող հետաքրքրության խոսուն արտահայտություններից են «Ս. Էջմիածնի գանձերը» պարբերաբար նորացվող ցուցանմուշներով ցուցահանդեսների կազմակերպումն աշխարհի թանգարանային տարբեր կենտրոններում: Անցյալ տարվա հոկտեմբերից այն ներկայացվում է Հոլանդիայի Ուտրեխտ քաղաքում: Անգլիա կատարած Հայրապետական Մեր այցելության շրջագծում նման ցուցահանդես բացվեց և Լոնդոնում, իսկ այս գարնանը նոր ցուցադրություն կկազմակերպվի Վիեննայում և նախնական բանակցություններ են վարվում Գերմանիայում, Դանիայում և ԱՄՆ-ում կազմակերպվելիք ցուցահանդեսների ուղղությամբ:

ԺԳ. ԲԱՆԱԿԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ զինված ուժերում, որպես հոգևոր սպասավորներ, ծառայության են կոչված 15 հոգևորականներ: Ծառայության ղեկավարն է Տ. Արշեն աբեղա Սանոսյանը:

Հոգևոր սպասավորներն ամեն ամսվա 4-10-ը լինում են Մայր Աթոռում՝ աշխատանքների կազմակերպման և նոր հանձնարարականներ ստանալու համար: Տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք հանդիպում-սեմինարներ՝ հոգևոր սպասավորների և բանակի սպայական կազմի ներկայացուցիչների համատեղ մասնակցությամբ:

1700-ամյակի հանդիսությունների շրջագծում բանակային զորամասերում կազմակերպվել են տարբեր միջոցառումներ և ցուցահանդեսներ: Զինվորականները ևս

մասնակից են դարձել իրենց զորամասերի հետ հարաբերվող տարածքների սրբավայրեր կատարված ուխտագնացություններին:

Տ. Արշեն աբեղա Սանոսյանի ջանքերով սեպտեմբերին Պաշտպանության նախարարությունում կազմակերպվել է հոգևոր երգի երեկո, որին մասնակցել են երաժշտական տարբեր խմբեր և անհատ կատարողներ: Դասախոսությամբ հանդես է եկել Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս Խորեն Պալյանը:

Ծառայության պատասխանատուն բազմիցս այցելել է զորամասեր՝ տեղում ծանոթանալու հոգևոր սպասավորների գործունեությանը և մասնակցելու այնտեղ կազմակերպվող տարբեր միջոցառումներին:

Հայր Սուրբն այս տարվա ապրիլի 5-15-ը «Կատեխիզոս Վերայնիզունգ» կազմակերպության հրավերով մեկնել է Գերմանիա, իսկ օգոստոսի 6-10-ը՝ Հունաստանի պաշտպանության նախարարության հրավերով՝ Հունաստան՝ ծանոթանալու այս երկրների բանակներում հոգևոր սպասավորության դրվածքին:

Հուլիսի 18-20-ը Մեր հրավերով Հայաստան են ժամանել Մեծ Բրիտանիայի զինված ուժերի հոգևոր ծառայության առաջնորդը և իր տեղակալը: Մեծ Բրիտանիայի զինված ուժերի հոգևոր ծառայության փորձը հայ հոգևորականներին և սպայական կազմին փոխանցելու նպատակով կազմակերպվել են դասախոսություններ Գևորգյան հոգևոր ճեմարանում, Սնանի Վազգենյան Դպրանոցում և «Մայր Հայաստան» թանգարանում: Հյուրերի հետ քննարկվել են ՀՀ զինված ուժերում հոգևոր ծառայության զարգացման և հետագա համագործակցության ծրագրեր:

Կապեր են ստեղծվել նաև ԱՄՆ-ի ու եվրոպական մի շարք երկրների՝ այս խնդրով զբաղվող տարբեր կազմակերպությունների հետ:

Բանակի հոգևոր սպասավորությանը զուգընթաց քրիստոնեական պատիժների իրականացման վարչության հետ գործակցաբար շարունակվել է նաև կալանավայրերի հոգևոր սպասավորությունը: Հայր Արշենը հունիսի 1-ին, Երևանների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, այցելել է անչափահասների ուղղիչ աշխատանքային գաղութ՝ իր հետ տանելով նաև նվերներ: Ամանորի հանդիսությանը մասնակցելու համար կանանց և անչափահասների ուղղիչ աշխատանքային գաղութ համանման այցելություն Հայր Սուրբի կողմից կատարվել է նաև դեկտեմբերի 31-ին:

Ամենշաբաթյա իր այցելությունները Կոշի աշխատանքային ուղղիչ գաղութ շարունակում է Տ. Կարապետ քհն. Գալոյանը:

Այժմ ծրագրեր են մշակվում կալանավայրերում հոգևոր ծառայությունը համակարգելու և զարգացնելու ուղղությամբ:

ԺԴ. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անցնող տարում Մայր Աթոռի հրատարակությունները ևս մեծապես հարաբերվել են 1700-ամյակի հետ: Այս առիթով, ինչպես ասացինք, տպագրվել են մի շարք գրքեր՝ նվիրված Հայոց Եկեղեցու պատմությանը, դավանանքին, ծեսերին և խորհուրդներին, որոնց օտարալեզու ընթերցողներին ու հյուրերին նույնպես ծանոթաց-

նելու համար հանդիսությունների նախօրեին այս գործերից մի քանիսը թարգմանաբար տպագրվեցին նաև ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն:

Քարոզչական կենտրոնը շարունակել է Հայոց Եկեղեցու տաղավար և նշանակալից մյուս տոներին և մեր Եկեղեցու խորհուրդներին ու ծիսական տարբեր արարողություններին նվիրված թերթոնների ու գրքույկների լույսընծայումը: Անցնող տարվա ընթացքում տպագրվել են քսան անուն նման թերթիկներ՝ 110.000 ընդհանուր տպաքանակով:

«Էջմիածին» ամսագրից, 15-օրյա պարբերականությամբ «Քրիստոնյա Հայաստանից», թեմական երկու ամսաթերթերից և Մայր Աթոռի ամենամյա «Օրացույցից» բացի տպագրվել է նաև 31 անուն գիրք՝ 83.700 օրինակ ընդհանուր տպաքանակով:

Թեև ոչ Մայր Աթոռում, սակայն Մեր հովանավորությամբ և շնորհիվ սփյուռքահայ բարերարների, տարբեր տպարաններում ևս լույս են ընծայվել մի շարք գրքեր, որոնցից կցանկանայինք հիշատակել հատկապես «Գանձարան հայ հին բանաստեղծության» և «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ» հատորները:

Տ. Շահե արքեպս. Աճեմյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ արևելահայերենի են վերածվել և շուտով լույս կտեսնեն Տ. Մաղաքիա Պատրիարք Օրմանյանի «Ազգապատում» երեք հատորները:

ԺԵ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՔԴՔԿ-ն (վարիչ-տնօրեն՝ Տ. Մակար վարդապետ Հովհաննիսյան), որն իր մասնաճյուղերն ունի Հայաստանի բոլոր թեմերում և Արցախում, նախկինի նման իր գործունեությունը ծավալում է հետևյալ ուղղություններով.

1. «Քրիստոնեական կրոն» և «Հայոց Եկեղեցու պատմություն» դասավանդող ուսուցիչների վերապատրաստում և կիրակնօրյա ու հանրակրթական դպրոցներում այս առարկաների դասավանդման կազմակերպում: Շարունակում են գործել Ուսուցիչների վերապատրաստման կենտրոններ Եղեգնաձորում, Գորիսում, Ալավերդիում, ինչպես նաև Արցախում:

2. Կիրակնօրյա դպրոցներ - բացի կիրակնօրյա դպրոցների ուսումնամեթոդական ծրագրերի կազմումից ու դասագրքերի հրատարակությունից, կենտրոնը շարունակում է իր գործունեությունը Էջմիածին քաղաքի թվով ութ կիրակնօրյաներում:

3. Հրատարակչական ենթաբաժին - 2001 թ. մարտ-դեկտեմբեր ամիսներին կենտրոնը հրատարակել է եկեղեցական տոներին և խորհուրդներին նվիրված 16 թերթոններ ու հետևյալ գրքերը.

ա) Մեդա Ստամբոլցյան, «Մեղայ Աստուծոյ»,

բ) Շնորհք Պատրիարք Գալուստյանի «Մեծ Պահքի կիրակիների Ոսկե շղթան» գիրքը՝ արևելահայերենի վերածված Գայանե Անտոնյանի կողմից:

գ) «Ինչպես կարդալ Աստվածաշունչը» (Գրիգոր Դարբինյանի աշխատասիրությամբ),

դ) Վարդան Այգեկցու «Խրատ բոլոր քահանաներին» (թարգմ՝ Հայկ սրկ. (այժմ Տ. Մկրտիչ աբեղա) Պռոշյանի և Արման սրկ. (այժմ՝ Տ. Գևորգ աբեղա) Սարոյանի).

ե) Գայանե Անտոնյան, «Ս. Մյուռոնի օրհնությունը».

զ) Գայանե Անտոնյան, «Դարձալ Յիսուս ի գալաստս իւր»:

4. «Քրիստոնյա Հայաստան» թերթի երատարակությունը 15-օրյա պարբերականությամբ:

5. Մշակույթի ենթաբաժին - ամեն շաբաթ օր հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվում է Տ. Շահե արքեպս. Աճեմյանի խոսքը՝ նվիրված փվյալ շաբաթվա հոգևոր խորհրդին ու ընթերցվածներին: Գործում են «Նավասարդ» երգչախումբը, Կամերային երաժշտության համույթը և մանկական երգչախումբը, որոնք ելույթ են ունենում տարբեր առիթներով:

Կենտրոնին կից գործում է նկարչական խմբակ, որի սաների աշխատանքները ցուցադրվել են կազմակերպված մի քանի ցուցահանդեսներում:

ԺԶ. «ՇՈՂԱԿԱԹ» ՀԵՌՈՒՍՏԱՏՍՈՒԴԻԱ

Անցնող տարում Մայր Աթոռի հեռուստաստուդիայում նկարահանվել են 21 հեռուստաֆիլմեր և 13 տեսահոլովակներ, որոնք նվիրված են Հայոց Եկեղեցու պատմությանը, ծեսերին ու խորհուրդներին, 1700-ամյակի հանդիսություններին, ինչպես նաև մեր ազգային-հասարակական կյանքի այլևայլ կողմերին և իրադարձություններին՝ դիտարկված հոգևոր տեսանկյունից:

Ազգային հեռուստատեսությամբ և մյուս հեռուստաալիքներով տրվում է ամենշաբաթյա պարբերականությամբ ֆորս հաղորդաշար, ինչպես նաև եկեղեցական նշանակալից տոների և իրադարձությունների նախօրյակին՝ տեսահոլովակային ծանուցումներ:

Հոգևոր-եկեղեցական ընթացիկ կյանքի մասին հեռուստատեսային լրատվություն է տրամադրվել հանրապետության հեռուստատեսային լրատվամիջոցներին: Տեսանյութեր են տրամադրվել նաև PTP, OPT, HTB ռուսական հեռուստաընկերությունների լրագրողներին և Լեհաստանի պետական հեռուստաընկերությանը: Կազմակերպվել են նախորդ Ամանորյա կեսգիշերվա և սեպտեմբերյան գլխավոր տոնակատարությունների՝ Մյուռոնօրհնության, Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծման և Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի այցի ուղիղ հեռարձակումները հանրային հեռուստատեսությամբ:

Շարունակվում է հեռուստաստուդիայի կահավորումն ու տեխնիկական վերազինումը: Մայր Աթոռի ֆինանսավորմամբ ձեռք են բերվել ֆիլմարտադրության համակարգ՝ 10 տեսամագնիտոֆոնով, 2 համակարգիչ, 1000 հատ 60 բոպե տևողությամբ և 200 հատ 120 բոպե տևողությամբ տեսաժապավեններ և ռադիոկապի համակարգ, իսկ ՀԲԸՄ-ի օժանդակությամբ BETACAM SP տեսակի մոնտաժային 2-րդ համակարգը, թվային մոնտաժային մեկ համակարգ, DVD ձայնագրիչ, DV տեսախցիկ և էլեկտրոնային հուշարար:

ԺԷ. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Մեր գահակալության շրջանում Մայր Աթոռի կազմում ստեղծված համակարգչային բաժինը Մայր Աթոռի ներքին աշխատանքները և հաղորդակցությունն ապահովելու և Ս. Էջմիածինն աշխարհի տեղեկատվական-հաղորդակցական ուղիների հետ կապելու համար իրականացնում է հետևյալ աշխատանքները.

ա) Մայր Աթոռի բաժինների ծրագրային սպասարկումը (ղեկավարման համակարգի աշխատատեղերի առավելագույնս ավտոմատացում).

բ) Մայր Աթոռում համակարգչային ներքին ցանցի ստեղծում և անխափան աշխատանքի ապահովում.

գ) Ինտերնետային և էլեկտրոնային փոստ՝ տեղեկատվական համակարգերի միջոցով աշխարհի հետ Մայր Աթոռի կապի հաստատում.

դ) Վերը նշվածի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկում.

ե) Հայ Առաքելական Եկեղեցու պաշտոնէջի ստեղծում:

Բաժինն ունի 8 աշխատողներ, որոնցից չորսը հանդիսանում են բաժնում գործող նորաստեղծ ինտերնետային գրասենյակի աշխատակիցներ: Այս գրասենյակն զբաղվելու է Հայ Առաքելական Եկեղեցու պաշտոնէջի ստեղծմամբ, որը կունենա Հայոց Եկեղեցու պատմության, հոգևոր ժառանգության ու այսօրվա վիճակի և Ս. Էջմիածնի տարբեր բաժինների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: Նախատեսվում է Մայր Աթոռում տեղի ունեցող արարողությունները այս գրասենյակի միջոցով անհրաժեշտության դեպքում ուղիղ կապով ներկայացնել Ինտերնետում:

ԺԸ. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Մայր Աթոռի գործունեությունը և իրականացրած ծրագրերն իրենց համարժեք արտացոլումն են գտել նաև թեմերում, որոնց համար ևս մարտ-դեկտեմբերը դարձան 1700-ամյակի հանդիսությունների, ուխտագնացությունների և ուխտավորներին հյուրընկալելու ամիսներ:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Թեմի տարածքում գործում են 20 եկեղեցիներ, որոնցից 15-ում կան հոգևորականներ, 3 եկեղեցիներում այցելու հովիվներ, իսկ երկուսում հոգևոր սպասավորներ չկան: Գործող եկեղեցիներում մշտապես կատարվում են ժամերգություններ, ծիսական արարողություններ, մատուցվում է Սուրբ Պատարագ:

Թեմն ունի 98 համայնք, որոնցից հինգը՝ քաղաքային (Երևան, Արտաշատ, Արարատ, Մասիս, Վեդի)՝ մոտ 1.249.700 բնակչությամբ: Թեմում իրենց հոգևոր ծառայությունն են կատարում 30 հոգևորականներ, նաև 7 սարկավագներ և 9 դպիրներ:

Թեմի հոգևոր-եկեղեցական կյանքի կազմակերպման գործում առանձնակի կարևորություն է տրվում ծխերին և ծխական հոգևոր խորհուրդներին: Վերջիններս

ամիսը երկու անգամ պարբերաբար գումարում են նիստեր՝ հոգևոր հովիվների նախագահությամբ: Ամիսը մեկ անգամ հոգևոր հովիվները ծխական հոգևոր խորհուրդների կողմից իրականացված ընթացիկ աշխատանքների մասին զեկուցագրեր են ներկայացնում առաջնորդական փոխանորդին: Ծխի համայնքների հոգևոր կյանքը աշխուժացնելու նպատակով հաճախակի կազմակերպվում են ուխտագնացություններ, բաժանվում է հոգևոր գրականություն և քարոզթերթիկներ, հաստատված օրերին եկեղեցիներում անցկացվում են հոգևոր թեմաներով զրույցներ: Ծխի առավել կարիքավոր ընտանիքներին տրվում է նյութական և դրամական օգնություն:

Անցնող ամիսները թեմում արդյունաշատ են եղել եկեղեցաշինության ասպարեզում: Հունիսի 7-ին Մեր ձեռամբ Երևանի Հարավ-արևմտյան թաղամասում կատարվեց Սուրբ Երրորդություն եկեղեցու հիմնարկեքը, իսկ սեպտեմբերի 23-ին՝ Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծումը: Ձեռամբ առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի, Տիրամոր տոնին՝ օգոստոսի 12-ին, օծվել է Վեդիի նորակառույց Ս. Աստվածածին եկեղեցին (բարերարներ՝ Ցուրի և Էդգար Շարոյաններ), օգոստոսի 19-ին՝ Արարատի մարզի Վարդաշատ գյուղի վերակառուցված Ս. Աստվածածին եկեղեցին (բարերար՝ Ավետիք Ստեփանյան): Սեպտեմբերի 21-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում օծվեց Ս. Մեղանի սրբապատկերը: Հոկտեմբերի 2-ին, հանդիսապետությամբ առաջնորդական փոխանորդի, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարևանությամբ կատարվեց Ջորավար Անդրանիկի հուշարձանի հողօրհնեքը:

Կատարվել է երկու հավաքական մկրտություն. օգոստոսի 12-ին՝ Նորքի Ս. Աստվածածին եկեղեցում 250 մանուկների, իսկ հոկտեմբերի 18-ին՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում 301 մանուկների: Օգոստոսի 18-ին, ձեռամբ թեմի հոգևորականների, հավաքական մկրտություն է կատարվել Գեղարդավանքում, որի ընթացքում մկրտվել են 2000 երեխաներ:

Մարտի 31-ին Մեր օրհնությամբ, Ս. Գրիգոր Լուսավորչի «Մատն ի վիրապ» տոնի օրը, Արարատի մարզի 97 բնակավայրերում կատարվեց անդաստանի արարողություն: Մայիսի 26-ին, Ավարայրի հերոսամարտի 1550-ամյակի և այս տոնին նվիրված «Ավարայրի խորհուրդը» գիտաժողովի կապակցությամբ, Վարդան Մամիկոնյանի հուշարձանի մոտ կազմակերպվեց տոնական մեծ հանդիսություն և զորահանդես:

Դանիական «Դանիդա» կազմակերպության հովանավորությամբ մարտ ամսից սկսել է գործել Ս. Հովհաննես եկեղեցուն կից «Հովհաննես Կոզեռն» կրթամշակութային կենտրոնը, որտեղ երեխաներին ուսուցանվում են օտար լեզուներ և անցկացվում համակարգչային դասընթացներ: Առողջապահության նախարարության հետ համատեղ Ս. Հովհաննես եկեղեցու հոգևորականաց դասն իրականացնում է նաև «Հոսպիս» ծառայությունը:

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմի պաշտոնաթերթն է «Շողակն Արարատյանը», որը լույս է տեսնում 15-օրյա պարբերականությամբ: Քարոզչությունն իրականացվում է նաև հետևյալ միջոցներով. Ազգային ռադիոյով յուրաքանչյուր ուրբաթ եթեր է հեռարձակվում «Շողակն Արարատյան» հոգևոր հաղորդաշարը, որին իր մասնակցությունն է բերում թեմի հոգևորականաց դասը: Ազգային ռադիոյով յուրաքանչյուր կիրակի մանուկների համար եթեր է հեռարձակվում «Մանանա» հոգևոր հաղորդաշարը՝ թեմի կողմից պատրաստված տեսանյութերով: «Արձագանք» ռադիոկայանով յուրաքանչյուր հինգշաբթի եթեր է հեռարձակվում «Շողակաթ» հաղորդումը: Թեմն Ինտերնետում ունի իր ինտերնետային էջը, որտեղ ներկայացված են թեմի պատմությունը, թեմական եկեղեցական կյանքն ու գործունեությունը (հայերեն, ռուսերեն և անգլերեն):

Թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում են աշխատում նրա 360 շրջանավարտ-ուսուցիչներից 75-ը: 2001 թ. դեկտեմբերի տվյալներով՝ կրոնակրթական դասընթացներ են անցկացվում Երևանի 32 և Արարատի մարզի 22 հանրակրթական դպրոցներում, Հայորդյաց երեք տներում, 5 կիրակնօրյա վարժարաններում: Դասերին ներգրավված են ընդհանուր թվով 16000-ից ավելի աշակերտներ:

Սեպտեմբերի 1-ին, նոր ուսումնական տարվա կապակցությամբ, շուրջ 50 դպրոցներում կատարվել է օրհնության կարգ: «Կրոն» և «Հայ Եկեղեցու պատմություն» առարկաներն ընդգրկված են «Նավասարդ» իրավաբանական քոլեջի ուսումնական ծրագրում: Երևանի թիվ 1 բժշկական ուսումնարանում ամիսը մեկ անգամ ՔԴԿ գրասենյակը հոգևոր թեմաներով զրույցներ է ունենում ուսանողության և դասախոսական կազմի հետ:

Թեմի կազմում գործող Հայաստանյայց Եկեղեցու Երիտասարդաց միությունն ունի 60 անդամներ: Միության կազմում գործում են «Մանկունք» արական և «Ավետում» իգական երգչախմբերը:

ՔԴԿ գրասենյակը Երևանի քաղաքապետարանի հանձնաժողովի կազմում մասնակցում է մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաներին գիշերօթիկ և պարտադիր ուսուցման մեջ ընդգրկելու աշխատանքներին: ՀՕՖ-ի կողմից հովանավորվող «Անչափահասների ընդունիչ-բաշխիչ» կենտրոնում նշանակվել է հոգևոր հովիվ թեմի քահանաներից:

ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄ

Արմավիրի թեմում գործում է 14 եկեղեցի՝ 20 հոգևոր սպասավորներով. 15 քահանա և 5 սարկավագ: Առաջնորդն է Սիոն եպս. Աղամյանը:

Էջմիածնի «Գրիգոր Լուսավորիչ» համալսարանում և բժշկական ուսումնարանում, ինչպես նաև թեմի 10 բնակավայրերի 14 դպրոցներում դասավանդվում է «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան:

Թեմում կան կիրակնօրյա դպրոցներ՝ 765 աշակերտով. 17 կիրակնօրյա խմբակներ՝ 562 աշակերտով. և Հայաստանյայց Եկեղեցու Երիտասարդաց միության Արմավիրի թեմի 9 մասնաճյուղ՝ 232 երիտասարդ-երիտասարդուհիներով:

Քարոզչությունն իրականացվում է լրատվության մարզային միջոցներով և կիրակնօրյա թերթոնների հրատարակությամբ:

1700-ամյակի հանդիսությունների շրջագծում թեմում կայացել են մի շարք միջոցառումներ, որոնցից գլխավորը տեղի է ունեցել Սարդարապատի հուշահամալիրում Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից եկած ուխտավորների մասնակցությամբ:

Ալավերդիում տեղի ունեցած և 1700-ամյակին նվիրված «Թատերական Լոռի-2001» ամենամյա փառատոնում հաղթող է ճանաչվել Արմավիրի թեմի տիկնիկային թատրոնը:

Արմավիրի մարզադպրոցում, վեց հանրակրթական դպրոցներում և չորս մանկապարտեզներում տեղադրվել և օրհնվել են խաչքարեր:

Էջմիածին քաղաքում կազմակերպվել է հոգևոր երգի մարզային փառատոն, որի հաղթողներին մրցանակներ են տրվել: 1700-ամյակի եզրափակիչ մեծ հանդիսությունը տեղի է ունեցել Էջմիածնի մշակույթի տանը:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄ

Թեմում գործում են 13 եկեղեցիներ՝ 15 հոգևորականներով. առաջնորդական տեղապահ՝ Տ. Վազգեն վարդապետ Միրզախանյան, 10 քահանաներ, երեք սարկավագներ և մեկ ուրարակիր:

Թեմը բաժանված է 16 հովվությունների, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկված է 3-9 համայնք: Յուրաքանչյուր հովվության հովիվ ընտանիքով հանդերձ բնակվում է իր հովվության կենտրոնում և ծառայում հովվակենտրոն եկեղեցում կատարելով բոլոր ծիսական արարողությունները և խորհուրդները: Արագածոտնի թեմը ևս ունի հոգևորականների պակաս, որի համար մի քանի հովվություններում քահանա հայրերի փոխարեն նշանակվել են տեսուչներ՝ սարկավագներ: Նրանք, ճիշտ է, թեև լիարժեքորեն կատարում են վարչական աշխատանքները, սակայն թերի է մնում ամենակարևորը՝ ծիսական մասը:

Հովվությունների հոգևորականները շաբաթը մեկ այցելում են իրենց վստահված համայնքները, հանդիպում գյուղապետին, դպրոցների տնօրեններին, աշակերտության ու համայնքի անդամների հետ, կարգավորում եկեղեցական կյանքին առնչվող խնդիրները: Հովիվներն ու տեսուչները հովվությունում ունեն նաև երիտասարդական ու տիկնանց միություններ և ծխական խորհուրդներ, որոնք սերտ համագործակցության մեջ են:

Արագածոտնի թեմում կան 177 արբավայրեր, որոնցից Արագածի փեշերին գտնվող մի քանի վանքերն անմիջականորեն կապվում են Գրիգոր Լուսավորչի և քառացագաթ Արագածի վրա վառվող կանթեղի հետ: Այդ վանքերից 2001 թ. օգոս-

տոսի 5-ին վերաբացվեց Սաղմոսավանքի վանական համայիրը: Վերանորոգման աշխատանքներ են տարվում Ապարանի Սուրբ Խաչ եկեղեցում, և նախատեսվում է 2002 թ. ապրիլին այն վերաօծել:

Թեմի պատմական նշանավոր եկեղեցիներում նրանց անվան տոներ են կատարվում եկեղեցական համանուն տոների օրերին:

Արագածոտնի մարզպետ Հրայր Կարապետյանի 2000 թ. սեպտեմբերի 18-ի և 2001 թ. օգոստոսի 8-ի շրջաբերական գրություններով հանձնարարվել է մարզի բոլոր դպրոցներում դասավանդել «Քրիստոնեական կրոն» և «Հայ Եկեղեցու պատմություն» առարկաները, և այժմ թեմի տարածքում գտնվող գրեթե բոլոր դպրոցներում դասավանդվում են նշված առարկաները: Հուլիսի 20-ից մինչև օգոստոսի 5-ը Օշականի Մանկական վերականգնողական կենտրոնում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ այս երկու առարկաները դասավանդող ուսուցիչների համար: Շարունակվում են նաև 2000 թ. սկսված կատեխիզմի դասընթացները, որոնց ավարտական վկայականներ են ստացել 1200 դպրոցականներ:

Ջանգվածային քարոզչությունն իրականացվում է թեմի՝ անցած տարվա հունվարից տպագրվող տասնօրյա «Արագածոտն» պաշտոնաթերթի միջոցով:

Պայմանավորված Արագածոտնում գտնվող սրբավայրերով՝ թեմում առանձնակի մեծ թիվ կազմեցին թե՛ 1700-ամյակի ընդհանուր և թե՛ տեղային ուխտագնացությունները: ԵՀԽ Կլոր Սեղանի աջակցությամբ թեմի մի շարք քաղաքներում և բնակավայրերում կազմակերպվեցին հոբելյանական ցուցահանդես-համերգներ՝ Հայոց Եկեղեցու գործունեությանը նվիրված հատուկ դասախոսություններով: Համանման բազմաթիվ միջոցառումներ կազմակերպվեցին նաև թեմի կիրակնօրյա վարժարաններում և հանրակրթական դպրոցներում:

Մարտի 31-ին թեմի քահանայական ողջ կազմը մասնակցեց Արարատի մարզի համայնքների օրհնության ծրագրերին:

1700-ամյակի շրջագծում այս տարի ինքնօրինակ կերպով նշվեց Օշականում ավանդաբար կատարվող Թարգմանչաց տոնը: Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում կազմակերպվեց հատուկ ցուցահանդես-համերգ, որին մասնակցեցին Գրողների միության անդամներ, 1700-ամյակի հանդիսությունների պետական հանձնաժողովի փոխնախագահը և պաշտոնական այլ այրեր ու մեծ թվով ժողովուրդ:

Թեմի և Մայր Աթոռի ՔՂՔԿ-ի համագործակցությամբ տպագրվել է «Ինչպես կարդալ Աստվածաշունչը» գիրքը:

Սոցիալ-տնտեսական բնույթի ծրագրերի իրականացմանը մեծապես օգնել է թեմում հովվությունների ստեղծումը, որը հնարավորություն է ընձեռում ամենայն մանրամասնությամբ ծանոթ լինել ազգաբնակչության ներքին կյանքին: Կլոր Սեղանի օժանդակությամբ իրականացվել են անասնապահական մի շարք ծրագրեր, արտոնյալ վարկեր տրամադրվել Աշտարակ քաղաքի և Օշականի, Ոսկեվազի ու Կարբիի ընտանեկան գյուղացիական տնտեսություններին: Նույն գրասենյակի կողմից «Երաշտ» ծրագրի շրջանակում մեկական պարկ ալյուր է տրամադրվել շուրջ 1000 անապահով և երաշտից տուժած ընտանիքների:

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ

Թեմի տարածքում գործում են 8 եկեղեցիներ՝ 26 հոգևոր սպասավորներով. թեմական առաջնորդ՝ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյան, 8 քահանաներ. 5 սարկավագներ և 12 դպիրներ:

Անցնող ամիսներին թեմում կատարվել են մեծ ծավալի եկեղեցաշինական աշխատանքներ: Հուլիսի 21-ին Մեր հանդիսապետությամբ կատարվեց Զարենցավանի Սուրբ Փրկիչ եկեղեցու օծումը: Հեռամբ թեմական առաջնորդի՝ սեպտեմբերի 15-ին օծվել է Նուռնուսի Սուրբ Հարություն եկեղեցին, հոկտեմբերի 27-ին՝ Պտղնիի Սուրբ Խաչ և Արամուսի Սուրբ Շողակաթ մատուռները: Հրազդաեի Ջրառատ գյուղում ավարտին է հասցվել Թուխ Մանուկ եկեղեցու շինարարությունը, կատարվել է Կեչառիսի վանական համալիրի բարեկարգումը, վերանորոգվել է Աբովյանի Ս. Ստեփաննոս եկեղեցին, պարսպապատվել է Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու շրջակայքը, եկեղեցուն կից կառուցվել է երիցատուն, վերանորոգվել ու մեծացվել է Ադինջի Ս. Հովհաննես եկեղեցին:

Թեմում գործում են երեք կիրակնօրյա դպրոցներ, որոնցում սովորում են 342 աշակերտներ: Թեմի տարածքի ուսումնական հաստատություններում կրոնի պատմություն են դասավանդում 41 ուսուցիչներ: Կատեխիզմի ծրագրով աստվածուսուցման դասընթացներ են կազմակերպվել 9-16 տարեկան երեխաների համար, և այս ծրագիրը շարունակվելու է: Կատարվել են դասընթացներին մասնակից երեխաների հավաքական մկրտություններ:

1700-ամյակի շրջանակում կազմակերպվել են ուխտագնացություններ թե՛ հայաստանյան նշանավոր և թե՛ թեմի տարածքում գտնվող սրբավայրեր, անցկացվել են դպրոցական մրցույթներ և փառատոներ:

Հոկտեմբերի 6-ին Եղվարդում հանդիսություն կազմակերպվեց՝ նվիրված 1700-ամյակին և Եղվարդի Սուրբ Աստվածածին եկեղեցու կառուցման 700-ամյակին, և այնտեղ բացվեց «Քրիստոնյա Հայաստան-1700» բացօթյա ցուցահանդեսը:

ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄ

Թեմն ունի 24 գործող եկեղեցի, որոնցից 19-ում, սակայն, չկան հոգևոր սպասավորներ: Թեմի հոգևորականների կողմից տաղավար տոներին այս եկեղեցիներում և վանքերում մատուցվում է Սուրբ Պատարագ: Թեմն ունի յոթ հոգևոր սպասավոր. մեկ վարդապետ, երկու աբեղա, երեք քահանա և մեկ այցելու սարկավագ: Թեմական առաջնորդն է Սեպուհ եպս. Զուլֆյանը:

Եկեղեցաշինության ասպարեզում կատարվել են հետևյալ աշխատանքները. Մեր նախագահությամբ նոյեմբերի 11-ին կատարվել է Ալավերդու Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու օծման սրբազան արարողությունը: Հեռամբ թեմական առաջնորդի հունիսի 21-ին կատարվել է Ղարսալի գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցու վերաօծումը, իսկ հոկտեմբերի 14-ին՝ Շենավանի Ս. Ամենափրկիչ եկեղեցու օծումը: Վերանորոգ-

վել է Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցու հովվատունը, մասնակիորեն վերանորոգվել է Հաղպատավանքի վանատունը: Կահավորվել ու նորոգվել է նաև առաջնորդարանը:

Արդեն ձևավորված ավանդույթով առաջնորդարանում տպագրվում և թեմի բոլոր գործող եկեղեցիներ են ուղարկվում ու ժողովրդին անվճար բաժանվում շաբաթվա տոնի իմաստը մեկնող, ինչպես նաև «Խորհրդածություններ Ավետարանի շուրջ» և «Խրատի թանգարան» վերտառություններով քարոզթերթիկներ:

Անցնող ամիսները թեմական կյանքում հատկապես նշանավորվել են կատարված ընդհանրական մկրտություններով: Ապրիլի 4-ին Ակներ գյուղում կատարվել է 200 հոգու, իսկ ապրիլի 18-ին՝ Դսեղ գյուղի միջնակարգ դպրոցի 23 երեխաների ընդհանրական մկրտությունը:

Մարտ-նոյեմբեր ամիսներին «Օրինաց երկիր» կուսակցության գործուն մասնակցությամբ կազմակերպվել և թեմի տարբեր եկեղեցիներում հոգևոր հովիվների ձեռքով կատարվել են հետևյալ ընդհանրական մկրտությունները.

ա) հուլիս-նոյեմբեր ամիսներին Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցում տեղի ունեցած պարբերական մկրտությունների ընթացքում մկրտվել է 760 հոգի,

բ) հուլիսին Հաղարծնի վանքում 350 հոգի,

գ) օգոստոսի 18-ին Սանահինում 150 հոգի, և 220 հոգի՝ Օձունում,

դ) օգոստոսին Նոյեմբերյանում 55 երեխա,

ե) օգոստոս-նոյեմբեր ամիսներին Ստեփանավանում 90 հոգի,

զ) սեպտեմբերին Նոյեմբերյանում 170 հոգի:

Հուլիսի 14-17-ը Առաջին համահայկական ուխտագնացությանը մասնակից երիտասարդներից 33-ի մկրտությունը կատարվել է Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցում:

Հուլիս ամսին ստեղծվել է Գուգարաց թեմի Երիտասարդաց միությունը, որին անդամակցել են 150 երիտասարդներ թեմի բոլոր ծխերից: Նրանցից 50-ն իրենց անմիջական մասնակցությունն են բերել Ալավերդու Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու շինարարական աշխատանքներին, իսկ օծման արարողությանը մասնակցել են միության գրեթե բոլոր անդամները: Երիտասարդաց միության անդամները Համբարձման և Զատկական տոներին թեմի հոգևոր դասի հետ միասին այցելել են Վանաձորի մանկատուն, ծերանոց, զորամասեր՝ բոլոր տեղերում բաժանելով նվերներ և սնունդ:

Թեմի բոլոր ծխերում կազմակերպվել են Համբարձման, Հարության և Խաղողօրհնեքի համաժողովրդական տոնակատարություններ՝ երգի-պարի համույթների, ուսուցիչների, դպրոցականների և բազմաթիվ հավատացյալների մասնակցությամբ:

1700-ամյակի հանդիսությունների շրջանակում մեծ է եղել հատկապես ուխտագնացությունների թիվը: Մարտի 17-ին Գուգարաց և Շիրակի թեմերի երիտասարդները համատեղ ուխտագնացության են մեկնել Օձուն, Արդվի, Հաղբատ և Սանահին: Ապրիլի 25-ին մանկատան երեխաների համար կազմակերպվել է ուխտագնացություն դեպի Սպիտակի Ս. Հարություն եկեղեցի: Կազմակերպվել են նաև մի շարք

այլ դպրոցական ու երիտասարդական ուխտագնացություններ: Այս ուխտագնացությունների ժամանակ ուխտավորներին անվճար բաժանվել է թեմի միջոցներով տպագրված «Ուխտավորի ուղեցույց» գրքույկը:

Ինչպես արդեն ասացինք, ԵՀԽ Հայաստանյան գրասենյակի Կլոր Սեղանի ֆինանսավորմամբ և թեմական առաջնորդի անմիջական հսկողությամբ թեմում իրականացվում է «Փափուկ խաղալիքներ» ծրագիրը, ինչպես նաև նախատեսվում է խաղալիքների պատրաստմանը զուգահեռ հաշմանդամ երեխաներին տվորեցնել ասեղնագործություն և շյուղագործություն:

ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

Թեմում սպասավորում են 6 հոգևորականներ. մեկ կուսակրոն և ամուսնացյալ 5 քահանա հայրեր: Առաջնորդն է Միքայել եպս. Աջապահյանը:

Շիրակի թեմում ևս կատարվել են եկեղեցաշինական որոշակի աշխատանքներ: Նոյեմբերի 7-ին Գյումրիում Մեր ձեռամբ օծվեցին կառուցվող Ս. Հակոբ եկեղեցու երկու խաչերը: Ձեռամբ թեմական առաջնորդի և Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի նոյեմբերի 6-ին կատարվեց Սպանդարյան գյուղի Ս. Ամենափրկիչ եկեղեցու օծումը:

Թեմական առաջնորդը Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի հետ դեկտեմբերի 9-ին օծել է նաև Արնշատի Ս. Աստվածածին եկեղեցին: Թեմի միջոցներով և տարբեր անհատների բարերարությամբ վերանորոգվել է Մեծ Մանթաշի եկեղեցին: Թեև դանդաղ, բայց շարունակվում են Ս. Նշան և Ս. Ամենափրկիչ եկեղեցիների վերանորոգման աշխատանքները՝ համապատասխանաբար Գյումրիի քաղաքապետի և «Ամենափրկիչ» հիմնադրամի կողմից:

Ինչպես ասացինք, Մայր Աթոռի հոգևոր-ուսումնական հաստատությունների շարքում գործում է նաև Գյումրիի Հոգևոր Ընծայարանը:

Գյումրիում, Արթիկում և մերձակա գյուղերի դպրոցներում դասավանդում են թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի 62 ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնց համար վերապատրաստության դասընթացներ էին կազմակերպվել Մայր Աթոռի ՔԴՔԿ-ի կողմից:

Հոկտեմբերին առաջնորդարանում բացվել է մշակութային բաժին, որի նպատակն է քրիստոնեական քարոզչությանը տարածել նաև ուսումնակրթական ծրագրերի միջոցով, որի համար այս բաժնի կողմից ստեղծվել է արտադպրոցական կենտրոն՝ ավելի քան 10 խմբակներով, ուր հաճախում են 300-ից ավելի դպրոցականներ և երիտասարդներ:

Զանգվածային քարոզչությունն իրականացվում է թեմի «Ցոթվերը» մեկամսյա հաճախականությամբ պաշտոնաթերթի միջոցով, որը բաշխվում է անվճար: Տեղական «Ցայգ» հեռուստաալիքի եթերով շարունակվում է կանոնավոր կերպով հեռարձակվել «Եղիցի լույս» կրոնական հաղորդաշարը՝ ամիսը երկու անգամ: Մարզային

մյուս հեռուստաալիքներով ևս կանոնավորապես տեսանյութեր են հեռարձակվում առաջնորդարանի գործունեության մասին:

Սոցիալական ոլորտում շարունակվում են Կանադայի, ԱՄՆ-ի Արևելյան և Արևմտյան թեմերի, ինչպես նաև Փառեն Սրբազանի հայթայթած միջոցներից նյութական օժանդակության բաշխումը թեմի կարիքավոր ընտանիքներին, որը կատարվում է առաջնորդարանի միջոցով:

Կյոր Սեղանի աջակցությամբ ստեղծվել է անասնապահական և հողագործական տնտեսություն:

Չնայած հոգևորականների պակասին, թեմը ձգտել է ետ չմնալ 1700-ամյակի հանդիսություններից՝ մասնակցելով Մայր Աթոռում և Հայաստանում տեղի ունեցած բոլոր համընդհանուր միջոցառումներին, ինչպես նաև կազմակերպել է տեղային մի քանի ուխտագնացություններ: Թեմի հոբելյանական հանդիսություններից ամենանշանակալիցը օգոստոսի 5-ին տեղի ունեցած դուդուկի փառատոնն էր:

Լույս են տեսել «Քրիստոնեականը» և «Լույս լույսի մեջ» ժողովածուները:

ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Մեր տնօրինությամբ օգոստոսի 7-ին Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ է նշանակվել Տ. Դերենիկ վարդապետ Դավթյանը:

Թեմում գործում են յոթ եկեղեցիներ, և կան չորս քահանաներ: Առաջնորդական տեղապահի գիտությամբ թեմում քահանայագործում է նաև Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի փոխտեսուչ Տ. Մինաս քահանա Մարտիրոսյանը Սևան քաղաքում և շրջակա մի քանի գյուղերում:

Որոշակի առաջընթաց կա եկեղեցաշինության ասպարեզում: Հոկտեմբերի 28-ին Կարմիր գյուղում վերանորոգումից հետո վերաբացվեց և վերաօծվեց Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին՝ ձեռամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի:

Թեմը տարբեր բարերարների և կազմակերպությունների միջոցով փորձում է իրականացնել Գավառի Հացառատ թաղամասի Ս. Աստվածածին և Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների շինարարությունը:

Գեղարքունիքի մարզում ևս նշանակալից թիվ են կազմում մարտ ամսից սկսված ընդհանրական մկրտությունները, որոնց ընթացքում Գավառի Ս. Աստվածածին, Վարդենիսի Ս. Աստվածածին, Վանևան, Կարմիրի Ս. Աստվածածին և Ծաղկաշենի Ս. Աստվածածին եկեղեցիներում մարտ-դեկտեմբեր ամիսներին մկրտվածների թիվը խորհրդանշական կերպով կազմում է 1700 հոգի: Այստեղ ևս ընդհանրական մկրտությունների կազմակերպման գործում մեծ ավանդ ունեն «Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչները:

Մեծ թիվ են կազմել և ուխտագնացությունները, որոնք խորհրդանշական կերպով սկսվել են Ս. Էջմիածին կատարված ուխտագնացությամբ, որին հաջորդել են Սևանի վանք և թեմի մյուս սրբավայրեր կատարված ուխտագնացությունները:

Անցած տարվա սեպտեմբերի 1-ից Գավառ քաղաքի, ինչպես նաև Գավառի գյուղերի և Մարտունի քաղաքի բոլոր դպրոցներում 37 ուսուցիչներ դասավանդում են «Հայ Առաքելական Եկեղեցու պատմություն» առարկան:

1700-ամյակի առիթով կազմակերպվել են բազմաբնույթ հանդիսություններ, փառատոներ, դպրոցական մրցանակաբաշխություններ, այդ թվում և կավճանկարի ու շախմատի և թատերական փառատոն:

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Թեմն ունի 20 գործող եկեղեցիներ, ինչպես նաև վերջերս թեմին են վերադարձվել Հերմոնավանքն ու Սուրբ Փոկաս եկեղեցին: Գործող այս 20 եկեղեցիներից յուրաքանչյուրն ունի իր ծուխը:

Թեմը (առաջնորդ՝ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյան) ունի 5 քահանա, մեկ ուրարակիր և 12 դպիր:

Դեկտեմբերի 1-ին կատարեցինք Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց նորակառույց եկեղեցու օծումը:

Անցնող տարում ավարտվել է Նորավանքի վանական համալիրի նորոգությունը՝ կից շինությունների կառուցմամբ: Կառուցվել են նաև Գորիսի առաջնորդարանը և Միսիանի փոխառաջնորդարանը, Մալիշկայի եկեղեցուն կից՝ թանգարանային մասնաշենքը: Մասնակիորեն նորոգվել է Մեղրիի Մեծ Թաղի եկեղեցին:

1700-ամյակի առիթով թեմում ընդհանրական մի քանի մկրտությամբ կատարվել է 1700 երեխաների մկրտություն: Բացի ընդհանուր հայաստանյան ուխտագնացություններին մասնակցելուց, թեմում կազմակերպվել են նաև տեղային ուխտագնացություններ Տաթև ու Նորավանք:

Թեմում բացվել են 63 կիրակնօրյա դպրոցներ, իսկ Եղեգնաձորում և Գորիսում նաև կրոնի ուսուցիչների պատրաստման լսարաններ: Եղեգնաձորում և Գորիսում կրոն է դասավանդվել տեղի ուսանողությանը, տպագրվել է թեմական առաջնորդի «Հայ Եկեղեցին թշնամիների դեմ պայքարի հարցում» գրքույկը:

Թեմի «Սիրանույշ» ճամբարում այս տարի հանգստացել են 480 երեխաներ: Նույն ճամբարում, ինչպես նաև Նորավանքում և Վայքում հիմնվել են պտղատու այգիներ:

ԱՐՑԱԽԻ ԹԵՄ

Թեմում գործում են 7 ամենօրյա եկեղեցիներ ու վանքեր, և պարբերաբար արարողություններ են կատարվում ևս 11 եկեղեցիներում ու վանքերում: Թեմը (առաջնորդ՝ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան) ունի 11 հոգևորականներ:

Թեմի քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնը, ընդհանուր քարոզչությունից բացի, զբաղվում է նաև կրոն դասավանդող ուսուցիչների

վերապատրաստմամբ ու հետևում հանրակրթական դպրոցներում նրանց դասավանդմանը՝ առաջինից տասներորդ դասարաններում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո ծրագրված է Գանձասարում հիմնել հոգևոր ճեմարան: Մարտակերտ շրջկենտրոնում գործում է եկեղեցուն կից մանկական քրիստոնեական մշակույթի կենտրոն, և կատարվում է վերջինիս երկհարկանի շենքի նորոգությունը: Մարտակերտում գործում է նաև Եկեղեցասիրաց մանկանց միություն: Թեմի հովանավորությամբ Շուշիում հիմնվել է Արևելամարգանձի (Գունֆու) երիտասարդական միությունը: Հունվարից թեմում կգործի նաև համակարգչային կենտրոն, որտեղ հոգևոր-եկեղեցական միջավայրում համակարգչային դասընթացներ կանցնեն Ստեփանակերտի և շրջակա բնակավայրերի երիտասարդները: Նույն կերպ՝ հունվարից հոգևոր-մշակութային կենտրոն կբացվի և Ասկերանում:

Քարոզչությունը թեմում իրականացվում է Հայաստանի և Արցախի տարածքն ընդգրկող ԷՖ-ԷՄ հաճախականությամբ ալիքի «Վեմ» 24-ժամյա ռադիոկայանի միջոցով:

Թեմն իր գործուն մասնակցությունն է բերել 1700-ամյակի հանդիսություններին, որոնց շրջանակում կազմակերպվել են նկարչական և քանդակագործական մի քանի ցուցահանդեսներ, հոգևոր երգի փառատոն և դպրոցական շարադրությունների մրցույթ, երեք ուխտագնացություններ, որոնցից մեկը՝ միջազգային: Վերջինս կազմակերպել ու գլխավորել է Լեդի Քոքսը՝ 12 երկրներից եկած 60 ուխտավորներով, անցնելով Քաշաթաղ-Գանձասար երթուղով:

Հրատարակվել են թեմի պատմության 1813-1933 թթ. ժամանակահատվածին վերաբերվող արխիվային վավերագրերի ժողովածու և շքեղակազմ «Աղոթագիրք»:

ԼՂՀ իշխանությունների հետ համատեղ երավիրվել է գիտական հատուկ նստաշրջան՝ նվիրված 1700-ամյակին: Բեմադրվել են մի շարք գործեր, այդ թվում և՝ «Հայոց Դարձ», «Սուրբ Ծնունդ» և «Սուրբ Հարություն», որոնք ցուցադրվել են նաև Արցախի մի շարք բնակավայրերում: Ստեփանակերտի պետական թատրոնը թեմի աջակցությամբ բեմադրել է «Ս. Շուշանիկի վարքը» և «Վարդանանք» ներկայացումները, իսկ Շուշիի պետական թատրոնը՝ «Թատրոն-301» բեմահանդեսը:

Մեծ են և սոցիալ-տնտեսական ոլորտում կատարվող աշխատանքները, որոնք առանձնակիորեն են կարևորվում պատերազմի վերքերը բուժող Արցախում: Շուշիում ավարտվում է հանքային ջրերի արտադրամասի կառուցումը: Գանձասարի վանքին կից հիմնվել է օժանդակ տնտեսություն, որն ունի բանջարանոց, վարելահող և 30 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Գարնանը ծրագրված է սկսել «Վանական» անունով հանքային ջրի արտադրությունը: Օժանդակ տնտեսություն է գործում և Ասկերանի շրջանում, որն ունի 9 հեկտար հող:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ 10-ԱՄՅԱԿԸ

Հունվարի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նշվեց ՀՀ զինված ուժերի կազմավորման 10-ամյակը: Կիրակնօրյա այս առավոտյան Մայր Տաճարում հավատացյալների հոծ բազմության մեջ իրենց համազգեստներով առանձնանում էր զինվորականների խումբը. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Սուրբ Պատարագի էր եկել հայոց բանակի բարձրագույն սպայական ողջ անձնակազմը՝ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի գլխավորությամբ:

Պատարագի ընթացքում հանդիսավոր կերպով ընթերցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ Հայոց բանակի հոբելյանի առիթով (տե՛ս էջ 15): Ապա կատարվեց Հանրապետական մաղթանք: Սրբազան արարողության ավարտին կատարվեց հոգեհանգստյան պաշտոն զոհված ազատամարտիկների հոգիների խաղաղության համար:

Հավարտ Ս. Պատարագի Վեհարանի դահլիճում Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ բանակի 10-ամյակին նվիրված հանդիսություն:

Հանդիսության ընթացքում ընթերցվեց Վեհափառ Հայրապետի երկրորդ կոնդակը (տե՛ս էջ 17), որով Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով, ծննդյան 75-ամյակի առթիվ, պարգևատրվեց ՀՀ Նախագահի զինվորական գծով խորհրդական և զինված ուժերի ռազմական տեսուչ գեներալ-գնդապետ Գուրգեն Դայիբալթայանը՝ իր քաջակորով և գործուն մասնակցությամբ հաղթանակով պսակված կարևոր ու վճռական շատ մարտերի, հատկապես Շուշիի ազատագրմանը, ինչպես նաև հայրենիքին մատուցած այլ ծառայությունների համար:

Շնորհավորելով զորահրամանատարներին Հայոց բանակի հոբելյանի առիթով՝ Վեհափառ Հայրապետն ասաց. «Թող Աստված ամուր, զորեղ և հաղթական պահի ձեր աջը, աննկուն՝ ձեր կամքը, միշտ արի ու հաղթական՝ ձեր հոգին, որպեսզի երբեք չխաթարվի անդորրը մեր կյանքի այս փոքրիկ աշխարհում, որի մեծության տեսիլքը միշտ կրում ենք մեր հոգում, որը մեզ ոգեշնչում է, որը մեզ զորեպնդում է, որը մեզ մղում է նոր սխրանքների»:

Իր հերթին պաշտպանության նախարարը Ամենայն Հայոց Կաթողիկոսին պարգևատրեց ՀՀ պաշտպանության նախարարության «Զինանշան» հուշամեդալով:

«Վստահ եղեք, որ այսօրվա փառահեղ Պատարագը շատ երկար ժամանակ մեզ կոգևորի, այս փառահեղ Պատարագը երկար ժամանակ մեզ կստիպի աշխատել շատ ավելի լավ, քան մենք այդ անում էինք: Փառք Աստծո, այսօր մենք ունենք պետություն, փառք Աստծո, այսօր մենք ունենք բանակ, փառք Աստծո, այսօր մենք կարող ենք ճակատներս բաց նայել մեր քույրերին, մեր կանանց, մեր երեխաներին»,- ասաց ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը:

ՄԻ ՊԱՀ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻՆ
ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՕՐՀՆԵՑ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇԸ

Հունվարի 28-ին՝ ՀՀ զինված ուժերի հիմնադրման օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ այցելեց ՀՀ պաշտպանության նախարարություն՝ մասնակից լինելու նախարարությանը ՀՀ զինված ուժերի մարտական դրոշի հանձնման արարողությանը:

ՀՀ Նախագահի հրամանագրով ՀՀ զինված ուժերի մարտական դրոշը, իբրև խորհրդանիշ հայոց բանակի փառքի ու հաղթանակի, նախարարությանը հանձնվեց զինված ուժերի 10-ամյակի առիթով: Հանդիսավոր պայմաններում դրոշը հանձնվեց ՀՀ պաշտպանության նախարար Մերժ Սարգսյանին:

Արարողության ընթացքում Նորին Սրբությունն աղոթք բարձրացրեց առ Աստված զինված ուժերի համար և օրհնեց մարտական դրոշը:

Հանդիսության ավարտից հետո Վեհափառ Հայրապետն ու ՀՀ Նախագահն ուղղվեցին դեպի Եռաբլուր՝ հարգանքի տուրք մատուցելու զոհված ազատամարտիկների հիշատակին և ծաղիկներ դնելու նրանց շիրիմներին: Եռաբլուր էին եկել նաև ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, ՀՀ և ԼՂՀ բարձրաստիճան պետական այրեր, զինվորականներ, իրենց խոնարհումը բերելով Անհայտ զինվորի և ՀՀ պաշտպանության առաջին նախարար Վազգեն Սարգսյանի շիրիմներին: Այստեղ Վեհափառ Հայրապետն աղոթք բարձրացրեց հայրենյաց պաշտպանության համար ընկած մարտիկների հոգիների խաղաղության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱԺ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ

Հունվարի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանի հետ:

Նորին Սրբությունը շնորհավորեց ԱԺ նախագահին՝ Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի կողմից արժանացած մրցանակի առիթով:

Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ, արժանանալով նման պարգևի, պրն Խաչատրյանը, իբրև ԱԺ նախագահ, առավել նախանձախնդրորեն հետամուտ կլինի քրիստոնեական արժեքների տարածման գործին՝ նպաստելով կրոնական կազմակերպությունների գործունեության համար օրենսդրական համապատասխան դաշտի ստեղծմանը: Նորին Սրբությունը միաժամանակ համոզմունք հայտնեց, որ միջազգային կազմակերպության մրցանակը զորացնում է ուղղափառ ժողովուրդների միջև եղբայրությունը՝ ի նպաստ բարոյական արժեքների ամրապնդման և մարդկության կյանքում տեղ գտած տագնապահարույց խնդիրների համատեղ ջանքերով լուծման:

Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնելով շնորհավորանքի համար՝ ԱԺ նախագահը նշեց, որ Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի կողմից իրեն տրված պարգևը բարձր գնահատական է առաջին հերթին ժողովրդին, Եկեղեցուն ու պետությանը:

Անդրադառնալով Եկեղեցի-պետություն հարաբերություններին, ԱԺ նախագահը շեշտեց օրենսդրորեն Հայ Առաքելական Եկեղեցուն աջակցելու անհրաժեշտությունը, որպեսզի առավել հստակեցվի Մայր Եկեղեցու առաքելությունն ու դերը ժողովրդի կյանքում:

Հանդիպումն ավարտվեց աղոթքով: Նորին Սրբությունը Հայրապետական իր օրհնությունը տվեց ԱԺ նախագահին՝ նրան ընծայելով նաև վերջերս Մայր Աթոռի հրատարակությամբ լույս տեսած Մաղաքիա արքեպս. Օրմանյանի «Ազգապատում» հատորը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. ԱՐՇԱԿ ՎՐԴ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻՆ

(5 հունվարի 2002 թ.)

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալներ,

Պատմության շարժընթացի մեջ այսօր Աստծո կողմից ստեղծված սովորական օրերից մեկն է, օր, որը սակայն իր արտաքին շքեղության մեջ և, ինչպես ամենքդ տեսնում եք, իր հատկական լուսավորությամբ, իր պայծառությամբ, իր շքեղությամբ տարբերվում է մյուս բոլոր օրերից: Սակայն այս շքեղության հետ այն ունի նաև մի ներքին խորը խորհուրդ:

Այսօր ծնունդ է և, ինչպես ամեն մեկ ծնունդ՝ այս ծնունդը ևս մեզ մղում է խորհրդածության, վերլուծելու այդ ծնունդի արժեքը, խորհրդածելու այդ ծնունդի մարդկային քաղաքակրթության վրա ունեցած ազդեցության մասին: Եվ այդ խորհրդածությունը հարկադրում է ինձ հաստատել, որ արդարև մարդկային կյանքը չափազանց նման է մի լեռան. որքան հեռանում ես այդ լեռից, այնքան ավելի փոքրանում է, սրվերվում և աղոտանում, և սա օրինաչափություն է, որքան մեզ ժամանակը ավելի ու ավելի շատ է բաժանում կյանքից հեռացած մարդուց, այնքան նրա կերպարն ավելի մշուշվում է, ավելի փոքրանում:

Սակայն կա մի ծնունդ, որին նույնիսկ ժամանակն ու հեռավորությունն ի զորու չեն փոքրացնել, որովհետև նա ոչ թե նման է լեռան, այլ հորիզոնի, որին որքան մոտենում ես, այնքան հեռանում է, և որից որքան հեռանում ես, այնքան մոտենում է՝ մնալով նույնը, նույն անպարագրելին, մեծը, հսկան և որևէ բանից չսրվերվողը: Եվ այս մեծությունը բնորոշ է այն ծնունդին, որի նախատոնակը այսօր մենք կատարելու ենք՝ Քրիստոսի Ծննդյան:

Բազում խոսքեր են ասվել և բազում ուսումնասիրություններ գրվել այս ծնունդի և այս կյանքի մասին: Բայցևայնպես երբեէ չի սպառվել Նրա կյանքի պատմության թեման: Նրա մասին մարգարեն արտահայտվում էր որպես Հավիտենական Թագավորի, որպես Խաղաղության Իշխանի, և ամբողջ մի ժողովուրդ դարեդար սպասում էր Իրեն, լեցվել էր սպասումով և ակնկալությամբ իր Մեսիային, իր Փրկչին դիմավորելու: Եվ սակայն, հակառակ այդ սպասումի, որ գալու է մարմնավոր մի իշխան, որ գալու է մարմնավոր մի ազատիչ, այդ Փրկիչը, Նա, որի ծնունդը տոնախմբում ենք մենք այսօր, անակնկալորեն և բոլորի համար անսպասելի ծնվեց մի խեղճ և

աշխարհից մոռացված ու լքված հյուղակում. որը հովիվների համար կացարան էր ծառայում: Եվ բացի մի քանի խոնարհ հոգիներից. որոնք ունեին սրտի սրբություն Իրեն ճանաչելու, ոչ ոք. ոչ ոք չկարողացավ ճանաչել Իրեն: Եվ բացի նրանցից. ովքեր այդ սրտի սրբությամբ եկել էին Իրեն երկրպագելու. ոչ ոք երբեք սրտի զոջում. սրտի պատրաստակամություն չունեցավ ծանր կրկնելու Նրա առջև:

Այսօր Քրիստոսի ճակատը պատած փշե պսակի տեղ աճել և ծաղկել են վարդեր ու մեխակներ. որը, ինչպես փեսնում եք. զարդարում է ամեն մեկ եկեղեցու տարբ խորան: Հասկանալու համար այն ազդեցությունը. որ գործեց Հիտասի ծնունդը. այդ Մանկան ծնունդը ամբողջ աշխարհի. ամբողջ քաղաքակրթության վրա. հարկ է հայացք նետել. հայացքով ընդգրկել մեր անցած ուղին և մարդկության նախորդ շրջանի պատմությունը: Արդյոք արվեստներն ու գիտությունը և. ընդհանրապես. մարդկության քաղաքակրթությունը պիտի լինեին այն վիճակի մեջ. պիտի հասնեին այն բարձունքին. եթե իրապես չծնվեր այդ Փոքրիկը. այդ Մանուկը. որ իր կյանքի պատմությամբ իրապես հեղաշրջում առաջ բերեց մարդկային կյանքում:

Ժողովուրդներ կան և շատ են այդպիսիք. ինչպես մեր ժողովուրդը. որ իր դպրությունը. իր գիրը և գրականությունը ստացավ ի սեր Քրիստոսի կյանքը իր ժողովրդին սեփական լեզվով թարգմանելու: Եթե չլիներ Քրիստոսի ծնունդը և եթե չլիներ իր կյանքը սեփական ժողովրդին սեփական լեզվով թարգմանելու անհրաժեշտությունը. արդյո՞ք հայ ժողովուրդը և մի շարք այլ ժողովուրդներ կունենային իրենց դպրությունը. գիրը և գրականությունը:

Նրա ծնունդով արվեստի մեջ նշանակալի ձեռքբերումներ. արվեստի նշանավոր գլուխգործոցներ ստեղծվեցին. որոնցում պատկերված է սուրբ ծննդյան գեղեցիկ. խոնարհ և ճոխության մեջ չփայլող. բայց իր ներքին խորհրդով. ներքին պարունակությամբ ամենքին ցնցող խորհրդավոր մի տեսարան: Նույնն է նաև գրականության մեջ. բոլոր գիտությունների. բոլոր ասպարեզների մեջ: Բայց ամենից նշանակալից ներդրումը. ամենից նշանակալից հեղաշրջումը կատարվեց մարդկության բարոյական կյանքում:

Բարոյականություն. որն այդ շրջանին. ինչպես չափազանց շատ է ասվել. չափազանց շատ է կրկնվել. ծանր վիճակի ու կացության մեջ էր: Եվ այսօր արդեն. եթե դարեր առաջ. Քրիստոսի ծննդից առաջ փղամարդու և կանանց միջև փարբերությունը հսկայական էր. այլևս նրանց ընձեռնվել է հնարավորությունը որպես ազատ անձ. որպես Աստծո պատկեր ունենալու հավասար դիրքեր հասարակության մեջ:

Առաջ է եկել քրիստոնեական եղբայրասիրությունը և ամրապնդվել. ամուր հիմքերի վրա է դրվել մարդասիրությունը այն օրինակով. ինչ Քրիստոս փածեց մարդու նկատմամբ: Եվ. վերջապես. ամենից մեծ ավանդը Քրիստոսի ծննդյան եղավ այն. որ մարդկությունը նոր հայացքով և նոր ըմբռնումով մոտեցավ այն բնորոշմանը. այն առաքինությանը. որը կոչվում է արդարություն: Եվ իրապես արդարությունը. որը այլ կերպ էր ընկալվում նախաքրիստոնեական շրջանում:

Արդարության մասին նախնի ժողովուրդների պատկերացումները թերևս լավագույնս արտացոլված են մի ոչ քրիստոնյա. բայց հինավուրց ժողովրդի ավանդա-

գրույցում, ուր արդարությունը անձնավորված է ներկայացվում: Ավանդագրույցում պատմվում է, թե մեկ անգամ արդարությունը և անարդարությունը ճանապարհ են գնում, և ճանապարհին անարդարությունը դանակով հարվածում և սպանում է արդարությանը: Եվ հարվածից հետո, սպանելով արդարությանը, նրան մոխրի է վերածում և թանաք դարձնում: Եվ հին ժողովրդի իմաստությունը ասում է, որ այդ օրվանից ի վեր արդարությունը քնակվում է գրքերում, իբրև թանաք դաջվելով գրքի սպիտակ թերթերին: Սակայն Քրիստոս եկավ և ծնվեց, որպեսզի հաստատի, որ արդարությունը ոչ թե գրքերում է միայն պարփակված, այլ նաև յուրաքանչյուրի մեջ, յուրաքանչյուր քրիստոնյայի հոգում: Եվ ինքը, Եսայի մարգարեի բնորոշմամբ, որպես Արդարության Արնգակ Իր արևի ջերմության ներքո մշտապես ջերմացնելու է բոլոր քրիստոնյաների հոգիները, ովքեր իրապես ձգտում ունեն արդարության հասնելու և արդար լինելու:

Արդարությունը եռու չէ, յոթ սարից այն կողմ չէ: Արդարությունը մեզանից յուրաքանչյուրին մոտ է այնքան, որքան մեզանից յուրաքանչյուրը մոտ է Քրիստոսին, և որքան ինքը իրեն արդար է նկատում և որքան ինքն է ձգտում արդարության:

Եվ այսօր, սիրելի հավատացյալներ, Քրիստոսի Ծննդյան տոնը արդարության ծննդյան և արդարության փառաբանության օրն է: Շատ անգամներ ասվել է, որ նաև սիրո փառաբանության, սիրո ծննդյան օրն է, սեր, որ Աստված տածել է մարդկության նկատմամբ, բայց այն նաև արդարության ծննդյան օրն է, արդարության՝ ամեն մեկիս հոգիների մեջ:

Արդարությունը կարող են գտնել նրանք, ովքեր փնտրում են իրապես արդարությունը: Շատ դյուրին է մեղադրել որևէ մեկին անարդարության մեջ: Սակայն, ինչպես ասացինք, արդարությունը իրական, ապրված և ներքին զգացում է և, որպես շեշտում է Տերը՝ Երկնքի արքայությունը, մեզանից յուրաքանչյուրի հոգիներից ներս է, այնպես և արդարությունը, միայն անհրաժեշտ է, որ այն պեղվի և դուրս բերվի:

Ես այս զգացումով, սիրելի հավատացյալներ, այս բարեմաղթանքով, որպեսզի Տիրոջ սուրբ ծնունդը արդարության որոնման նոր մղիչ ուժ, նոր խթան դառնա ամենքիս համար մեր կյանքի ընթացքի բոլոր պայմաններում, հայցում եմ Երկնային Փրկչի առատ օրհնությունները ամենքիս և բերկրանքով, հոգու բերկրանքով վերջապես ավետիսը տալիս Սուրբ Ծննդյան.

Քրիստոս ծնավ և հայտնեցավ, ձեզ, մեզ և ամենքյան մեծ ավետիս:

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍ ԱՃԷՄԵԱՆ

«ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ» ԱՇԽԱՐՀԱԲՃԻՐ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Մեծ ուրախութեամբ նուէր ստացանք Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութեան նոր հրատարակած սոյն թարգմանութիւնը, գեղեցիկ կազմով ճոխ հատոր մը: «Ներկայ թարգմանութեան մասին» տրուած առաջին բացատրութենէն իմացանք, թէ «Արեւելահայերէն այս Նոր Կտակարանը արեւմտահայերէն նորագոյն թարգմանութեան վերածում-փոխադրութիւնն է»: Իսկ արեւմտահայերէն թարգմանութեան մասին էջատակին նշուած է, թէ «Աստուածաշունչ Նոր Կտակարան Յիսուսի Քրիստոսի» հրատարակութիւնն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, գործակցութեամբ Լիբանանի Ս. Գրոց Ընկերութեան, Անթիլիաս, 1996 թ.»:

Կարդացինք նոր թարգմանութեան իւրայատկութիւններու մասին տրուած երկար բացատրութիւնները, ուրախացանք, որ արդի հասկնալի հայերէնով նոր թարգմանութիւն մը ունինք՝ հիմնուած յունարէն բնագիրի վրայ, եւ սկսանք կարդալ այդ թարգմանութիւնը: Տակ տակի դրինք Ս. Գրոց Ընկերութեան յունարէն բնագիրը (Nestle-Aland Greek- English New Testament) եւ հայերէն գրաբար թարգմանութիւնը, տող առ տող (interlinear), աւելցուցինք երրորդ տող մը՝ նոր թարգմանութիւնը: Ցունարէնն ու գրաբարը սկսանք բաղդատել նոր թարգմանութեան հետ: Սկսանք քննել յունարէն բնագիրի կապը նոր թարգմանութեան հետ: Առաջին իսկ բառերէն ցնցիչ եղաւ մեր զարմանքը.

1.1 Βίβλος γενέσεως Ἰησοῦ Χριστοῦ υἱοῦ Δαυὶδ υἱοῦ Ἀβραάμ.

Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու:

1 *Այս է Հիսուս Քրիստոսի՝ Դավթի որդու՝ Աբրահամի որդու ազգաբանությունը.*

Աւետարանիչը կը ներկայացնէ իր Աւետարանը իբրեւ Գիրք ծննդեան, որ ուղիղ թարգմանութիւնն է յունարէնին: Նոր թարգմանութիւնը կ'անգիտանայ «Գիրք» բառը, որ կը յատկանշէ ամբողջ Աւետարանը եւ կը սկսի Աւետարանը «Այս է» յաւելեալ բացատրութեամբ եւ մեզի կը հրամցնէ «ազգաբանութիւն» բառը, որ գոյութիւն չունի ո՛չ յունարէն, եւ ո՛չ ալ գրաբար բնագիրներուն մէջ: Ըստ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ին, այս բառի իմաստն է «ժողովուրդների՝ ցեղերի միջեւ եղած տարբերութիւններն ու դրանց պատճառները ուսումնասիրող գիտութիւն»: Ցունարէն γενέσεως բառին եւ անոր գրաբար ծննդեան թարգմանութեան

թելադրանքնով ճշգրիտ թարգմանութիւն մը պիտի ըլլար *«ծննդաբանութեան գիրք»* թարգմանել, ինչպէս ըրած են անգլերէնի եւ ֆրանսերէնի թարգմանողները. «The book of the genealogy» (Nestle-Aland Greek-English New Testanent) կամ «Le livre de la Genèse de...» (La Bible de Jerusalem):

Ցաջորդ համարին մէջ, յունարէն Ἀβραὰμ ἐγέννησεν τὸν Ἰσαάκ, հին թարգմանութեամբ՝ Աբրահամ ծնաւ զԻսահակ. նոր հրատարակութիւնը կը թարգմանէ *«Աբրահամը ծնեց»*: Այսօրուան արեւելահայերէնով, ծնեց բառը կը հասկցուի, թէ Աբրահամ ծնունդ տուաւ Իսահակի, իբրեւ մայր, որովհետեւ կինն է, որ ծնունդ կուտայ եւ ոչ թէ հայրը: Երրորդ տունին մէջ Ἰούδας δὲ ἐγέννησεν τὸν Φάρες καὶ τὸν Ζάρα ἐκ τῆς Θαμάρ յունարէն բնագիրը թարգմանուած է *«Հուդան իր Թամար կնոջից ծնեց Փարեսին ու Զարային»*: Հինգերորդ համարին մէջ, յունարէն Σαλμὼν δὲ ἐγέννησεν τὸν Βόες ἐκ τῆς Ῥαχάβ բնագիրը թարգմանուած է *«Սալմոնն իր Ռախաբ կնոջից ծնեց Բաասին»*: Ի՞նչպէս հասկնալ նոր այս թարգմանութիւնը, ուր ծնողը, այսինքն ծնեց բային տէրը Ցուդան է, եթէ ոչ, որ Ցուդան իր Թամար կնոջմէն կը ծնի իր զաւակները եւ Սալմոնն է, որ Ռաքաբէն կը ծնի Բաասին:

Նայեցանք King Janes II Version-ին եւ գտանք ծնեց բառին հետեւեալ թարգմանութիւնը «Abraham **fathered** Isaac, and Isaac **fathered** Jacob... Judah **fathered** Pherez and Zarah out of Tamar...»:

Դիմեցինք նոյնպէս The Oxford Annotated Bible-ին եւ գործածուած գտանք հայր բառը «Abraham was the **father** of Isaac»: Նոյնպէս կը թարգմանեն The New International version ամերիկեան հանրածանօթ թարգմանութիւնը, ինչպէս նաեւ վերոյիշեալ Nestle-Aland Greek-English New Testanent-ը: Ուրեմն յունարէն ἐγέννησεν բառին արեւելահայերէն թարգմանութիւնը պիտի ըլլար *«հայր եղաւ»*, հեռանալով գրաբար ծնաւ բառէն, որովհետեւ ան ունի յունարէն բառին ճշգրիտ իմաստը, որ է «հայր եղաւ»:

Նոր թարգմանիչը ունի նաեւ տառադարձութեան հարց: Ա. 5 համարի Ῥαχάβ բառը կարելի չէ տառադարձել Ռախաբ-ով: Ոսկեդարէն սկսեալ յունարէն (χ) տառը փոխադարձուած է հայերէն (ք) տառով, ինչպէս Χριστός-ի պարագային՝ Քրիստոս: Բայց զարմանալի է, Ῥαχάβ-ը դարձնելով Ռախաբ, տառադարձութեան նոյն սկզբունքին ինք եւս չի հետեւիր, երբ նոյն Ա. գլուխի իններորդ համարին մէջ, թարգմանիչը յունարէն Ἀχάζ բառը թարգմանած է Աքազ, ըստ տառադարձութեան սկզբունքին:

Նոյն տառի երկու տարբեր տառադարձութիւններու կը հանդիպինք նաեւ «Ց» տառի պարագային: Ա. 5 -ի յունարէն Ἰεσσαί անունը մեր հայերը թարգմանած են Ցեսսէ, իսկ նոր թարգմանիչը՝ Հեսսեին: Սակայն Ա. 8-ի յունարէն Ἰωσαφάτ անունը թարգմանուած է «Ցոսաֆատ», մինչդեռ հիները թարգմանած են «Ցովսափաթ»:

Ա. 5 համարին մէջ. յունարէն «ի» հնչուող նշանը ճշգրիտ տառադարձութեամբ դարձած է «ի». ինչպէս յունարէն 'Ροῦθ անունի պարագային՝ Հռութ: Իսկ 'Ραχάβ անունի պարագային՝ Նոր թարգմանիչը ունի Ռախաբ. փոխանակ Հռաքաբ-ի:

Ա. 9-ի յունարէն 'Ιωαθάμ անունի պարագային, Նոր թարգմանիչը, որ հիմնապէս կ'անգիտանայ գրաբար բնագիրը. ուր յունարէնը թարգմանուած է Յովաթամ, կը թարգմանէ Յոաթամ, չանդրադառնալով թէ յունարէն 'Ιω-ն դարձած է Յով, ինչպէս Ա. 10-ի Յովսիա, Յակովբ եւ Յովսէփ անուններու պարագային, զորս Նոր թարգմանիչը վերածած է Յոսիա-ի, Հակոբ-ի, Հովսեփ-ի եւ Իոսիա-ի:

Յատուկ անուններու տառադարձումներուն մէջ կան նաեւ այլ անփութութիւններ, որոնց կ'անդրադառնանք իրենց տեղը:

Երբ կը վերջանայ ծննդաբանութիւնը եւ կը սկսի Յիսուսի ծնունդի պատմութիւնը, կը թուի, թէ Նոր թարգմանիչը հակում ունի Մարիամ Աստուածածինը նախ նշանելու եւ ապա՝ անպայման ամուսնացնելու Յովսէփի հետ: Նպատակին հասնելու համար, ան կ'այլափոխէ յունարէն բառերու իմաստը:

Ա. 19-ի Յովսէփի յունարէն բնորոշումը ὁ ἀνὴρ αὐτῆς կը նշանակէ այր նորա: Թարգմանիչը յունարէն ὁ ἀνὴρ բառը եւ անոր գրաբար այր բառը, որ կը նշանակէ ամուսին, թարգմանած է նշանած: Նախորդ համարին մէջ, Աւետարանիչը գրած էր πρὶν ἢ συνελθεῖν, որով ըսել ուզած էր մինչ չեն եկեալ առ միմեանս, ինչպէս թարգմանած են ոսկեդարեան մեր թարգմանիչները, այսինքն թէ Մարիամի այրը, ամուսնութենէն առաջ գիտցաւ, որ իր կինը յղացած է իրենց կենակցութենէն առաջ:

Ա. 16 համարը բնութագրած էր Յովսէփը իբրեւ τὸν ἄνδρα Μαρίας, որուն գրաբար ճշգրիտ թարգմանութիւնն է զայրն Մարեամայ, զոր պէտք է հասկնալ այր մարդը, որում խաւսեցեալ զՄարիամ կոյս, այսինքն, խոստացուած է «Մարիամ կոյսը», յորմէ ծնաւն Յիսուս, այսինքն՝ յորմէ ծնաւ Յիսուս, որ անուանեցաւ Քրիստոս: Այստեղ ունինք երկու հարցեր՝ բնագրական եւ աստուածաբանական: Ոսկեդարեան հայերէն թարգմանութիւնը կատարուած է յունարէն բնագիրէ մը եւ հաւատարիմ մնացած է անոր բոլոր նրբութիւններուն: Յունարէն այդ բնօրինակը Ս. Գրոց Ընկերութեան հրատարակած յունարէն Նոր Կտակարանի բնագիրէն տարբեր է: Ս. Գրոց Ընկերութեան հեղինակները չեն անգիտացած յունարէն ձեռագիրներով պահուած բնագիրները, այլ էջատակին ամփոփած են անոնց տարբերցուածները: Նոր թարգմանիչը բոլորովին անգիտացած է հայերէն առաջին թարգմանութիւնը եւ անոր յունարէն բնօրինակը: Նոր Կտակարանի յունարէն բնագրագիտութիւնը այնքան յառաջացած է, որ շատ դիւրին է գիտնալ թէ հայերէն առաջին թարգմանութեան յունարէն բնագիրը ձեռագրային որ խումբին կը պատկանի: Բաւ է աչքի առջեւ ունենալ Գերմանիոյ Մունստեր համալսարանի Նոր Կտակարանի ինստիտուտի գիտական հրատարակութիւնը՝ Nestle-Aland Greek-English New Testament-ը: Այսպէս, Ա. 16 համարի հայերէն բնագիրը թարգմանութիւնն է յունարէն բնօրինակի մը հետեւեալ ընթերցուածին. ὦ μνηστευθεῖσα παρθένος

Μαριὰμ ἐγέννησεν Ἰησοῦν τὸν λεγόμενον Χριστόν: Ցունարէն այս ընթերցուածը, որուն բառացի թարգմանութիւնն է գրաբար վերոյիշեալ ընթերցուածը, կը պատկանի յունարէն Θ f[13] it ձեռագիրներուն: Տասներորդ դարու յունարէն Θ ձեռագիրը կը գտնուի Տփղիսի ձեռագրաց ինստիտուտին մէջ, համար 28: f[13] կը յղէ յունարէն ձեռագիրներու ընտանիքի մը, իսկ it՝ հին լատիներէն խումբ մը ձեռագիրներու: Հարցը παρθένος կոյս բառի մասին է, որը կը գտնուի յունարէն որոշ ձեռագիրներու մէջ, որոնցմէ եղած պէտք է ըլլայ մեր թարգմանիչներու թարգմանած նախօրինակը:

Գրաբար թարգմանութիւնը հիմնուած է աւանդութեան մը վրայ, ուր շեշտուած է Քրիստոսի կուսական ծնունդը: Այդ շեշտաւորումը Մատթէոս Աւետարանիչի կատարածն է, որովհետեւ անոր նպատակն է հաստատել, թէ Քրիստոս «լրումն է օրինաց եւ մարգարէից»: Հաստատելու համար կուսական ծնունդը, աւետարանիչը Ա. 23-ին մէջ կը մէջբերէ Եսայի մարգարէն.

Ἰδοὺ ἡ παρθένος ἐν γαστρὶ ἕξει καὶ τέξεται υἱόν,

καὶ καλέσουσιν τὸ ὄνομα αὐτοῦ Ἐμμανουήλ,

Ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի եւ կոչեսցեն զանուն նորայ Եմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած:

Կը զարմանանք, թէ հայ թարգմանիչ մը տուած ըլլայ իր նախընտրութիւնը Ս. Գրոց Ընկերութեան այն գիտնականներուն, որոնց համար Մարիամի անունին կցուած կոյս բառը անընդունելի է, որովհետեւ Մարիամի սրբութիւնը, կուսութիւնը, բարեխօսութիւնը կորսնցուցած են իրենց հնադարեան իմաստը այդ գիտնականներուն համար:

Այնքան աշխարհականացած է Քրիստոսի մարդեղութեան խորհուրդի պատմութիւնը, որ Ա. 16 համարը, թարգմանուած է այսպէս. *«Հակոբը ծնեց Հոսէփին, որը Մարիամի նշանածն էր, եւ Մարիամից ծնվեց Հիսուսը, որ անվանվեց Քրիստոս»:*

Յիսուսի ծննդեան պատմութիւնը կը վերածուի ամուսնութեան մը պատմութեան, որ կը վերջանայ ապահարզանով:

Այսպէս, Ա. 19 համարին մէջ կը գտնենք հետեւեալը. «այլ մտածեց լռելյայն հետ վերցնել նշանը»: Ս. Գրոց Ընկերութեան հրատարակած յունարէն բնագիրն է ἀπολῦσαι αὐτήν, որուն գրաբար թարգմանութիւնն է արձակել զնա, այսինքն տունէն դուրս հանել: Յաջորդ նախադասութիւնը շարունակութիւնն է նոյն թեղադրութեան, այսինքն քեզ մօտ պահէ քու կինդ. զայն մի՝ արտաքսեր. μὴ φοβηθῇς παραλαβεῖν Μαριὰν τὴν γυναῖκά σου զոր մեր նախնիք հաւատարմօրէն թարգմանած են «մի՝ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո»: Իսկ նոր թարգմանութիւնը այստեղ եւս կը ստեղծագործէ. *«մի՝ վախեցիր ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ»:*

Մատթէոսի առաջին գլուխը կը շարունակուի նոյն ձեւով: Ա. 22 համարին մէջ յունարէն γέγονεν բայը, որ կը նշնակէ եղեւ, այսինքն «տեղի ունեցաւ», «կատար-

ուեցաւ». թարգմանուած է *«պատահեց»*: Նոյնպէս յունարէն ἵνα πληρωθῇ բայը. հին թարգմանութեամբ զի լցցի. այսինքն «իրականանայ». «իրականութիւն դառնայ». նորին մէջ թարգմանուած է *«որպեսզի կատարվի»*:

Ա. 23 համարին մէջ. καλέσουσιν τὸ ὄνομα αὐτοῦ Ἐμμανουήλ. յունարէնը. որ հին թարգմանութեան մէջ հաւատարիմ մնացած է յոյն բնագիրին. կոչեսցեն զանուն նորա Եմմանուէլ. նորին մէջ կորսնցուցած է զանուն բառը եւ բաւականացած է *«կոչել»* բայով. *«նրան պիտի կոչեն Էմմանուել»*. մինչդեռ յաջորդ նախադասութեան մէջ պահած է «անուն» բառը. ἐκάλεσεν τὸ ὄνομα αὐτοῦ Ἰησοῦν, նորը թարգմանուած է *«որի անունը Հիսուս դրեց»*:

Ա. 24 համարին մէջ παρέλαβεν τὴν γυναῖκα αὐτοῦ յունարէնը, գրաբար թարգմանութեամբ «առ յինքն զկին իւր», դարձած է *«ամուսնացավ իր նշանածի՝ Մարիամի հետ»*: Նոյն յունարէն բնագիրը Nestle-Aland-ի մօտ թարգմանուած է. «he took his wife» New Iinternational Version-ի մօտ՝ «took Mary home as his wife» եւ Bible de Jérusalem-ի մօտ՝ «il prit chez lui sa femme»: Ոչ մէկ հեղինակաւոր օտար թարգմանութիւն չի՛ խօսիր ամուսնութեան մասին, միայն մին աւելցուցած է Մարիամ անունը եւ երեքն ալ նոյն իմաստը ունին, այսինքն թէ Յովսէփ, որ կը մտածէր լքել յղացած իր կինը, հնազանդեցաւ հրեշտակի հրամանին: Ան հասկցաւ, թէ իր Մարիամ պիտի ունենայ կուսական ծնունդ, որովհետեւ ան յղացած է Ս. Հոգիով: Յովսէփի պարտականութիւնն է իր տան մէջ պահել Մարիամ եւ ծնելիք մանուկը՝ յարգելով անոր կուսութիւնը: Քրիստոնեայ բոլոր եկեղեցիները, որոնք մասնակցած են Եփեսոսի ժողովին եւ ընդունած են անոր որոշումները, այսպէս հասկցած են Մատթէոսի Աւետարանին առաջին գլուխը:

(Շարունակելի)

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ

ԱՆԱՏՈԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վերջին երկու դարերում Ագաթանգեղոսի պատմության և ապրած ժամանակի մասին հայ և օտարազգի գիտնականները արտահայտել են բազմաթիվ հակասական կարծիքներ՝ կասկածի ենթարկելով Ագաթանգեղոսի ապրած ժամանակը ու պատմության վավերականությունը: Մինչև վերջին երկու դարերում արտահայտված այս տեսակետները քննելը, նախ անդրադառնանք այս հարցերի վերաբերյալ վաղ միջնադարի հայ պատմիչների ունեցած ըմբռնումներին:

Ագաթանգեղոսին վկայակոչող հնագույն պատմիչը Փավստոս Բուզանդն է: Սակայն առաջինը, որ հստակ հիշում և նկարագրում է Ագաթանգեղոսի պատմությունը, Ղազար Փարպեցին է: Համաձայն Փարպեցու «Սկիզբն առաջին գրոց պատմութեանն հայոց, որում սկիզբն արարեալ պատմեաց ստուգիւ այրն երանելի Ագաթանգեղոս» և «յորոյ անուն եւ զգիրսն անուանեալ կոչեն Գրիգորիսի»[1]: Այսպիսով, ըստ նրա, երանելի այր Ագաթանգեղոսը ստույգ ձևով շարադրել է «Հայոց պատմության» առաջին գիրքը, որը կոչվել է «Գրիգորիսի գիրք»:

Փարպեցին Ագաթանգեղոսի մասին հետևյալն է գրում. «Այր բանիբուն գիտութեամբ եւ լի ամենայն հրահանգիւ, ստուգաբան ի կարգադրութիւն ճառից եւ յարմարագիր ի պատմութիւնս ասացուածի իւրոյ»[2]: Այսինքն Ագաթանգեղոսը կատարյալ գիտությամբ և լի ամենայն փորձով, ճառերի կարգավորության մեջ ճշմարտախոս և իր պատմությունները վայելչորեն հյուսող անձնավորություն է: Սրանից կարելի է եզրակացնել, որ պատմիչն ընդունում է, թե Ագաթանգեղոսը 4-րդ դարի սկզբում ապրած իրական անձնավորություն է և հավատում է նրա գրած պատմությանը, որպես հավաստի, իրական փաստերից բխած: Միաժամանակ Փարպեցու կողմից Ագաթանգեղոսի երկի բովանդակության համառոտ նկարագրությունը համընկնում է այս գործի մեզ հասած բնագրի բովանդակությանը[3]: Դրանից հետո այսօր գրել

---

[1] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1907, էջ 5:

[2] Նույն տեղում, էջ 7:

[3] Նույն տեղում, էջ 7-9:

7-րդ դարի սկզբում Ագաթանգեղոսի Պատմության խմբագրության և մեծ փոփոխությունների ենթարկվելու մասին առնվազն անհերքելի է և անիրական:[4]

Պատմահայր Խորենացին ևս Ագաթանգեղոսին 4-րդ դարի սկզբում ապրած իրական անձնավորություն է համարում և անվանում «աջող քարտուղարն Տրդատայ Ագաթանգեղոս»[5]: Խորենացին Փարպեցու նման հավատում է Ագաթանգեղոսի ստեղծած երկի ճշմարտացի լինելուն: Եվ այդ երևում է Խորենացու հետևյալ մեջբերումներից. «Եթէ որպես Ագաթանգեղոս պատմեաց համառօտ»[6], «Արդ թեպէտ եւ Ագաթանգեղոս որպես համառօտ էանց ընդ այս»[7], կամ «իսկ որ ինչ ի նորա ժամանակի Տրդատայ գործք ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»[8] և այլն: Խորենացու այս մեջբերումները, սակայն, ճիշտ չընկալվեցին, քանի որ նա Ագաթանգեղոսին վկայակոչում էր խառնված այլ սկզբնաղբյուրներից բերած տեղեկությունների հետ, և շատ ուսումնասիրողների թվում էր, թե այդ տեղեկությունները ևս Ագաթանգեղոսի գրքից են բերված, որոնք բացակայում են մեզ հասած օրինակում:

Կորյունը «Վարք Մաշտոցի»-ում, առանց Ագաթանգեղոսի անունը տալու, մեջբերումներ է արել նրանից: Գ. Տեր-Մկրտչյանը ենթադրում է նաև, որ Կորյունն Ագաթանգեղոսի խմբագրողն է[9], իսկ ըստ Ն. Բյուզանդացու՝ 4-րդ դարում հունարեն գրված Ագաթանգեղոսի մատյանը 5-րդ դարում Կորյունն է հայերենի թարգմանողը:[10] 7-րդ դարի պատմիչ Սեբեոսից հետո եկած բոլոր հետագա պատմիչները այս գործը սկսեցին անվանել «Ագաթանգեղոսի պատմություն»: Նրանք ևս Ագաթանգեղոսին համարում էին իրական անձ և 4-րդ դարի պատմիչ ու հավատում էին նրա գրած պատմության վավերականությանը: Համենայն դեպս այլ տեսակետ չկար:

Առաջին օտարազգի հեղինակը, որը օգտվել է Ագաթանգեղոսի երկից, ազգությամբ ասորի Գևորգ եպիսկոպոսն է եղել, 714 թվականին: Նրա երկը գրված է հին ասորերենով և բովանդակում է ինն գլուխ այլևայլ կրոնական և մատենագրական

---

[4] Ըստ Ֆրանսիայի Ազգային գրադարանում գտնվող մի հայերեն ձեռագիր մատյանի հիշատակարանի, Ագաթանգեղոսի պատմությունը հունարենից հայերենի է թարգմանվել Եզնիկ քահանայի ձեռքով, Կոմիտաս Կաթողիկոսի օրոք (615-628), Որմիզդի որդի Խոսրովի թագավորության 29-րդ տարում (Հ. Անասյան. Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 161): Ելնելով դրանից բելգիացի գիտնական Մ. Վան Էսորոկը հայերեն ընդարձակ բնագրի վերջնական տարբերակի խմբագրումը դնում է 7-րդ դարի սկզբում և նույն դարում էլ հարազատաբար ըստ նրա նորից թարգմանվում է հունարեն (ՊԲՀ, նո. 2, 1984, էջ 28.): Սակայն նման պնդման համար բավարար հիմքեր չկան:

[5] Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 202:

[6] Նույն տեղում, էջ 98

[7] Նույն տեղում, էջ 203:

[8] Նույն տեղում, էջ 219:

[9] Գ. Տեր-Մկրտչյան. Ագաթանգեղոսի աղբյուրներից, Վաղարշապատ 1896:

[10] Ն. Բյուզանդացի. Կորյուն Վարդապետ եւ նորին թարգմանութիւն, Տփղիս, 1900, էջ 14:

նյութերի: Նրա գրվածքի հինգերորդ գլուխը նվիրված է Գրիգոր Լուսավորչի վարքին, որը գրելու համար օգտվել է Ագաթանգեղոսից[11]:

Միաժամանակ հայտնի է, որ առաջին անգամ փաստացի Ագաթանգեղոսի պատմությունը հունարեն թարգմանել է 10-րդ դարի հույն պատմիչ Մետաֆրաստեսը, որը Ագաթանգեղոսի պատմության տարածման հարցում ունեցավ վճռորոշ նշանակություն:

Ագաթանգեղոսի պատմության գիտական ուսումնասիրության սկիզբը դրվեց 18-րդ դարում, երբ 1762 թ. Ս. Ստիլզինգը լույս ընծայեց նրա հունարեն թարգմանության բնագիրը ծանոթագրություններով, «Վարք սրբոց» մատենաշարում[12]:

Հայագիտության զարգացումը 19-րդ դարում խթան հանդիսացավ այս երկի մասին բազում ուսումնասիրությունների ի հայտ գալուն: Ագաթանգեղոսի պատմության 1867 թվականի ֆրանսերեն հրատարակության թարգմանիչ Վ. Լանգլուան այն կարծիքը հայտնեց, որ հեղինակը չէր կարող 4-րդ դարում ապրած լինել, այլ եղել է 5-րդ դարի եկեղեցական[13]:

Այդ ասպարեզում լուրջ քայլ էր նաև Ա. Ֆոն Գուտշմիդի «Ագաթանգեղոսը» աշխատության 1877 թվականի գերմաներեն հրատարակությունը: Ըստ Ա. Ֆոն Գուտշմիդի՝ հայերեն «Ագաթանգեղոսը» բնագիրն է, իսկ հունարենը՝ թարգմանությունը: Նա ևս գտնում էր, որ Ագաթանգեղոսը 5-րդ դարի հոգևորական է[14]:

Այս և այլ հարցերի ուսումնասիրության համար կարևոր քայլ էր հունարեն թարգմանության, ինչպես նաև 10-րդ դարում կատարված մետաֆրաստյան խմբագրության հրատարակությունը Պ. Դը Լագարդի կողմից[15]:

20-րդ դարի սկզբում Ն. Մառը այն կարծիքը հայտնեց, որ հայերեն առաջին «Ագաթանգեղոսը» 5-րդ դարում կազմել է Մեսրոպ Մաշտոցը՝ Գրիգոր Լուսավորչի ձեռքով հայ և կովկասյան ուրիշ ժողովուրդների մկրտության մասին գոյություն ունեցող անգիր զրույցներից[16]: Այս խմբագրությունը, ըստ նրա, հավանաբար թարգմանվել է հունարենի և նրանից օգտվել է Գևորգ Ասորին՝ 714 թվականին: Ըստ նրա՝ հայերեն «Ագաթանգեղոսը» Հայաստանում հունական և ասորական եկեղեցական հոսանքների միախառնումից հետո հունականի ազգային վերամշակումն ու նոր խմբագրությունն է[17]:

Ագաթանգեղոսի պատմության ուսումնասիրության գործում կարևոր քայլ համարվեց նաև 1973 թվականին Գ. Լաֆոնտեի կողմից բազում ձեռագրերի համե-

---

[11] Տաշեան Հակոբոս, Ագաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ագաթանգեղեայ գրոց, Վիեննա, 1891, էջ 1-2:

[12] Ագաթանգեղոսի Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 503:

[13] Նույն տեղում:

[14] Նույն տեղում:

[15] Նույն տեղում:

[16] Հ. Աճառյան, Հայկական մատենագրություն, հատ Ա, Երևան, 1959, էջ 158:

[17] Նույն տեղում:

մատությանը հրատարակած հունարեն «Ագաթանգեղոսի» քննական բնագիրը[18]: Ըստ նրա՝ 5-րդ դարի կեսերին 4-րդ դարից գոյություն ունեցած պատմական, վիպական ու վկայաբանական աղբյուրներից հայ եկեղեցականի ձեռքով խմբագրվել է «Գրիգորիսի գիրքը», որը տեսել և նկարագրել են Ղազար Փարպեցին, և ուրիշներ: Խմբագրողը, ըստ Լաֆոնտեի, եղել է Մաշտոցի աշակերտներից:

Դեռևս միջնադարում այս երկը ունեցել է ընդհանուր քրիստոնեական տարածում: Այսօր հայտնի են մոտ երկու տասնյակ խմբագրություններ միջնադարի ինն լեզուներով՝ հայերեն, հունարեն, ասորերեն, արաբերեն, լատիներեն, եթովպերեն, վրացերեն, դպտերեն (պատառիկ) և սլավոնական տարբերակներով: Սրանց մեջ գլխավորն է համարվում Ագաթանգեղոսի գրաբարյան բնագիրը: Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» վաղ միջնադարյան հայ մատենագրության լավագույն երկերից է և ներկայացնում է 3-4-րդ դարերի Հայաստանի պատմական իրադարձությունները: Այն անգնահատելի աղբյուր է նշված ժամանակաշրջանի Հայաստանի պետական, քաղաքական կյանքի և մշակութային պատմության համար, որ իր մեջ պարունակում է արժանահավատ բազմաթիվ տվյալներ, որոնք չկան այլ աղբյուրներում: Չնայած այս ամենին, ճիշտ չի ընկալվել և գնահատվել Ագաթանգեղոս պատմիչը:

Օտարազգի և հայ գիտնականներից ոմանք ժխտել են Ագաթանգեղոսի գոյությունը, ոմանք նրան համարել են 5-րդ դարի պատմիչ, ոմանք նրան համարել են հույն, ոմանք՝ լատինացի, իսկ ոմանք՝ հայ: Վերջում եկել են այն եզրակացության, որ Ագաթանգեղոսը իրական անձ չէ, այլ 5-րդ դարի առաջին կեսին կազմվել է մի խմբագրություն, որի հայերենը դեռ հայտնի չէ, բայց կան նրանից ծագող ասորերեն, հունարեն և արաբերեն խմբագրություններ, որոնք վարք են կոչվում, իսկ մեզ հայտնի խմբագրությունը ձևավորվել է 5-րդ դարի կեսերին, որը կանոնական է համարվել Հայ Եկեղեցու կողմից և ամբողջ միջնադարում օգտագործվել որպես նվիրական սրբազան մատյան:[19]

Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» ունի հետևյալ կառուցվածքը.

ա) Առաջաբան

բ) Սուրբ Գրիգորի վարքը և պատմությունը:

գ) Հռիփսիմյան կույսերի վկայաբանությունը:

դ) Սուրբ Գրիգորի վարդապետությունը:

ե) Հայաստան աշխարհի փրկության դարձը:

Ենթադրվել է նաև, որ այդ մասերից յուրաքանչյուրը առանձին գործ է: Բայց բնագրային քննությունը ցույց է տալիս, որ նրանք ամբողջական մի գործ են:

Համաձայն Մանուկ Աբեղյանի՝ Ագաթանգեղոսի առաջաբանը մթին, ավելորդաբան կրկնություններով ու ճոռոմ լեզվով է հորինված: Միաժամանակ նա այս ա-

---

[18] Ագաթանգեղոս, Հայոց Պատմություն, էջ 503:

[19] Նույն տեղում, էջ 510:

ռաջաբանը համարում է առեղծվածային, նրա էությունը լրիվ չպարզված[20]: Իսկ ըստ Բարսեղ Սարգիսյանի՝ այդ առաջաբանում ոչ մի դրական փաստ չկա, որ նպաստեր Ագաթանգեղոսի պատմական անձ և Տրդատ արքայի քարտուղարը լինելուն[21]: Չնայած որ ողջ առաջաբանը գրված է դասական գրաբարով, ոմանք առաջաբանի սկզբում եղող նավաթեկության մասին հատվածը համարում են խորթ և անհարիր այս առաջաբանին: Բայց, ինչպես երևում է, Ագաթանգեղոսը իր գիրքը գրելու դժվարությունները ավելի պատկերավոր կերպով ներկայացնելու համար է նման զուգահեռ կատարում:

Առաջաբանում Ագաթանգեղոսը տեղեկություններ է հաղորդում նաև իր մասին. «Արդ՝ հրաման հասեալ առ իս ոմն Ագաթանգեղոս, որ ի քաղաքէ ի մեծ Հռովմայ եւ վարժեալ հայրենի արուեստի, Հռոմայերէն եւ Յունարէն ուսեալ դպրութիւն, եւ ոչ կարի ինչ անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց»[22]: Նաև ասում է, որ ինքը Հայաստան է եկել Տրդատ արքայի հրամանով՝ գրելու կատարվող դեպքերի մասին. «Արդ՝ հասեալ առ իս հրաման ի մեծ արքայէն Տրդատայ՝ կարգել ինձ ի ձեռնարկութենէ նշանագիր ժամանակագրաց»[23]:

Քանի որ Տրդատ արքան ևս իր կրթությունը ստացել էր Հռոմում, ապա կարելի է ենթադրել, որ նա հավանաբար այնտեղից ծանոթ է եղել Ագաթանգեղոսին ու նրա կարողություններին, նաև հաշվի առնելով նրա հայ լինելը՝ հրամայել է նրան գալ Հայաստան ու գրի առնել Հայաստանում կատարվող բոլոր հայտնի իրադարձությունները: Ագաթանգեղոսը ևս չի թաքցնում իր հայ լինելը. «Ընթերցեալ զթորգոմայ ազգիս, զՀայաստան աշխարհիս զաստուածապարգեւ աւետեացն աւետարանին»[24]:

Ըստ 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու, Ագաթանգեղոս հունարենից թարգմանաբար նշանակում է բարի հրեշտակ[25], իսկ ըստ Աբեղյանի՝ Ագաթանգեղոս անունը կազմված է ագաթոս և անգելոս բառերից, որը նշանակում է լավ, ուրախ լուր տվող, ուրախ լուր բերող ագաթոս-լավ, անգելոս-լրաբեր, լրատու: Սա նշանակում է ավետաբերի, ավետարանչի, Ավետարան քարոզողի պատմություն: Այնուհետև, ըստ Աբեղյանի, «Ագաթանգեղոս» բառը սխալ հասկանալով կամ դիտմամբ առնված է իբրև հատուկ անուն և դարձած է Տրդատի քարտուղար, որպեսզի որպես գրքի հեղինակ այդ գրքի բովանդակության արժեքը ավելի բարձրացվի:Նրա կարծիքով այս գրվածքը ոչ թե 4-րդ դարի և ժամանակակցի գործ է, այլ 5-րդ դարի[26]:

---

[20] Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Գ, Երևան, 1968, էջ 180:

[21] Հ. Բ. Սարգիսյան, Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, Վենետիկ, 1890, էջ15:

[22] Նույն տեղում, էջ 10:

[23] Նույն տեղում:

[24] Նույն տեղում, էջ 12:

[25] Կիրակոս Վարդապետի Գանձակեցւոյ համառոտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէ իւր լուսաբանեալ, Վենետիկ, 1865, էջ 183:

[26] Մ. Աբեղյան, Երկեր, հատ Գ, Երևան, 1968, էջ 183:

Ագաթանգեղոսին չհավատալու հիմքեր սակայն չունենք: Նրա գրքում կան այնպիսի հավաստի տեղեկություններ, որոնք կարող էին գրի առնված լինել միայն ժամանակակցի և ականատեսի կողմից: Հայաստանում քրիստոնեության ընդունման և տարածման իր ժամանակակից և ականատես լինելու փաստը հաստատում է նաև Ագաթանգեղոսը, համաձայն որի գիրքը կարգով մատենագրել է ոչ թե հին ավանդություններից տեղեկանալով, այլ ինքն է ականատես եղել ժամանակի հոգևոր գործերին և լուսավոր վարդապետությանը: Տրդատ արքան և Գրիգոր Լուսավորիչը, ընդունելով և տարածելով քրիստոնեությունը Հայաստանում, գիտակցում էին նրա ողջ կարևորությունն ու նշանակությունը հայ ժողովրդի հետագա կյանքում և հայոց պետականության ամրապնդման գործում: Եվ հասկանալի է նրանց մտահոգությունը գրի առնելու նոր հավատի տարածման ողջ ընթացքը, որպես ի պահ հետագա սերունդների:

Ագաթանգեղոսի գրքում ավանդությունը և իրական դեպքերը այնքան են միաձուլված իրար, որ դրանք ճիշտ հասկանալու և իրարից զատելու համար հարկավոր է խորանալ այս երկի ուսումնասիրության մեջ: Բայց ուսումնասիրողները այդ ճանապարհով գնալու փոխարեն՝ գնացին ավելի հեշտ ուղիով՝ այն համարելով տարբեր, իրարից անկախ աղբյուրներից քաղված՝ անտեսելով այն հանգամանքը, որ գրքում մեծ տեղ գրավող ավանդությունները նպաստում են հեթանոսության նկատմամբ քրիստոնեությունը առավել հմայիչ դարձնելուն նորադարձ քրիստոնյաների համար:

Ագաթանգեղոսի գիրքը սկսվում է Սուրբ Գրիգորի վարքի և պատմության շարադրանքով: Նա իր պատմությունը սկսում է պարթևական թագավորության թուլացման ժամանակներից, երբ դրանից օգտվելով Ստահր գավառի նախարար Սասանի որդի Արտաշիրը ապստամբեց Պարթև Վաղարշի որդի Արտավան արքայի դեմ և ի մի հավաքած պարսից զորքերի օգնությամբ սպանեց նրան և բոլորի հավանությամբ Արտավանի փոխարեն դարձավ թագավոր:

Տրդատին և Սուրբ Գրիգորին մանուկ հասակում հրաշքով փրկելու և Հայաստանից փախցնելու, ապա նրանց հետագա կյանքի Ագաթանգեղոսի նկարագրություններում կան պատմական, իրական փաստեր, որոնց նա չէր կարող ականատես չլինել:

Ագաթանգեղոսի պատմության երկրորդ մասը Հռիփսիմյանների վկայաբանությունն է: Հռիփսիմյան կույսերի վկայաբանությունը համարվել է ընդհանուր վկայաբանական կաղապարով հորինված և զուրկ պատմականությունից: Բայց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն այդպես չէ, որ այստեղ էլ պատմականը խառնված է ավանդականի հետ: Ըստ Ագաթանգեղոսի, Սուրբ Հռիփսիմեն իր ընկերուհիների հետ նահատակվեց հոռի ամսի, այսինքն՝ սեպտեմբերի 26-ին, Ս. Գայանեն իր երկու ընկերուհիների հետ՝ սեպտեմբերի 27-ին: Ս. Գայանեին իր երկու ընկերուհիների հետ, ըստ Ագաթանգեղոսի, սպանեցին քաղաքից դուրս, դեպի

Մեծամորի կամուրջը տանող ճանապարհի մոտ գտնվող ճահճուտում, որտեղ ըստ սովորության սպանում էին բոլոր մահապարտներին:[27]

Ագաթանգեղոսի վկայությամբ, այնուհետև սրի են քաշում նաև Հռոմից եկած մնացած կույսերին: Այս ավանդության նպատակն է՝ ցույց տալ, որ քրիստոնեական հավատքով զորացած կույսերը նախընտրեցին մեռնել, քան ուրանալ իրենց հավատը: Դրանով Գրիգոր Լուսավորիչը ցանկանում էր Տրդատին ցույց տալ, որ սա է այն հոգևոր արժեքն ու զենքը, որով զրահավորելով հայ հավատացյալ ժողովրդին, նրան հեռու կպահի օտար ազդեցություններից, դրանով իսկ միավորելով նրանց եկեղեցու և թագավորի շուրջ: Այնուհետև, ըստ Ագաթանգեղոսի, Աստված Տրդատ արքային, իր գործած այս հանցանքի համար, դարձրեց խոզակերպ: Այստեղ նպատակն այն է, որ հավատացյալներին ցույց տային, թե Աստծո առաջ հավասար են ոչ միայն հասարակ մահկանացուները, այլև իր ընտրյալ թագավորը:

Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը, որ վավերականորեն տեղի է ունեցել, հավաստվում է հետևյալ իրողությամբ. Ս. Հռիփսիմե վանքի հյուսիս-արևելյան պարսպի մոտ 1978 թ. բարեկարգման աշխատանքների ժամանակ հայտնաբերվեց վաղ քրիստոնեական շրջանի մի մատուռ-եկեղեցի, որը մասնագետների կողմից համարվեց Դ-Ե դարերի կառուցվածք: Իսկ 1979 թվականին նույն մատուռի ներսում կատարված պեղումները հայտնաբերեցին նաև գերեզմաններ՝ գլխատված մարմինների աճյուններով: Նահատակվածների մարմինները թաղված էին արևելքից-արևմուտք պառկած դիրքով, ձեռքերը ծալած իրենց կրծքերի վրա, որը ապացույց է, թե թաղվածները քրիստոնյաներ են եղել[28]:

Ալ. Սահինյանի ղեկավարությամբ կատարված պեղումների այս արդյունքները հաստատում են Ագաթանգեղոսի վկայության իսկությունը, ըստ որի կարգով առջևի կողմում պատրաստեցին Սուրբ Հռիփսիմեի գերեզմանը և նրանից հետո երեսուներկուսի գերեզմանները, այն տեղում, ուր նրանց արյունը թափվեց Քրիստոսի սուրբ և փառավոր սեղանի համար պատրաստված տեղում[29]: Սա նաև հաստատում է Հռիփսիմյան կույսերի պատմականությունը, որոնք, ըստ Ագաթանգեղոսի, քրիստոնեական հավատքի համար հալածանքի զոհ են դարձել: Սուրբ կույսերի գերեզմանների վրա Գրիգոր Լուսավորչի կառուցած վկայարան-մատուռը, ինչպես հայտնի է, 369 թվականին քանդել են պարսկական զորքերը, իսկ 395 թվականին վերականգնել է Սահակ Պարթևը:

Ագաթանգեղոսի գրքի երրորդ մասը Սուրբ Գրիգորի վարդապետությունն է: Ինչպես Հռիփսիմյան կույսերի վկայաբանությունը, այնպես էլ Ս. Գրիգորի վարդապետությունը համարում էին պակաս պատմական արժեք ունեցող: Բայց միաժամանակ այստեղ կարևոր էին համարում հայոց հեթանոսական աստվածների մասին տեղեկությունները: Ըստ Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսավորիչը հայոց ավագանուն 65 օր շարունակ մանրամասն քարոզում է նոր վարդապետության հիմունք-

---

[27] Նույն տեղում, էջ 111:

[28] «Էջմիածին», 1979, մայիս, էջ 4-6:

[29] Պատմութիւն Ագաթանգեղեայ, Տփղիս, 1909, էջ 393:

ներն ու պատգամները՝ ասելով, թե միայն դրանց ընդունմամբ կփրկվեք ձեզ պատուհասած դժբախտություններից:

Ագաթանգեղոսը Սուրբ Գրիգորի վարդապետության մեջ գրում է նաև Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի նկարագրության և կառուցման տեղի մասին: Ճարտ. Ալ. Սահինյանի ղեկավարությամբ 1955-1956 և 1959 թվականներին Մայր Տաճարի ներսում կատարված պեղումների արդյունքները ապացուցեցին պատմիչի վկայության իսկությունը, որ Մայր Տաճարը կառուցվել էր հեթանոսական պաշտամունքային վայրում: Բայց Ալ. Սահինյանը եկավ ոչ ճիշտ եզրակացության: Ըստ նրա, Մայր Տաճարի ներսի շենքի մնացորդները Գրիգոր Լուսավորչի կառուցած բազիլիկատիպ Մայր Տաճարինն են[30], որը սակայն, ինչպես տեսանք, չի հաստատվում Ագաթանգեղոսի կողմից: Այս երկու փաստերը մինչ այս անտեսվել կամ անուշադրության էին մատնվել ուսումնասիրողների կողմից: Ագաթանգեղոսի համաձայն, Գրիգոր Լուսավորչին Աստված շնորհեց լուսավորելու նաև Հայաստան աշխարհի խավարյալ արտերը հավատքով և մկրտությամբ, իր վարդապետությամբ բոլորին քրիստոսածանոթ դարձրեց և հաստատեց, որպեսզի փառավորեն Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունները[31]:

Ագաթանգեղոսի գործի վերջին մասը Հայաստան աշխարհի դարձի պատմությունն է, որի պատմական արժեքը մասնագետների կողմից բարձր է գնահատվել:

Ամփոփելով ասենք, որ Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունում» կան անհասկանալի և առեղծվածային շարահատվածներ, որոնք այսօր էլ լուծման կարոտ են: Նրա մոտ հրաշապատումը և իրականը այնպես են միաձուլված, որ դրանք զատելու համար նրա գիրքը ավելի խոր ուսումնասիրման կարիք ունի, մինչև այժմ սակայն ուսումնասիրողները իրենց առաջ ծառացած հարցերի պատասխանը նրա երկում փնտրելու փոխարեն, գնացին Ագաթանգեղոսի ապրած դարը հետ տանելու կամ մինչև իսկ նրա անձը ժխտելու, նրա պատմությունը ավելի ուշ շրջանի խմբագրություն համարելու հեշտ ուղիով:

Այս երկի ուսումնասիրությունը սակայն բերում է այն համոզմանը, որ Ագաթանգեղոսը իրական անձ է, ապրել է 3-րդ դարի վերջում և 4-րդ դարի սկզբում, իսկ նրա երկը ավելի համահունչ է 4-րդ դարի սկզբի համար, քան 5-րդ դարի: Միևնույն ժամանակ Ագաթանգեղոսի գիրքը իր բովանդակությանը համընկնում է Ագաթանգեղոսի առաջ Տրդատ արքայի դրած պահանջներին և համապատասխանում է հայոց թագավորության առջև 4-րդ դարի սկզբում ծառացած խնդիրներին: Միայն ականատես և ժամանակակից պատմիչը կարող էր այսպես ոգևորված և զգացական կերպով երկնել այս գիրքը: Նաև ակնհայտ է, որ Ագաթանգեղոսը հայ պատմագրության մեջ ստեղծագործական առումով ամենավառ և ամենապայծառ անհատականություններից է: Նա ոչ միայն հայ առաջին պատմիչն է, այլև աստվածաբանը, քարոզիչը, մեկնիչը և ավետարանիչը:

---

[30] «Էջմիածին», 1961, № 1, էջ 63:

[31] Պատմութիւն Ագաթանգեղեայ, Տփղիս, 1909, էջ 372:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ԹՈՒՐՔՄԵՆ ԷՄԻՐՆԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ ԱՐԳԱՎԱՆԴ ԳՅՈՒՂՈՒՄ

Վերջերս Արմավիրի շրջանի Արգավանդ գյուղում Կարա-Կոյունլու թուրքմենական Էմիրների դամբարանի մոտ Հայաստանում Թուրքմենստանի դեսպանատան նախաձեռնությամբ տեղադրվեց հուշաքար, որի բացման հանդիսավոր արարողությանը հրավիրված էր նաև Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Իր ելույթում Վեհափառ Հայրապետը նշեց, որ Էմիրների դամբարանի, ինչպես նաև Երևանում Հուսեյն Ալի պարսիկ խանի կառուցած Կապույտ մզկիթի նկատմամբ հոգատար վերաբերմունքը լավ վկայությունն է այն բանի, որ Հայաստանում մեծ խնամքով պահպանվում են և՛ քրիստոնեական, և՛ ոչ քրիստոնեական հուշարձանները: Հայաստանում կրոնական բնույթի խնդիրներ չկան, և մեր ժողովուրդը հարգալից վերաբերմունք է դրսևորում նաև մահմեդական իշխողների ստեղծած կառույցների նկատմամբ:

Արգավանդի դամբարանը, որը վաղուց հայտնի հուշարձան է, ուսումնասիրվել է միայն վերջին ժամանակներս: Նշանավոր արևելագետ, Մաշտոցի անվան Մատենադարանի բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Փափազյանը վերծանել է 12 մետր բարձրություն ունեցող այդ դամբարանի վերին մասում փորագրված արաբերեն արձանագրությունը և պարզել, որ այդ դամբարանը կառուցված է 1413 թ. Կարա-Կոյունլու Սաադ իշխանական ընտանիքի անդամների գերեզմանի վրա: Հ. Փափազյանը 1961 թ. Մոսկվայում լույս է ընծայել այդ արձանագրության արաբերեն վերծանությունը և ռուսերեն թարգմանությունը: Նրա ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 1411 թ. (գուցեև ավելի վաղ) Արարատյան դաշտում իշխում էր Էմիր Սաադի որդի Փիր-Հուսեյնը և նրա իշխանության սահմանները հասնում էին մինչև Կարս: 1412 թ. Կարսում ընդօրինակված մի ձեռագիր Ավետարանի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Փիր-Հուսեյնը վերականգնել է և վերաշինել Կարս քաղաքը, որն ավերվել էր հավանորեն Լանկ-Թամուրի արշավանքի ժամանակ:

Արգավանդ գյուղում եղել են նմանատիպ երկու դամբարաններ ևս, որոնք չեն պահպանվել:

Սաադների գերդաստանի ղեկավարն էր Կարա-Կոյունլու Կարա-Ցուսուֆը, որը հալածվել էր Լանկ-Թամուրի կողմից և ջեղաիրյան Սուլթան Ահմեդի հետ բանտարկված էր Սիրիայի և Եգիպտոսի մամլյուկ սուլթան Ֆարաջի մոտ: 1405 թ. Չինաստան արշավելիս մահանում է Լանկ-Թամուրը, և այդ լուրը ստանալով՝ Ֆա-

ռաջն ազատ է արձակում գերյալներին, որոնք պայքար են սկսում Թամուրի հաջորդների դեմ: 1406 թ. Կարա-Ցուսուֆը գրավում է Թավրիզը, հետո հաղթում է վրաց թագավոր Գեորգի VII-ին, Թամուրի որդի Միրինշահին, իսկ հետագայում՝ իր նախկին դաշնակից Ահմեդ Սուլթանին: Նա գրավում է Բաղդադը և Իրանի, Հայաստանի, Իրաքի ու Քուրդիստանի տարածքներում ստեղծում Կարա-Կոյունլուների պետությունը, որը գոյություն է ունեցել 58 տարի (1410-1468 թթ.): Կարա-Կոյունլուներին հաջորդել են Աղ-Կոյունլուները, որոնց տիրապետությունը տևել է մինչև XVI դարի սկզբները:

Մեզ համար կարևոր է, թե ի՞նչ վերաբերմունք են ունեցել թուրքմեն տիրակալները հայ ժողովրդի, Հայոց Եկեղեցու և հոգևորականության նկատմամբ: Այդ խնդիրները և, ընդհանրապես, թուրքմեն տիրակալների ներքին և արտաքին քաղաքականության շատ հարցեր իրենց արտացոլումն են գտել ժամանակի հայ պատմիչների, ժամանակագիրների և ձեռագրերի հիշատակարանները կազմող հեղինակների երկերում:

Նախ չպետք է մոռանալ, որ Կարա-Կոյունլու և Աղ-Կոյունլու թուրքմենների գերիշխանությունը օտար բռնակալների տիրապետություն էր իր բոլոր հետևանքներով: Սաստիկ հարկապահանջություն, անվերջանալի արշավանքներ ու պատերազմներ: Բայց, համեմատած նախորդ ժամանակների, հատկապես Լանկ-Թամուրի բռնակալության տարիների հետ, ժողովրդի վիճակը փոխվել էր: Հայ հեղինակները Կարա-Կոյունլուների պետության հիմնադիր Կարա-Ցուսուֆին բնութագրում են որպես քաղաքական ուժեղ գործչի: Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը, Թովմա Մեծոփեցին, Կիրակոս Ռշտունին, Հովհաննեսը, Զաքարիան, Գրիգորը, Սարգիս Ամոքեցին և Մատթեոս Մոնոզոնը նրան բնորոշում են որպես քաղաքական ուժեղ գործչի, որը կարճ ժամանակում կարողացավ համախմբել իր ուժերը և հաղթանակներ տարավ իր թշնամիների դեմ: Լանկ-Թամուրի կողմից ավերված ու թալանված հայոց երկրում, նրա շնորհիվ, հաստատվում է խաղաղություն: Հայ հեղինակները երախտագիտությամբ նշում են, որ այդ ժամանակ, չնայած բարձր հարկերին, երկրում սկսվում է խաղաղ շինարարություն: Թովմա Մեծոփեցու վկայությամբ, նրա ժամանակ հայկական եկեղեցիները վերաշինվում են, լցվում հոգևորականներով, իսկ Լանկ-Թամուրի շրջանում բռնությամբ հավատափոխ եղածները կրկին քրիստոնյա են դառնում: Մահմեդականների կողմից զավթված Արճեշի վանքը վերադարձվում է հայերին: Կարա-Ցուսուֆի մահից հետո (1420 թ.) մեծ խառնակություններ են տեղի ունենում երկրում, որից խիստ տուժում է բնակչությունը: Ի վերջո հաղթանակում է նրա որդի Իսկանդարը, որն իր իշխանության 16 տարիների ընթացքում դաշնակցել է հայերի հետ, հենվել նրանց զորական ուժի վրա: Հայերի համակրանքը շահելու համար նա իրեն կոչում էր «Շահ է Արման»՝ «Հայերի թագավոր»: Նրա օրոք Օրբելյան Էմիր Ռոստոմը Հայ Եկեղեցուն նվիրաբերեց 14 գյուղ, որոնցից 7-ը՝ Տաթևի վանքին:

Հայ հեղինակներն առանձին ջերմությամբ են գրում Կարա-Կոյունլու փադիշահ Ջահանշահի մասին (1432-1467 թթ.): Բանն այն է, որ նրա առանդուն աջակցությամբ

ԹՈՒՐՔՄԵՆ ԷՄԻՐՆԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ ԱՐԳԱՎԱՆԴՈՒՄ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԾՈՎՍԵՓԱՎՈՐՈՒՄԸ ՄՈՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՄԻՑԵՍՏԵ ՕՄՈՒ ՂԱՀԱԹ ԿՅՈՒՂՈՒՄԸ

էր, որ 1441 թ. Հայոց Հայրապետական Աթոռը վերահաստատվեց Ս. Էջմիածնում: Այդ տեղափոխությունը հայ ժողովրդի կյանքում ունեցավ վիթխարի քաղաքական, եկեղեցական ու մշակութային նշանակություն: Էջմիածինը վերստին դարձավ հայ ժողովրդի հոգևոր կենտրոնը: Ջահանշահը ձգտում էր ավելացնել հայ բնակչության թիվը: 1436 թ. Էրզրումի մոտ հաղթանակ տանելով Աղ-Կոյունլու Օսմանի նկատմամբ՝ Ջահանշահը մեծ թվով հայերի տեղափոխում է Արևելյան Հայաստան և բնակեցնում Արարատյան դաշտում ու Սյունիքում: 1468 թ. ընդօրինակված ձեռագիր Ավետարանի հիշատակարանի հեղինակ Մկրտիչ կրոնավորը Ջահանշահի մասին գրում է, որ նա քրիստոնյաների պաշտպանն էր և նրա ժամանակ կառուցվել ու վերանորոգվել են բազմաթիվ եկեղեցիներ, Հայաստանում իշխել է խաղաղությունը և բազմապատկվել հոգևորականների թիվը (տե՛ս, Լ. Խաչիկյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, էջ 270-271):

Հայ Եկեղեցու և հոգևորականների հանդեպ Ջահանշահի ունեցած հատուկ վերաբերմունքի մասին վկայում են նրա հրովարտակները, որոնց մի մասը պահվում է Մատենադարանում: 1449 թ. հրովարտակով նա Տաթևի և Վաղուդիի վանքապատկան հողերն ու նրանցից ստացված բերքն ազատում է հարկերից: Մեկ այլ հրովարտակով նա կրկին ազատում է Տաթևի և Վաղուդիի վանքապատկան հողերը բոլոր տեսակի հարկերից և Գյուկչայի վիլայեթի հայ հոգևորականությանը ենթարկել է տալիս Տաթևի վանքի վանահայր Ծմավոն վարդապետին: Իսկ Ջահանշահի կին Բեգում խաթունը 1462 թ. հաստատում է Գանձասարի Կաթողիկոս Հովհաննեսի իրավունքները և տվյալ տարածքի պետական մարմիններին առաջարկում չճնշել նրան, նպաստել նրա իշխանության ամրապնդմանը այդ վայրերի հոգևորականների վրա: Նման բնույթի հրովարտակներ են տվել Հայոց Եկեղեցուն նաև Ջահանշահի որդի հասան Ալին (1468 թ.): Աղ-Կոյունլու Ուզուն Հասանը հրովարտակով Դարաշամբի հայ հոգևորականությանն ազատել է «խարաջ» և «ջիզյա» հարկերից: 1487 թ. նման բնույթի հրովարտակ է տվել Գանձասարի Կաթողիկոս Ծմավոն վարդապետին Աղ-Կոյունլու փադիշահ Ցակոբը: Պատահում էր, որ թուրքմեն տիրակալները տեղական հոգևոր առաջնորդների պաշտպանության հարցերով դիմում էին Կաթողիկոսին: Այսպես, 1493 թ. Աղ-Կոյունլու փադիշահ Ռուստամը Էջմիածնի Կաթողիկոս Սարգսին է դիմում և առաջարկում, որ չճնշի և չհալածի Ս. Թադեոս վանքի առաջնորդ Ջաքարիա վարդապետին:

Հայտնի է այն մեծ պայքարը, որ վարում էր Ուզուն Հասանն իր տիրույթների սահմանների ամրապնդման ուղղությամբ: Այդ իրադարձությունների պատմությունը չափածո ձևով տվել է 1472 թ. Մովսես Արծկեցին, իսկ ավելի ուշ, 1476 թ., Ստեփանոս Զմշկածագեցին:

1474 թ. մեկ այլ հայ հեղինակ՝ Պողոսը, գրում է, որ գրավելով Բաղեշը՝ Ուզուն Հասանը կոտորում է մեծ թվով մարդերի (քրդերի), իսկ հայերի հետ նա շատ լավ է վարվում, ոչ մի հայ գերի չի վերցվում: Ուզուն Հասանն անհանգստացած էր, որ 1453 թ. Կ. Պոլիսը գրավելուց հետո նշանակալից չափով ուժեղացել էր Օսմանյան կայսրությունը: Նա ձգտում էր ստեղծել հակաօսմանյան դաշինք: 1468 թ. նա Իտա-

լիսա է ոտարկում պատվիրակություն, որի մեջ կարևոր դեր էր ստանձնել հայազգի վաճառական Միրաքը: Ըստ վենետիկյան հեղինակ Կատերինե Զենոնի, թուրքմեն պատվիրակները Օսմանյան կայսրության և Եգիպտոսի դեմ առաջարկում էին ստեղծել միացյալ դաշինք: Այդ դաշինքի անդամները լինելու էին՝ Արևմուտքում Վենետիկյան հանրապետությունը, Հռոմի Պապը, Նեապոլիտանական կայսրությունը և Հունգարիան, իսկ Արևելքում՝ Ադ-Կոյունլուների պետությունը, Կարամանիան և Կիպրոսը: Այդ դաշինքը սակայն չկնքվեց, և Ուզուն Հասանը միայնակ մնաց թուրքերի դեմ, բայց չհուսալքվելով 1472 թ. նա մեծ զորք հավաքեց, բաղկացած 100000 կռվողներից, մեծ մասամբ՝ հեծյալներից, և արշավեց թուրքերի դեմ: Սկզբում թուրքմենները գրավում են Թոխաթը: Հարկ է նշել, որ այս դեպքերի ժամանակ հայերի համակրանքն ամբողջովին թուրքմենների կողմն էր: Մի անանուն հայ հեղինակ, ուշագրավ տեղեկություններ թողնելով 1472 թ. պատերազմական գործողությունների մասին և նկարագրելով թուրքական սուլթան Մահմեդ II-ի կողմից Երզնկայի գրավումն ու հրկիզումը, պատմում է Մալաթիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին: Ուզուն Հասանի զորքերի մասին հեղինակը մի քանի անգամ օգտագործում է «մեր զորքերը» արտահայտությունը, քանի որ թուրքմենները պաշտպանում էին հայկական տարածքը թուրքերի ոտնձգություններից: Այդ կռիվներն ավարտվում են թուրքմենների հաղթանակով, բայց 1473 թ. օգոստոսի 12-ին Դերջանի դաշտում տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ թուրքմենները պարտություն են կրում: Սպանվում է Ուզուն Հասանի որդի Զեյնալը: Ակադ. Լ. Խաչիկյանը, որը հրատարակել է այդ ժամանակ կազմված հայերեն ձեռագրերի հիշատակարանները, գրում է, որ այդ պարտությունները մեծ ցավով են ընդունում հայերը: Դրանից հետո թուրքերը մտնում են Բաբերդ, ավերում, հրկիզում այն, որից հետո Արևմտյան Հայաստանի մի մասը վերջնականապես ընկնում է թուրքական տիրապետության տակ:

Ինչպես տեսնում ենք, հայ-թուրքմենական կապերը հին պատմություն ունեն, նրանք վկայում են մեր ժողովուրդների համագործակցության մասին և բնական է այն ուշադրությունը, որ այսօր նվիրվում է թուրքմեններից հայոց երկրում մնացած հուշարձանին:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՍՐԲԵՐԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԱՒԵՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Մեր մատենագրութեան «սրբախօսական» ճիւղ-մասը թէ՛ լաւ հրատարակուած եւ թէ՛ համարեա ուսումնասիրուած չէ: Այսպէս. ունենք «Վկայաբանք» («Մարտիրոլոգ») անունով յայտնի բաւական հնաւանդ ձեռագիր ժողովածուներ[1], բովանդակութեամբ սրանց բաւական մօտ հարիւրատոր Ճառընտիրներ, ապա՝ Ցայսմաւուրքի՝ այս երկուսից մեծապէս օգտուած տասնեակ խմբագրութիւնների երեւի թէ հազարի հասնող օրինակութիւններ[2]: Այս ժողովածուների թէ՛ ներքին առնչութիւն-կապերի, թէ՛ նրանց պարունակած նիւթ-միաւորների արժէքի, հաւաստիութեան կամ հաւաստի մաս-տարրերի եւ թէ՛ աղբիւրագիտական-պատմագիտական այլ արժանիքների վերաբերմամբ մեր պատկերացումները բաւական աղոտ են: Ուրախութեամբ արձանագրելով, որ բոլորովին վերջերս հրատարակուեց այս բացը մասամբ լրացնող մի օգտակար աշխատանք[3], պէտք է ընդունենք, որ սա սոսկ կարող էր լինել եւ է՛ գիտական գրականութեան մէջ դիպուածով արձանագրուած իրողութիւնների ամփոփոյթ: Սակայն այս գործը սկզբնակէտ դարձնելով եւ նրանով առաջնորդուելով, արժէ խնդիրը ծրագրուած ձեւով եւ հիմնաւոր ուսումնասիրել իր բոլոր դրսեւորումներով՝ մատենագրական նիւթ, որոշակի մասունք, նրա տեղաշարժեր, պաշտամունք (աւելացնելով ազգագրական նիւթը) եւ պատմութեան ընթացքում խաղացած դեր:

Այս խնդիրը կարեւոր ենք համարում ո՛չ միայն եւ ո՛չ այնչափ գիտական, որչափ՝ կիրառական տեսակէտից: Սրբերի մասունքների եւ հրաշագործ առարկաների (յատկապէս՝ Աւետարանի որոշակի ձեռագիր օրինակների) պաշտամունքը, ինչպէս համաքրիստոնէական, նոյնպէս եւ հայ իրականութեան մէջ եղել է բոլոր ժամանակներում, ուստի եւ մեր ազգային-եկեղեցական կեանքի վերակազմակերպ-

---

[1] Տե՛ս, օրինակ, Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. 1522, 3777 եւ այլն:

[2] Նոյնպիսի բնագրեր ցրուած են նաեւ տարաբնոյթ նիւթերի հազարաւոր ժողովածուների մէջ:

[3] Եարտըմեան Հ. Տաճատ, Հայաստանի վանքերում եւ եկեղեցիներում մէջ պահուած սուրբերու մասունքներ եւ սրբազան առարկաներ.- Բազմավէպ, 2000, թիւ 1-4, էջ 128-61:

մաՆ. աւելի ճիշտ՝ ի նորոյ կազմակերպման համար այդ պաշտամունքի վերականգնումն ամենեին չի կարող ժամանակավրէպ համարուել: Հակառակը՝ վստահ ենք, որ, ի հեռուս մարդորս աղանդների, այն պէտք է. իրօք, աւելի առինքնող ու գրաւիչ դարձնի Հայ Եկեղեցին, որով եւ անպայման նպաստելու է մեր ազգային-պետական նպատակների յստակեցմանն ու նրանց վերաբերող ծրագրերի իրականացմանը:

Հարցի կարեւորութեան այս հէնքի վրայ հեղինակի բարեհաճ համաձայնութեամբ անհրաժեշտ դիտեցինք հայերէնով «Էջմիածին» ամսագրում հրատարակուած տեսնել Իզաբէլ Օժէի[4] յաջորդող յօդուածը, որ նա զեկուցեց Հայաստանում բոիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեայ յոբելեանի միջոցառումների շարքում Իտալիայի Լէչչէ քաղաքի համալսարանի Հռոմի պատմութեան ամբիոնի վարիչ, հայագէտ, պրոֆեսոր Ջուստոյ Տրայինայի նախաձեռնութեամբ Լէչչէ եւ Նարդոյ[5] քաղաքներում 2001 թ. հոկտեմբերի 19-20ին կայացած՝ «Հայ սուրբ Գրիգորը եւ նրա պաշտամունքը հարաւային Իտալիայում» գիտաժողովում:

Յօդուածի քննութեան առարկան մեր «մասունքային» գրականութեան հին միաւորներից մէկն է, «Ճառընտրային» նիւթ, որ Հ. Ղ. Ալիշանը գտել է ըստ ամենայնի Վենետիկի Մխիթարեան մատենադարանի «ԺԲ դարու հին ճառընտրաց մէջ»[6], նրա հեղինակ Պանդալէոնին «ի շարս պատմչաց դասել»ու համար գործն արժեւորել է, շեշտել, որ «որչափ եւ վիպասանական հիւսուած մի երեւի այս, անտարակոյս ստուգութեան հիմ մը ունի», որով եւ հայկական այլ աղբիւրներով հաստատուում է, որ, իրօք, Տուրուբերանի Կոգովիտ գաւառի Գոմ Բծրայր բնակավայրում եղել եւ պաշտուել է Պետրոս առաքեալի մասունք «տղայագոյն մատ»ը՝ ճկոյթը: Եզրափակելով, որ թէեւ Յայսմաւուրքների մէջ այս պատմութիւնը նշանակուած է Մայիսի 24ին[7], սակայն «Պանդալէոնի գրածն սակաւագիւտ ըլլալով», նրա արժէքի համեմատ էլ՝ ամբողջութեամբ կամ մասամբ[8] հրատարակել է ձեռագրական՝ «Գիւտ մատին սրբոյ առաքելոյն Պետրոսի՝ թէ զիարդ եղեւ կատարումն կամ որպէս բերաւ ի Հայս» խորագրով[9]. ծանօթ է եղել ձեռագիր այլ օրինակների եւս՝ «Ճոխաբանութեամբ գրուած է, բայց եւ եռանդեամբ եւ վայելուչ. ձեռագիր օրինակք այլ իրարմէ աւելցուցել պակսեցուցեր են»[10]:

---

[4] Մոնպէլիէի համալսարանի պրոֆեսոր, Կիլիկեան Հայաստանի ակզբնատրման շրջանի մասնագիտ եւ հմուտ հետազօտող՝ պրոֆեսոր Ժերար Ցէտէեանի աշակերտն է:

[5] Գրիգոր Լուսաւորիչն այս քաղաքի հովանաւոր սուրբն է:

[6] Հ. Ղ. Ալիշան, Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, Ա. Պատմիչք Հայոց, Հմր 58, էջ 85:

[7] Հմմտ. Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. 1511 (1471 թ.), էջ 499ա-500բ. «Ցօն է մատին առաքելոյն Պետրոսի»:

[8] Հայապատում, Ա., էջ 85՝ «մեծաւ մասամբ»:

[9] Նոյն տեղում, Բ. Պատմութիւնք Հայոց, Հմր 234, էջ 295-299:

[10] Նոյն տեղում, Բ., էջ 295, ծ. 8:

«Պատմութիւն յաղագս մատին սրբոյ առաքելոյն Պետրոսի եւ բերմանն ի Հռոմէ ի Հալք» խորագրով նոյն բնագրի մի այլ օրինակ կայ Մաշտոցեան Մատենադարանի 1315 համարի ձեռագրում[11], որի հիման վրայ Գարեգին Ա Կաթողիկոս Ցովսեփեանը հրատարակել է բնագրի սկզբի եւ վերջի հիշատակարանային՝ «պատմական տեսակէտով արժէքաւոր» մասերը: Իզաբէլ Օժէի ջահեկան ուսումնասիրութիւնը հիմնուած է այս վերջինների եւ Ալիշանի հրատարակութեան վրայ, սակայն վստահ ենք, որ թէ՛ Մաշտոցեան Մատենադարանի «Մառընտիր» խորագրուած եւ դեռեւս մանրամասն չնկարագրուած տասնեակ ձեռագրերի եւ թէ՛ հայերէն ձեռագրերի այլ հաւաքածուների մէջ կան այս հին եւ արժէքաւոր բնագրի այլ օրինակներ, որոնց հիման վրայ ապագայում արժէ պատրաստել նրա մանրակրկիտ քննական հրատարակութիւնը[12]:

---

[11] ԺԳ դար՝ 1265-1272 թթ., գրիչ Ցովհաննէս Արքաեղբայր եւ Ցակոբ. ստացող՝ Ցովհաննէս Արքաեղբայր. բնագիրն զբաղեցնում է 451 թերթանոց ձեռագրի 2ա-5բ էջերը:

[12] Խնդրի կարեւորությունը ցուցադրելու հետ միաժամանակ, մուտքային այս շարադրանքը նպատակ ունէր պարզաբանելու Իզաբէլ Օժէի ուսումնասիրութեան աղբիւրագիտական հիմքը:

ԻԶԱԲԵԼ ՕԺԷ
(Պոլ Վալերիի համալսարան՝ Մոնպելյե III)

ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍԻ ՄԱՏԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՀՌՈՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ*

Ուսումնասիրվող բնագիրը պահպանվում է Երևանի Մատենադարանի ձեռագրերից մեկում, որ թվագրված է ԺԳ դարով[1]: Սա բազմաբնույթ վավերագիր է և բաղկացած է երկու տարբեր մասերից՝ 965 թվականին վերաբերող համեմատաբար երկար մի հիշատակարանից և բուն մասունքի փոխադրության մասին մանրամասնորեն պատմող անթվակիր մի բնագրից: Հնարավոր է գտնել այս բնագրի մասնակի կամ ամբողջական բազմաթիվ հրատարակություններ, մասնավորապես՝ հիշատակարանների հավաքածուներում: Ամբողջական պատմությունը, որին նախորդում է հիշատակարանը, տեղ է գտել Հայր Ղևոնդ Ալիշանի ժողովածուի մեջ[2]: Ի դեպ, հարկ է նշել, որ այս աշխատության մեջ հրատարակված է բնագրի նաև չափածո տարբերակը[3]: Բացի դրանից, միայն հիշատակարանը կարելի է ընթերցել այս բնույթի փաստաթղթերի երկու՝ Գարեգին Հովսեփյանի[4] և Արտաշես Մաթևոսյանի[5] ժողովածուներում:

Այս բնագիրն ուսումնասիրելու համար մեր ընտրած ծրագիրը թելադրված է այս գործի կառուցվածքով: Առաջին հերթին քննում ենք բնագրի հիմնական մասը, այսինքն՝ մասունքի փոխադրության պատմությունը՝ սկսած Հռոմում գտնվող Սուրբ Պետրոսի գերեզմանից մինչև Կոգովիտ գավառը: Այնուհետև կվերլուծենք այն հանգամանքները, որոնցում «թարգմանիչն» իրականացրել է իր աշխատանքը, այսինքն՝ ժ դարում Հայաստանում տիրող իրավիճակը, որը կարվի ջանալու համար ճշգրտել, թե այս հիասքանչ մասունքի գոյությունն ի՞նչ առումով կարող էր հե-

---

* Սույն հոդվածը 2001 թ. հոկտեմբերի 19-20-ին Լեյչե-Նարդոյում գումարված՝ «Հայ Սուրբ Գրիգորը և նրա պաշտամունքը հարավային Իտալիայում» գիտաժողովում ընթերցված հաղորդումն է:

[1] Ձեռագիր Հմր 1315: Այս գործի գոյության մասին հիշատակում է, օրինակ, Հ. Լ. Զեքիյանը. տե՛ս L.-H. Zekiyan, Le colonie armene del Medio Evo in Italia e le relazioni culturali italo-armene (Materiale per la Storia degli Armeni in Italia) // "Atti del Primo Simposio Internazionale d'Arte Armena", 1975, Venise, 1978, pp. 803-931 (այստեղ՝ էջ 841):

[2] Հ. Ղ. Ալիշան. Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց. Վենետիկ, 1901, Բ. Պատմութիւնք Հայոց. Հմր 234, էջ 295-299:

[3] Նույն տեղում. Հմր 235, էջ 299-300:

[4] Գարեգին Ա Կաթողիկոս. Ցիշատակարանք ձեռագրաց. հ. Ա (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 118-120:

[5] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ՝ Ա. Ս. Մաթևոսյանի. Երևան, 1988, էջ 57-58:

տաքրքրություն ներկայացնել: Ի վերջո, կեզրափակենք այս մասունքի հետագա պատմությամբ՝ հիշեցնելով, օրինակ, այն մասին, թե ինչպես է այն օգտագործվել ԺԱ դարի հայ իշխանների կողմից:

1 Սուրբ Պետրոսի մատի փոխադրումը

Նախքան բացատրություններին անդրադառնալը, հարկ է տալ բնագրի մեկնաբանությունը.

1.1 Բնագրի մեկնաբանությունը

Արձակ պատմությունը և չափածո տարբերակը, բացառությամբ մի քանի մանրամասների, համանման են, որ թույլատրում է պատմությունն ամփոփել այս կերպ.

Կոգովիտ գավառում կար մի քահանա, որի վրա տեղում էին տանուտիրոջ՝ ազնվականական ընտանիքի ղեկավարի վիրավորանքները: Քահանան, որի հարաբերությունն սպառվել էր այդ բազմաթիվ լուտանքներից, օգտվել է կապելու և արձակելու իր իշխանությունից ու բարձրատոհմիկ անձնավորությանը բանադրել այնպես, որ միայն ինքն էր ի վիճակի նրան ազատ արձակելու: Ըստ չափածո տարբերակի՝ քահանան այդուհետև լքել է գյուղը և մինչև իր մահն ընտանիքի հետ բնակություն հաստատել այլ վայրում: Քահանայի մահը վրա հասնելուց հետո էր միայն, որ տանուտերը, որի սիրտը մինչ այդ զերծ էր մնացել զղջանքից, գիտակցել է իր սխալը և այն վտանգները, որոնց ենթակա էր: Այնժամ նա դիմել է Սուրբ գրվածքներին իրազեկ վարդապետների: Վերջիններս նրան մատնացույց են արել այն, ինչն իրենց թվացել է, թե կարող է լինել միակ լուծումը՝ հետևյալ խոսքերով.

«Ձիք քեզ հնար բժշկութիւն գտանել դառն վիրիդ կամ արձակել յանխզելի կապանացդ, բայց միայն թէ ուղեորիս ընդ երկայն ճանապարհ, որ տանի ի գլուխն տիեզերաց՝ ի մեծն Հռոմ, ուր են սուրբ առաքեալքն Պաւղոս և Պետրոս սիւնք եկեղեցւոյ՝ արձակողքն կապելոց և տուողքն կենդանութեան. նոքա կարեն արձակել զքեզ ի հիւանդութենէդ քումմէ. ընթացիր վաղվաղակի»[6]:

Չվհատվելով ճանապարհի երկարությունից, մարդը գնացել է Հռոմի Սուրբ Պետրոսի տաճար, ուր հանդիպել է Պապին և նրան պատմել իր պատմությունը: Այնժամ վերջինս, որին ուղեկցում էին եկեղեցու բոլոր հոգևորականները, սկսել է աղոթել, որպեսզի հայ ճանապարհորդի համար աստվածային շնորհ ստանա: Այսպես, ութ օր աղոթքներով անցկացնելուց հետո, Պապը հղացել է մարդուն երկաթե շղթաներով շղթայելու գաղափարը: Հետապնդվող նպատակը, այնպիսի ձևով, ինչպես այն բացատրել են տանուտիրոջը, եղել է հետևյալը. եթե այդ շղթաները հրաշքով քակվեն, ապա դա կլինի առհավատչյան այն բանի, որ բանադրանքի անտեսանելի շղթաները ևս կխորտակվեն և որ նրան ներում կշնորհվի: Մի գիշերը բա-

---

[6] Ղ. Ալիշան, նշվ. աշխատ., էջ 297:

վական է եղել, որպեսզի հրաշքն իրագործվի: Հիրավի, հաջորդ օրը, առավոտյան, Պապը և նրա շրջապատում գտնվող անձիք մարդուն գտել են ազատ և աղոթելիս: Տեղատարափ հարցերի ներքո՝ նա նրանց պատմել է հրաշքի և մասնավորապես իր ունեցած տեսիլքի մասին: Տեսիլքում աչքին երևացել են իրեն բանադրած քահանան և առաքյալները, որոնք ներկայանում էին իբրև նրան պաշտպանելու եկած հովանավորներ: Քահանան վերջնականապես զիջել է միայն մի լուսավորյալ մարդու ի հայտ գալուց հետո և ներում է շնորհել:

Հենց որ հրաշքն իրագործվել է, մարդը Պապից խնդրել է թույլատրել իրեն մնալու նրա մոտ և ծառայելու սուրբ առաքյալների եկեղեցուն: Յոթ տարի շարունակ, առանց որևէ դադար առնելու, նա կատարել է այդ աշխատանքը: Սակայն այս ժամանակամիջոցից հետո նա սկսել է զգալ իր հայրենի երկիրը և ընտանիքը կրկին տեսնելու կարիքը: Այդուհանդերձ, առանց առաքյալի մասունքը իր հետ տանելու, նա չէր ցանկանում թողնել Սուրբ Պետրոսի տաճարը: Այն ձեռք բերելու համար կիրառված եղանակը շատ հստակորեն շարադրված է չափածո տարբերակում, մինչդեռ արձակ տարբերակն ավելի անորոշ է: Կարդում ենք հետևյալը.

«Եւ ասէր. Պիտէր ինձ աստ մասն եւ բաժին
Ի նշխարաց սրբոյ Պետրոսի վիմին:
Զի պատուական մարմինքն են յայտնի եդեալ
Ի յարծաթի տապան եւ ոսկով կազմեալ,
Անապական եւ սուրբ անդէն մընացեալ,
Ոչ մազ մի ի գլխոցն չէ պակասեալ:
Գաղտաբար գընացեալ ի մէջ գիշերին
Եւ բացեալ ըզտապան Սիմոն Պետրոսին,
Եւ կտրեալ ատամօք զաջ ճկոյթ ձեռին»[7]:

Գողությունն անելուց հետո նա անշնչացած տապալվել է գետնին: Ինչ-որ բան կանխազգալով, որ լույսը բացվելուն պես զանգերը չեն հնչել, քահանաները նրան գտել են, այդպիսով, արյունաներկ: Երբ նրանք նկատել են, որ նա պոկել է առաքյալի մատը, ցանկացել են նրան սպանել, սակայն անձամբ Պետրոսն է իր ձայնը բարձրացրել և նրանց խնդրել թողնել նրան հասնելու իր երկիրը՝ տանելով սուրբ մասունքը: Այդ միջամտության շնորհիվ նա արժանացել է մեծ հարգանքի և կարողացել հոտից հեռանալ՝ քահանաների տված նվերներով ծանրաբեռնված:

Այսպես, ըստ այս բազմաթիվ դիպվածների է, որ Սուրբ Պետրոսի աջ ձեռքի ճկույթը հասել է Հայաստանի Կոգովիտ գավառը:

Այստեղ շարադրված պատմությունը սկիզբ է առնում սրբերի վարքագրությունից, ավելի ճշգրիտ՝ վերջինիս մի մասից՝ մասունքների տեղափոխման պատումներից: Համանման բնույթի բնագրերի ուսումնասիրության համար կիրառվելիք եղա-

[7] Նույն տեղում, էջ 300:

նակների պարզաբանմանը նվիրված մի դասական աշխատության մեջ տրված է հետևյալ սահմանումը. մասունքների տեղափոխումը «սուրբ մարմնի կամ նրա մի մասի փոխադրումն է գերեզմանից եկեղեցի, խորան, որտեղ այն պետք է երկրպագվի»[8]: Այդ տեղափոխությունը կարող է տեղի ունենալ այն համայնքի համաձայնությամբ (կամ առանց համաձայնության), որին պատկանում է սրբի մարմինը: Այստեղ ազնվաբարո գողը գործում է ծածուկ և Պապի համաձայնությունն ստանում է միայն անձամբ Սուրբ Պետրոսի միջամտությունից հետո. կարելի է, այսպիսով, նկատի ունենալ, որ գործ ունենք հափշտակության պատմության հետ:

Ընդհանուր առմամբ, անկախ այն բանից, թե մասունքը կարող էր ձեռք բերվել ազնիվ եղանակով կամ շատ ավելի նվազ ընդունելի ճանապարհներով, փոխադրության պատումները շատ ջանքեր են գործադրում, որպեսզի դրա արժանահավատությանը վերաբերող հարցում որևէ կասկած չլինի[9]: Մենք կփորձենք, այսպիսով, երկրորդ կետում ցույց տալ, թե հեղինակն ինչպիսի հնարքներ է օգտագործել իր պատմությունը հավանական դարձնելու համար:

1.2 Պատմողի առաջադրած համոզիչ մանրամասներ

Գողն այստեղ միակ կապող օղակն է՝ սրբի, որի մասունքը ձեռք է բերվել, և այն երկրի միջև, ուր այն տեղափոխվել է: Պատմողն, այսպիսով, հարկադրված է գողի և սրբի միջև շատ սերտ կապ ստեղծել: Այս փաստի հիման վրա, նա հոգում է մասնավորապես իր պատումի առաջին երկու փուլերի մասին, որպեսզի գլխավոր իրադարձությանը, այն է՝ բուն գողությանը հատկացնի պատումի շատ համառոտ մասը միայն:

Շատ հետաքրքրական է այն եղանակը, որով նա ներկայացվում է, քանզի խոսքը վերաբերում է գողության. սկզբից նա ամբարտավան է հատկապես եկեղեցու մարդկանց հանդեպ և անտարբեր է թվում պատժամիջոցի յուրաքանչյուր սպառնալիքի նկատմամբ: Ենթարկվելով բանադրանքի, նա նույնիսկ չի ջանում զղջալ: Միայն քահանայի մահից հետո, որի դեմ ոտքի էր ելել, սկսում է երկյուղել և շրջվում է դեպի բնիմաց կրոնական հեղինակությունները: Մարդն, այսպիսով, սուրբ չէ, և բնազիրն ընդգծված կերպով շեշտում է այս հանգամանքը: Այդուհանդերձ, այն պահից ի վեր, երբ նրան համակում են կասկածն ու երկյուղը, նա ամբողջությամբ ենթարկվում է հայ և հռոմեական եկեղեցականների հրամաններին: Մարդուն մեղավոր ներկայացնելով, հեղինակը տպավորիչ փաստարկ է գտնում՝ արդա-

---

[8] J. Dubois et J.-L. Lemaître, Sources et méthodes de l'hagiographie médiévale, Paris, 1993, p. 280. Նույնաբնույթ փաստաթղթերի մասին տե՛ս նաև H. Leclercq, Art «translations», DACL XV, Paris, 1952, col. 2695-2699 և M. Heinzelmann, Translationsberichte une andere Quellen des Reliquien Kultus, Turnhout, 1979 (Typologie des sources du Moyen Age occidental, 33).

[9] P.-J. Geary, Les vols de reliques au Moyen Age, Paris, 1993 (trad. de Furta sacra. Thefts of relics in the central Middle Ages, Princeton, 1990), p. 27.

ուսցնելու համար նրա ճանապարհորդությունը Հռոմ և այնտեղ բնակվելը, ինչպես նաև առաքյալների (և մասնավորապես Սուրբ Պետրոսի, որը միակն էր, որ ի վիճակի էր նրան ազատ արձակելու բանադրանքի կապանքներից) մարմինների պահպանությամբ զբաղվելը:

Պատմության երկրորդ բաժինը, այսինքն՝ այն մասը, որ նվիրված է մարդուն շնորհված ներումին և նրա անսահման նվիրվածությանը Սուրբ Պետրոսին, առաջին հայացքից ամենաերկարն է: Պատմողը շռայլ է այն մանրամասների հարցում, որոնք վերաբերում են այս ներումի ստացման եղանակին՝ պնդելով այն փաստի վրա, որ ներում շնորհողը հենց անձամբ Սուրբ Պետրոսն էր: Այս կերպ նա անքակտելի կապ է ստեղծում սրբի և հայ ազնվականի միջև, որը նրան պարտական է իր արձակման համար: Սուրբ Պետրոսի միջամտությունը պատմության հենց այս պահին, այսպիսով, կարևոր մանրամասն է, քանզի գտնվում է գողի կողմից առաքյալի նկատմամբ ցուցաբերված անմնացորդ նվիրվածության ակունքում: Այն, իհարկե, ամրապնդվել է սրբին երկարաժամկետ և առանձնապես փութաջան ծառայության անցնելու նրա որոշմամբ:

Այսպիսով, հեղինակը փորձում է բազմապատկել գողի առկայության հավանականությունը՝ գովելով նրա առաքինությունները, սրբությունը և սրբի հանդեպ տածած նվիրվածությունը[10]: Պատմության հավանականությունն ավելի ամրապնդելու և մասունքի արժանահավատությունը հավաստելու համար առկա են նաև այլ մանրամասներ: Գողի զբաղեցրած պաշտոնն առաջին վկայությունն է. նա, իրոք որ, անցել է առաքյալի ծառայությանը և յոթ տարի շարունակ իրեն նվիրաբերել բարվոք վիճակում պահելուն այն կառույցը, ուր պահպանվում է առաքյալի մարմինը: Այսպիսով, նա մասնավորապես բարենպաստ դիրք է գրավել, որպեսզի իմանա, թե որտեղ է գտնվում գերեզմանը և ըստ այդմ կարողանա դիմել գողության:

Արձակ տարբերակում թեև չի շեշտվում այս հանգամանքը, սակայն գերեզմանի նկարագրությունը տրված է մասնավորապես չափածո տարբերակում, որը բազմապատկում է պատմության հավանականությունը: Հեղինակը խոսում է «ոսկեզօծ արծաթե գերեզմանի» մասին, որն ամբողջությամբ համապատասխանում է վաղ միջնադարում գերեզմանի ունեցած արտաքին տեսքին: Հոնորիոս Ա Պապը (625-638) այն զարդարել էր, օրինակ, մեծաքանակ արծաթե զարդարանքներով[11]: Վերջապես, Սուրբ Պետրոսի կրկնվող միջամտություններն ի նպաստ գողի բխում են առաքյալի և գողի միջև կապ ստեղծելու պատմողի ցանկությունից: Այդ միջամտություններն ուշադրություն են հրավիրում Հայնրիխ Ֆիխտենաուի տեսության վրա, ըստ որի, չի կարելի մասունքներ գողանալ առանց սրբի համաձայնության: Կրկին ըստ նույն

---

[10] Տեղափոխումներին վերաբերող պատմությունների մեջ նմանաբնույթ հնարքը շատ հաճախ է կիրառվում. տե՛ս P.-J. Geary, op. cit., p. 27:

[11] Տապանաքարի և ճարտարապետական առումով նրա կրած փոփոխության վերաբերյալ տե՛ս, օրինակ՝ H. Leclerq, Saint Pierre // DACL, t. XIV/1, Paris, 1939, col. 822-981:

հետազոտողի, առանց սրբի համաձայնության մասունք գողանալու անհնարինությունը՝ գողությունն արդարացնելու հիմնական միջոցներից է[12]:

Իր ճկույթի գողության ընթացքում Սուրբ Պետրոսը միջամտում է երկու անգամ: Առաջին անգամ՝ տեղեկացնելու համար մասունքների պահակներին, երկրորդ անգամ՝ նրանց կարգադրելու համար, որ գողին թույլատրեն՝ իր գողոնի հետ վերադառնալ Հայաստան: Այսպիսով, եթե հնարավոր է ինչ-որ մի պահ կարծել, թե սուրբը ցանկանում էր ձախողել ծրագիրը, ապա շատ արագ նա ի հայտ է գալիս որպես գողի դաշնակից: Այս պատումի մեջ, այսպիսով, վերատին դրսևորվում են այն երկու սովորական հակազդեցությունները, որոնք բնորոշ են նույն իրավիճակին բախված սրբերին: Ոմանք զգետնում են գողերին, որոնք տեղում կնքում են իրենց մահկանացուն, ինչպես այստեղ սկզբնական շրջանի պարագայում, ուրիշները նրանց օգնում են, ինչպես այստեղ՝ երկրորդ շրջանում: Պատրիկ Գեյրին իր աշխատություններից մեկում կազմել է նմանաբնույթ օրինակների ցուցակը[13]:

Եզրափակելով, հարկ է նշել, որ այս պատումը, եթե այն նույնիսկ իր կառուցվածքով բավականին համապատասխանում է միևնույն բնույթի այլ պատումներին, նրանցից տարբերվում է որոշակի թվով կետերով կամ, համենայն դեպս, դիպվածներից յուրաքանչյուրին հատկացված տեղի համեմատականությամբ: Ընդհանուր առմամբ, երբ խոսքը վերաբերում է գողության պատումի, միջնադարյան հեղինակները որդեգրում են այնպիսի կառուցվածք, որը բաղկացած է երեք մասից: Առաջինը՝ բուն իսկ գողության փուլն է: Այս գլխավոր իրադարձությունը տեղի է ունենում սովորաբար գիշերը և ուղեկցվում բռնության որոշակի եղանակով, որովհետև սովորաբար հարկ է քանդել գերեզմանը: Երկրորդն այն փուլն է, որի ընթացքում գողի ֆիզիկական գոյությունը վտանգվում է նրան հետապնդողների կողմից: Վերջապես, վերջինը՝ նոր համայնքի կողմից մասունքն ընդունելու և այն իր մոտ ամփոփելու փուլն է[14]:

Ուսումնասիրվող պատումը բավականաչափ հարգալից վերաբերմունք է դրսևորում այստեղ նշված առաջին փուլի հանդեպ. գլխավոր իրադարձությունը մեծապես համապատասխանում է ընդհանուր չափանիշներին, քանզի գողությունը տեղի է ունեցել գիշերը և համեմատաբար բռնի ձևով, որովհետև գողը մասունքը պոկել է ատամներով: Երկրորդ փուլը ևս առկա է, որովհետև գողության համար մեղավորն իրեն հետապնդողների հարվածների ներքո հասնում է գրեթե մահվան եզրին և փրկվում սրբի միջամտության շնորհիվ: Փոխարենը՝ երրորդ փուլ բացարձակապես գոյություն չունի: Բացի հայկական այն գավառի անունից, ուր մասունքը տեղափոխվել է, պատմողը չի հաղորդում ընդունելության ճշգրիտ վայրին և համայնքին վերաբերող որևէ ստույգ մանրամասն, ինչը կարող է կասկածի տակ առնել պատմության հավաստիությունը: Հավանաբար, մասունքի տեղ հասցնելու վայ-

---

[12] H. Fichtenau, Zum Reliquienwesen im früheren Mittelalter // MIÖG, LX, 1952, p. 73.

[13] P.-J. Geary, նշվ. աշխատ., էջ 166-167 եւ շարունակ:

[14] Նույն տեղում, էջ168:

ին վերաբերող տեղեկությունների այս բացակայությունը հարթելու համար է, որ նա համառորեն շեշտում է հայ ազնվականի Հռոմ գնալու պատճառը, որպեսզի իր պատումին առավել մեծ հավանականություն հաղորդի:

Պատումի զանազան դրվագները ներկայացնելուց հետո, մնում է որոշել նրա գրվելու ժամանակաշրջանը և խմբագրվելու պատճառը:

Պանդալեոն մատենագիրը, որը գրել է 965 թ., մեզ ասում է, որ ձեռագիրը հանել է Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարի արկղերից և այն հունարենից թարգմանել հայերեն: Հայ ազնվականի ճանապարհորդությունը կարող էր նախորդել այս տարեթվին, սակայն հնարավոր չէ ճշգրտել, թե քանի տարով: Նման ճանապարհորդությունը կարելի է հնարավոր համարել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այս շրջանում հայտնի են հայերի՝ Հռոմ կատարած բազմաթիվ ճանապարհորդություններ, որոնք նախորդել են Ժ դարին, օրինակ՝ որպես ուխտագնացություն: 649 թ. Լաթերանի եկեղեցական ժողովի փաստաթղթերի շնորհիվ հայտնի է նաև, որ այն ժամանակ հայ վանականները Հռոմում ունեին Աստվածածնին նվիրված մի վանք, որը հավանաբար գտնվել է Էսքվիլանումի վրա[15]: Այդուհանդերձ, մեր բնագրից բացի որևէ այլ աղբյուր մասունքի տեղափոխման իրադարձության մասին չի հիշատակում: Բացի դրանից, բանասիրական ուսումնասիրությունը չի թույլատրում անվերապահորեն եզրակացնելու, որ այս բնագիրը թարգմանական է: Չնայած որոշ տարօրինակ ձևերին, որոնք երբեմն կարող են մղել խորհելու հունաբանությունների մասին[16], ընդհանուր տպավորությունը հանգում է հետևյալին. հիշատակարանի հեղինակ Պանդալեոն մատենագիրը, հավանաբար, նաև տեղափոխության մասին պատմող բնագրի հեղինակն է: Մնում է ճշգրտել պատմական հենքի մանրամասները, որոնք ի վիճակի են բացատրելու տեղափոխման այս պատումի եթե ոչ թարգմանականությունը, ապա՝ առնվազն հորինվածքը: Դրա համար հարկ է դիմել բնագրի մեկ այլ մասին՝ հիշատակարանին, որտեղ Պանդալեոնը պատմում է իր թարգմանության հանգամանքների մասին:

---

[15] Լ.-Բ. Zekiyan, նշվ. աշխատ., էջ 833: Իտալիայում, Ջ-ԺԱ դարերում, հայերի ներկայությանը վերաբերող բոլոր հիշատակությունները հեղինակը թվարկել է 813-847 էջերում: Այս հարցերի մասին տե՛ս նաև G. Castani, Presenze armene in Italia. Testimonianze storiche ed architettoniche // B.-L. Zekiyan (dir.), Gli Armeni in Italia, Venise, 1991, pp. 28-39:

[16] Բնագրում, օրինակ, գտնում ենք մի արտահայտություն, որտեղ ենթական հոգնակի է, միևնույն բայը՝ եզակի, մի բան, որը կարող է ուշադրություն հրավիրել խոսքի արտահայտության հունարեն ձևի վրա: Բնագրում օգտագործված «պապիոս» տառադարձությունը ևս ուշադրությունը հստակորեն հրավիրում է հունական արտահայտության վրա: Այստեղ ես իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Ագնես Ուզունյանին՝ տույժ բնագիրն այս տեսանկյունից քննելու համար:

2 Ժ դարում հայերի համար մասունքին տիրելու կարևորությունը

2.1 Հայերի ներկայությունը Կոստանդնուպոլսում՝ մակեդոնական վերանվաճման հենքի վրա

Ինչպես ցույց են տվել, օրինակ, Նիկողայոս Ադոնցի ուսումնասիրությունները, Ժ դարում Կոստանդնուպոլսում, մասնավորապես գորքերում, եղել են բազմաթիվ հայեր[17]: Մեր մատենագրի ճանապարհորդությունը և բյուզանդական մայրաքաղաքում նրա տևապես մնալն արտաքոց ոչինչ չեն ենթադրում:

Նախ՝ Պանդալեոնը որոշ մանրամասներ է հաղորդում Կոստանդնուպոլիս կատարած իր ճանապարհորդության մասին: Նա այնտեղ է գնացել 965 թ., Աստվածահայտնության տոնին, և իր կեցության ընթացքում Սուրբ Սոֆիայում բազմաթիվ անգամներ Սուրբ գրվածքների շուրջ զրուցել հույն եպիսկոպոսների և գիտնականների հետ: Նա կայսրության մայրաքաղաք է գնացել Վասպուրականի թագավոր Աբուսահլ-Համազասպ Արծրունու[18] հրամանով: Թեև այդ մասին նա ոչինչ չի ասում, սակայն շատ հնարավոր է, որ ուղարկված լիներ հակաճառություններ հարուցող վարդապետական հարցեր քննարկելու և հույներին ու հայերին բաժանող պառակտումին վերջ տալու նպատակով փոխզիջումներ գտնելու համար:

Այս վարկածն առավել ևս հավանական է, քանզի այդ ժամանակաշրջանում Վասպուրականում գոյություն ուներ քաղկեդոնական վարդապետությանը միտված հոսանք: Մի իրադարձություն, որ փոքր-ինչ հաջորդել է մեր բնագրին, բավական հստակ ձևով մատնանշում է դա. երբ 969 թ. Անիի ժողովի կողմից Անանիա Մոկացու հաջորդ Վահան Բ-ը քաղկեդոնականության համար գահընկեց է արվում, ապաստանում է այս գավառում՝ Աբուսահլ-Համազասպ թագավորի մոտ[19]: Բուն Կոստանդնուպոլսում մեր հերոսը հանդիպում է մի այլ հայի՝ ոմն Հովսեփի, որի հետ նա աշխատում է և որը, ինչպես ինքն է ասում, թարգմանության համար նրան տալիս է իր օրհնությունը:

---

[17] N. Adontz, Les Taronites en Arménie et à Byzance // "Byzantion", 1934-1936; արտատպված է՝ Idem, Etudes arméno-byzantines, Lisbonne, 1965, pp. 197-264 (այստեղ՝ էջ 221-235):

[18] Թագավոր՝ 958/9-968/9-ը. նրա մասին տե՛ս C. Toumanoff, Les dynasties de la Caucasie chrétienne de l'Antiquité jusqu'au XIXe siècle. Tables généalogiques et chronologiques, Rome, 1990, p. 505 (A/IX):

[19] Այս դիպվածի մասին տե՛ս, օրինակ, J.-P. Mahé, Le rôle et la fonction du catholicos d'Arménie du VIIe au XIe siècle // N.-G. Garsoïan et J.-P. Mahé, Des Parthes au califat, quatre leçons sur la formation de l'identité arménienne, Travaux et mémoires du centre de recherche d'histoire et civilisation de Byzance, Collège de France, monographies, 10, Paris, 1997, pp. 79-105 (այստեղ՝ էջ 86-87):

Հետաքրքիր է հաստատել, որ այս Հովսեփը, բացի դրանից, հայտնի է շնորհիվ փոքր-ինչ ուշ շրջանի մի ձեռագիր հիշատակարանի[20]: Այս հիշատակարանում նա նշանակում է այն եղանակը, որն օգտագործել է մի վկայաբանություն[21] հունարենից հայերեն թարգմանելու համար: Այսպիսով, Ժ դարում Բյուզանդական կայսրության մայրաքաղաքում գտնվում էին որոշ թվով հայեր, այնժամ, երբ կայսրերը ձեռնամուխ էին եղել Արևելքի վերանվաճման շարժմանը: Պանդուլեոնն, ի դեպ, իր բնագրի սկզբի մասում գովերգում է Նիկեփորոս Փոկաս կայսրը և հիշեցնում, որ նա մարտնչել է մահմեդականների դեմ գրավելով Կրետեն և Կիլիկիայում գտնվող Տարսոնը:

Այս ժամանակաշրջանում Հայաստանում և մասնավորապես Վասպուրականում տիրող քաղաքական իրավիճակը բացատրում է հեղինակի այս դիրքորոշումը. թագավորները տեսականորեն բյուզանդական կայսեր «վասալներն» են և այս ժամանակահատվածում վերջինիս հզորությունը հարգալից վերաբերմունք է պարտադրում: Այդուհանդերձ, Պանդուլեոնն այլազան ճանապարհներով ջանում է որոշ անկախություն ցուցադրել:

2.2 Մասունքներին վերաբերվող հարցում հռոմեական առաջնության շուրջ պնդելը

Հայ մատենագրի հաղորդած՝ իր և հույն գիտնականների միջև տեղի ունեցած ենթադրվող խոսակցությունները վերաբերում են այն հարցին, թե արդյո՞ք քրիստոնեական մեծ քաղաքները կարող էին մասունքներ ունենալ: Պանդուլեոնը, հիրավի, հույներին դիմում է հետևյալ հարցով. հնարավո՞ր է կայսերական քաղաքում գտնել Սուրբ Պետրոս և Պողոս առաքյալների մասունքները:

Նրա հարցի պատասխանը տալիս է ծագումով եդեսացի մի անձնավորություն, որը հաղորդում է Հուստինիանոսի տիրակալության շրջանին վերաբերող մի երգիծական պատում.

«Մեծն թագատրն Յուստիանոս յորժամ աւարտեաց զշինուածս հրաշատեսիկ եկեղեցւոյն Սուրբն Սոփեայ, աղաչեաց զՀռովմայեցիս տալ մասն ինչ ի նշխարաց Սրբոց Առաքելոցն՝ ի պատիւ սրբոյ եկեղեցւոյն, զի լինիցի հիրու զեկեղեցին Հռովմայ զարդարեալ սրբովք առաքելօք. եւ զայն ի գինս փոխարինին ոսկւոյ՝ որչափ եւ

---

[20] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., Հմր 86, էջ 72-73 (թվագրված՝ 991 թ.): Այս հիշատակարանը նախորդում է հունարեն մի համառոտ վկայաբանության հայերեն թարգմանությանը, որի մասին է վկայում Վիեննայի Մխիթարյան մատենադարանի 1048 (1302 թ.) ձեռագիրը: Այս թարգմանության մասին տե՛ս B. Outtier, Saints et martyrs d'Italie dans le synaxaire arménien // C. Mutafian (éd.), Roma-Armenia, catalogue de l'exposition de la Grande Salle Sixtine, 25 mars-16 juillet 1999, Rome, 1999, p. 248:

[21] Ակնարկված յիշատակարանն իրականում ոչ թէ մի վկայաբանութեան, այլ՝ Յովսէփ Կոստանդնուպոլսեցու յունարէնից հայերէն թարգմանած Յայսմաւուրքին է - Մնք. Գ. Տ-Վ.:

կամեցին: Ըստ որում հաւանեալ եղեւ ի նոցանէ՝ մազս վեց ի մորուաց Սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պաւղոսի, ընդ անհնարին չափոյ ոսկոյն կշռեալ բերեալ եղեւ ի քաղաքն Կոստանդինուպոլիս, եւ եդեալ ի Սուրբն Սոփի. եւ ժամանակ ինչ անցեալ՝ դարձեալ հնարեցան Հռովմայեցիք եւ գողացեալ դարձուցին անդրէն ի Հռոմ»[22]:

Թեև այս երգիծական պատումն այլ աղբյուրներից հայտնի չէ, հավաստի է, որ վաղ միջնադարում բյուզանդական կայսրերը փորձել են մասունքներ ձեռք բերել, ինչպես այդ հավաստում են արևմտյան աղբյուրները: Գրիգոր Մեծ Պապն, օրինակ, 954 թ. մերժման պատասխան է գրել Մորիկ կայսեր կնոջը՝ Կոնստանցային, որը Պապից խնդրել էր երկու առաքյալների՝ Պետրոսի և Պողոսի մասունքները[23]: "Liber Pontificalis"-ը ևս հաղորդում է, որ 519 թ. Հուստինիանոսը, որն այդ ժամանակ կոմես էր, Կոստանդնուպոլիս ուղարկված պապական նվիրակներից խնդրել է Պետրոս և Պողոս առաքյալների մի քանի մասունք՝ այն եկեղեցու համար, որը ցանկանում էր կառուցել նրանց պատվին: Նվիրակներն այստեղ ևս այդ խնդրանքին հակադրվել են՝ վկայակոչելով այն փաստը, որ Հռոմը միայն մասնատուփեր է հատկացնում: Պատմությունն, այսպիսով, հենված է հավաստի փաստերի վրա, քանզի բյուզանդական կայսրերը բազմիցս բախվել են հռոմեացիների հետևողական մերժումներին:

Եթե հայ մատենագիրը հոգ է տանում հաղորդելու այս երգիծական պատումը, ապա դա, իհարկե, արվում է մասունքներին վերաբերվող հարցում Հռոմի առաջնության շուրջ պնդելու դիտավորությամբ: Մի փոքր անց, նա շատ ավելի է պնդում հռոմեական այդ բացառիկության շուրջ: Այդուհանդերձ, ինչ վերաբերում է մասունքներին, նա ձեռնպահ է մնում ճշգրտելուց, որ Կոստանդնուպոլսում դրանցից, այնուամենայնիվ, բավականաչափ կան, որովհետև բազմաթիվ են այն մասունքները, որոնք այդտեղ են տեղափոխվել Գ դարի վերջերին և Ե դարի ընթացքում, ինչպես, օրինակ, Թեոդոսիոս կայսեր օրոք՝ Սուրբ Հովհաննես Մկրտչի գլուխը[24]:

Երբ Պանդալեոն մատենագիրը պատմում է Կոստանդնուպոլիս կատարած ճանապարհորդության և հույն վանականների հետ իր ունեցած շփումների մասին, պնդում է, այսպիսով, երկու կետի շուրջ: Նախ՝ նա ծայրահեղ ակնածանք է դրսևորում բյուզանդական Նիկեփորոս Փոկաս կայսեր նկատմամբ, որը միշտ հիշատակվում է Վասպուրականի թագավորից առաջ և առանձնակի գովաբանական արտահայտություններով: Նույնը կարելի է ասել Կոստանդնուպոլիս քաղաքի՝ նոր Հռոմի մասին: Այդ ակնածալից դիրքորոշումը բացատրվում է, իհարկե, քաղաքական հենքով: Բյուզանդացիներն այնժամ վերանվաճման եռուն ժամանակաշրջան էին ապրում և, ի դեպ, նախապատրաստում հայկական փոքր թագավորությունների վերամիավորումը կայսրությանը, որի իրականացումը սկիզբ էր առնելու մի քանի

---

[22] Ղ. Ալիշան, նշվ. աշխատ., էջ 296:

[23] H. Leclerq, Saint Pierre // DACL, t. XIV/1, Paris, 1939, col. 865.

[24] Այս օրինակի և մի շարք ուրիշների առթիվ տե՛ս H. Leclerq, Translations // DACL XV/2, col. 2695-2699 (այստեղ՝ 2698-2699 սյունակները):

տարի ավելի ուշ, քանզի Ցարոնը թոնդրավվել է 968 թ.[25]: Այս ենթակայությունը կայսերը՝ պատումի մեջ, այդուհանդերձ, մեղմացվում է Հռոմ քաղաքին հատկացված տեղով: Հռոմը գլխավորապես սուրբ քաղաք է, որտեղ գտնվում է Պետրոս առաքյալի մարմինը, և բյուզանդական կայսրերի՝ այս մասունքների որոշ մասն իրենց մայրաքաղաք բերելու մտադրությունը ձախողվել է: Միակ երկիրը, որը ևս, իրոք որ, ունի Պետրոսի մասունքը, Հայաստանն է կամ ավելի շուտ՝ Վասպուրականի թագավորությունը, որը Կոգովիտը գրավել է Արծրունյաց առաջին թագավորի՝ Գագիկի (908-937) օրոք[26]:

Նվաճումների եռուն ժամանակաշրջանում գտնվող Բյուզանդական կայսրության նկատմամբ Վասպուրականի փոքր թագավորության ունեցած անկայուն դիրքորոշումը բացատրում է այն կարևորությունը, որը տրվել է առաքելական մասունքին տիրելու հանգամանքին: Վերջինս, այսպիսով, թույլատրում է փոխհատուցել քաղաքական հարթության վրա առկա որոշակի անհավասարակշռությունը: Ի դեպ, հայկական աղբյուրները Սուրբ Պետրոսի այս մատը վերստին վկայակոչում են մեկ այլ խռովահույզ ժամանակաշրջանում՝ ԺԱ դարում: Մեր հոդվածը կեզրափակենք հակիրճ ձևով հիշելով փաստերը:

3 Մասունքի «վերստին հայտնությունը» Ապլղարիբ Արծրունու օրոք

3.1. Ապլղարիբի հաստատումը Կիլիկիայում

Ձեռագրերի հիշատակարանները, մասնավորապես՝ Ներսես Լամբրոնացուն և նրա նախահայրերին նվիրվածները[27], թույլատրում են նկարագրել Ապլղարիբի Կիլիկիա ժամանումը: Այն տեղի է ունեցել բյուզանդական Միքայել Է կայսեր տիրակալության օրոք՝ այնժամ, երբ թուրք սելջուկները բռնագրավել էին հայկական թագավորությունները, գրավելով մասնավորապես Անի քաղաքը, որը դրանից մի փոքր առաջ, 1064 թ., վերագրավվել էր բյուզանդացիների կողմից: Հիշատակարաններից մեկն այս ձևով է հաղորդում հայ իշխանի Կիլիկիա տեղափոխվելը.

«Ընդ նուաղել թագաւորութեան եւ իշխանութեան Հայոց, յորժամ յափշտակեցաւ յիսմայէլացւոցն մայրաքաղաքն Անի, եւ տարագրեցան թագաւորքն մեր ի գաւառս եւ յիշխանութիւնս արքայիցն Ցունաց, այր ոմն յիշխանացն Հայոց Ապլխալիպ անուն՝ որ էր ի տանէն Վասբուրականի, իբրեւ զմտերիմ եւ զիսոհեմ եւ զարի ի գործ

[25] N. Adontz, նշվ. աշխատ., էջ 231-232.

[26] G. Dédéyan (dir.), Histoire des Arméniens, Toulouse, 1982, p. 249.

[27] Տե՛ս Գարեգին Ա Կաթողիկոս, նշվ. աշխատ., Հմր 245 և 246: Այս երկու հիշատակարաններից առաջինը զետեղված է նաև Ա. Մաթևոսյանի կազմած ժողովածուի մեջ (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., Հմր 270, էջ 255-261):

պատերազմի՝ առաքեցաւ յինքնակալէն Ալէքսէ[28] ի գաւառս Կիլիկեցւոց՝ իշխել մայրաքաղաքին Տարսոնի եւ Մամ[ո]ի[ա]տիոյ, որ եկեալ տիրէր սոցա հայրենի կարգաւք եւ աւրինաւք՝ եւ մնայր ի հաւատարմութիւնն Յունաց»[29]:

Հայ իշխանը չի բավարարվում, ի դեպ, Տարսոն և Մամեստիա քաղաքներով, այլ ծավալվում է գրավելով մասնավորապես Լամբրոն և Պապերոն բերդամրոցները: Այդ ժամանակ նա բյուզանդական Միքայել Գ կայսեր յուրօրինակ վասալն է, մի բան, որը նրան չի խանգարում վարել անկախ քաղաքականություն և ջանալ «հայացնելու» Կիլիկիան՝ մասնավորապես դրսևորելով իր անջատվողականությունը կրոնական տեսանկյունից: Այդ է պատճառը, որ արտասովոր մասունքներ ունենալը մեծ կարևորություն է ստանում, և հիշատակարանների գրիչները չեն զլանում դրա վրա հենվելուց:

3.2. Սուրբ Պետրոսի մատը Կիլիկիայում

Ապլղարիբն, իրոք որ, Վասպուրականից, որտեղից ինքը ծագում էր, իր հետ տարել է երկու մեծարժեք մասունք՝ Վարագա խաչից մի կտոր և Սուրբ Պետրոսի մատը: Ըստ ավանդության, Վարագա խաչը Տերունական խաչի մի կտորն է, որը Հայաստան էին բերել Գայանեն և Հռիփսիմեն, և որը, Գ դարում կոստյան մատնվելուց հետո, հրաշքով կրկին ի հայտ էր եկել Ներսես Գ-ի կաթողիկոսության օրոք (641-661)[30]: Այդ ժամանակ Կիլիկիայում այս նոր իշխանությունը հիմնադրող իշխանի համար մասունքներ ունենալու կարևորությունն ակնհայտ է. դրանք նրան որոշակի օրինականություն էին հաղորդում: Նա, ի դեպ, միակ հայ իշխանը չէր, որն այդ ժամանակ նման իրեր ուներ և որոնցից օգուտ էր քաղում: Այդպես էր նաև Փիլարտոս Վարաժնունու կամ Թորոս Ա-ի պարագան[31]:

Հենց որ Ապլղարիբը դառնում է իր իշխանության տեր ու տնօրենը, նա որոշ թվով ամրոցներ է վստահում Գանձակի գավառից եկած մի իշխանի՝ Օշինին, որը Մեծ Հայքից գաղթել էր մի փոքր առաջ: Այդժամ նա նրան է վստահում Լամբրոն

---

[28] Եթե հեղինակն այստեղ հիշատակում է Ալեքսիս Կոմնենոսի մասին, նա սխալվում է. հիշատակումն Անիի անկման մասին թույլատրում է իրադարձությունը տեղաշարժել դեպի Միքայել Է-ի տիրակալության ժամանակաշրջան, ինչպես այդ մասին նշում է, ի դեպ, երկրորդ հիշատակարանի հեղինակը. Գարեգին Ա կաթողիկոս, նշվ. աշխատ., Հմր 246, սյունակ 551: Թարգմանությունը տե՛ս՝ G. Dédéyan, Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés (1068-1150), Lisbonne, (տպագրության ընթացքում է, էջ 309, էջահամարը ժամանակավոր է):

[29] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., Հմր 270, էջ 255: Թարգմանությունը տե՛ս՝ G. Dédéyan, նշվ. աշխատ., էջ 309:

[30] Այս խաչի վերաբերմամբ տե՛ս A. Renoux, La croix dans le rite arménien. Histoire et symbolisme // Melto V, N 1, 1969, pp. 123-147 (այստեղ՝ էջ 131) և B. Outtier et J.-M. Thierry, Histoire des saintes Hripsimiennes // Syria 67, 3/4, 1990, pp. 695-733 (այստեղ՝ էջ 728-729):

[31] Տե՛ս G. Dédéyan, նշվ. աշխատ., էջ 312:

ղերդամրոցը և, միաժամանակ, Սուրբ Պետրոսի մասունքը: Սուրբ Ներսես Լամբրոնացու կյանքի մասին պատմող հիշատակարանը հետևյալ ձևով է ներկայացնում լիազորության այդ փոխանցումը.

«[Ապլղարիբը] զԼամբրանն ետ ի մտերիմ եւ սիրեցեալ իշխանն, որ եկեալ էր ընդ իւր յաշխարհէն Հայոց՝ անուն Աւշին, եւ աւանդեաց ի նա զմասն մեծի եւ զլխաւորի առաքելոցն Պետրոսի, զոր ունէին Հայք ըստ նախագրեալ պատմութեանն, եւ հրամայեաց հպատակութեամբ սպասաւորել յայմ դղեկի սրբոյ առաքելոյն եւ իւր սեպհական ունել զբերդս եւ զգաւառս»[32]:

Ի դեպ, հիշատակարանի հեղինակն այստեղ, մատնանշելով, որ հայերը մասունքին տիրում էին «ըստ նախագրեալ պատմութեանն», իհարկե, հղում է մեր բնագիրը:

Կարելի է ավարտել՝ հիշատակելով մասունքի օգտագործման մասին Օշին իշխանի կողմից, որը համաձայն խիստ դասական գործելակերպի, չի զլացել այն տանել թուրքերի դեմ ճակատամարտելու, որին, ի դեպ, այդ ժամանակաշրջանում դիմել էին բոլոր քրիստոնյաները, անկախ այն բանից, թե ինչպիսին էր նրանց դավանանքը:

Սուրբ Պետրոսի մասունքը հայկական աղբյուրներում ի հայտ է գալիս վճռորոշ պահերին՝ դեպի Մեծ Հայքի հողերը թյուրանդական առաջխաղացման և սելջուկների ճնշման ժամանակ, որն իշխաններին հարկադրում է զաղթել Կիլիկիա: Այս երկու պարագաներում խոսքն, անկասկած, վերաբերում է ինչպես քաղաքական, նույնպես և կրոնական տեսանկյուններից հաստատուն դիրք գրավելուն: Եթե հայ իշխանները՝ մասունքը պահողները, փոքրիշատե հիմնավոր ձևով ենթակա են կայսերը կամ մահմեդականների ճնշմանը, ապա քաղաքական այդ դժվարությունները նրանք փորձում են փոխհատուցել՝ ներկայանալով իբրև Պետրոս առաքյալի մարմնի մի մասի տեր ու տնօրեններ, ինչով, բացի իրենցից, կարող են հպարտանալ միայն հռոմեացիները:

Ֆրանսերենից թարգմանեց
պատմական գիտությունների թեկնածու
ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

---

[32] Գարեգին Ա Կաթողիկոս, նշվ. աշխ., էմր 245, այուսակ 542: Թարգմանությունը տե՛ս՝ G. Dédéyan, նշվ. աշխատ., էջ 662-663: Անհրաժեշտ է նշել, որ ավելի ուշ շրջանի պատմիչ Սամվել Անեցին հիշատակում է, թե մասունքը կարող էր բերված լինել Օշինի և ոչ թե Ապլղարիբի կողմից. սա առարկելի է թվում, որովհետև Կոգովիտը, ուր գտնվում էր մասունքը, ավելի մոտ էր Վասպուրականին, որտեղից գալիս էր Ապլղարիբը, քան այն վայրը՝ Գանձակի գավառը, որտեղից սերում էր Օշինը. տե՛ս G. Dédéyan, նշվ. աշխատ., էջ 662:

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍԱՐԱՖՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍԱՐԱՖՅԱՆԻ «ՏԵՂԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱԿԸՆԹԱՑՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

ԵՐԿՓԵՂԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ. ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԱՆԱՊԱՐՀԸ

30-ական թվականների սփյուռքյան իրականությունը ընդհանրապես կարելի է համարել տագնապ ապրող անհատի (բնականաբար և որպես այդպիսին՝ տակավին չձևավորված կամ ձևավորումի ընթացքում գտնվող հասարակության) կամ, որ տեղին է ասել՝ հայ հավաքականության հոգեվիճակի բռնկումների շիկացման ժամանակաշրջան: Այն, ինչ իր թանձրացյալ դրսևորումն ունեցավ Ն. Սարաֆյանի այս շրջանի ստեղծագործության մեջ, ի մասնավորի՝ 1939 թ. հրատարակված «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն» ժողովածուում՝ սկզբնաբար իսկ դժվար ըմբռնելի էր, եթե չասենք՝ անհասկանալիության աստիճան անընդունելի շատերի, հատկապես արևմտահայ իրականության հոգեբանական զգայնությունը տակավին չթոթափած սերնդի կողմից:

«Սփիւռքը եւ իր գրականութիւնը» հոդվածում, իրապես կարևորելով, որ գրականությունը տևապես ազգապահպանումի համար մեծ և կարևոր դերակատարություն է ունեցել, ինչ որ անժխտելի է, Սարաֆյանը արձանագրում է. «Մեր գրականութիւնը ծառայեց մեր ազգային ինքնագիտակցութեան զարթնումին, եղաւ մաքառման եւ պայքարի գրականութիւն մը: Ան է դարձեալ որ պիտի կատարէ մեծ դեր մը Սփիւռքին մէջ»: Ո՞րն է այդ դերը և ի՞նչ դերատանձնում ունի անհատը (մտավորականը): Արդյո՞ք չափազանցորեն չի վերագրյալ ծանրաբեռնվածությունը «տրված» անհատին, երբ շերտավորված հասարակության (ամենատարբեր գիտակցում ունեցող և պահանջմունքներ ներկայացնող) դեմ հանդիման, ինքն է մշտապես միայնակ՝ ընդունելություն գտնելու տագնապ ապրելով:

«Սարաֆեանական աշխարհի հիմնական ստորոգելին կազմող ԳՈՅԱՍՏԵՂԾԱԿԱՆ (ընդգծումն իմն է, Ա.Ա.) եզրը» էապես զգալի զարկերակային նշանակություն ունի «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն» ժողովածուի համանուն երկարաշունչ բանաստեղծապատումում:

Չափազանց դժվարությամբ, եթե չասենք՝ ճիգերի գերագույն լարումով է անհատն իրականությունն ընկալում՝ իր բազմադեմությամբ, ունենալով տագնապն

օտարվածության: Իրեն օտար զգալու անհաղթահարելիությունից հոգնատանջ, բայց ոչ հնազանդ, ապավինում է միայն հոգուն, որի դիմադրողունակ լինելու շնորհիվ անցյալի հարուցած ամենայն դաժանն ու սահմռկելին դիմազուրկ են լինում, քանզի «ճամբան փիւնիկ՝ մեր առջեւ. կեանքի բացուող լայն վանդակ»:

Կյանք, որ «անսպառ դուրս կը սահի»: Կյանք, որը կարձես թե վերուստ է անհարազատության ԵՐԱՆԳԱՎՈՐՈՒՄ ունեցել: Համենայն դեպս, օտարության առթած ցավն է ամենից տագնապահարույցը: Այն, ինչ անհատի և իրականության միջև անջրպետի (հավաքականության համար անցանկալի, եթե ոչ՝ վտանգահեղի) դեր է կատարում: Թե այդ «դերը» որքանո՞վ է շրջանցելի-հաղթահարելի, որ ոչ այնքան ժամանակի, որքան անհատի վերապրած վիճակի «ճշգրտման» խնդիր է: Կամ այլ բառով՝ ինքնագտնումի: Այսպես շարունակաբար է ընթանալու նրա ուղին, մինչև ինքնալի անհատի կողմնորոշումը: Հավաքականության առումով՝ մինչև վերազտած ինքնության «լուրացումը»: Մինչ այդ՝ առավել խնդրական է այն միջավայրն իր բազմաբովանդակ ընդգրկումներով, ուր անհատը և հասարակությունը անընտել են Ազգային-հոգեբանական նոր դրսևորումներով անբացահայտ, իրականության հրամցրած «խաղի կանոններին». ըստ այդմ. «Ի՞նչ եմ ես որ ծնայ քանի մը լեզուի մէջ եւ անոնցմէ ոչ մէկը կրցայ հարազատ նկատել եւ ոչ ալ մայրենի լեզուս՝ որուն վերադարձայ օտար դպրոցի մը մէջ օտարանալէ յետոյ»[1]:

Շարժման («Շարժում, հոսում ու փլուզում, հսկայաթոք, լայնօրէն») այն ընթացքը, որ պայմանավորում է անհատի անցնելիք «ճամբաներն անվախճան», ինքնին պոռթկում է առաջ բերում «տենչերու շղթայագերծ»: Եվ ինչպես Սարաֆյանի ողջ ստեղծագործության ընդհանրապատկերում, այնպես էլ այս շրջանում, ՇԱՐԺՈՒՄ ու ընթացություն ապրող, հետևապես ՈՐՈՆՈՒՄԻ, ԳՏՆՈՒՄԻ անհրաժեշտությունը չափազանց առաջնային համարող և անհրաժեշտող անհատը, նաև ճամփորդ է. («ճամբորդութեան ու անոր գաղտնի կշռոյթը»):

Որտեղի՞ց է սկսվում, ելման ի՞նչ վիճակ է նախասահմանված ճամփորդի համար՝ սկսելու և ավարտելու այն ընթացքը, որ ճամփորդության «ընդվզումով կը ճչար»: Իրականում ո՞վ է ճամփորդը՝ անհատի այն տիպարը, որ արդեն «ոչ մէկ իտեալ ու անուրջ» ուներ (աքսորումի գիտակցումն մանկությունից ի վեր զգացած), թե՞ («օրերով վազք հրատապ, ապրած պոռթկում հոգով, դարատոր շունչ մը վրան») և արգելված ճամփաներ չճանաչող, ավելին՝ դրանք արդեն շրջանցած անհատը: Երջանկություն է ունենալ գիտակցումն այն բանի, որ «զոհաբերում մ'եղայ»: Սարաֆյանական՝ խիստ անհատականացված այս գիտակցումը ծնունդ է ազգային զգայականության խորաշերտ ընկալման: Եթե վերհիշենք մեկ այլ առիթով Սարաֆյանի պոռթկումը. «Զոհողութիւն մըն է հայ ըլլալը»: Այն կրկնակ իմաստշերտավորում ունենալուց զատ (ինքնության զոյաբանական ընթացք-պայքարը՝ անցյալ և ներկա հարթություններում), նաև խնդրական է օրվա (սփյուռքյան իրա-

[1] Ն. Սարաֆեան, «Վէնսէնի անտառը», Փարիզ, 1988 թ., էջ 466:

կանության) տեսակետից, ուրեմն և անհատի կողմից անմիջնորդաբար «իրագործվող»:

Զոհաբերության պատրաստ անհատի ընկալումներն սովորական իսկ պայմաններում ենթադրում են հասարակության «ունեցած» ոչ բավարար քանակի «արյան» պաշարի և կամ օրե օր զգացնել տվող կենսունակ (ժառանգորդություն ապահովող) արյան մակարդման: Այդպիսով անհրաժեշտություն է առաջանում վերսթափման, վերազարթման.

Զարթներ է ուժ մը կրկին.
Վարդն իսկ քնքոյշ, վարդն իսկ հեզ, իր փրկութեանը համար
Ունի իր փուշը, որ մեզ
Ցանկարծակի կը խոցէ:

Եվ շուտափույթ «ծառերն...նոր ձեռ, նոր կեանք մը կ'առնեն»: Փոխաբերությունը, իբրև այդպիսին, իր զուտ խորքային և ճանաչողական (գրողական մեկնաբանումի) իմաստով Սարաֆյանի ստեղծագործության մեջ յուրահատուկ առանցքային նշանակություն ունի: Հատկապես ծառերի փոխաբերական (ընդլայն իմաստով՝ այլաբերական) «կերպարային» պատկերումներն են որոշակի, կարևորվող «ներկայություն» Սարաֆյանի համար: «Ծառերն ի վար կը հոսի կայտառ ծպիտը լոյսին», «Արիւն ու միս, ու ծառեր պիտի դառնան կարծր վեմ», «Ծառը ծովին պէս, երազ, կը հիւսէր քող մը սարսռուն», «Ու միջատները նրման ծառէն առկախ քնարներու...» եւ այլն:

Ծառերի լինելության սարաֆյանական համակարգը բացառապես և միայն «ենթակա» է անցյալի և իրականության փոխներհյուսության, անբաժան սերտաճվածության ընբռնումին, նրա կեցությանը (հարատևության իմաստով): Հիրավի, գրողի կողմից կերպարավորվող և վերջապես Վենսենի անտառի խորհուրդ-կերպարով արդեն ընդհանրացյալ:

Այնքան լայնընդգրկուն է Սարաֆյանի «հաղորդակցական դաշտը», որ իր մեջ ներառելով «ծառերի» ամենանրբին զգայարանքները, կարողանում է մենախոսել և մենախոսեցնել, ի դերև հանելով չափազանց դրամատիկ-մարդկային նկարագիր, ավելին, սաղարթների «լռության» միջից անհատի (հայի) ապրած ճակատագիր է երբեմն հառնում. «Ու կան հէքեաթ պատմող ծառեր: Կան այդ հէքեաթը ապրող մանուկներ: Պատմական ճակատամարտեր մղող բանակներ են երբեմն ծառերը, սուր սուրի դէմ, ձիերու ու սաղաւարտներու բաշերը հովին՝ ծփացող դրոշներու ներքեւ: Ու կան տաղասաց ծառեր, շարական երգողներ, բուրուառ ու ծնծղայ շարժող քահանաներ, գողթան երգիչներ ու իշխանի սպասող սոսիներ: Կան քերթողներ եւ յեղափոխական հերոսներ: Զարդուող եւ աքսորուող ժողովուրդ մը են երբեմն ծառերը, երբ ամրան կայծակները կը շողան անոնց վրայ: ...կան սէրով տառապող ծառեր: Ու երկու սրունքներուն միջեւ երկինքը սեղմող ծառեր»[2]:

---

[2] Նույն տեղում, էջ 15:

Ապրելու ոգին, որ «կը մղէ վայելքներուն...», նոր հայտնության և խոյանքի իմաստավորում է ստանում. քանի որ մինչ այդ («քու մանկութիւնդ եղաւ տխմարութիւն մը ամբողջ») անզորությունն ու խարխափումն են «զարնուել իրարու»: Համառ ու փոթորկուն է եղել. «Օ՛, այս պայքարն անցեալիս եւ ներկայիս միջեւ իմ»: Բայց ոչ վհատալից-իրականության բազմերակության ՄԱՅՐ երակի տրոփյունն զգացողն անմիջնորդ է արձագանքում դառնալով առավել փոթորկուն, զգայացունց. «կը ճզմրուի, կը զարնէ, կը զարնէ սիրտը, կ՚այրին քունքերս յոգնած...»: Միակ փոփոխումն («փոփոխումն այս կրկին») իր բնույթով անձնային-իրավիճակային լինելուց զատ, նաև հասարակական-հոգեբանականի միտումներ է իր մեջ ներառում և «տեղի է ունենում» «մտքի զարթնում մը քիչ-քիչ». բայց մինչ այդ երկվությունն ապրողի (տագնապի երկվություն) հոգեվիճակների ընդգծյալ հորդահոսմամբ: «Տեղի է ունենում» վաղուց սպասելին, որի դեմ անզոր է նույնիսկ որոշապես «տիրապետուած երկուութիւնը»...

Որոնումը՝ շարունակականորեն է պարտադիր ու նաև զգայելի «անարգել մակընթացումի» պարագային, մանավանդ, երբ նպատակային է որոնումը՝ ինքնորոնումի փոխակերպություն պայմանավորող: Ասել է, թե՝ «տարածութիւն է՝ որուն շունչէն իմ կուրծքս կ՚ուռի»: Այն տարածությունը, որ տակավին դատարկ է. կարոտ՝ հոգևորի շնչառությամբ, գորովով ընդլայնման: Հոգևորի, որ նախապայմանավորելու է ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ընթացքը. մեծ հաշվով՝ ճանապարհը: Ահավասիկ, անհատի զոհաբերման (ճամփորդության) իմաստը, որ ափյուռքյան գոյավիճակի թանձրացյալ պատկերումն է նաև:

«Ափիւռքեան կացութիւն մը ամբողջովին ապրելու համար, աքսորը ապրելու համար՝ բաժանումը անհրաժեշտ է: Բաժանումը կը մտածուի այստեղ իբրեւ «մեծություն» մը կերտելու համար, անհրաժեշտը ծնելու համար: Բայց հեռանալը դժուար է, որովհետեւ հեռացողը մինակ է միշտ եւ չունի զինք հիմնող օրէնք: Հեռացողը ինքն է, որ պիտի հիմնէ այդ օրէնքը... Դժուարը Ափիւռքը ստանձնելն է, իր ամբողջ բարդութեամբ»[3]: Իրականությունը ափյուռքյան այնքան տեսանելի չէ, որքան զգայելի: Արտաքուստ այն մի այնպիսի հոգեբանական միջավայր է, ուր ապրելն ու արարելը ի խնդիր ոգու ինքնակերպության պահպանման չափազանց դժվարին, եթե չասենք անիրագործելի է:

«Ամբողջ բարդութեամբ» Ափյուռքի գիտակցման-ընկալման ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ՝ Ափյուռքով ԱՊՐԵԼՆ Է. ինչ որ նշանակում է նախ ապրեցնել ՈԳԻՆ, «Ոչ մէկ հմայք ու խորհուրդ... աւագին պէս ընդունեց մարմինս ամբողջ»: Ասել է, թե կլանող օտար իրականության մեջ Դամոկլյան սրի պես կախված ուծացումի վտանգի առջև պայքարի (իմա՝ գոյապայքարի) միջոց հայ հավաքականության համար մշտաբար եղել է հայ հոգու և մտքի շուրջ համախումբ ապրելը՝ իր ամենատարբեր (դարավոր) դրսևորումներով: Սրան նախորդում է լռելյայն ինքնապայքարի այն ըն-

[3] Գր. Պոլտեան, «Տրամ», էջ 369:

թացքը, կամ ազգագիտակցման կազմավորումը, երբ ցնցումն համընդհանրական բնույթ է կրում:

Արևմտյան Սփյուռքի իրականության պայմաններում ավելի քան արծարծելի է անհատի մեծակության (ազգային որոշակի պատկանելիություն ունեցող՝ ընդհանրապես) խնդիրը, ո՛չ հասարակությունից մեկուսի ապրողի, այլ ինքնագիտակից, ազգային արյան շրջանառությունն իր երակներում զգացող անհատի, որի համար մշտաբար գոյություն ունի մի տեսակ ինքնապահովման բնազդ՝ իր և սերունդների ազգային ինքնության պահպանման գիտակցությունն ապահովող: Հետևապես, ցնցման անխուսափելիություն պայմանավորող:

«Դռները գաղտնի՝ տեսնիլ, ապրիլի» մտահոգությամբ ապրողի համար իրականությունը և մարդկային ոչ սոսկական (այլ հոգեբանորեն տարողունակ և ալեկոծ) բնույթը ճանաչելու ճանապարհով, իրականությունն առավել դիտումնալից է դառնում: Առավել կյանքային զգայնականության ենթաշերտեր պարունակող: Եվ քանի որ Սարաֆյանի գրողական կերպընկալումն ու լեզվական արտահայտչագեղությունը (այն, ինչ բնորոշ է նրա ստեղծագործությանն ընդհանրապես), կամ այլ բառով ասած՝ նկարչագեղ-պատկերավոր լեզուն ավելի լիարյուն են դրսևորում ժամանակն ու իրականությունն իրենց կենսառիթմերով և հարաշարժությամբ, տեղին է վկայաբերել այդ նույն գոյավիճակակիր մեկ այլ մեծանուն գործչի մտածումները: Միայն հզորապես արմատակալած (արտաշխարհում) բազմադարյա փորձառություն կրողի արյան բանականություն պետք է ունենալ այսպիսի ինքնադրսևորման հասնելու համար: Վերստին նշենք, որ Արշիլ Գորկին նույնպես ցնցում ապրած և ցնցումի ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ ստեղծագործած սակավաթիվ հայազգի մտավորականներից էր. «...Ի՞նչ իմաստ ունի խորանալ իրականության ճահիճը: Արուեստն աւելին է, քան սոսկ վաւերագրականութիւնը: Այն պէտք է արտացոլի բանականութիւնն ու զգացումները: Ոչ թէ տեսողական դիտումները, այլ մտքի անտահման փայլատակումներն են, որ բացում են ճշմարտութեան դուռը: Նրան (նկարչին՝ լայն իմաստով արվեստագետին, Ա.Ա.) է վերապահուած կոչելու նոր մետաղը, վերածնելու իր դարատոր կոչումը, որպէս մեկնիչ, բայց ոչ երբեք կեանքի գաղտնիքներն արձանագրող. հայկական իմ փորձը գիտակցականութիւնս հասցրել է զգացմունքի աւելի բարձր զգայնութեան: Ինձ ԲԱՑԱՑԱՑՏԵԼՈՎ (ընդգծումը իմն է՝ Ա.Ա.), ես օգնում եմ մարդկանց ինքնաբացայայտմանը»[4]:

Ավելի պարզորոշ և միևնույն ժամանակ բարձր իմացականությամբ պատկերել դեպի իրականություն տանող ճանապարհը, որ «ճշմարտութեան դուռն» բացել է նաև (առավասիկ՝ ցնցման ևս մեկ ապացույց, որ արդյունք է ազգային ՈՍՏՄԱՆ): Չնայած և՛ Արշիլ Գորկու, և՛ Սարաֆյանի պարագային նկատենք, որ ցնցումը (կամ ինչպես մեկ այլ առումով Գր. Պոլտյանն է նշում՝ Սարաֆյանի աքսորը) չունեն միայն և սոսկ ազգային ՀԵՆՔ: Իրապես, աքսորն, իբրև համընդհանրական գոյավիճակ, սկսվել է տակավին 1915 թվականից առաջ: Եվ հաջորդ տարիներն էին, որ պիտի վերապրելի դարձնեին երևույթի ողջ առաձգականությունն ու դրա

[4] Ա. Գորկի, «Նամականի» (անգլերեն), Նյու Յորք, 1970 թ., էջ 199 (անտիպ):

զգայնական նշանակությունը (աքսորյալի հոգեցունց կյանքն՝ «անձէն ներս եւ անձէն դուրս»): Իրականությունը ոչ այնքան իմաստավորողի, որքան՝ իմաստազերծողի (ոչ մերժողի), այլ նրա թաքուն ծալքերն հայտնաբերողի պահանջն էր խնդրահարույց:

Ցնցման առթած զգայնությունը երբեմն նաև թախծության տեղիք է տալիս, բայց ոչ կորուստների ի գին, այլ սթափեցուցիչ, հավատընծա՝ առ «կապոյտն արգաւանդ», որ հոգեսուցման արտահայտապատկերի նշանակություն է ստանում, հոգեկան կորովի դրսևորման «ընդվզումներով».

Տրտմութիւնը սոսինձի
Պէս կաշկանդող երէկ զիս ու տագնապն էր տակաւին
Այս առաւօտ: Մոեցի
Ահա զոլուխս համերաշխ խոնարհութեամբ. բարձրացայ,
Վրստահութիւնը եկաւ
Ու Տիրոջ շունչն ողողեց զիս, գերագոյն իբր ընծայ:

Սակայն ամենևին չի ենթադրվում, որ մինչ վերին շնչառություններով հաղորդվելը, անհատը ինքնասպան անդիմությամբ էր ապրում և միայն պահի լուսեղեցության շնորհն էր փրկաբեր. այստեղ նույնպես նկատելի է տագնապ ապրած, այնուհետև վերապրափության-ցնցման ենթարկվածի վրա որոշակի ներգործություն, ինչ որ տեղ նաև ինքնաճանաչման-ինքնացնցման հետևանք լինելով: Վերստին առարկայական է դառնում հոգեկորովի խնդիրը: Քանզի անհուսությունն ու կամազրկությունը չէին կարող նման արտահայտումներ ունենալ՝ ոգու դատապարտվածությամբ տառապողի համար:

Ն. Սարաֆյանի բանաստեղծության պարագային, գոյի, լույսի և նրանց հակոտնյա՝ մտքի առօրեականությանը վերաբերող իր դատումներում, Մ. Նշանյանը նույնպես ակնարկում է բանաստեղծության (իմա՝ աստվածայինի), իբրև անտեսի, անհասանելիի և նրա հանրայնացման համար ստեղծված բավականին պարարտ հողի գոյության մասին. «Քերթուածը, ըլլալով, եւ գրելով այդ պահը (լուսաբացի, լուսեղեցության, Ա.Ա.) կը պահէ ինչ որ գաղտնի է, կը պահէ ինչ որ չի տեսնուիր երբեք, ինչ որ տեսանելիութեան եւ գոյաւորութեան աղբիւրն իսկ է: Կը պահէ զայն, որովհետեւ ամէնէն վտանգուածն է նաեւ, միշտ անհետ կորուստի ենթակայ: ...Հասկնալի՞ է այն ատեն թէ խօսքին այս էական «լուսեղեցութիւնը» չըլլայ Վարուժանի բնազանցական «Լոյսը», որուն պիտի ձգտէր բանաստեղծը, ոչ ալ մեր գաղափարախօսութեան աւանդական փարոսը, որ տկար կամքերը պիտի ջղապնդէր, որ մոլոր միտքերը պիտի ուղղէր...Հասկնալի՞ է նաեւ՝ թէ Սարաֆեան իր ամբողջ կեանքի ընթացքին, յամառ վերապահութեամբ, զգուշացեր է կասկածելի «ժողովրդականացումներէն»[5]:

---

[5] «Գոյաստեղծ բանաստեղծ մը», «Ցառաջ», 6 մայիս 1984թ., Փարիզ:

Այն հանգամանքը, որ (տեղատվություն, ասել է, թե՝ ինքնազննում, և մակընթացություն, որ նույնն է, ինչ՝ ծավալվող իրավիճակների մեջ գտնվող սևեռյալ անհատի կողմից՝ ելքի որոնում), այս ամենով հանդերձ նշմարելի է գիտակցականության վերագտնման «շարժում» և միևնույն ժամանակ՝ «արագություն»: Իրականությունը ավելի զգայելի դարձնելու միակ միջոցը մնում է արդեն սկսված, ընթաձիրում գտնվող «ճամփորդության» շարունակումը: Եվ ամենևին. «Զարմանալի չէ, որ ճամբորդութիւնը դառնայ յանկարծ աշխարհի ճանաչման միջոց, կարծէք արմատախլումը դառնար շրջուէր ու վերածուէր ճանաչման եղանակաւորումի... Ճանաչումի ծարաւը կը փորձէ բնանկար մը ստեղծել ու պարփակել, որ դադրի անհիմ իրերու ամբողջութիւն մը ըլլալէ, դառնայ գոյն, ձեւ, ձայն... աշխարհի ճանաչումը զուգահեռ կերթայ ուրիշ ճանաչման մը հետ, տրամախոհական նշանակալից շարժումով...»[6]:

Այս պարագային աշխարհաճանաչողությունը կարևորելի է ավելի, քանի որ ինքնաճանաչման հասած, վերջապես, երկփեղկվածության չափազանց տքնալից (նրա անհրաժեշտությունն զգացած) ընթացքը գոյության-շարունակումի ընթացքի հետ հարաբերած անհատի համար, ինքնությունն այլևս հասանելի «իրողություն» է: Ճամփորդության ավարտը ինքնաճանաչմամբ հաղթահարելի, «սկիզբն էր երկանց»:

Ճամփորդը՝ «չղջիկն է ափէ ափ» - սարաֆյանական հղումը, իրապես, ճամփորդության միայն մեկ՝ նպատակային (Հասնելիության, հանգրվանումի) երևույթի անդրադարձ չի, չսահմանափակվելով սոսկ հանգրվանային ընթացքի նկարագրականությամբ: Որքան էլ այն օժտված լինի զգայական հատու շեշտադրումներով և անհատի (գրողական) նկարագրի էքսպրեսիվ դիտարկումներով:

Ճամփորդը (և ճամփորդությունն իբրև հոգևոր արարողություն) ինքնօրինակ արարողակարգի ստանձնման իսկ պահից պետք է պատրաստ լինի նաև իրականության ըստ ամենայնի «յուրացման» առավել պատրաստ՝ անկանխատեսելի տեղատվությունների «դադարի» պահերին շրջուն հայացքով ընդգրկելու անցած ճանապարհի ողջ ընթացքը. քանզի ՍՏԱՆՋՆԵԼԻՆ որպես այդպիսին ՓՈԽԱՆՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ նախապայմանավորող անհրաժեշտ գործոն է, առանց որի որևէ իրական հիմք չի ստեղծվի ժառանգորդականության համար:

Ասել է, թե Սարաֆյանն այդ հիմքը տեսնում, արժևորում էր հիմնովին՝ անցյալներկա («ափէ ափ») սահմանաբաժանների տարածականության «գրավումով»: Այսպես է ընթացք տրվում Մեծ նավարկությանը (արդյոք հայության անցած ողջ ճանապարհը մեծ նավարկություն չէ՞ պատմական քառուղիներում գրեթե միշտ ինքնապահպանման համար մղած պայքարով, ժամանակ առ ժամանակ ազգային պետականազուրկ կարգավիճակով, այս կամ այն պետության գերիշխանության տակ որպես ազգային անհիրավված փոքրամասնություն գոյամաքառելով, ցեղասպանությամբ, անդառնալիորեն բնօրրան կորցնելով և ի վերջո աշխարհասփռվելով, որ իրականում անվերադարձ ԱՔՍՈՐ եղավ, մի ողջ ժողովրդի սփյուռքացումը):

---

[6] Գր. Պրլտեան, «Տրամ». էջ 375-376:

Արևմտյան քաղաքակրթության արժեքներ և նոր ժամանակների պահանջ՝ հաղորդվելու այդ արժեքներով՝ «մարդկային խոր պաշտամունքն» զգալով: Այս հանգամանքը չափազանց ընդհանրացյալ է «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն» ժողովածուի համար: Մակընթացմամբ «ողողված» անհատն իրականության մեջ և իր հոգևոր աշխարհում տևապես ցնցում զգալով (նաև ձերբազատվելով իր Ես-ի և իրականության միջև եղած անջրպետից), արդյոք ի վիճակի է ըմբռնել իր ներքին հակասանքի արդյունք նոր գոյավիճակի բարեբերությունը. «Ողջո՞ւն ծովուն, որ այս նոր վերածընումըս օծեց»: Ասել է, թե առ իրականությունն ունեցած երախտիքի արտահայտումով ինքնության անժխտականության պահանջ է զգացվում: Ո՞րն է այդ պահանջի իսկությունը պայմանավորող հիմնորոշելին. և ինչո՞ւ հենց ճամփորդության ավարտ ենթադրող գոյավիճակային պայմաններում (երբ ենթադրվում է շարունակելի ընթացքի, իմա՝ ինքնության) դրսևորման նոր ժամանակ և ընթացք, մեկ բառով՝ ժամանակաընթացք:

Ժամանակն, իբրև նոր պայմաններ առաջադրելու միջոց (հիմնական), ընթացքն՝ իբրև վիճակի անավարտությունը համադրող անհրաժեշտություն. «ճամբորդութիւն մը ուրեմն, կրկին դէպի ինքնութիւն»: Իրականություն՝ իրականության մեջ. իր աներևույթ կողմերով, չափազանց անտեսանելի, բայց կյանքի «պարտադրած» շարժմամբ, արագությամբ՝ զգալելի, որ հարատև է, քանզի «բացուող լայն վանդակ» կյանքի վերհատնումից Անտառն իմաստավորուն «գոյութենական» վիճակների ծավալումներ է ունենում՝ կախված անհատի հոգևոր «բազկերակի» տրոփյունների ուժգնությունից: Թե ինչպիսի «պայքար» է ծավալվել Սփյուռքի և Անհատի միջև՝ հոգեբանական այլազան դրսևորումներով՝ երբեմն նույնիսկ անլուծելիության հասնող, բարդությամբ իրավիճակներ խճողող:

Համենայն դեպս, գրական (հետևապես՝ կյանքի) փորձառական մի ժամանակաշրջան (այսպես կոչված՝ սփյուռքանալու ժամանակաշրջան) ապրած սերունդը և առանձնապես Ն. Սարաֆյանը, չէր կարող չունենալ կրկնակ իրականության զգացում (ինչպես վերը նշեցինք՝ իրականություն-իրականության մեջ): Այս զգացումն ունենալը որոշապես անխոցելիություն էր ենթադրում այն պայմաններում, որ հրահրել էր սփյուռքյան գոյավիճակը: Իսկ նրանք այդ գոյավիճակի իրավ-ճշմարտացի կրողներն էին: Ասել է, թե՝ մաքառողները...

Քաղաք և քաղաքակրթություն՝ սարաֆյանական կերպընկալումը որոնման (ազգային ինքնության գտնումի) հրամայականով է պայմանավոր. «Ահա մեղքը (նկատի ունի հավաքականության գոյությունը՝ ոչ այնպիսին, ինչպիսին իր պատկերացումն է, Ա.Ա.) անոր որ ծնած է Սփիւռքի մէջ, կրօնքին վերջալոյսին եւ գիտութեան արշալոյսին միջեւ: Դատն ժառանգութեամբ մը... Տարբեր եմ ամէն վարկեանի: Ի վերջոյ անծանօթ մը ես ինծի: Ո՞վ եմ: Ո՞ր ազգին, ո՞ր երկրին զաւակը: Բոլոր դատնութիւններովս կը զատուիմ աշխարհէն: Բայց ցեղային ինքնութիւն մը պահելու գովելի ծառացում մը չէ ասիկա, թէեւ կը կրեմ անիրաւուած ցեղիս ճակատագիրը: ... Բայց ի՞նչ է իմ ուզածս, ոչ ուրիշ բան եթէ ոչ հաշտեցնել կեանքին գեղեցկութիւնը իր անհեթեթութեան հետ, գտնելու հաշտութեան եզր մը մարդոց եւ իմ միջեւ,

փրկել զիս մոռացումէն արուեստին շնորհիւ: ... գրել անձս՝ երբ ան կը քալքայուի, չտառապիլ մահէն»[7]: Վիճակն ավելի է պատկերալից, ընդհանրացնող է դառնում, քանզի, «Քաղաքակրթութեան քառսը պատկերն իսկ է», ըստ Սարաֆյանի, Սփյուռքին:

Այսպիսով, քաղաքակրթությունը հավաստի կոված է, որպեսզի անհատ-ճամփորդն ինքնարտահայտման առավել լայն հնարավորություններ ունենա: Ասել է, թե դրսևորի ժամանակի հրամայապահանջ որոշ իրողություններ, որոնք ոչ միայն կենսունակ են, այլև անհատ-հավաքականություն հիմնորոշելի խնդիրներում պարզեցումներ մտցնող. «Սեփական ներաշխարհի ու մանաւանդ սեփական անցեալին մէջ այս ուղեւորութիւնը, որուն կ՚ընկերանան ցաւն ու կասկածը, սեփական եղելոյթի տաժանքին այդ ստուերները՝ բանաստեղծի մէջ կը ստեղծէ ինքնացման նոր հեռանկար մը, որ տեղատուութեան փուլի ինքնացումէն կը տարբերի որոշ օրինաչափութիւններով...»[8]:

Որո՞նք են վերոհիշյալ «օրինաչափությունները», որոնց կամա-ակամա վերապահվեց այնպիսի «դեր», որ օգտանպաստ պիտի լինեին տակավին արևմտյան իրականության «տենդի» մեջ գտնվող (բայց ոչ՝ տենդահյուծ) ազգային հավաքականության համար:

Պատահական չէ, որ Սարաֆյանի ստեղծաբանությանը անդրադարձող սակավաթիվ վերլուծաբանները (Գր. Պոլտյան, Հ. Քյուրքչյան) չափազանց խնդրահարույց են համարում բանաստեղծի գրողական արարքի ամենամասնահատկալից «բևեռը»՝ ուղևորությունը կամ, որ նույն է՝ ճամփորդությունը: Ըստ այդմ ճամփորդի լինելիության հարասացության այնպիսի «առաջադրումներ» անում, որ Սարաֆյանն իբրև սոսկ բանաստեղծ չի ընկալվում, ներկայացվում նրանց կողմից, այլ ինքնացման հոգեվիճակ ապրող, դրանով իսկ հրահրող՝ առ հավաքականությունն ունեցած հոգևոր կազդուրման իրապաշտական ձգտումները, անհրաժեշտ և կարևորող՝ «Գոյաստեղծական ոլորտի անզանցելիությունը» (Հ. Քյուրքչյան), որ նույնն է, թե անտես չառնել անցյալ-ներկա հոգևոր թանձրացյալ նկարագիրը՝ ժառանգությունը, այն ավանդելի դարձնել, քանի որ.

Մերկ ահա ես, մեզ ծնող
Ծովուն առջեւ, կուրծքս լայն, հովերուն դէմ... պաղ, հսկայ
Կանչին մէջ յարափոխ:
Հրճուանք: Ողջոյն իմ ներքին հակասանքիս,
Ողջոյն մեծ
Մակընթացման ողողող:
Ողջոյն ծովուն , որ այս նոր
Վերածընունդս օծեց:

---

[7] Ն. Սարաֆյան, Վէնսէնի անտառը, էջ 38-40:

[8] Պ. Սարաֆյան, Ճափաձո երկեր, էջ 494:

Վերտին քաղաքակրթության և անհատի լինելության (անհատի. որ ճանապարհ է անցել. վերադարձի կամ ճշմարտության գտնումի ակնկալիքով) խնդիրը. ավելի առարկայական նպատակադրող. այն է. արդյո՞ք իր «ելման կետը» (և ողջ ընթացքը. որ տարրալուծվեց ժամանակի մեջ). որ հոգևոր հեղաբեկումների և տքնումի մի ողջ. ընդգրկուն «ճշմարտություն» էր իր մեջ ներառում. գտնացում բերե՞ց «առաջնորդող ոգուց» ծնված անդադրում «հոգուն». որ նույն ինքը՝ անհատն է իր խտացյալ կենսագրությամբ կամ հավաքականության ոգեկիր-վստահյալը:

Իրականության դեմ հանդիման (որ ինչ-որ տեղ նշանակում է՝ «հայութենէն հեռացումը մօտեցում է հայութեան «ոգիին») լինելու պատեհությունը՝ այլակերպումով, «վերածընումով»» է պայմանավորելու անհատի փնտրտուքը.

Լուսինին լոյսը հեղուկ՝ ճերմակ ճամբայ մը է լոի.
Ուրկէ աստղերը կարծես
Պիտի երթամ անդարձ՝ ես...
Ան ապագան է. բիւրեղ՝ որ անհունէն կը բղխի:

(Լուսնի լոյս)

Այն, ինչ ապագայի կերպավորումն ունի, անկասկած, նաև, անդարձ, «երթալուն» է զուգահեռվում: Մի տեսակ վճռականություն է հորդում նաև ապրածից («կարօտ մը զիս կը մղէ»): Քանի որ անհատն իր երազի անկատարության զոհն համառաբար չէր ուզում դառնալ: Ավելին, իրականությունն այդ երազով և նրա շնչառու զորությամբ պետք է առավել խորքային իմաստ ստանար, նաև իմաստնացած կյանքի ընձեռած հնարավորությանց շնորհիվ՝ (ճանաչողությամբ) անհատի հավաքականության գոյությունը: Համենայն դեպս, երազի և իրականության սահմաններն զատորոշելու մի ճիգ է նաև անհատի, գոյապայքարի փաստը, մանավանդ, երբ «կը բարձրանար՝ հոգիս յորդ ծուխի մը պէս կայծկլտուն»:

Երա՞զս էր որ կը ցոլար,
Կը ընդարձակէր ամէն բան,
Կը կերտէր կեանքս, անոր վառ
Խորք մը տալով անսահման,
Թէ՞ կեանքս էր որ միշտ կու տար
Զայն՝ ծոցն ի վեր իր խորին,
Զերթ յայտնութիւնն անկատար
Իր ապագայ պատկերին:

(Երազ եւ կեանք)

Ծարունակաբար նկատելի է երկվություն ապրողի կամ երկվություն-երկփեղկվածությունն իբրև հոգեվիճակ «կրողի» (Ափյուռքն իբրև ժամանակ ապրողի) «պահվածքի» անհավասարակշռությունը: Կարծես մի տեսակ ոչ ավարտուն վիճակի

«պարտադրանքով»՝ անհատի վեհերոտությունը երբեմն-երբեմն իրեն զգացնել է տալիս: Բայց ոչ այն ուժգնությամբ, որ հոգեվիճակի «անավարտությունը» տևապես որեն շարունակվի: Այն, ինչ չափազանց վնասաբեր ներգործություն կունենա իր ընթացքն ինքնավերահսկող անհատի համար: Որքան էլ.

Ճամբորդն եմ ես,
Սուտի, ճիգի, տառապանքի օրէ մը վերջ

(Մեկնում)

Այնուհանդերձ.

Օ՜, մեր կեանքը արկածալից:
Դարերն՝ հոսող աղբիւրներ՝ լայն, յորդառատ կը հոսին:

(Լուսարձակներ)

Այսչափ կարևորության ընծայումը իրականության արկածախնդրական-հեղհեղուկ նկարագրին, մասնավորելով՝ քաղաքի ժխորն ու «ողբերգու թռչուններու», «փողոցներէն լոյս սփռող գինիներու» քառսալից խրախճանքի նկարագիրը՝ հանդարտ «ընդվզումով». «Կը բաբախէ սիրտը ու կ'որոտայ անհունութիւն մը ներքին...». ոչ միայն դժվար է երևակայել, այլև «անորսալի»՝ իրականության մեջընդմեջ «անցումները», նրա տևողականությունը, ոիթմը. «Կը գլորի պարապութիւնը հիմա»: Ավելին՝ անշրջանցելի է ժամանակ-իրականություն (իբրև միախառն հոգեվիճակի դրսևորում), նաև երբեմն հակադրալից «իրողությունների» ողջ ընթացքը, բայց «արձանագրելի» ուրույն անհատականություն ու գոյակերպ արդեն իսկ դրսևորած անհատի կողմից: Չափազանց զգայալից անհատի, որ «դարերով սպասուած երազի» սարսուռի (բայց ոչ համակերպ, այլ պոռթկուն) կրողն է.

Կը դողդողամ ամէն անգամ՝ որ կանցնիս վրայէս,
Վայրագ ու թովիչ թռչուն...:

(Սաւառնակ)

«Հոգիս վայրագ՝ կը խմէ անյագօրէն՝ հոսանուտ տարածութիւնը»՝ խոստովանումն ամենևին ժամանակամերժ պահվածքի արտահայտություն չէ, ոչ էլ ժամանակի «թելադրութեամբ» անհատի հոգեխեղման նշանակալիության դրսևորման ապացույց: Բառն ընդգծյալ իմաստ է ստանում, քանի որ երբեմնի «մարդատեաց հոգին» է, որ տակավին տարածության մեջ, «անհունութիւն մը ներքին» ունենալու կարոտանքն ապրելով, անհաղորդ է իրականության ալեբախումներին կամ գոնե անտես է առնում, անմասնակից է դառնում քառսի և «գլորուող պարապութեան» քմայքներին՝ ինքնության դիմադարձումների ուժականությամբ կամ որ, ինչպես մեկ այլ պարագայի Հ. Օշականն է իրավացիորեն նկատում. «մեծ քաղաքակրթութեան մղձավանջը մերինին վրայ»: Հետևապես, քաղաքակրթության և քառսի նույնականացումն ինչ-ինչ առումներով վերստին խնդրականացնում է ինքության ճանապարհի իսկությունը, քանի որ.

Մենք հասնինք հոն, ուր լոյսեր մեր անձն ամբողջ կը զբտեն.
Կը փլուեն լոյս մը հեռուն:

(Ցանցնուինք. Սէր. մեր սիրոյն)

Եվ քանի որ «քաղաքներուն եւ հողերուն վրայէն» անցման պահը աշխարհի (հատկապես՝ արևմտյան) ճանաչում է ենթադրում «փնտռտուքէ մը վերջ», ապա.

Քաղաքն օտար՝ էլեկտրական ակռաներով,
Հինգ յարկ վարէն բացուած երախ՝
Ցնորաբեր, զիս վար քաշող խորխորատ:

(Տեսիլք)

Իրական «տեսիլքի» ընկալումը զուտ աշխարհաճանաչողական նշանակություն ունենալուց զատ, նաև պայքար է՝ փնտրտուքի ընթացքում գտածը (ճանապարհը) անկորուստ պահելու համար. «չար ու բարի ոգիներ օրրանիս շուրջ, արտիս համար կռուեցան»: Համենայն դեպս, դժվարին մի հանգամանք՝ վերստին եվրոպական քաղաքակրթության բարդահարույց իրականության հետևանք:

Որքան էլ հոգին ազատ, անկաշկանդ լինի, այնուամենայնիվ, իրականության ԿԱՊԱՆՔՈՒՄԻՆ ինչ-որ տեղ, կամա ակամա, ենթակա է, քանզի ԵՆԹԱԿԱՅԻ (անհատի) փոխհարաբերության մեջ գտնվելու վիճակն արդեն (իրականության հետ) ենթադրում է հարաբերությունների կազմավորում, ըստ այդմ, անհատի ներաշխարհի կազմալուծում՝ տեղի տալով «օտար թափանցում»-ների առաջ: Այնուամենայնիվ, ըստ չրաքյանական բանաձևման, ամեն անհատ. «ամեն հոգի՝ տաճարի մը կանգնումին համար կանխորոշուած խորհրդածուփ ամայութիւններ ունէր... մենասէր որ կը յառի, կը գնէ, կը խփի, ու կը թուի մեղմել, արգիլել ջանալ որեւէ օտար թափանցում, վասնզի ալ ներսը անմեղութիւն չկայ, ու մանաւանդ կարծես մերժել արտաշխարհի նողկութեանց տեսարանին ազատ մուտքը՝ ապաքինելու կարօտ հոգւոյն մէջ, որովհետեւ անոնցմով չարատաւորելու՝ ուրեմն անոնց ներելու չափ վճիտ չէ անիկա...»[9]:

Հարկ կա՞ մասնորոշել, ընդգծելի դարձնել, որ առ արտաշխարհն ունեցած վերապահ ժխտականությունն ամենևին արդյունք չէ հոգու, մտածումի ընդմտության, մանավանդ Ինտրայի պարագային, որ իմացականության «խորհուրդ մըն է անմեկնելի»: Խնդրահարույցը, ինչպես Ն. Սարաֆյանը գրում է «Վահան Թեքեան» հոդվածում. «Բախում՝ արտաքին աշխարհին հետ: Հոգեկան առանձնութիւն: Ներքին ինքնաճանաչում: Ներքին հակասութիւններ: Ներքին եւ մշտական հալածանք»[10]:

Վերոբերյալ հատվածը Վ. Թեքեյանի ստեղծագործությանը բնորոշ լինելուց զատ, նաև հոգեմակընթաց վիճակներ ապրած անհատի, արտաքին «երևույթներուն»

---

[9] Ինտրա (Տիրան Չրաքեան) «Ներաշխարհ», Կ. Պոլիս, 1906 թ., էջ 106:
[10] Ն. Սարաֆեան. Երկեր, էջ 159:

նետած հայացքի դրսևորանք է. ըստ այդմ ԱՌԱՆՁՆՈՒԹՅՈՒՆ ապրած, ԻՆՔՆԱՄԱՆԱՁՄԱՆ հասած անհատի՝ հավաքական ըմբռնում:

Եվ եթե իրականության համար սահմանելի ՔԱՈՍԻ վիճակը վերոբերյալ նկատառմամբ՝ «ստեղծարար» է, ապա. «Մահուան մէջ կեանքն է գալիք, որ կը սիրեմ հիմա ես», սարաֆյանական հոգումը ընդհանրական է ոչ միայն այս քննարկվող շրջանի ստեղծագործության համար:

Արդյո՞ք մտածումի տարողության այլ շերտեր չի ենթադրվում, մանավանդ, երբ ապրումի շիկացող մթնոլորտն է միշտ առկա՝ ընդմեջ, արդեն քանիցս նշված անհատի և իրականության, երբ ճամփորդությունը արարողություն է՝ անցյալից ներկա «հոսող»: Եվ այս ընթացքում կյանքի հեղաբեկումներն իր հոգու մեջ ներառելով (վերածնում, վերազարթնում պայմանավորող հոգու), առավել «սէր եւ անհուն երանութիւն» և զգաստացումի գիտակցում է հաղորդում մահվան (հարության) գաղափարը վերահմաստավորողին.

Կը շքեղնայ ամէն գիշեր, սեւ մայթին վրայ, ջուրն անձրեւին,
Երբ լապտերին լոյսն իր վրայ Յիսուսի պէս կը տարածուի:
Աստղեր, բոցեր կ՚արտացոլան, կը թրթռան արծաթ թելեր:
Անդրաշխարհ մը անդորր ու պերճ կը ծաւալի իր ծոցն ի վեր:
Եթէ լըքէ քեզ կեանքն այդպէս, որով, օ՜, մահ, կ՚աղուորնաս դուն.
Իմ պատիս տակ, թաքնաթաքուր, օ՜ ինչ տրտում ողբերգութիւն:
(Կախարդական հալելի)

Քրիստոսի գոյ-գաղափարի խնդրի անդրադարձը չէ՝ մահվան գոյավիճակի զուգահեռումով, այլ ԱՍՏԾՈ Որդու ստեղծարարության (իբրև նախանիշ՝ կյանքի սկզբնավորումի), կյանքն անաղարտ սկսելու և այն պահպանելու հենց այդպիսին, որ ի վերջո սկիզբն ու վերջն ընդհանրանան. այսպիսի ընթացքն իսկ արդեն կատարելության միտում և եղանակավորում ունի:

Սարաֆյանի կողմից ճշմարտության որոնման խնդիրը այնքան ու այնպես էր անհրաժեշտվում, դառնում գիտակցության առաջնորդիչ կենսունակ գործոն, որ «սրբության ձգտողի» երկյուղանքով, նա իրականությունը դիտում էր որպես «մասնակից» անհատի «հոգևոր մաքրումի»՝ բարոյականի ըմբռնումի խնդիրների համապատկերում: Բայց այն, ինչ արարչական է ու նախասահմանյալ, բնավ ենթակա չէ քննման, արտաքին թելադրական ըմբռնումների խորապատկերի վրա. «Քրիստոնէութիւնը, որ աշխարհականը վաղանցիկ, պատրալիր գտած է, ձգտած է նաեւ բացատրել բանականութեան սխալ ըլլալը: Սխալական է եւ անքաւ՝ բացատրելու համար արարիչն ու անոր ստեղծագործութիւնը: Այն, որ կ՚ուզէ Աստուծոյ հասնիլ, պէտք է որ ջնջէ իր գիտակցութիւնը: Աստուծոյ հասնելէ վերջ, կ՚ունենայ ներքին լոյս մը, այլ գիտակցութիւն մը՝ որով կը տեսնէ բոլոր ճշմարտութիւնները»[11]:

[11] Ն. Սարաֆյան, Վէնսէնի անտառը, էջ 246:



Վարագ Ներսիսյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ՀԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐՈՐԱԿ ԸՆՏՐԱՆԻ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Պողոս Խաչատրյանի աշխատասիրությամբ և բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Դևրիկյանի աշխատակցությամբ «Հայագիտակ» հրատարակչությունը շքեղ ձևավորմամբ լույս է ընծայել «Գանձարան հայ հին բանաստեղծության» ծավալուն ժողովածուն: Գրքի ակնահաճո, հնավանդ արտաքին գեղեցկության համար, անշուշտ, պարտական ենք Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Երկրորդի ճաշակին ու կարգադրությանը, որի բարձր հովանավորությամբ իրականացվել է տպագրությունը:

Պ. Խաչատրյանն անվանի մտավորական է, գրականության հմուտ պատմաբան, հայ բանասիրության ձեռք բերած նվաճումները հիմնովին լուսաբանած գիտնական, բնագրագետ ու աղբյուրագետ: Ուստի պատահական չէ, որ ներկա ժողովածուն պատրաստելիս նա հանդես է բերել հայ հին բանաստեղծական ժառանգության քաջատեղյակություն, որը և կանխորոշել է գրախոսվող գրքի բնույթը, որակն ու առանձնահատկությունները:

«Գանձարան հայ հին բանաստեղծության» հատորը նախկինում լույս տեսած համաբնույթ ժողովածուների համեմատությամբ ամենից առաջ աչքի է ընկնում նյութի առավել լայն ու ամբողջական ընդգրկմամբ. աշխարհիկ բանաստեղծության հայտնի նմուշների կողքին գիրքը պատշաճ տեղ է հատկացնում նաև հոգևոր քնարերգության փայլուն արժեքներին: Պետք է իսկապես խոստովանել, որ այս երկրորդ շերտը մեզանում անցած տասնամյակներին մատնված է եղել որոշ անու-

շադրության: Այս պատճառով էլ հայ միջնադարյան բանաստեղծությունն ակամայից ստանում էր միակողմանի գնահատություն: Ներածական խոսքի մեջ միանգամայն ճիշտ է դիտված, որ «մեր հոգևոր բանաստեղծության մեջ՝ մեծասքանչ շարականներում ու հոգեբուխ աղոթքներում, խորհրդապաշտական տաղերում ու զմայլելի մեղեդիներում, հայոց քնարը նույնքան բարձրաթռիչ է, զգայնոտ ու վսեմ, որքան և աշխարհիկ բնույթի բանաստեղծություններում, և նրանց երկուսի միաձույլ ընկալումն է միայն, որ կարող է ճշմարիտ պատկերացում տալ նախնյաց ընդհանուր քնարերգության բովանդակային հարստության և գեղարվեստական բազմերանգության մասին» (էջ 5): Կարելի է վստահությամբ նշել՝ չկա միջնադարում գործածված գրական որևէ տեսակ, որ ներկա հատորի մեջ ընդգրկված չլինի իր մի շարք նմուշներով ու տարբեր դարերի մի քանի հեղինակների ստեղծագործություններով՝ շարական, ողբ, աղոթք, գովեստ, գանձ, հայրեն, խրատ, պարսավ, այլաբանություն, հանելուկ, հիշատակարան և այլն: Մյուս կողմից՝ «Գանձարանում» ընդգրկված բազմաթիվ հեղինակներ՝ Անանիա Շիրակացի, Հովհաննես Օձնեցի, Համամ Արևելցի, Անանիա Նարեկացի, Հակոբ Սանահնեցի, Կիրակոս Արևելցի, Գրիգորիս Պահլավունի, Ներսես Լամբրոնացի, Մովսես Երզնկացի, Մխիթար Սեբաստացի, Սիմեոն Երևանցի և ուրիշներ, առհասարակ առաջին անգամ են ներկայացվում մեր ժամանակների ընթերցող հասարակայնությանը: Իսկ եթե ավելացնենք, որ շատ հեղինակներ, օրինակ՝ Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Մովսես Խորենացի, Ստեփանոս Սյունեցի, Գրիգոր Հեռուացի, Ներսես Շնորհալի, Ֆրիկ և ուրիշներ, որոնք անցյալում թեպետ բազմիցս տեղ գրավել էին այլևայլ ժողովածուներում, բայց ներկա հատորում ներկայանում են նաև լայն շրջանառության չարժանացած տարբեր քանակի չափածո գործերով, ինքնին պարզ կդառնա, թե իր բովանդակությամբ որքան բազմազան, թարմ ու տպավորիչ է ստացվել «Գանձարանը»:

Ժողովածուի ողջ նյութը, նկատի ունենալով բանաստեղծության զարգացման բովանդակային ու գեղարվեստական ամենաընդհանուր հատկությունները, աշխատասիրողը խմբավորել է հետևյալ հինգ բաժինների մեջ. «Փշրանքներ նախամաշտոցյան շրջանի բանահյուսությունից», «Վաղմիջնադարյան բանաստեղծություն» (5-10-րդ դդ.), «Վերածնության բանաստեղծություն» (10-14-րդ դդ.), «Ուշմիջնադարյան քնարերգություն» (15-17-րդ դդ.) և «Նոր բանաստեղծության նախաշեմին» (18-րդ դ.): Սույն շրջանաբաժանումը ըստ ամենայնի կարելի է համարել հայոց հին գրականության պատմության աբեղյանական պարբերացման ստեղծագործական նորոգումը՝ չափածո արժեքների սահմաններում: Շրջափուլերի ժամանակային ընդգրկումները, որ նույնպես զգալիորեն ճշգրտված են, միանգամայն ստույգ են արտահայտում հայ հին բանաստեղծության զարգացման ընթացքն ու բաբախումները ինչպես ողջ գոյատևման, այնպես էլ ամեն մի ժամանակահատվածի համար՝ առանձին վերցրած: Մասնավորապես գնահատելի է 11-17-րդ դարերի 700-ամյա գրականությունը մի ամբողջ պարբերաշրջան դիտելու աբեղյանական մոտեցման վերանայումը, որն ըստ ամենայնի կարևորում, առանձնացնում է 10-14-րդ դարերի հայ բանաստեղծության բուռն ծաղկումն ու անշեղ վերելքը 15-17-րդ դարերի՝

ստեղծագործություններով առատ, բայց մեծ անհատականություններով սակավ քնարերգությունից: Ի դեպ, գրքի ներածական մասում աշխատասիրողն անդրադառնում է հայ հին բանաստեղծության զարգացման փուլերից յուրաքանչյուրի սեռում, բայց դիպուկ ու տպավորիչ բնութագրմանը՝ ընթերցողին որոշակի հստակ պատկերացում տալով այդ շրջափուլերի կարևորագույն առանձնահատկություններին՝ ժամանակագրական տեսանների, ժանրային հիմնական տեսակների, ազգային-հասարակական բովանդակության, տիրապետող աշխարհայեցողության մասին և այլն: Այսպես՝ «Վաղմիջնադարյան բանաստեղծություն» բաժնի կապակցությամբ նշվում է, որ այն «ընդգրկում է 5-րդ դարի սկզբից մինչև 10-րդ դարի վերջերն ստեղծված քնարերգությունը՝ կցուրդներ, շարականներ, տաղեր, նաև աշխարհիկ թեմատիկայով պահպանված հատուկենտ գործեր, որոնց բովանդակության ոգին և տիրապետող շեշտը եկեղեցական-քաղաքական մաքառումն է: ... Վաղմիջնադարյան քնարերգության մեջ ակնհայտ է Ս. Գրքի ազդեցությունը թե՛ աշխարհընկալման և թե՛ գեղարվեստական-արտահայտչական առումով: Հայոց քնարը որոշ իմաստով դեռ հավատարիմ արձագանքողն է աստվածաշնչյան օրինությունների և սաղմոսների, բայց հայացքն հառած դեպի մի սրբազան նպատակ՝ երկիրը դրսեկ նվաճողներից պաշտպանելու և անկախ թագավորությունը վերականգնելու» (էջ 6):

Ժողովածուն պատրաստելու համար օգտագործվել են բազմաթիվ սկզբնաղբյուրներ, հիմնականում՝ տպագիր: Եվ դրանք մեծ մասամբ ձեռագիր ընդօրինակությունների հիման վրա կազմված գիտահամեմատական հրատարակություններ են: Այնպես որ, գիրքն իր պարունակած նյութի գեղակշիռ ծավալով մերօրյա ընթերցողին է մատուցում արդեն ստուգված և գիտական հասարակայնության աչքում քննություն բռնած միանգամայն վստահելի ընթերցումներ: Տեղին է նաև ավելացնել, որ թե՛ գիտաքննական հրատարակություններից և թե՛ տարաբնույթ այլ աղբյուրներից օգտվելիս աշխատասիրողն ըստ անհրաժեշտության դրսևորում է ներկայացվող բնագրի վերաբերյալ իր ունեցած անհատական ընկալումը՝ եղած տարընթերցումների հիման վրա բնագրի մեջ ուղղումներ կատարելով, կետադրությունը հստակեցնելով, տողատման կամ տնատման կարգը վերանայելով և այլն: Բայց տպագիրներից զատ՝ երբեմն հարկ է եղել, որ աշխատասիրողը դիմի նաև գրչագիր սկզբնաղբյուրների: Ընդհանուր առմամբ օգտագործվել են Մաշտոցյան Մատենադարանում պահվող մեկ տասնյակից ավելի ձեռագրեր: Այս ձեռագրերի հիման վրա են կազմվել (կամ ճշգրտվել) Անանիա Նարեկացու, Գրիգոր Հեսուացու, Մխիթար Այրիվանեցու, Վարդան Բարձրբերդցու և ուրիշ հայտնի և անհայտ մի քանի բանաստեղծների գործերը:

Նախորդ նմանատիպ ժողովածուները միջնադարյան ժողովրդական երգը սովորաբար ներկայացրել են գրքի սկզբում, առանձին բաժնով՝ գրավոր բանաստեղծությունից անջատ: «Գանձարանը» այս խնդրում նույնպես հանդես է բերել նոր մոտեցում և ժողովրդական ու անհատական բանաստեղծության նմուշները մատուցել մեկ միասնական ընթացքի մեջ՝ իբրև ազգային բանաստեղծական զարգացման այս կամ այն պարբերաշրջանի գեղարվեստական ուրույն արտահայտություններ:

Մի կողմ թողած «Փշրանքներ նախամաշտոցյան շրջանի բանահյուսությունից» բաժինը, որ հասկանալի պատճառով կազմված է միայն հայ հին առասպելական ու վիպասանական երգերից, անհատական բանաստեղծությանը զուգահեռ ժողովրդական ստեղծագործություններ կան ընդգրկված գրքի երրորդ և չորրորդ բաժիններում (ի դեպ՝ երկրորդ բաժնում տեղ գտած «Ծէր պարատրաց վասն կոտորածին Վարազաբլրոյ» միավորը ճիշտ կլիներ ներկայացնել ոչ թե «15. Հովհան Մամիկոնյան» անվան, այլ «15. Ժողովրդական երգ» խորագրի ներքո): Առանձնապես ուշադրության է արժանի «Սասնա ծռերի» բնագիրը: Սա, լինելով Գ. Արվանձտյանի, Մ. Աբեղյանի, Գ. Հովսեփյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի գրառած պատումների զանազան մասերից հմտորեն կազմված մի միասնական հյուսվածք, ամբողջական գաղափար է տալիս ժողովրդական վեպի հիմնական բովանդակության մասին և միաժամանակ կարծես ցուցադրում լավագույն պատումների գեղարվեստական արժանիքները: Նման մոտեցման համար նմանատիպ ունենալով Կ. Մելիք-Օհանջանյանի փորձը՝ աշխատասիրողը դրվագների ընտրության տեսակետից գնացել է ինքնուրույն ճանապարհով:

Գիտականորեն լիովին պատճառաբանված է հայրենիքի ստեղծման ու գնահատման հարցում աշխատասիրողի դրսևորած հայացքը: Ելնելով ձեռագրական իրողություններից և հենվելով Մ. Աբեղյանի ու Աս. Մնացականյանի կատարած հետազոտությունների վրա՝ Պ. Խաչատրյանը իրավացիորեն մերժում է հայրենները 16-րդ դարի խառակոնիսցի աշուղ Նահապետ Քուչակին վերագրող շինծու վարկածը: Գրքում նա ներկայացնում է հայրենների երեք հիմնական շերտեր. ա. գուսանական հայրենններ, որ առկա են դեռևս 16-րդ դարից առաջ գրված որոշ ձեռագրերում, բ. Ակնա հայրեններ կամ Ակնա անտունիներ, որոնք գրառվել են 19-րդ դարի վերջերին ժողովրդական ասացողներից, և գ. հեղինակային փոքրածավալ հայրեններ: Սրանք ունեն խոհախրատական բնավորություն և կապվում են Հովհաննես Պոլուզ Երզնկացու, Ֆրիկի, Վարդան Բարձրբերդցու, Հովասափ Սեբաստացու և ուրիշ բանաստեղծների անունների հետ, որոնց կազմից իսպառ բացակայում է Քուչակի անունը:

Քանի որ այսօր էլ երբեմն գրական շրջանակներում, վկայակոչելով Ա. Զոպանյանի «Նահապետ Քուչակի դիվանը» (Փարիզ, 1902) գիրքն ու Ե. Չարենցի «Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա» տողը (գրված 1920-1921 թթ.), թեթև շնչով փորձ է արվում վերջնականապես անառարկելի համարել Քուչակին հայրեններ հեղինակ ճանաչելու վարկածը, ուստի Պ. Խաչատրյանը գրքի «Կենսագրական տեղեկատու և ծանոթագրություններ» բաժնում (էջ 903-905) ըստ էության ցույց է տալիս, որ թե՛ Զոպանյանը և թե՛ Չարենցը խնդրի կապակցությամբ նման ըմբռնում ունեցել են մինչև Աբեղյանի «Հին գուսանական ժողովրդական երգեր» հիմնարար աշխատության հրապարակումը (1927-30, 1931 թթ.), երբ ողջ հայ մտավորականությունն էր այդպես ընդունում: Բայց Աբեղյանի ուսումնասիրության արդյունքներին ծանոթանալուց հետո երկու գործիչներն էլ փաստորեն վերանայել են իրենց հայացքները: Զոպանյանը 1940 թ. առանց «Նահապետ Քուչակ»

հեղինակային նշումի հրատարակեց իր «Հայրենիներու բուրաստան» ժողովածուն, իսկ մեծն Չարենցը 1932 թ. գրած «Գովք խաղաղի, գինու և գեղեցիկ դպրության» ստեղծագործության մեջ «տվեց հայրենիների մի այլ բնութագրում՝ կարծես ըստ Աբեղյանի վերաճշտելով իրեն.

Հասել եմ տաղեր գուսանական,
Հայրենիներ ռամիկ և ռամկական
Եվ անտունիներ թափառական...»:

«Գանձարանում» զգալի տեղ են գրավում, այսպես կոչված, Անհայտ բանաստեղծների կամ Անհայտ տաղասացների գործերը՝ թվով 32 ստեղծագործություն: Սրանցից ութը՝ «Ծաղկեցաւ ծառն կենաց» (էջ 471), «Թագուհի մի ես տեսայ» (էջ 554-555), «Գայլն ու արջն ու աղուեսուկն», «Ահա ցնծայ ծովն ու ծփայ», «Մեր մեղքն է արեր», «Վայրի հատուկ մի բռնած» (էջ 603-611), «Կանչէ՛, կռունկ, կանչէ՛» և «Պետրոս երազ էր տեսեր» (էջ 744-746) սկսվածքով գործերը, բանասիրության մեջ համարվել են ժողովրդական երգեր: Բայց աշխատասիրողը, որ առհասարակ բանաստեղծական հորինվածքի ոգին, շունչն ու ոճական նրբերանգները նկատելու սուր աչք ու հայացք ունի, դրանք առաջին անգամ իրավացիորեն ներկայացնում է որպես անհատական ստեղծագործություններ:

Ավելացնենք, որ ինչպես գրքի ներածական մասը, այնպես էլ հեղինակների կենսագրական տեղեկատուն և ծանոթագրությունները շարադրված են կուռ, հընտակ և ընտիր հայերենով, կարևորագույն փաստերի վկայակոչմամբ: Որպես անխախտ սկզբունք՝ այստեղ տրվում են օգտագործված աղբյուրների մատենագիտական տվյալները: Բառարանը, որն ամփոփում է մեծաքանակ օտար փոխառությունների և այսօր արդեն անծանոթ, վաղուց շրջանառությունից դուրս մնացած հայերեն մի շարք բառերի բացատրությունները, կազմված է բացառիկ զգուշությամբ և մեծապես օժանդակում է բնագրերի ճիշտ ընկալմանը:

Մատնանշված, նաև չհիշատակված բոլոր արժանիքներով հանդերձ, այնուամենայնիվ պետք է խոստովանել, որ «Գանձարանը» զերծ չէ որոշ թերություններից: Զանց առնելով մի շարք մանր-մունր վրիպումները՝ հարկ ենք համարում անել սկզբունքային նշանակություն ունեցող երեք էական դիտողություն, որ բացառապես վերաբերում են շարականներին:

ա. Վարդան Արևելցուն (1198-1271) հատկացված չորս շարականներից վերջին երկուսը՝ «Նմանեալ Մովսէսի տէր վարդապետ» և «Անճառելի շնորհօք լցեալ» (էջ 312-313) գործերը, նրա գրչի արդյունքը չեն: Սա հաստատվում է այն իրողությամբ, որ տվյալ շարականները «Սրբոց թարգմանչաց» կանոնի «Աքանչելագործ Աստուած» հարցի (գործատնով հանդերձ) և «Որ զշնորհս աստուածային» ողորմյալի հետ առկա են դեռ 1193 թ. ընդօրինակված Շարակնոցում, որտեղ կանոնն ունի «Մեսրոպայ վարդապետի» խորագիրը (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 9838, էջ 99բ - 100ա): Սույն ձեռագրում կանոնից բացակայում են «Որք

զարդարեցին տնօրինաբար» և «Որք թագաւորաց ազգաց և ազանց» օրհնությունները, որոնք հետագա հավելումներ են և իսկապես՝ Վարդան Արևելցու ստեղծագործությունները:

բ. «Գանձարանում» Պետրոս Գետադարձի (վախճ. 1058 թ.) անվամբ են ներկայացված «Մերձեցայ ես ի դուռն գերեզմանին» և «Անսկիզբն Աստուած սկիզբն արարչութեան» սկսվածքով շարականները (էջ 215-216), որոնք վերցված են Ներսեսեղոց կարգի ԴՁ շարքից: Թեպետ շարականագիր հեղինակների մասին միջնադարյան գրավոր աղբյուրներից շատերն իսկապես հիշյալ կարգն ամբողջովին հատկացնում են Պետրոս Գետադարձին, այնուամենայնիվ փաստերը ցույց են տալիս, որ այդ կարգի բոլոր գործերը նրանը չեն: Հայտնի է, որ ԺԱ դարից հետո, այսինքն՝ խլիկյան խմբագրությունից սկսած (ԺԲ-ԺԳ դդ.), Շարակնոցը ենթարկվել է էական խմբագրման: «Պետրոս Գետադարձի վերագրուած շարականները» հոդվածում Նորայր արքեպս. Պողարյանը ցույց է տալիս, որ Ներսեսեղոց կարգի մեջ կան մի շարք պատկերներ (դրանց թվում էլ՝ խնդրո առարկա «Մերձեցայ ես ի դուռն» և «Անսիկզբն Աստուած» շարականները), որոնք հին կարգավորման Շարակնոցներում բացակայում են բուն կանոնից և իբրև հետագա հավելումներ արտագրված են առանձին՝ ձեռագրերի նորոգված մասերում (ի դեպ՝ այդ շարականները բացակայում են նաև վերը հիշված թիվ 9838 ձեռագրի հին մասից): Այս փաստի հիման վրա Պողարյանն իրավացիորեն եզրակացնում է, թե տվյալ շարքի մեջ մտնող շարականները պատկանում են ոչ թե ԺԱ դ. կաթողիկոսին, այլ ավելի ուշ շրջանի շարականագիրների (տե՛ս «Սիոն», 1987, էջ 145-146: Ն. Պողարյան, Վանատուր, Երուսաղեմ, 1993, էջ 169-172):

Միշտ կլիներ, եթե «Գանձարանի» կազմողները Պետրոս Գետադարձի համար գործեր ընտրեին Ներսեսեղոց այն շարականներից, որ գրառված են դեռևս հին կարգավորման Շարակնոցներում:

գ. Որոշ շարականների հեղինակային պատկանելության խնդրում շփոթության պատճառ է դարձել այն հանգամանքը, որ կազմողները նյութերի ընտրությունը կատարել են ըստ «Ձայնքաղ շարականի» (Վաղարշապատ, 1888): Ղեկավարվել ավանդված այն տվյալներով, թե այս կամ այն կարգը կամ կանոնը «երգեաց» այս կամ այն շարականագիրը և ընտրություն կատարել «Ձայնքաղից», վստահելով սրա կանոններին, նշանակում է հեղինակին անզգուշաբար վերագրել նաև ուրիշի գործեր: Բանն այն է, որ քանակական կազմության առումով մեծ տարբերություն կա ավանդական «Շարակնոցի» և «Ձայնքաղի» նույնանուն կանոնների միջև: «Ձայնքաղում» կանոնները կազմված են ավանդական «Շարակնոցի» համապատասխան կանոններից՝ որոշ սկզբունքով մեջընդմեջ ավելացրած զանազան կանոններից քաղված նույն ձայների շարականներ (այստեղից էլ՝ «ձայնքաղ» հասկացությունը): Օրինակ՝ Սուրբ Սահակին վերագրված «Մեծի երեքշաբաթին» (Ավագ երեքշաբթի օրվա) կանոնը ավանդական «Շարակնոցում» բաղկացած է 7 միավորից (տե՛ս «Շարական հոգևոր երգոց սուրբ և ուղղափառ Եկեղեցւոյս Հայաստանեայց», Էջմիածին, 1861, էջ 239-243): «Ձայնքաղում» նույն կանոնը համալրված է ևս 9 այլ շարա-

կանոններով. որոնք տվյալ կանոնի մեջ են ընդգրկվել Վարդավառի երկրորդ օրվա, Ծաղկազարդի կյուրակեի, Աղուհացից հինգերորդ կյուրակեի, Ապաշխարության, Պենտեկոստեի, Ննջեցելոց, Հարության մեծացուցցեների, Նավակատյաց սուրբ Խաչի (ԲԿ) և Քրիստոսի ծննդյան յոթերորդ օրվա (ԲՁ) կանոններից (տե՛ս «Ձայնքաղ շարական», էջ 178-181): Պետք է ընդունել, որ ջարականագիր հեղինականերին վերաբերող հին ցանկերի «Սուրբ Իսահակ երգեց զկարգն Աւագ շաբաթուն» ցուցմունքը վերաբերում է միայն ավանդական «Շարակնոցի» Ավագ շաբաթվա կանոններին և ոչ թե «Ձայնքաղին»:

Նկատի ունենալով այս հանգամանքը և վերադառնալով «Գանձարանին»՝ անհրաժեշտ է նշել, որ չի կարելի Սահակ Պարթևի ստեղծագործություններ դիտել «Իջեր, Տէր, ողորմութեամբ քո յաշխարհ», «Լոյս՝ լուսոյ մայր» և «Ի ձայն փողոյ գալստեան քո» («Գանձարան», էջ 34, 36, 37-38) գործերը, որոնք «Ձայնքաղի» Ավագ շաբաթվա կարգի մեջ են մտել Պենտեկոստեի հինգերորդ օրվա, Քրիստոսի ծննդյան երկրորդ օրվա և Ննջեցելոց ԲՁ ջարքի կանոններից («Շարական հոգևոր երգոց», էջ 397, 28, 657): Նույն սկզբունքով խորհնացուն վերագրված շարականների կազմից պետք է օտարել «Ի քեզ եմք ապաւինեալ», «Այսօր ցնծան երկինք» և «Մայր լուսոյ Մարիամ սուրբ կոյս» («Գանձարան», էջ 40-44) միավորները:

Շարականների հեղինակային պատկանելության պարզաբանումը հայագիտության ամենաբարդ, դժվարագույն խնդիրներից է, որ հազիվ թե երբևէ սպառիչ լուծում ստանա: Այնպես որ, այս ասպարեզում տարակարծություններ, բանավեճ, վրիպումներ միշտ էլ լինելու են:

Ամփոփենք: «Գանձարան հայ հին բանաստեղծության» ժողովածուն ընդգրկում է մեր նախնյաց քերթողական արվեստի փայլուն ընտրանին՝ ճշտգրտված և առավել ամբողջական տեսքով: Այս տեսակետից հատորը կարող է օգտակար լինել հայ գրականության մասնագետների համար և միաժամանակ քրեստոմատիայի դեր կատարել բանասիրության ուղղությամբ բուհական ուսանողության մասնագիտացման գործում: Ժողովածուն իր արտաքին տեսքով ու բովանդակությամբ արժանի նվեր եղավ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ-ՈՒՄ

ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

2001 թվականի դեկտեմբերի 31-ը տոնական էր Մայր Աթոռում: Հոգևոր Ճեմարանի նոր ենջարանային մասնաշենքի հանդիսությունների սրահը հագել էր իր անդրանիկ ամանորյա զգեստները, քանզի պիտի ճանապարհեր հոբելյանգարդ նախորդ և դիմավորեր նոր՝ 2002 թվականը՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և ներկայությամբ Մայր Աթոռի միաբանության, Ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի, ուսանողության ու Մայր Աթոռի ողջ պաշտոնեության: Բոլոր ներկաները եկել էին իրենց բարիգալստյան մաղթանքն ասելու գալիք նոր՝ 2002 թվականին, սկսելու նոր տարին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ:

Տերունական աղոթքից հետո Ճեմարանի քառաձայն երգչախումբը, Ռ. Շարբաթյանի ղեկավարությամբ, կատարեց Հայաստանի Հանրապետության և Հոգևոր Ճեմարանի օրհներգերը, որից հետո Վեհափառ Հայրապետն օրհնեց բարիքներով լի տոնական սեղանը: Շնորհավորական և բարեմաղթանքի խոսքով հանդես եկավ Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանը.

«Վեհափառ և Շնորհազարդ Հայրապետ Ամենայն Հայոց,

Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ և Արժանապատիվ հոգևոր եղբայրներ, սիրելի դասախոսներ, սարկավագներ, ուսանողներ և հյուրեր,

Այսօր երրորդ հազարամյակի առաջին տարվա վերջին օրն է: Առանց խախտելու Մայր Աթոռի ավանդույթը, այս տարեմուտին ևս Մայրավանքի միաբանությունը, Գերագույն Հոգևոր խորհրդի պատվարժան անդամները, ողջ պաշտոնեությունը, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը վերստին հավաքվել են Սրբությանդ շուրջը, այս տարի արդեն Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սեղանատունը ճանապարհելու անցնող տարին, որը մարդկության և հատկապես հայ ժողովրդի և մեր Ս. Եկեղեցու համար եղավ մեծ, պատմական իրադարձություններով հարուստ տարի:

Պատմության գիրկն անցնող 2001 թվականը հայ ժողովրդին, մեր Սուրբ Եկեղեցուն, նաև մեր Եկեղեցու շրջափեյի արտահայտությունը հանդիսացող Միածնաէջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին բերեցին մի նոր ճանաչում, ես կասեի նաև՝ հոգևոր փառավոր հաղթանակ:

Այսօր աշխարհի տարբեր հորիզոնականներում Ամանորի ավանդական սեղանների շուրջ հավաքված, մարդկությունը ճանապարհում է անցնող տարին և նոր հույզերով, խոկումներով դիմավորում նոր տարին:

Մենք՝ զավակներս Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու անցնող 2001 թվականին հպարտորեն նայում ենք որպես մեր Եկեղեցու վերազարթոնքի ինչպես նաև հոգևոր հաղթանակի տարի:

Պատմության գիրկն անցնող հոբելյանական տարին Հայ Եկեղեցու պատմության մեջ Վեհափառության ձեռքով գրեց ոսկյա մի էջ ևս, և այսօր մենք 1700-ամյակի հանդիսություններին նայում ենք որպես Մայր Աթոռի և Հայ Եկեղեցու անվիճելի հաղթանակ, որին իրենց մասնակցությունը բերեցին տասնյակ հազարավոր հայորդիների հետ նաև Կաթոլիկ, Ուղղափառ և Արևելյան Եկեղեցիներն իրենց առաջին հոգևոր դեմքերով:

Հպարտ ենք բոլորս, որ ազգային-եկեղեցական իմաստով անցնող տարին անաստիման հոգևոր սնունդ բաշխեց համայն հայությանը և պատմության մեջ մտավ որպես Հայաստանյայց Եկեղեցու համար մեծ հաջողությունների տարի: Մեր Սուրբ Եկեղեցին Վեհափառության իմաստուն և գործնական անմիջական ղեկավարությամբ բոլորից հոգևոր զարթոնքի խուսափումնալից և բեղմավոր մի տարի ևս, որը մեզ ավելի է մոտեցնում մեր նախնյաց նախանձախնդիր ազգային ու կրոնական ոգուն և տասնամյակներով մոռացված մեր ավանդույթների վերականգնմանը:

Վեհափառ Տեր

Տարեմուտի այս երեկոյին թույլ տվեք ներկայացնել նաև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի անցնող տարին: Հաստատությանս տեսչական և դասախոսական կազմը, աջակցելով Ձերդ Սրբության ամենօրյա օրհնությամբ և ղեկավարությամբ, հոբելյանական այս տարում հնարավորություն ունեցավ բարձրացնելու կարգապահությունը և մանավանդ ուսումնական որակը Հոգևոր Ճեմարանում: Արդյունքում 2001 թ մեր ուսանողներից ավարտական պաշտպանեցին 38 սաներ, սարկավագական աստիճանի արժանացան 30-ը:

Այս տարվա Ջ լսարանի 24 սաներ արդեն ունեն իրենց ավարտական թեմաները:

Այսօր, Վեհափառ Տեր, մեզ համար նաև նվիրումի և ծառայության ուխտի վերանորոգման ժամանակ է: Լիազորված եմ մեր ողջ դասախոսական կազմի կողմից ներկայացնել Ձերդ Սրբությանը, որ այնքան ժամանակ, քանի դեռ ունենք Ձեր օրհնությունը, վստահությունը՝ դասախոսական կազմի և տեսչության ծառայության նկատմամբ, մենք Սրբությանդ առաջնորդությամբ պիտի ծառայենք անմնացորդ նվիրումով՝ առանց ավելորդ ցուցադրության, և պիտի ձգտենք ու ամբողջացնենք մեզ վստահված ուսանողության հոգևոր և մտավոր ճշմարիտ նկարագիրը, որպեսզի ճեմարանական այս սերունդն իր արժանիքներով դառնա 21-րդ դարում Հայ Եկեղեցու առաքելության շարունակողը:

Շնորհավոր Նոր տարի և զալիք Սուրբ Ծնունդ»:

Տեսուչ Տեր Հոր ողջույնի խոսքից հետո երգչախումբը կատարեց Տ. Գուխաջյանի «Լեբլեբիջիների խմբերգը»: Այնուհետև հանուն միաբանության Վեհափառ Հայրապետին բարեմաղթանաց խոսք ուղղեց Գերաշնորհ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը.

«Վեհափառ Հայրապետ մեր, Կաթողիկոս Ամենայն Հայոց,

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անունով պատիվ ունեմ խոսքս ուղղելու Ձեզ Սրբությանը, որպես ոչ միայն շնորհավորանքի խոսք, այլ նաև շնորհակալության: Առաջին հայտարարությունը, զոր կուզեմ ընել, եթե համաձայն են իմ եղբայրները, այն է, որ Դուք այս անցնող տարվան ընթացքին եղաք ամբողջ հայության «ՏԱՐՎԱՆ ՄԱՐԴԸ»: Ասիկա կրնամ առանց որևէ չափազանցության, ի խորոց սրտի, որովհետև պետք է տալ «հարկս հարկավորաց, պատիվս պատվավորաց»:

Վեհափառ Տեր,

Ձեր աթոռակալության առաջին օրեն, Դուք առիք շատ հիմնական քայլեր, որոնցմէ ամենեն էականն այն է, որ Դուք գացիք, այցելեցիք և երկար օրեր անցուցիք ամեն մի թեմեն ներս, Դուք լսեցիք մեր ժողովրդի ցավերը, լսեցիք մեր Եկեղեցիի վկայությունները և ամեն ճիգ դրիք բուժելու բոլորին ցավերը:

Երկրորդ կարևոր քայլն այն եղավ, որ Դուք հայրուկ խնամքով եւայեցաք Գևորգյան Հոգևոր Ճեմարանին: Ձեր խստապահանջությունը, կազմակերպչականությունը և ուշադրությունն ամեն ձևերով զորացուցին Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

Վերջին փառավոր երևույթը եղավ Երևանի նորակառույց Մայր եկեղեցիի մեջ երեսուներկու սարկավագներու ձեռնադրությունը, մեր վերջին դարերու պատմության մեջ աննախընթաց երևույթ, որ հույս ներշնչեց բոլորիս, թե մեր սերունդեն հետո ահա կուգա նոր սերունդ մը, որ կնվիրվի Եկեղեցվո ծառայության, որ ունի անհրաժեշտ պատրաստությունը, բայց ամենեն ավելի՝ հավատք մը, որ վստահություն կներշնչէ բոլորիս:

Հոբելինական տարվա ընթացքին Ձեր իրագործումները վեր են ամեն գնահատանքեն: Այստեղ կարևորագույնը արտասահմանի թեմերուն Ձեր այցելությունները եղան, այցելություն յուրաքանչյուր թեմի բոլոր եկեղեցիները, որով ճանչցաք արտասահմանի Ձեր ժողովուրդը, և անոնք ճանչցան իրենց Կաթողիկոսը:

Հայ Առաքելական Եկեղեցին պետք ուներ Ձեզի նման Կաթողիկոսի մը, որ դեկավարեր զայն «զավազանավ երկաթյավ»: Փառք կուտանք Աստուծո այդ մեծ շնորհին համար: Մենք վստահ ենք, որ ոչ միայն կատարեցիք, այլև պիտի շարունակեք կատարել բազում զարմանալի իրագործումներ, որոնց մասին թերևս մենք մտածում և կարծիք անգամ չունինք:

Վեհափառ Տեր,

Ես անձնապես և իմ հոգևոր եղբայրները տեսանք այս բոլորը և կապվի-ջանք Ձեզի վստահության զգացումով մը, թե Դուք պիտի ծրագրեք տակա-վին նոր իրագործումներ, որով պիտի զարմացնեք մեզ: Այս հրեկո, նոր տարվա այս սեմին, մենք կտեսնենք Ձեր մեջ այն հովիվը, որուն պատ-ռաստ ենք ծառայելու ի խորոց սրտի, ցիշեր ու ցերեկ, ամեն անգամ, որ կանչեք մեզ, որովհետև միայն ժողովներով չէ, որ գործը կկատարվի, այլ մանավանդ նվիրյալ պաշտոնյաներով, որոնք կկատարեն իրենց հովվա-պետին հանձնարարությունները:

Վեհափառ Հայրապետ, երեկ հրավիրված էի Նոր տարվա հավաքույթի մը: Այդ հավաքույթը կազմակերպած էր երիտասարդական այն միությունը, որ ուխտագնացություններ կազմակերպեց: Բոլորին հարցումն էր. «Սրբա-զան, հիմա, երբ փակվեցավ 1700-ամյակը, այլևս 1700-ամյակ չկա, եկեղեցա-շինություն չկա՞, նոր ծրագրեր չկա՞ն...»: Ես չկրցա հստակ պատասխան մը տալ Ձեր անունով, բայց ես ըսի. «Ես վստահ եմ, որ չի դադրիր եկեղեցաշի-նությունը, ոչ թե Գևորգյան հոգևոր ճեմարանի առաջնությունը և ոչ մի ծրա-գիր, որ սկսավ 1700-ամյակի առիթով, որովհետև ինչ որ սկսավ 1700-ամյա-կի առիթով, վերջ չի կրնար գտնել, որովհետև հոբելինական տարին ծնունդ տվավ նոր եկեղեցիի և նոր կյանքի, և այդ կյանքը հետզհետե ավելի պիտի առաջանա Ձեր առաջնորդությամբ»:

Մենք վստահ ենք, որ միշտ պիտի ուրախացնեք մեզ: Մենք 2002-ին կնայինք իբրև շարունակություն 2001-ին: Մենք վստահ ենք, որ պիտի կա-ռուցվին նոր եկեղեցիներ, հրապարակ պիտի գան նոր հրատարակություն-ներ, ավելի ու ավելի մեծ թվով ճեմարանականներ պիտի առնեն սարկա-վագության ուրարի քաղցր լուծը, պիտի ըլլան խմբային բազմահազար մկրտություններ, պիտի շարունակվին ուխտագնացությունները՝ կենդանի հավատքով և նվիրվածությամբ:

Այս եկեղեցիին Դուք նոր կյանք տվիք, նոր կյանքը 1700-ամյակի մեկ տա-րին չէ՛ր, այլ սկիզբը տարիներու շարքի մը: Մենք Ձեր բանակը պիտի ըլ-լանք, 2002 տարին ընելու մեծ հաջողությունների նոր տարի մը:

Հարգանքով և սիրով կմաղթեմ Ձեզի քաջություն, որ բնավ չէ պակսած Ձեզի, ծրագրում և իրագործում:

Երկա՛ր ապրիք, Վեհափառ Տեր»:

Այնուհետև երգչախումբը բոլորին հիացրեց «Քրիստոս ծնաւ» շարականի քառա-ձայն կատարմամբ, որին հաջորդեց դասախոսական կազմի շնորհավորանքի և ողջույնի խոսքը: Ի դիմաց Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսչության և դասախոսա-կան կազմի խոսք ասաց և Վեհափառ Հայրապետի Նոր տարին շնորհավորեց ճե-մարանի «Հայոց պատմություն» առարկայի դասախոս պրն Պետրոս Հովհաննիս-յանը.

«Ձերդ Սրբություն,
Գերաշնորհ Սրբազան Հայրեր,
Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր,
Գևորգյան Ճեմարանի մեծարգո դասախոսներ,
Սիրելի սաներ և ազնիվ հանդիսականներ.

Հնուց եկող ավանդույթ է, որ յուրաքանչյուր տարեմուտի Ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը, սաները հավաքվում են Ամենայն Հայոց Հայրապետի հովանու ներքո՝ դիմավորելու Ամանորը: Եվ ահա այսօր կրկին հավաքվել ենք այստեղ՝ Ձերդ Սրբության շուրջ, նոր՝ 2002 թվականը դիմավորելու և մեր սրտի խոսքն ասելու Ձեզ՝ Հայոց ազգընտիր Հայրապետիդ:

Տարվա ամենախորհրդավոր պահը Տարեմուտն է: Դա մտորումի, խորհրդածության, հեղադարձ հայացքի, արժեքների գնահատման պահ է: Դա նոր իրագործումները, նոր հույսերն ու ծրագրերը իմաստավորելու պահ է: Այժմ Գևորգյան Ճեմարանի տեսչությունն ու դասախոսական կազմը յուրօրինակ հաշվետվություն է ներկայացնում Ձեզ, Վեհափառ Տեր, և զեկուցում, որ անցնող 2001 թվականը Ճեմարանի համար եղավ նոր ձեռքբերումների և հաջողությունների տարի:

Վեհափառ Տեր, անգնահատելի է Ձեր դերն ընդհանրապես հոգևոր կրթական հաստատությունների և մասնավանդ Գևորգյան Ճեմարանի անխափան գործունեությունը կազմակերպելու և հետագա զարգացումն ապահովելու բնագավառներում: Առաջնորդվելով Հայոց յուսահոգի Հայրապետներ Գևորգ Դ-ի, Մակար Ա-ի և այլոց այն հպարտամբով, թե Եկեղեցին ուժեղ է և ամուր իր կրթված ու բազմակողմանի զարգացած հոգևորականներով, և որ Ճեմարանն է այն հնոցը, ուր կոփվում ու թրծվում են ապագա հոգևորականները, Դուք միշտ էլ Ձեր ուշադրության կենտրոնում եք պահում կրթական գործը՝ դա համարելով Ձեր գործունեության առաջնահերթ խնդիրներից մեկը:

Վեհափառ Տեր, Դուք Գևորգյան Հոգևոր Ճեմարանի խնդիրներին և ուսումնական գործընթացին առավել մոտից ծանոթանալու համար անընդհատ մասնակցել ու նախագահել եք մանկավարժական ժողովներին: Այժմ Ճեմարանի տեսչությունը կազմված է չորս հոգևորական և երկու աշխարհական անձերից: Դասախոսական կազմում ընդգրկված են 16 հոգևորականներ և 22 աշխարհականներ: Դասախոսներից շատերը գիտությունների թեկնածուներ և պրոֆեսորներ են, հանրապետությունում ճանաչված և մեծ հեղինակություն վայելող մասնագետներ: Նրանք լի են եռանդով ու կամքով՝ Ձերդ Սրբության կողմից իրենց առաջադրած խնդիրները ամբողջությամբ կատարելու: Հավատացնում ենք Ձերդ Սրբությանը, որ հանձին Ճեմարանի դասախոսական կազմի Դուք ունեք համախոհների միակամ, մտավոր մեծ ներուժով օժտված անձնակազմ, որը պատրաստ է Ձերդ

Սրբության գլխավորությամբ կատարելու ուսումնադաստիարակչական բոլոր այն ծրագրերը, որ դրված են Ճեմարանի առջև:

Ճեմարանում այժմ ուսանում են 120 սաներ: Նրանց գերակշռող մասը սովորում է բարձր առաջադիմությամբ: Գնալով ավելի ու ավելի է բարձրանում ուսման որակը: Վեհափառ Տեր, Ձեր անմիջական միջամտությամբ է, որ վերականգնվեց ավարտական աշխատանքների պաշտպանությունը Ճեմարանի հարկից ներս:

Ինչպես 2000, այնպես էլ 2001 թվականի ընթացքում տեղի ունեցան ճեմարանավարտ մի շարք սաների ավարտական աշխատանքների հրապարակային պաշտպանություններ: Ձեր անմիջական ցուցումներով Ճեմարանում կատարվել են նաև սարկավագական ձեռնադրության քննություններ: Քննությունները հաջող հանձնած սաները ձեռնադրվել են սարկավագ:

Վեհափառ Տեր, Դուք ամեն ինչ անում եք, որպեսզի Գևորգյան Ճեմարանը դառնա գիտա-ուսումնական հզոր կառույց, որպեսզի այն համալրվի ուսումնական անհրաժեշտ գրականությամբ, համակարգչային նոր սարքավորումներով, որոնք կնպաստեն սաների հոգևոր հարստացմանը և մտահորիզոնի ընդլայնմանը: Այս բոլորը ծառայում են մի գերագույն նպատակի:

Դուք բազմիցս նշել եք, որ Ճեմարանի դերը պիտի լինի ազգային, նրա իդեալներին նվիրված պատրաստական և ուսյալ հոգևորականներ պատրաստելը: Մենք լիովին կիսում ենք Ձեր Սրբության մտահոգությունը և աշխատում անել հնարավոր կարելին այդ ուղղությամբ:

Վեհափառ Տեր, թույլ տվեք, ի դիմաց Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմի, ինչպես նաև ուսանողության, ի խորոց սրտի շնորհավորել Ձերդ Սրբության Ամանորը՝ ցանկանալով, որ գալիք 2002 թվականը Ձեզ պարգևի առողջություն, արևշատ երջանիկ օրեր՝ հուրախություն մեզ, մեր հավատացյալ ժողովրդի:

Թող Տերն անսասան պահի լուսավորչահիմն Հայոց Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Թող գորանա ու շենանա մեր Մայր Հայրենիքը:

Շնորհավոր Նոր տարի»:

Պետրոս Հովհաննիսյանի շնորհավորական այս խոսքին հաջորդեց երգչախմբի «Խնջույքի երգ»-ի կատարումը, որից հետո Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանի կատարմամբ հնչեց Կոմիտասի «Լռու գութաներգ»-ը, որին էլ հաջորդեց շատ սիրված, զույգ Ճեմարանների շարականագիտության դասախոս Խորեն Պալյանի «Մոկաց Միրզա» երգի կատարումը: Ուսանողության անունից Վեհափառ Հայրապետին և բոլոր ներկաներին շնորհավորեց Ջ լսարանի սան Մեր սրկ. Ծատուրյանը.

«Առաքելաշնորհ Հայրապետ Ամենայն Հայոց,
Գերաշնորհ Սրբազան Հայրեր,
Հոգեշնորհ Հայր Սուրբեր,
Արժանաշնորհ Քահանա Հայրեր,
Բարեշնորհ սարկավագներ,
Ճեմարանական շնորհունակ եղբայրներ և սիրելի ներկաներ.

Հանուն ուսանողության Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի այսօր ինձ առիթ է ընձեռվել ամանորյա շնորհավորանքի ջերմությամբ խոսքը փոխանցելու Ձեզ բոլորիդ: Նոր տարեմուտի սեմին կանգնած՝ մեզանից յուրաքանչյուրը բարի ակնկալումներով է դիմավորում գալիք տարին:

Այսօր մեր ողջույնի խոսքը, հղված Ձեզ, ի գլուխ ունենալով ազգիս Հայրապետին, թող պարզապես մաղթանք կամ ցանկություն չհնչի՝ շնորհավորանք անվան տակ ծածկված: Թույլ տվեք ասել, որ այս պահին միմյանց նկատմամբ ունեցած փոխադարձ սերն է, որ մեզ միաբանել ու բերել է այստեղ: Այո՛, միանգամայն շեշտը դնում եմ սիրո վրա, բանզի քրիստոնեության կերպարը կերտող բազմաթիվ առաքինությունների մեջ սերն է համարվում գլխավորն ու առաքելայինը, առանց որի բոլոր երկնապարգև ու ասպվածատուր շնորհները հնարավոր չէր լինի պարկեշտացնել: Իսկ երբ սերը ցամաքում է, ավաղ, բազում չար և վնասակար արմատներ են ի հայտ գալիս՝ Աստծու սիրուց մարդկանց շեղելու և մարդուն իր նմանի հանդեպ տածած սիրուց բաժանելու և հեռացնելու:

Արդ, ո՛վ Շնորհազգյաց Կաթողիկոս Համայն Հայության, այս սիրո մթնոլորտում խոսք ուղղելով Ձեզ՝ պիտի ցանկայինք, որ Փառազորն Աստված Ձեր խաչանիշ գավազանը դարձնի օրհնաբեր և ուղղի ամեն մի հայ հավատավոր քրիստոնեայի ճանապարհը դեպի կենդանություն ու հավերժություն, որպեսզի կարողանաք մեզ բոլորիս անսասան պահել սիրո և ճշմարիտ հավատքի մեջ:

Թող Ձեր շուրթերը մշտապես աղոթքներ մրմնջան «վասն ծաղկեցման Առաքելական Մայր Եկեղեցւոյս Հայաստանեայց եւ վասն պահպանութեան ազգիս Տանն Թորգոմայ, զի փառաւորեսցի ի Հայր, յՈրդի եւ ի Սուրբ Հոգի»:

«Այսու բանիւ ողջունի եւ շնորհաւորանաց թոյլ տուք մատչել եւ համբուրել զմիտոնապիսի Աջդ Հայրապետական Շնորհ Սրբութեան»:

Մոմերի խորհրդավոր լույսի ներքո Հոգևոր Ճեմարանի քառաձայն երգչախումբը կատարեց «Փրկչի ծնունդը» երգը, որի ավարտին Հոգևոր Ճեմարանի Ջ լսարանի սան Արտակ սրկ. Խաչիկյանը կարդաց ավանդական Կաղանդչեքերը՝ ուրախության մի նոր ալիք հաղորդելով հանդիսությանը: Այնուհետև երգչախմբի կողմից կատարված «Կենաց երգ»-ին հաջորդեց ավանդույթ դարձած վիճակահանությունը:

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականից հետո Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր օրհնության և շնորհավորանքի խոսքն ուղղեց ներկաներին.

«Սիրելի միաբաններ Մայր Աթոռի, սիրելի հոգևորականներ, սիրելի դասախոսներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնեություն և շատ սիրելի սաներ.

Թեև հրաժեշտի պահը իր մեջ միշտ էլ թախիծ ու տխրություն է պարունակում, բայց տարեմուտը, հավանաբար, այն երեկոն է, որ համակում է մեր սիրտը, մեր հոգին ուրախությամբ, որովհետև հրաժեշտ ենք տալիս մի տարու, բայց անցնող տարու, սակայն դիմավորում ենք նորը, որը և մեր հոգու մեջ արթնացնում է նոր հույսեր և լավատեսության ոգի:

Տարին հոբելյանական էր և այն մոտենում է իր ավարտին, դառնում պատմություն մեզ բոլորիս համար: Բայց այն, որ հոբելյանական տարվա ոգևորությունը, ուրախությունը պատասխանատվության զգացում դարձած ապրելու է մեր մեջ և՛ հառաջիկա տարում, և՛ հաջորդող տարիներին, որովհետև ինչպես մեր երջանկահիշատակ Հայրապետներն են շեշտել, և մեզանից յուրաքանչյուրը առիթի դեպքում վերստին ու վերստին հաստատել է, տարին մեզ համար հոբելյանական է, բայց ոչ տարեմտային մի նշում կատարելու իմաստ ունեցող տարի:

Մեր բոլորի մտածումն ու ցանկությունն էր, որ այդ տարին առիթ լինի մեզ համար հոգևոր վերազարթոնքը մեր Եկեղեցու և մեր ժողովրդի իրականացնելու և քրիստոնեական հավատքը զորացնելու: Եվ ես լիահույս եմ, որ հառաջիկա տարին մենք կկարողանանք, որպես մշակներ Հայ Առաքելական Եկեղեցու, հոգ տանել, մշակել այն հունդերը, որ ցանվեցին հոբելյանական տարում հայ անդաստանում, հայ ժողովրդի, հավատավոր ժողովրդի հոգիներից ներս: Եվ այս առիթով ես ուզում եմ աղոթքով հիշել և հարգանքի մեր խոնարհումը բերել լույս հիշատակների առջև Մեր երջանկահիշատակ երկու նախորդ Հայրապետների՝ Վազգեն Ա Կաթողիկոսի և Գարեգին Ա Հայրապետի, որոնք սկսեցին կազմել հոբելյանական տարվա նշման ծրագրեր և սակայն այսօր մեզ հետ չեն, այսօր երկնքից են, որ ուրախակից են դարձել մեզ ամենքիս հոբելյանական տարին փառքով նշելու և անցկացնելու համար:

Տարեմուտի այս առիթով ուզում եմ նաև իմ սրտի աղոթքը և բարեմաղթանքը բերել Հայ Եկեղեցու նվիրապետության Աթոռների գահակալներին, բոլորին անխտիր և Աթոռների ուխտավոր, ուխտապահ միաբանությանը, որոնք որ նույն ծառայությանն են լծված մեզ հետ միասին հայ ժողովրդին մեր հայրերի սրբազան հավատքը, ժառանգությունը փոխանցելու և նրանց կրթելու և դաստիարակելու որպես ազնիվ, բարի քրիստոնյաներ:

Կարծում եմ, տեղին է և պատշաճ, որ Մենք այս առիթով Մեր գնահատանքի խոսքը ուղղենք 1700-ամյակի ծրագրերի իրագործման մեջ իրենց

կարևոր ներդրումը բերած անձանց՝ Մեսրոպ Սրբազանին, որ այստեղ սեղանակից է մեզ այս երեկո, Հովնան Սրբազանին, որ վստահ եմ, հոգով մեզ հետ է այս պահին, որովհետև, լինելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սան, գիտի, որ դեկտեմբեր 31-ի երեկոյան հավաքվում ենք, համախմբվում ենք և տարվա վերջին հանդիսությամբ նշում ենք անցնող տարվա մեր ձեռքբերումները և նոր հույսերով, լավատեսությամբ մուտք գործում նոր տարի:

Ես ուզում եմ նաև իմ գնահատանքի խոսքը բերել բոլոր պաշտոնյաներին 1700-ամյակի գրասենյակի և բոլոր այն անձանց, ովքեր այս կամ այն կերպ առնչվել և իրենց մասն ու բաժինն ունեն այս հանդիսությանց կազմակերպման և անցկացման գործում: Դժվար կլինի բոլորին թվարկել, այստեղ Հայր Աշոտը կա, իր գլխավորությամբ բոլոր, բոլոր պաշտոնեության և ծառայություններին: Դժվար կլինի ամենքին անուն առ անուն հիշել, որովհետև բազում են, շատ են, և անկարելի է, որ չվրիպեմ: Բայց կուզեմ նաև սեպտեմբերյան տոնահանդիսությանց կազմակերպման գործում իրենց նպաստը բերած անձանց Մեր գնահատանքի խոսքը ուղղել, ի մասնավորի՝ Եգնիկ Սրբազանին, Արտակ Հայր Սուրբին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնեությանը, մեր դիվանապետին՝ Արշակ Հայր Սուրբին, նաև իմ գավազանակրին և բոլորին, բոլորին անխտիր, որոնք որ, իրապես, տոն դարձրեցին, փառավորեցին 1700-ամյակի այդ մեծ հոբելյանը:

Քանի որ գնահատանքի խոսքերի շարքը սկսեցինք, կուզեմ այստեղ նաև իմ գնահատանքն ուղղել բոլոր այն թեմական առաջնորդներին, բոլոր այն եկեղեցականներին, որոնք այս օրերին շնորհավորական իրենց ուղերձները հղեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ արտահայտելով այն ցանկությունը, որ այս երեկո մենք իրենց լավագույն բարեմաղթանքները, իրենց սրտի ջերմ զգացումները, իրենց բարի ցանկությունները փոխանցենք մեր միաբանակից եղբայրներին, նաև Ճեմարանի դասախոսներին, պաշտոնեությանը և սաներին:

Առանձնակի ուրախությամբ, հոգեկան բավականությամբ ուզում եմ գնահատանքի արժանացնել մեր Ճեմարանի դասախոսական կազմին, անցյալ տարում իրենց ծառայության համար հոգևոր-կրթական հաստատություններից ներս, Սևանի Վազգենյան Դպրանոցում, Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, նաև Գյումրիի Ընծայարանում:

Գիտենք, բոլորս էլ անդրադառնում ենք, գիտակցում ենք, որ ամենակարևոր աշխատանքն է այսօր, որ Հայ Եկեղեցին պետք է կատարի, հասցնի սերունդ, բայց այդ սերունդը լինի լավագույնս պատրաստված, լինի հավատավոր սերունդ, լինի գիտակիցը իր կոչման և ծառայության: Որովհետև եթե եկեղեցականը չունի նվիրում, չունի ծառայասիրության ոգի, չունի հավատ, չի կարող իրապես օգտակար հովվական գործ կատարել, չի կարող ապահովել սերը, հարգանքը հավատացյալի դեպի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, և չի կարող փառավորել այն անցյալը, որ նվիրումով,

որպես փառավոր էջ մեր կյանքի, կերտել են մեր սուրբ հայրերը, մեր լուսահոգի նախնիք:

Սրբազան Հայրը հիշատակեց, որ այս անցնող տարում հովվապետական այցելություններ կատարեցի թե՛ Հայաստանի մարզերը և թե՛ արտասահման, և տեսա, թե ինչպես ժողովուրդը սպասում է հույսով, հավատով, սպասում է, որ Հայ Եկեղեցու ծոցում ամեն, հասակ առնեն և ծառայության կոչվեն իրենց ակնկալությունները արդարացնող եկեղեցականներ: Բոլորս էլ գիտենք, թե ինչպիսին է այդ ակնկալությունը, որովհետև այդ ակնկալությունը համահունչ է մեր այն երազներին, հոգևորականի կերպարին առնչվող, որ ունեցել ենք ուսանողական սեղանի հետևը նստած:

Մենք բոլորս երազել ենք մեր ուսանողական սեղանին հրաժեշտ տալ որպես հավատի նվիրյալ մարդիկ, որպես մեր հայրերի ժառանգությունը յուրացրած անհատներ, և կարողանանք նրանց փառքի գործը շարունակողները լինել, նրանց արժանի ժառանգորդները լինել, նրանց կյանքի կերտած ճանապարհի ուղևորները լինել, վաստակող, արդար, ազնիվ և փառավոր վաստակող: Եվ այդ ակնկալությունները, այդ սպասումները ունի մեր ժողովուրդը ինչպես արտասահմանում, այնպես էլ Հայաստանում, Հայրենիքում:

Տա Աստված, որ մենք իրապես արժանի լինենք այն սիրույն, այն հարգանքին, որ տածում է մեր ժողովուրդը դեպի մեր Եկեղեցին և դեպի հայ հոգևորականի սքեմը: Եվ տա Աստված, որ մենք կարողանանք արդարացնել այն բոլոր սպասումները և ակնկալությունները, որ ունի մեր ժողովուրդը հայ հոգևորականից: Որքան էլ որ մենք շատ լինենք, միևնույն է, չենք կարող մեր առաքելությունը իրականացնել, եթե մենք մեզ գործակից և աշխատակից չենք դարձնում, ծառակից չենք դարձնում հավատացյալ մեր զավակներին, աշխարհականաց դասին:

Մեր ծառայությունը մնաց ծիսա-արարողական շրջանակների մեջ, որովհետև միայն, միայն ու միայն աշխարհականաց բանակ ստեղծելով մեր կողքին, մենք կկարողանանք իրապես Հայ Եկեղեցին այն առաքելության շավղով առաջնորդել, որը կապահովի մեզ դառնալ ճշմարիտ քրիստոնյա հայ ժողովուրդ, բարոյական արժեքների վրա իր կյանքը հաստատած, քրիստոնեական բարոյական արժեքներով ապրող և առաջնորդվող, որ կնշանակի մեր կյանքում որպիսություն, ցնծություն, առաջընթաց, բերկրանք, ապահովություն և ինքնավստահություն գալիքի նկատմամբ:

Անցնող տարին, ճիշտ է, նշանավոր տարի եղավ հոբելյանական հանդիսություններով: Բայց մենք ժամանակ չունեցանք և հնարավորություն՝ առաքելության իրականացման տարի դարձնել այն, որը որ պիտի լինի մեր պարտականությունը և մեր գործը առաջիկա այս տարվա ընթացքում: Մենք պետք է կարողանանք մեր առաքելությունը իրականացնել մեր ժողովրդի կյանքից ներս, որպեսզի արժանի լինենք ինչպես մեր նախնյաց,

այնպես էլ այսօր ապրող մեր ժողովրդի զավակաց և գալիք սերնդի օրհնությանը: Եվ այդ իմաստով ծրագրեր շատ կան, շա՛տ-շատ, բոլոր ոլորտներում, բոլոր ոլորտներին առնչվող: Բայց ծրագրերի իրականացման համար երկու կարևոր, անհրաժեշտ նախապայմաններ պետք է լրացնել. պետք է ունենանք համապատասխան անձերը և պետք է ունենանք համապատասխան միջոցները:

Երկուսն էլ բավականին բարդ խնդիր են, բայց վստահ եմ, որ Աստծու օգնականությամբ և մեր զորակցությամբ, աջակցությամբ պիտի կարողանանք մենք հաղթաթիկա տարին՝ 2002 թվականը, մեր հոգին ու սիրտը ուրախացնող տարի դարձնել բարի արդյունքներով, բարի արգասավորումով, որպեսզի երբ մոտենանք առաջիկա տարվա հրաժեշտի այս պահին, կարողանանք միխթարված և գոհունակ սրտով հաստատել, թե իրապես մենք 2001 հորելյանական տարին արժևորեցինք, արժևորեցինք մեր կյանքում, որ այն չմնաց տոնակատարության տարի, որ այն չմնաց հորելյանական հանդիսության շրջանակների մեջ ապրված տարի, այլ իրապես դարձավ առիթ, դարձավ շարժիչ ուժ, դարձավ մեզ լիցք, ոգևորություն, խանդավառություն ներարկող մի զորություն, որը և բարի արդյունքների առաջնորդեց մեզ և մեր աշխատանքները:

Մեր հիմնական գործը պետք է լինի քրիստոնեական դաստիարակության և քարոզչության աշխուժացում, կազմակերպում, լիարժեք ներդրում այդ ոլորտից ներս: Որովհետև եթե մեր ժողովուրդը շարունակի ավանդույթի ուժով կապված մնալ մեր Եկեղեցուն, ավանդույթի ուժով դիտի իրեն իբրև Հայ Եկեղեցու զավակ, մենք չենք կարող վստահությունը ունենալ մեր Եկեղեցու վաղվա օրվա նկատմամբ, որովհետև ասպարեզը ազատ է, քարոզիչները՝ առատ, որքան էլ որ մենք ասում ենք, թե հունձքը շատ է, մշակները՝ սակավ, թերևս դա մեր Եկեղեցու համար շիտակ է, բայց ոչ Հայաստանի համար որպես այգեստան, որպես անդաստան:

Հայաստանի դաշտում այլազան մշակներն առատ են, չափից առատ: Ուրեմն մենք քիչ թվով պիտի կարողանանք այնպիսի գործունեության ծավալ ընդգրկել, որ հնարավորություն չթողնենք, առիթ չթողնենք, պարապ դաշտ, ազատ տարածք չթողնենք, ուր կարողանան մուտք գործել օտար քարոզիչներ և իրենց ավերը գործել: Այս առիթով պիտի իմ գնահատանքի խոսքն ուղղեմ նաև տեսչությանը, որ մեզ բազում ուրախ առիթներ պարգևեց հոգևոր կրթական մեր հաստատությանը, նկատի չունեմ միայն Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, այլ նաև Սեւանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը և Գյումրիի Ընծայարանը, բոլորին անխտիր, բոլոր մանկավարժներին, որոնք որ ուրախ առիթներ պարգևեցին կրթական այդ հաստատության հարկերից ներս՝ շրջանավարտ սաներ հասցնելով, դիպլոմային պաշտպանություններ իրականացնելով ու սարկավագներ ձեռնադրելու բերկրանքը մեզ պարգևելով:

Իրապես մենք ոգևորված ենք, մենք խանդավառված ենք, մենք լավատես ենք, մենք հավատով ենք լեցված դեպի մեր Եկեղեցու վաղվա օրը, մնում է, որ մենք կարողանանք նաև հնարավորությունը ստեղծել մեր երիտասարդ միաբաններին, մեր սաներին, որպեսզի իրենք իրենց ուսումը կարողանան շարունակել տարբեր հաստատություններում, ընդարձակեն իրենց մտահորիզոնը, ամրացնեն ու հարստացնեն իրենց գիտելիքների պաշարը, զան-զորացնեն մեր Եկեղեցին, արդյունավետ դարձնեն հայ եկեղեցականի իրենց առաքելությունը մեր Եկեղեցու և մեր ժողովրդի կյանքից ներս:

Հոբելյանագարդ 2001 թվականի տարեմուտի հանդիսությունն ավարտվեց Տերունական «Հայր մեր»-ով և «Պահպանիչ»-ով: Այլևս պատմություն դարձավ մեր Եկեղեցու համար կարևորագույն նշանակություն ունեցող այս տարին, պատմություն դարձավ նաև 1700-ամյակը: Հավաքվածները հրաժեշտ տվեցին անցնող տարվան և հույսով ու ակնկալիքով հայացքներն ուղղեցին դեպի գալիք՝ 2002 թվականը, որ պիտի դառնա դրամաբանական շարունակությունը հոբելյանական 2001-ի, պիտի դրագրի նախորդ տարվա սխալները, պիտի ճաշակել դա նախորդ տարվա բարի բերքը և պիտի շարունակի մեր մեջ 1700-ամյակը՝ արդեն որպես տոնակատարություններով սկսված և ներքին կյանք ու էություն դարձած մի երևույթ:

Շնորհավոր Ամանոր և գալիք Ս. Ծնունդ:

ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ԱԶԳԱՊԱՏՈՒՄ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Հունվարի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայ Եկեղեցու երախտաշատ հոգևորական ու գիտնական, Կ. Պոլսի ժամանակի Պատրիարք (1889-1908 թթ.) Մաղաքիա արքեպս. Օրմանյանի «Ազգապատում» եռահատորի շնորհանդեսը՝ մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների, գիտության և մշակույթի անվանի գործիչների:

Օրմանյանի կոթողային այս աշխատությունը Հայաստանում լույս է տեսնում առաջին անգամ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակությամբ: Ինքը՝ գրքի հեղինակը ժամանակին իր աշխատությունը ներկայացրել է որպես «Հայ Ուղղափառ Եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած»: Այսօր էլ այն շարունակում է մնալ իբրև գիտական եզակի ու ամբողջական աղբյուր Հայ Եկեղեցու պատմությամբ հետաքրքրվողների համար: Այս մասին վկայեցին նաև հանդիսության բանախոսները, որոնք միաժամանակ անդրադարձան Օրմանյան Պատրիարքի կյանքին ու գործունեությանը: «Օրմանյանը յուրաքանչյուրին ներկայացնում է այն ճշմարտությունը, որ մեր ազգն ու Եկեղեցին միահյուսյալ են: Ես վստահ եմ, որ Հայաստանյայց Եկեղեցին պիտի շարունակի իր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով բոլոր նրանց, ովքեր ներդրում են ունեցել այս գրքի հրատարակության գործում:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ գրքի տպագրմանը երկու տարի առաջ ձեռնամուխ էր եղել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Տպագրական ծախսերը հոգացել է հայաստանցի բարերար Տիգրան Կարապետյանը: Ինչպես նշեց Շահե Սրբազանը, ՀՀ ԳԱԱ-ի և Երևանի պետական համալսարանի Պատմության և Աստվածաբանության ֆակուլտետների ջանքերով նախատեսվում է հավելյալ՝ չորրորդ հատորյակի լույսընծայումը, որտեղ ներկայացված կլինեն «Ազգապատումում» տեղ գտած տեղանունների, անձնանունների ու թեմատիկ ցանկերը: Առաջիկայում ընթերցողները կարող են օգտվել նաև գրքի համակարգչային տարբերակից:

«Ազգապատումի» երրորդ այս հրատարակությունը լույս է ընծայվել Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով և մնայուն հիշատակ է՝ նվիրված երանաշնորհ Պատրիարքի ծննդյան 160-ամյակին:

Օրմանյան Պատրիարքը հեղինակ է նաև մեծարժեք այլ գործերի, այդ թվում և ֆրանսերենով գրված «Հայոց Եկեղեցին», «Խոնք եւ խօսք» հուշագրության և «Համապատում»-ի: Վերջինս չորս Ավետարանների համապարփակ մեկնությունն է, որի արևելահայերեն թարգմանությունը Հայաստանում լույս է տեսել մի քանի տարի առաջ՝ կրկին Մայր Աթոռի հրատարակությամբ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐՈՀԱՄԱՅՆՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հունվարի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոհամայնքի Եպիսկոպոսաց խորհրդի կոնֆերանսի նախագահ Ջոզեֆ եպս. Հոմեյերի և Եվրոհամայնքի Եպիսկոպոսաց կոնֆերանսների հանձնախմբի գլխավոր քարտուղար Նոյել Թրենորի գլխավորած պատվիրակությանը:

Պատվիրակության այցի նպատակն է մոտիկից ծանոթանալ Հայ Առաքելական Եկեղեցուն՝ հետագա համագործակցության ակնկալիքով:

Ջոզեֆ եպս. Հոմեյերը, շարադրելով նման համագործակցության վերաբերյալ իր նկատառումները, նշեց, որ Հայ Առաքելական Եկեղեցին, ինչպես Կաթոլիկ և Օրթոդոքս Եկեղեցիները, իր կարևոր դերն ունի Եվրոպայի կրոնական կյանքում:

Նորին Սրբությունը ողջունեց և շնորհակալություն հայտնեց հյուրերի առաջարկի համար: Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Առաքելական Եկեղեցին իր թեմերն ունի Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում, իսկ նշված կառույցի հետ համագործակցությունը Հայ Եկեղեցուն հնարավորություն կընձեռի առավել ընդգրկուն մասնակցություն ունենալ Եվրոպայի եկեղեցական-հասարակական կյանքին:

Եվրոհամայնքի այս կառույցի հետ Հայ Եկեղեցու համագործակցությունն իր առավել հստակ ուրվագծումը կստանա հետագա փոխայցելությունների ընթացքում:

Լինելով ազգությամբ գերմանացի, Հոմեյեր եպիսկոպոսը ցավ հայտնեց այն բանի համար, որ իր երկիրը մեղքի իր բաժինն է ունեցել դարասկզբի հայ ժողովրդի ողբերգության մեջ:

Հանդիպման ավարտին Հայոց Հայրապետը Հոմեյեր եպիսկոպոսի կուրծքը զարդարեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված հոբելյանական լանջախաչով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

Հունվարի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ Միջազգային գործակալության Եվրոպայի և Եվրասիայի գրասենյակի փոխտնօրեն Քենթ Տիլին:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց ամերիկյան կազմակերպության ներդրումը Հայաստանի տնտեսության զարգացման գործում և համոզմունք հայտնեց, որ այն իր նպաստն է բերում երկրի առաջընթացին ու ժողովրդավարական կառույցների ամրապնդմանը: Խոսվեց նաև Եկեղեցու հետ հնարավոր համագործակցության շուրջ:

Հանդիպման ընթացքում ընդգծվեց Եկեղեցու կարևոր դերը հասարակության բարոյական նկարագրի ձևավորման գործում: Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելությանն ու առաջիկա անելիքներին՝ առանձնացնելով հատկապես կրթական ծրագրերը:

Զրուցակիցներն անդրադարձան նաև Հայաստան ներթափանցած կրոնական կազմակերպություններին և նրանց գործունեությանն առնչվող խնդիրներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Հունվարի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Ֆրանսիայի նորանշանակ դեսպան Անրի Կյունիին:

Նորին Սրբությունը, ողջունելով դեսպանի անդրանիկ այցը հայոց հոգևոր կենտրոն, գոհունակությամբ նշեց երկու երկրների միջև 100-ամյակներ և հատկապես Հայաստանի Հանրապետության անկախության տարիներից ի վեր ձևավորված ջերմ և եղբայրական հարաբերությունների մասին: Վեհափառ Հայրապետը միաժամանակ փաստեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ևս ջերմագին զգացումներ է տածում Ֆրանսիայի հանդեպ և պատրաստ է ըստ ամենայնի իր օգտակարությունը բերել երկու երկրների միջև կապերի զորացման գործին:

Վեհափառ Հայրապետը առանձնակի ջերմությամբ հիշատակեց անցած դեկտեմբերին Ֆրանսիա կատարած իր հովվապետական այցը, որ եղբայրական հարաբերությունների նորոգման ևս մի առիթ դարձավ: Վերջինիս առիթով Նորին Սրբությունը երախտագիտությամբ անդրադարձավ Ֆրանսիայի նախագահի կողմից հանձնված պարգևին՝ ընդունելով այն իբրև Ֆրանսահայությանը տրված լավագույն գնահատական:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, պրն Կյունին նշեց, որ իր այցելությունը հայոց հոգևոր կենտրոն արարողակարգային լինելուց զատ, իր համար ունի նաև այլ նշանակություն: Դեսպանը արժևորեց հայ ժողովրդի պատրաստակամությունը դեպի առաջընթաց՝ նշելով, որ այն հաստատվել է 17 դարեր առաջ հայ ժողովրդի կատարած ընտրությամբ՝ քրիստոնեության ընդունմամբ: Որպես գրականության և արվեստի մեծ սիրահար, պրն Կյունին կարծիք հայտնեց, որ հատկապես այս ընտրության շնորհիվ է հայ ժողովուրդն ապահովել հոգևոր իր վերելքը՝ հայոց Այբուբենի ստեղծմամբ, գրականությամբ ու ճարտարապետությամբ:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց նորանշանակ դեսպանին՝ համոզմունք հայտնելով, որ նա նույն նախանձախնդրությամբ կշարունակի իր նախորդների՝ տիկին դ'Արթինգի և պրն Լեգրայի դիվանագիտական առաքելությունը Հայաստանում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, երեքշաբթի.- Գ. օր Ծննդեան պահոց: Կուսանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գարեգին արքեպս. Բեգէյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 5-ին, շաբաթ. - Ճրագալոյց Ծննդեան եւ Ապրումաժայթքման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 69):

Ս. Պատարագից հետո ողջ միաբանությունն ու ուսանողությունը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողության ներքո շարժվեցին Վեհարան, որտեղ Տնօրենների արարողությունը կատարելուց հետո, գնացին սեղանատուն՝ Տիրոջ Ծննդյան ավետիսը ցնծությամբ նշելու համար:

Հունվարի 6-ին, կիրակի.- ՏՕՆ ՄԵՆԴԵՄԱՆ ԵՒ ՕՄՏՈՒՕՄՍՅՍՅՆՈՒԹԵՄԱՆ ՏԵՄՈՒՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը Սուրբ Ծննդյան իր պատգամը ուղղեց հայ ժողովրդին (տե՛ս էջ 3):

Հընթացս Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողություն:

Հունվարի 7-ին, կիրակի.- Բ. օր Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ վասն հանգուցեալների:

Հունվարի 13-ին, կիրակի.- Ը. օր Ծննդեան: Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբեղա Սանոյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 20-ին, կիրակի.- Ա. կիրակի զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբեղա Նանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 27-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը: Հընթացս Ս. Պատարագի Տ. Արշեն աբեղա Սանոյանը կարդաց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը՝ նվիրված ՀՀ Ազգային բանակի 10-ամյակին (տես էջ 15):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

"ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Январь 2002)

1. Послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Святого Рождества и праздника Богоявления, 6 января 2002 г. (с. 3-6).
2. Новогоднее послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 31 декабря 2001 г. (с. 7-8).
3. Поздравительные письма и телеграммы, которыми обменялся Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, с главами церквей сестёр, с иерархами патриарших Престолов Армянской церкви и с официальными лицами по случаю Святого и Чудесного Рождества Спасителя (с. 9-12).
4. **ЧТЕЦ ГАЙК БАРСЕГЯН** – Празднества по случаю Св. Рождества в Первопрестольном Св. Эчмиадзине, 5-6 января 2002 г. (с. 13-14).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

5. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю 10-летия формирования Вооруженных сил Республики Армении, 25 января 2002 г., № 78 (с. 15-16).
6. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю награждения генерала Гургена Далибалтаяна орденом «Св. Нерсес Шнорали», 20 января 2002 г., № 77 (с. 17-18).
7. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю награждения предводителя армянской епархии Грузии Его Высокопреосвященства архиепископа Геворка Серайдаряна орденом «Св. Нерсес Шнорали», 21 января 2002 г., № 76 (с. 19-20).
8. Патриаршие награды (пожалование патриарших энциклик и благословений группе духовных и светских лиц, и Союзу женщин Западной Епархии США преданных Армянской церкви и армянскому народу) – (с. 21).
9. Письмо соболезнования Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю кончины известного кинорежиссера Анри Верно (Ашота Малакяна), 12 января 2002 г. (с. 22).
10. Письмо соболезнования Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю кончины национального благодетеля Сурена Фесджяна, 26 января 2002 г. (с. 23).
11. Расширенное заседание Верховного духовного совета в Первопрестольном Эчмиадзине, 9-10 января 2002 г. (с. 24-25).
12. Доклад Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, на заседании Верховного духовного совета, 10 января 2002 г. (с. 26-65).

13. В Первопрестольном Святом Эчмиадзине отметили 10-летие формирования Вооруженных сил Республики Армении. 27 января 2002 г. (с. 66).
14. Его Святейшество Гарегин II освятил боевое знамя Вооруженных Сил Республики Армении. 28 января 2002 г. (с. 67).
15. Встреча Его Святейшества Гарегина II с Председателем Национального собрания г-ном Арменом Хачатряном. 25 января 2002 г. (с. 68).

РЕЛИГИОЗНАЯ ИНФОРМАЦИЯ

16. Проповедь архимандрита Аршака Хачатряна в Кафедральном соборе св. Эчмиадзина. в Сочельник Св. Рождества. 5 января 2002 г. (с. 69-71).

РЕЛИГИОЗНОЕ ИССЛЕДОВАНИЕ

17. **АРХИЕПИСКОП ШАГЕ АДЖЕМЯН** – Новый перевод на современный армянский язык «Нового Завета Иисуса Христа» (научное исследование, посвященное принципам перевода Священного Писания на современный армянский язык) – (с. 72-76).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

18. **АНАТОЛИЙ ПЕТРОСЯН** – О вопросе авторства и времени написания Истории Агафангела (научное исследование) – (с. 77-84).

19. **ВАРДАН ГРИГОРЯН** – Мавзолеи туркменских эмиров в селе Аргаванд (научное исследование) – (с. 85-88).

Арменоведение в Европе

20. **ГЕВОРК ТЕР-ВАРДАНЯН** – О важности изучения культа мощей святых и священных предметов. а также посвященных им документов (научное исследование) – (с. 89-91).
21. **ИЗАБЕЛЬ ОЖЕ** – Перенос перста Святого Петра из Рима в Армению (научное исследование, перевод с французского Варужана Погосяна) – (с. 92-104).

Посвящается 100-летию со дня рождения Никогайоса Сарафяна

22. **АРТУР АНДРАНИКЯН** – Размышления о книге Никогайоса Сарафяна «Отлив и прилив» (научное исследование) – (с. 105-117).

РЕЦЕНЗИЯ

23. **ВАРАГ НЕРСИСЯН** – Отличный сборник древне-армянской поэзии (о сборнике «Сокровищница древне-армянской поэзии», составленном доктором филологических наук, профессором Погосом Хачатряном в сотрудничестве с кандидатом филологических наук Варданом Деврикяном) – (с. 118-124).

В СВЯТОМ ПРЕСТОЛЕ

24. **ДЬЯКОН АРТУР ОГАНИСЯН** – Новый год в Первопрестольном Св. Эчмиадзине, 31 декабря 2001 г. (с. 125-136).
25. Презентация книги «Азгапатум» («Национальная история») в Первопрестольном Св. Эчмиадзине, 21 января 2002 г. (с. 137).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВ. ЭЧМИАДЗИНЕ

26. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, делегации под руководством председателя Конференции Совета епископов Европейского содружества Его Преосвященства епископа Жозефа Хомейера и генерального секретаря Конференции Совета епископов Европейского содружества Нозля Тренора, 12 января 2002 г. (с. 138).
27. Аудиенция у Его Святейшества Гарегина II вице-президента Отдела по Европе и Евразии Международного Агенства США Кента Хиля, 23 января 2002 г. (с. 139).
28. Аудиенция у Его Святейшества Гарегина II новоназначенного посла Франции в Республике Армении г-на Анри Кюни, 31 января 2002 г. (с. 139-140).

29. Краткие церковные новости. Информация о Святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном Соборе и Св. Престоле Эчмиадзина в течение января 2002 г. (с. 141-142).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(January 2002)

1. Message of His Holiness Karekin II. Catholicos of all Armenians, on the occasion of Holy Christmas and the Feast of Epiphany, January 6, 2002 (p.3-6).
2. New Year's Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, December 31, 2001 (p.7-8).
3. Letters of Greeting and telegrams on the occasion of the Holy and Miraculous Nativity of the Savior, exchanged between His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, and the Heads of sister Churches, the Incumbents of the Patriarchal Sees of the Armenian Church, and State officials (p.9-12).
4. **ACOLYTE HAYK BARSEGHIAN** – Festivities in the Mother See on the occasion of Holy Christmas, January 5-6, 2002 (p.13-14).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

5. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the 10th Anniversary of the establishment of the Armed Forces of the Republic of Armenia, January 25, 2002, no. 78 (p.15-16).
6. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to General Gurgen Dalibaltayan on the occasion of his decoration with the Order of "St. Nerses Shnorhali", January 20, 2002, no.77 (p.17-18).
7. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to His Eminence Archbishop Gevork Seraydarian, Primate of the Armenian Diocese of Georgia, on the occasion of his decoration with the Order of "St. Nerses Shnorhali", January 21, 2002, no.76 (p.19-20).
8. Patriarchal Awards (Encyclicals and Messages of Blessing granted to clergymen and laymen devoted to the Armenian Church and the Armenian nation) – (p.21).
9. Condolence Letter of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the death of film producer Henri Verneuil (Ashot Malakian), January 12, 2002 (p.22).
10. Condolence Letter of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the death of national benefactor Suren Fesjian, January 26, 2002 (p.23).
11. Full Session of the Supreme Spiritual Council in the Mother See of Holy Etchmiadzin, January 9-10, 2002 (p.24-25).
12. Report of His Holiness Karekin II, Catholicos of all Armenians, to the Supreme Spiritual Council, January 10, 2002 (p.26-65).
13. Celebration of the 10th Anniversary of the establishment of the Armed Forces of the Republic of Armenia in the Mother See, January 27, 2002, (p.66).

14. Blessing of the Banner of the Armed Forces of the Republic of Armenia by His Holiness Karekin II. January 28, 2002, (p.67).
15. Meeting of His Holiness Karekin II with National Assembly Speaker Armen Khachatrian. January 25, 2002. (p.68).

RELIGIOUS INFORMATION

16. Sermon delivered by Very Rev. Fr. Arshak Khachatrian in the Cathedral of Holy Etchmiadzin, January 5, 2002 (p.69-71).

RELIGIOUS STUDY

17. **ARCHBISHOP SHAHE AJEMIAN** – New translation of "The New Testament of Jesus Christ" into modern Armenian (investigation devoted to the principles of the translation of Holy Scriptures into modern Armenian) – (p.72-76).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

18. **ANATOLI PETROSSIAN** – On the Authorship and the Time of Writing the History of Agathangelos (investigation) – (p.77-84).
19. **VARDAN GRIGORIAN** – The Mausoleum of Turkmen Emirs in the Village of Argavand (investigation) – (p.85-88).

Armenian Studies in Europe

20. **GEVORK TER-VARDANIAN** – On the Importance of Studying Holy Relics, as well as Documents Connected with Them (investigation) – (p.89-91).

21. **ISABELLE AUGER** – The Transfer of Saint Peter's Finger from Rome to Armenia (investigation translated from French by Varuzhan Poghossian) – (p.92-104).

Devoted to the 100th Birthday of Nikoghayos Sarafian

22. **ARTHUR ANDRANIKIAN** – Meditations on the Book "Ebb and Flow" by Nikoghayos Sarafian (investigation) – (p.105-117).

CRITICAL REVIEW

23. **VARAG NERSISSIAN** – An Excellent Collection of Ancient Armenian Poetry – (On the book "The Treasury of Ancient Armenian Poetry" by Prof. Poghos Khachatrian, Ph.D., in collaboration with Vardan Devrikian, Ph.D.) – (p.118- 124).

AT THE MOTHER SEE

24. **DEACON ARTHUR HOVHANNISSIAN** – The New Year in the Mother See of Holy Etchmiadzin. December 31, 2001 (p.125-136).
25. Presentation of the book "Azgapatum" ("National History") in the Mother See of Holy Etchmiadzin. January 21, 2002 (p. 137).

AUDIENCES AT THE MOTHER SEE

26. Audience granted by His Holiness to the delegation headed by His Eminence Bishop Josef Homeyer, Chairman, and to Mr. Noël Trenor, Secretary-General, of the Commission of the Bishops' Conference of the European Community, January 12, 2002 (p.138).
27. Audience granted by His Holiness to Mr. Kent Hill, Assistant Director for the USAID European and Eurasian Office, January 23, 2002 (p.139).
28. Audience granted by His Holiness to Mr. Henry Cuny, the newly appointed Ambassador of France to the Republic of Armenia, January 31, 2002 (p.139-140).

29. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during January (p.141-142).

"ETCHMIADZINE" ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE (Janvier 2002)

1. Message de Sa Sainteté Garéguine II. Catholicos de tous les Arméniens, à l'occasion de Noël et de la fête de l'Epiphanie (p.3-6).
2. Message de Nouvel An de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens. (p.7-8).
3. Lettres et télégrammes de félicitations échangés entre Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, et les chefs des Eglises sœurs, les chefs des Patriarcats de l'Eglise Arménienne et les personnalités officielles à l'occasion de la Sainte et Miraculeuse Nativité du Sauveur (p.9-12).
4. **ACOLYTE HAYK BARSEGHIAN** – Festivités de Noël au Saint-Siège, 5-6 janvier 2002 (p.13-14).

ENCYCLIQUES PATRIARCALES ET MESSAGES DE BENEDICTION

5. Encyclique de Sa Sainteté Garéguine II. Catholicos de tous les Arméniens à l'occasion du 10e anniversaire de la formation des Forces Armées de la République d'Arménie. 25 janvier 2002, no.78 (p. 15-6).
6. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens au général Gourguen Dalibaitayan à l'occasion de sa décoration de l'ordre «St. Nerses Chnorhali», 20 janvier 2002. no.77 (p.17-18).
7. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Son Eminence l'archevêque Guévork Séraydarian, chef du diocèse de Géorgie de l'Eglise arménienne, à l'occasion de sa décoration de l'ordre «St. Nerses Chnorhali», 21 janvier 2002, no.76 (p.19-20).
8. Distinctions patriarcales (Encycliques patriarcales et messages de bénédiction donnés à des personnalités religieuses et laïques dévouées à la cause de l'Eglise Arménienne et à la nation arménienne) -- (p.21).
9. Lettre de condoléances de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, a l'occasion du décès du célèbre réalisateur de cinéma Henri Verneuil (Achot Malakian), 12 janvier 2002 (p.22).
10. Lettre de condoléances de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, a l'occasion du décès du bienfaiteur national Souren Fesdjian, 26 janvier 2002 (p.23).
11. Séance élargie du Conseil Religieux Suprême au Saint-Siège d'Etchmiadzine, 9-10 janvier 2002 (p.24-25).

12. Exposé de Sa Sainteté Garegnine II. Catholicos de tous les Arméniens. à la Séance du Conseil Religieux Suprême. 10 janvier 2002 (p.26-65).
13. Célébration du 10e anniversaire de la formation des Forces Armées de la République d'Arménie au Saint-Siège d'Etchmiadzine. 27 janvier 2002 (p.66).
14. Bénédiction de la bannière des Forces Armées de la République d'Arménie par Sa Sainteté, 28 janvier 2002 (p.67).
15. Rencontre de Sa Sainteté avec M. Armen Khatchatrian. Président de l'Assemblée Nationale. 25 janvier 2002 (p.68).

INFORMATION RELIGIEUSE

16. Sermon prononcé par l'archimandrite Archak Khatchatrian à la Cathédrale de St. Etchmiadzine. 5 janvier 2002. (p.69-71).

ETUDE RELIGIEUSE

17. **ARCHEVEQUE CHAHE ADJEMIAN** – Nouvelle traduction en arménien moderne du «Nouveau Testament de Jésus-Christ» (recherche scientifique consacrée aux principes de la traduction en arménien moderne des Saintes Ecritures) – (p.72-76).

ETUDES HISTORICO-PHILOLOGIQUES

18. **ANATOLI PETROSSIAN** – Sur la paternité et la datation de l'Histoire d'Agathange (recherche scientifique) – (p.77-84).
19. **VARDAN GRIGORIAN** – Le mausolée des émirs turkmènes au village d'Argavand (recherche scientifique) – (p.85-88).

Les études arméniennes en Europe

20. **GUEVORK TER-VARDANIAN** – Importance de l'étude des reliques de saints, des objets sacrés et des documents qui les concernent (recherche scientifique) – (p.89-91).
21. **ISABELLE AUGER** – Transfert du doigt de saint Pierre de Rome en Arménie (recherche scientifique traduite du français par Varoujan Poghossian) – (p.92 -104).

A l'occasion du 100e anniversaire de la naissance de Nikoghayos Sarafian

22. **ARTHUR ANDRANIKIAN** – Méditations sur le livre «Marée haute et basse» de Nikoghayos Sarafian (recherche scientifique) – (p.105-117).

CRITIQUE LITTERAIRE

23. **VARAG NERSISSIAN** – Excellent recueil de poésie arménienne ancienne (Sur le recueil «Le trésor de la poésie arménienne ancienne» du Prof. Poghos Khatchatrian, docteur en sciences philologiques, composé en collaboration avec Vardan Devrikian, candidat au doctorat en philologie) – (p.118-124).

AU SAINT-SIEGE

24. **DIACRE ARTHUR HOVHANNISSIAN** – Le Nouvel An au Saint-Siège d'Etchmiadzine. 31 décembre 2001 (p.125-136).
25. Présentation du livre «Azgapatoum» («Histoire Nationale»). 21 janvier 2002 (p.137).

AUDIENCES AU SAINT- SIEGE

26. Audience accordée par Sa Sainteté Garéguine II à la délégation menée par Son Eminence l'archevêque Joseph Homeyer, Président de la Conférence du Conseil des évêques de la Communauté européenne et à M. Noël Trénor, Secrétaire général de la Commission de la Conférence du Conseil des évêques de la Communauté européenne. 12 janvier 2002 (p.138).
27. Audience accordée par Sa Sainteté Garéguine II à M. Kent Hill, vice-directeur du Bureau de l'Europe et de l'Eurasie de l'Agence Internationale des Etats-Unis d'Amérique. 23 janvier 2002 (p.139).
28. Audience accordée par Sa Sainteté Garéguine II à M. Henry Cuny, Ambassadeur de France nouvellement nommé en République d'Arménie. 31 janvier 2002 (p.139-140).

29. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale d'Echmiadzine au mois de décembre (p.141-142).

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин, Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ